

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



---

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

<b>2010 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՇՅՈՒՆՆԵՐԸ</b>	3
<b>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 2010 ԹՎԱԿԱՆԻՆ</b>	41
<b>ՀՀ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ</b>	58
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	60
Հարկային եկամուտներ	61
Պետական տուրք	66
Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	69
Պաշտոնական դրամաշնորհներ	70
Այլ եկամուտներ	72
<b>ՀՀ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ</b>	75
<b>Տնտեսագիտական դասակարգում</b>	75
Ընթացիկ ծախսեր	76
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	77
<b>Գործառական դասակարգում</b>	79
Ընդհանուր բնույթի պետական ծառայություններ	79
Պաշտպանություն	95
Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	96
Տնտեսական հարաբերություններ	102
Շրջակա միջավայրի պաշտպանություն	136
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	144
Առողջապահություն	148
Հանգիստ, մշակույթ և կրոն	163
Կրթություն	178
Սոցիալական պաշտպանություն	192
Հիմնական բաժիններին չդասվող պահուատային ֆոնդեր	208
<b>ՀՀ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ</b>	210
<b>ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ</b>	214
<b>ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (գործառական դասակարգմամբ)</b>	215
<b>ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (տնտեսագիտական դասակարգմամբ)</b>	219
<b>ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԻ (ՊԱԿԱՍՈՒՐԴԻ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ</b>	222
<b>ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ</b>	226
<b>ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ</b>	1042
<b>ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ</b>	1172

**2010 թՎԱԿԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2010 թվականին ՀՀ կառավարության հիմնական խնդիրներից էր երկարաժամկետ տնտեսական աճի համար ինստիտուցիոնալ, ռեսուրսային, հետազոտական, գործընկերային հիմքեր ձևավորելը: Կառավարության համար 2010 թվականը հիմնականում նշանավորվեց արդեն իսկ ճշգրտված մոտեցումների ու սկզբունքների պայմաններում գործնական նախագծերի մեկնարկով և հեռանկարային զարգացման ծրագրավորման համար հիմքերի ապահովմամբ:

**Արդյունաբերության ոլորտ**

2010 թվականին ՀՀ կառավարության կողմից հավանության են արժանացել «ՀՀ արդյունաբերության զարգացման հայեցակարգային ուղղությունները»:

ՀՀ ԱԺ կողմից ընդունվել է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով 300 մլն դրամ և ավել ներդրում կատարելու դեպքում ընկերությունների կողմից վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետները երեք տարի ժամկետով հետաձգելու արտոնությունը տրամադրվել է նաև հաջորդ տարիներին: ՀՀ կառավարության կողմից թույլտվություն են ստացել թվով 6 ընկերություններ, որոնց ծրագրերի ընդհանուր կանխատեսվող ներդրումները կազմում են մոտ 15.17 մլրդ ՀՀ դրամ, իսկ այս ներդրումների շնորհիվ կստեղծվեն մոտ 465 նոր աշխատատեղեր: Ընդհանուր առմամբ, ՀՀ կառավարության կողմից օրենքի ընդունումից հետո թույլտվություն են ստացել թվով 11 ընկերություններ: Հավանության արժանացած ծրագրերի ընդհանուր կանխատեսվող ներդրումները կազմում են մոտ 28.8 մլրդ ՀՀ դրամ, իսկ այս ներդրումների շնորհիվ ծրագրերի ավարտական փուլում կստեղծվեն մոտ 980 նոր աշխատատեղ, որից 705-ն արդեն իսկ ստեղծվել է:

Ժամանակակից պահանջներին համապատասխան սարքավորումներով ապահովելու նպատակով ՀՀ կառավարության կողմից երկարաձգվել է 3 ընկերությունների կողմից «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ներմուծված մեքենասարքավորումների համապատասխան ռեժիմի ժամկետը, որի արդյունքում նախատեսվում է 28.5 մլն ԱՄՆ դոլարի ներդրում և 530 նոր աշխատատեղերի ստեղծում:

2010 թվականին ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել թերև արդյունաբերության հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների ժամանակացույցը: ՀՀ ԱԺ կողմից ընդունվել է «ՀՀ մաքսային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը, ինչը թույլ է տալիս պատվիրատուի հոմքով և սարքավորումներով աշխատող ընկերություններին ժամանակավոր

ներմուծում ռեժիմով ներկրված ապրանքների ժամկետները սահմանել պայմանագրերի ժամկետներին համապատասխան:

«Զվարթնոց» օդանավակայանի հարակից տարածքում ազատ տնտեսական գոտու և գյուղական լոգիստիկ կենտրոնի ստեղծման ծրագրի մասով << կառավարության կողմից հավանություն է ստացել «Ազատ տնտեսական գոտիների մասին» << օրենքի նախագիծը: Մշակվել է «<< Էկոնոմիկայի նախարարության և «Կորպորատիվ Ամերիկա ՍՍ» ընկերության միջև՝ «Զվարթնոց» օդանավակայանի հարակից տարածքում ազատ տնտեսական գոտի ստեղծելու նպատակով համագործակցության համաձայնագրի» նախագիծ: Ակսվել են բիզնես պլանի մշակման աշխատանքները:

Ակնագործության և ուկեգործության ոլորտում մշակվել և << ԱԺ կողմից ընդունվել է «Ավելացված արժեքի հարկի մասին» << օրենքում լրացում կատարելու մասին» << օրենքի նախագիծը, որով ԱԱՀ-ի վճարումից ազատվում է ուկեգործության ոլորտում օգտագործվող թանկարժեք մետաղների հումքը, ինչպես նաև «Շահութահարկի մասին» << օրենքում լրացում կատարելու մասին» << օրենքի նախագիծը, որով շահութահարկի կանխավճարից ազատվել են ակնագործության և ուկեգործության ոլորտները, թանկարժեք քարերի իրացումը, իսկ ուկու հումքի իրացման մասով կանխավճարը նվազեցվել է մինչև 0.25%:

### **Գիրեյիքի գնդեսություն, բարձր և փեղեկադրվական գեխնոլոգիաների ոլորտ (РСС)**

РСС ոլորտում ակտիվ աշխատում են շուրջ 200 ձեռնարկություններ, որից 70-ը արտասահմանյան ընկերությունների մասնաճյուղեր են: Ոլորտի ընդհանուր հասույթը կազմում է մոտ 150 մլն ԱՄՆ դոլար, որից 40%-ն արտահանվում է, զբաղվածների ընդհանուր թիվը կազմում է մոտ 5000 մարդ, արտադրության ծավալն աճել է շուրջ 35%-ով՝ 2008թ. համեմատ:

<< կառավարության հավանությանն է արժանացել <<-ում Էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգը:

Քննարկվում են <<-ում Էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման և <<-ում հեռահաղորդակցական լայնաշերտ ցանցի ձևավորման հայեցակարգերի նախագծերը:

<< ԱԺ կողմից ընդունվել է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» << օրենքում փոփոխություններ կատարելու մասին» << օրենքը, որի արդյունքում սահմանված ժամկետում ապահովվել է հեռուստառադիոհաճախականության լիցենզավորման նոր մրցույթի հայտարարումը:

Մշակվել են <<-ում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող Էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի ներդրման տեխնիկական առաջադրանքը,

«ՀՀ-ում նորարարական տնտեսության ծնավորման մեկնարկային ռազմավարության հայեցակարգի» նախագիծը:

2010 թվականին Երևանում տեղի է ունեցել ամենամյա «Դիջիթեք 2010» ցուցահանդեսը, որտեղ այցելել է 15000 մարդ, մասնակցել՝ 68 միջազգային և տեղական ընկերություններ:

Իրականացվել են Հայ-հնդկական SCS ուսումնական և «Մայքրոստֆթ» նորարարական կենտրոնների նախագծման աշխատանքները: Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի տարածքում «Մայքրոստֆթ» նորարարական կենտրոնի պաշտոնական բացումը նախատեսվում է կազմակերպել 2011 թվականի մայիսին:

2010 թվականին մեկնարկել է «Համակարգիչ բոլորի համար» ծրագրի հիմնական փուլը: Ամերիկյան «Ինթել» և «Հյուեթ Պակարդ» ընկերությունների հետ ստորագրվել են Փոխըմբռնման հուշագրեր՝ «Համակարգիչ ուսուցիչների համար» և «Դպրոցական համակարգիչ» ծրագրերի պիլոտային փուլի անցկացնելու վերաբերյալ: Ծրագրի շրջանակում մինչև տարեվերջ իրացվել է ավելի քան 17000 համակարգիչ:

«Նէշնլ Ինստրումենտս» ընկերության հետ հիմնվել է մեխանիկայի և էլեկտրոնիկայի լաբորատորիան: «ԻՎ քոնսալտինգ» և «National Instruments» ընկերությունների կողմից ներկայացվել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանում Ազգային ճարտարագիտական լաբորատորիա հիմնելու ծրագիրը:

Ուսուցքաբանության գերազանցության հայկական կենտրոնի հիմնման ծրագրով նախատեսվում է «Ա.Ի. Ալիխանյանի անվան Ազգային գիտական լաբորատորիա» ՊՈԱԿ-ի տարածքում հիմնել Ուսուցքաբանության գերազանցության հայկական կենտրոն, որը մատուցելու է բարձրարժեք ծառայություններ առողջապահության ոլորտում: Հաստատվել է կենտրոն ստեղծելու ծրագիրը, ՀՀ կառավարության և բելգիական «ՔԵԲՍԻ Էնվի» բանկի միջև կնքվել է վարկային համաձայնագիր, հիմնադրվել է «Ռադիոհղուտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ-ն:

Երևանի ֆիզիկայի ինստիտուտը վերակառուցվել է Ազգային գիտական լաբորատորիայի: Ստեղծվել է Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի մասնաճյուղ՝ «Կոսմոլոգիայի և աստղաֆիզիկայի ինստիտուտ» անվամբ:

## **Զբոսաշրջություն**

Հայաստանում զբոսաշրջային արդյունաբերությունում պահպանվել են դինամիկ զարգացման տեմպերը: 2010 թվականի ընթացքում Հայաստան ներգնա զբոսաշրջային այցելություններն աճել են 18.9%-ով՝ կազմելով 683979:

Մշակվել է «Զբոսաշրջության մասին» նոր օրենքի նախագծի փաթեթը:

Երևանում կազմակերպվել է «Հայաստանը խոսող քարերի երկիր» (CTS-2010) հոբեյանական 10-րդ միջազգային գրոսաշրջային ցուցահանդեսը:

Ձերմուկ քաղաքի զարգացման ծրագրի շրջանակներում թայգերԴեվՍյուիս ընկերությունը ներկայացրել է Ձերմուկ քաղաքի գլխավոր հատակագծի վերաբերյալ առաջարկություններ՝ մակետը և քարտեզները:

«Տաթև» գրոսաշրջային կենտրոն հայտարարելու մասին» << կառավարության որոշման ներքո Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի հետ համագործակցությամբ մշակվել և << կառավարության կողմից հաստատվել է «Տաթև» գրոսաշրջային կենտրոնի զարգացման ծրագիրը: Ծրագրի շրջանակներում մասնավոր և պետական ներդրմամբ շահագործման է հանձնվել աշխարհում մեկ կանգառով ամենաերկար՝ Տաթևի ճոպանուղին, վերանորոգվել է Տաթև տանող ճանապարհը:

«Գառնի-Գեղարդ» գրոսաշրջային երթուղու հետ կապված խնդիրների լուծման միջոցառումների ծրագրի շրջանակներում իրականացվել են Գառնու ամրոցի մուտքի հարթակում ավանդական ուստեսուների, հուշանվերների և արհեստագործական արտադրանքի վաճառքի տաղավարների նախագծման և կառուցման աշխատանքները, ձևավորվել է Գառնի-Գեղարդ գրոսաշրջային երթուղու գրոսաշրջային տեղեկատվական-մարքեթինգային կենտրոն:

Գեղարքունիքի մարզի Սևանի շրջանի Շովագյուղ համայնքում մասնավոր ներդրմամբ ձևավորվել է Զմեռային գրոսաշրջավայր՝ լեռնադահուկային սպորտի ենթակառուցվածք՝ 1130 մետր ճոպանուղի և «Ախթամար» հյուրանոցային համալիր:

«Շանհայ Էքսպր 2010» համաշխարհային ցուցահանդեսում Հայաստանը ներկայացրել է Գեռապոլիսի (Աշխարհի քաղաքի) մակետը 3D ֆորմատով՝ պատկերելով Արարատ լեռան լանջին Աշխարհի քաղաքի կառուցման առաջարկը, որի համար արժանացել է ինովացիոն տեխնիկական լուծումների համար մրցանակին:

<< կառավարության հավանությանն է արժանացել «Սևանա լճի ափին բարձրլեռնային մարզական կենտրոն» հայեցակարգը:

### **Գործարար միջավայրի բարեկիուումներ**

<< գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրի ներքո << կառավարության կողմից հավանության է արժանացել Կորպորատիվ կառավարման կանոնագիրքը:

Բարեկիուումներ են իրականացվել քաղաքաշինության, հարկային, մաքսային ոլորտներում, նոր ստեղծվող բիզնեսի գրանցման համար ներդրվել է «Մեկ պատուհանի կանգառ» սկզբունքը, պարզվեցվել է հաշվետվությունների ներկայացման գործընթացը, հստակեցվել են գործառու-

աշխատող հարաբերությունները: Տեսչական բարեփոխումների մասով մշակվել է տեսչական համակարգի նոր մոդել:

Մշակվել է «Պետական վերահսկողության մասին» <<օրենքի նախագիծը: Մշակվել է ոհսկի վրա հիմնված ստուգումների համակարգի մեթոդաբանություն, որը 3 պիլոտային տեսչություններում գտնվում է ներդրման փուլում:

### ***<<-ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՌՈՒԹՅՈՒՆ, <<-ԱՊԼԱԿՈՐԻ ՀԱՄԱՉԽԱՐԻԱՅԻՆ ԿԱԳՄԱԿԵՐԱՊՈՒԹՅՈՒՆ***

2010 թվականի հուլիսի 19-ին պաշտոնապես մեկնարկել են <<-ԵՄ ասոցիացման համաձայնագրի բանակցությունները: Ստեղծվել են պատասխանատու բանակցային թիմ և երեք ոլորտային աշխատանքային խմբեր:

ԵՄ հետ խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի (ԽՀԱԱՀ) շրջանակներում ձևավորվել են ԽՀԱԱՀ 3 աշխատանքային խմբեր: Առևտրի տեխնիկական խոչընդոտների հարցերով աշխատանքային խմբի կողմից մշակվել և <<կառավարության կողմից հաստատվել է <<որակի ենթակառուցվածքների բարեփոխումների ռազմավարությունը: ԽՀԱԱՀ մտավոր սեփականության իրավունքների հարցերով աշխատանքային խմբի կողմից պատրաստվել է Հայաստանի մտավոր սեփականության իրավունքների ոլորտի ռազմավարությունը, որը 2010 թվականի սեպտեմբերին ներկայացվել է Եվրոպական հանձնաժողով և արժանացել հավանության:

ԵՄ Արևելյան գործընկերության շրջանակներում իրականացված բանակացությունների արդյունքում 2010 թվականի ապրիլի 6-ին ստորագրվել է 2011-2013թթ. ԵՀԳԳ (Եվրոպական հարևանության և գործընկերության գործիք) Հայաստանի Ազգային ինդիկատիվ ծրագիրը, որի ներքո Եվրոպական հանձնաժողովի աջակցությունը 2011-2013թթ. համար կկազմի 157.3 մլն Եվրո:

ԵՀԳԳ ներքո իրականացվող թվիննինգ, թայեքս և Սիգմա ծրագրերի վերաբերյալ պետական կառավարման մարմիններին տեղեկատվության տրամադրման և կարողությունների զարգացման նպատակով կազմակերպվել և իրականացվել է ընդհանուր առմամբ թայեքս 27 միջոցառում, <<պետական մարմինների կողմից ներկայացվել են մոտ 15 թվիննիգ ծրագրեր և հաստատվել են 6 ծրագրային առաջարկներ, ստորագրվել է 2 թվիննիգ պայմանագիր:

«Սևծովյան ավազանի երկրների անդրսահմանային համագործակցություն» ծրագրի շրջանակներում հաստատվել են հայկական 6 ծրագրեր՝ 1 առաջատար և 5 օժանդակող գործընկեր մասնաբաժնով:

ԱՀԿ Պետական գնումների հանձնաժողովի դեկտեմբերի 7-ի նիստում որոշում է կայացվել Համաձայնագրին <<անդամակցության մասին:

ԱՀԿ շրջանակներում << առևտրային քաղաքականության վերաբննության նպատակով մշակվել և ԱՀԿ քարտուղարություն է ներկայացվել << զեկույցը: Հայաստանը ճանաչվել է մոդելային երկիր ԱՀԿ անդամ երկրների շրջանակներում իր վարած ազատական առևտրային քաղաքականության առումով:

### ***Առևտրի և ծառայությունների ոլորտ***

2010 թվականին մշակվել է «ՀՀ-ում միջազգային չափանիշներին համապատասխան սպառողների շահերի պաշտպանության համակարգի ապահովման» հայեցակարգի նախագիծը:

Իրականացվել է շուրջ 49 առևտրի իրականացման վայրի կազմակերպչի լիցենզավորում:

Շարունակվել են բանակցությունները «ԱՊՀ պետությունների ազատ առևտրի գոտու ստեղծման մասին» համաձայնագրի շուրջ:

Մշակվել է օրենսդրական փաթեթ, որով նախատեսվում է ԵՄ երկրներ արտահանման ժամանակ ծագման երկիր հավաստագրի տրամադրման իրավասությունը << առևտրարդյունաբերական պալատից փոխանցել << մաքսային ծառայությանը:

Վերանայվել է երկակի նշանակության ապրանքների արտահանման հսկողության համակարգը: Նոր համակարգի իրավական կարգավորման նպատակով ընդունվել է համապատասխան նոր օրենք, դրա կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտեր: Նոր համակարգը ենթադրում է առավել արդյունավետ հսկողության մեխանիզմներ, պարզեցված ընթացակարգեր: Նախաձեռնվել է միջազգային չափանիշներին համապատասխան հսկողության էլեկտրոնային համակարգի ներդրումը:

Աջակցություն է ցուցաբերվել հայ կոնյակագործների մասնագիտական միության ստեղծման հարցում:

### ***Մրավոր սեփականության պահպանություն***

2010 թվականի ապրիլի 29-ին << ԱԺ կողմից ընդունվեցին և 2010 թվականի հունիսի 1-ից ուժի մեջ մտան մի շարք օրենքներ, որոնք նախատեսված են կատարելագործելու մտավոր սեփականության պահպանության օրենսդրական դաշտը: Նշված օրենքների հիմքում դրված են միջազգային առաջավոր փորձի, մասնավորապես՝ Եվրամիության համապատասխան դիրեկտիվների դրույթները: Մասնավորապես՝ «Ապրանքային նշանների մասին» << օրենքով նախատեսված ընթացակարգն ավելի վաղ ծագած իրավունքների իրավատերերին հնարավորություն է տալիս նախապես ծանոթանալու և հարկ եղած դեպքում առարկելու այն ապրանքային նշանների գրանցումների դեմ, որոնց գրանցման և օգտագործման հետևանքով

կխախտվեն իրենց իրավունքները: «Աշխարհագրական նշումների մասին» << օրենքը հիմնովին փոխակերպել է աշխարհագրական նշումների իրավական պահպանության համակարգը: Նշված օրենքով կարգավորվել են նաև երաշխավորված ավանդական արտադրանքի հետ կապված հարաբերությունները և այդ արտադրանքի համապատասխան անվանումների պահպանության հարցերը: << կառավարության որոշմամբ հաստատվել է համապատասխան ենթաօրենսդրական բազան: << կառավարության քննարկմանն է ներկայացվել «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» << օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» << օրենքը:

### **Գյուղակնդեսություն**

Գյուղատնտեսությունում 2010 թվականին իրականացված քաղաքականությունը նպատակառությունը է ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների մեղմմանը, գյուղատնտեսության ծավալների վերականգնմանը, ճյուղի և նրան սպասարկող ոլորտների գործունեության արդյունավետության բարձրացմանը և դրա հիման վրա գյուղատնտեսության հետագա զարգացման և ընդլայնված վերարտադրության համար պայմանների ստեղծմանը, գյուղացիական տնտեսությունների իրական եկամուտների ավելացմանը, հանրապետության պարենային ապահովության և պարենային անվտանգության մակարդակի բարձրացմանը, բնակչության աղքատության մակարդակի կրճատմանը:

Համաձայն ուսումնասիրությունների՝ 2005-2010թթ. արձանագրված տնտեսական աճի յուրաքանչյուր տոկոսային կետ գյուղական աղքատության մակարդակը նվազեցրել է 0.49 տոկոսային կետով, իսկ գյուղատնտեսության ավելացված արժեքի աճի յուրաքանչյուր տոկոսային կետ գյուղական աղքատության մակարդակը նվազեցրել է 1.12 տոկոսային կետով:

2010 թվականին գյուղատնտեսության ոլորտում բյուջետային ծրագրերն ուղղվել են հետևյալ նպատակների իրականացմանը.

- հողերի բերրիության պահպանում և բարձրացում՝ հողերի մելիորատիվ վիճակի բարելավում, հակահեղեղային միջոցառումներ,
- գյուղատնտեսական մշակաբույսերի բարձրորակ բերքի անկորուստ ստացում՝ բույսերի վնասակար օրգանիզմների բազմացման, զարգացման ու տարածման հետազոտությունների և պայքարի աշխատանքների կազմակերպման միջոցով դրանց տարածման շրջանակների նվազեցում և հետագա կանխարգելում հակակարկտային կայանքների տեղակայում,
- անտառային տնտեսության զարգացում, անտառպահպանության արդյունավետության բարձրացում՝ անտառվերականգնման աշխատանքների ծավալների մեծացում, անտառշինական

նախագծերի կազմում, անտառային տարածքներում բոլորի պաշտպանության կենտրոնացված միջոցառումների իրականացում,

- Ներմուծվող և արտադրվող անվտանգ բուսական և կենդանական ծագումով մթերքներով ապահովում՝ կարանտին անվտանգության ապահովում, կարանտին օրգանիզմների և կենդանական ծագում ունեցող հումքի մթերքի և կենդանիների միջոցով հանրապետության տարածք վարակիչ հիվանդությունների ներթափանցման կանխարգելում,
- Կենդանիների և մարդու համար ընդհանուր վարակիչ հիվանդություններից բնակչության պահպանություն և գյուղատնտեսական կենդանիների մթերատվության բարձրացում՝ կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելիչ պատվաստումների իրականացում, սննդամթերքի նմուշների փորձաքննություններ և տոհմասելեկցիոն աշխատանքների կազմակերպում, բարձր մթերատու ցեղերի երինջների ներկրում,
- Գյուղացիական տնտեսություններին բարձրորակ սերմերով ապահովում՝ բոլորի սելեկցիոն նոր սորտերի պաշտպանություն, բարձր վերարտադրության սերմերի որակի գնահատում,
- Գյուղացիական տնտեսությունների իրական եկամուտների և գյուղատնտեսությունում համախառն ներքին արդյունքի ավելացում,
- Ապրենային ապահովության և պարենային անվտանգության մակարդակի բարձրացում, կայուն միջամտական տնտեսական կապերի հաստատում:

### ***Սոցիալական ապահովագրություն և սոցիալական ապահովություն***

2010 թվականին << կառավարությունն ապահովել է աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի հիմնական և գերակա ուղղություններով պետական քաղաքականության իրականացումը՝ կարևորելով բնակչության արդյունավետ զբաղվածության ապահովումը, կենսաթոշակային բարեփոխումների իրականացումը, կենսաթոշակների ու նպաստների չափերի աճը, հաշմանդամների, տարեցների, կանանց ու երեխաների հիմնահարցերը, սոցիալական իրավունքի լիարժեք իրացման պայմանների ստեղծումը:

Շարունակվել են նաև ճգնաժամի հարուցած հետևանքների վերացմանը և բնակչության սոցիալական դժգոհությունների բացառմանն ուղղված աշխատանքները: Ուստի ջանքերն առավել կենտրոնացվել են պետական նպաստների հասցեականության մեծացման, աշխատաշուկայի լարվածության մեղմման, ծառայությունների որակի ու մատչելիության բարձրացման ուղղությամբ:

Ոլորտում վարվող քաղաքականության իրականացման ապահովման համար 2010 թվականին մշակել է 30 օրենքի նախագիծ, այդ թվում՝ կենսաթոշակային բարեփոխումների իրականացումն

ապահովող օրենքների նախագծերի փաթեթը (որը ներառում է 49 նախագիծ), որոնցից 25-ը 2010 թվականին << Ազգային ժողովն արդեն իսկ ընդունել է: Մշակվել և ընդունվել են նաև << կառավարության՝ 28 և << վարչապետի 11 որոշումներ:

### Աշխատանք և գրաղվածություն

Աշխատաշուկայի պետական կարգավորումը միտված է աշխատաշուկայի լարվածության թուլացմանը, համաշխարհային ճգնաժամի բացասական ազդեցությունների մեղմմանը, ինչպես նաև արժանապատիվ աշխատանքի և վարձատրության ապահովման համար պայմանների ստեղծմանը:

2010 թվականի կարևորագույն միջոցառումն աշխատանքային օրենսդրության բարեփոխումների իրականացումն էր, որի շրջանակներում ընդունվեց համապատասխան օրենքների նախագծերի փաթեթը:

2010 թվականի դեկտեմբերին << ԱԺ-ի կողմից ընդունվեց նաև «Բնակչության գրաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» Հայաստան Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» << օրենքը, որով հստակեցվեցին գործող օրենքի որոշ դրույթներ, մասնավորապես՝ գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատիրոջ գրաղվածության կարգավիճակը, գործազրկության նպաստի չափի որոշման և մեկից ավելի անգամ գործազրկի կարգավիճակում գտնվող անձանց գործազրկության նպաստի նշանակման պայմանները: Բացի այդ, 2011 թվականից ներդրվել են գրաղվածության պետական կարգավորման 3 նոր ծրագրեր, որոնք նպատակ ունեն խթանել երիտասարդների, աշխատաշուկայում անմրցունակ խմբերի գրաղվածությունը:

2011 թվականի հունվարի 1-ի դրությամբ գրաղվածության տարածքային կենտրոններում հաշվառվել է աշխատանք փնտրող 93555 անձ, որոնցից գործազրկ է 79237-ը: Ընդհանուր առմամբ, գրաղվածության ծրագրերում ընդգրկվել է աշխատանք փնտրողների 38.6%-ը, իսկ թվով 6 գրաղվածության ակտիվ ծրագրերում ընդգրկվել են 25987 աշխատանք փնտրող անձինք (աշխատանք փնտրողների 27.7%-ը): Աշխատանքի է տեղավորվել 11315 անձ կամ աշխատանք փնտրողների 12.1%-ը, ինչը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցում է 20.4%-ով: Աշխատանքի տեղավորվածների 26.2%-ը երիտասարդներ են, աշխատաշուկայում անմրցունակ անձանցից աշխատանքի է տեղավորվել 10.1%-ը:

Տարեվերջին գործազրկության մակարդակը հանրապետությունում կազմել է 6.9%, տարեսկզբի 7.1%-ի փոխարեն:

Տարեսկզբից գործազրկության նպաստի ստացման իրավունք է ձեռք բերել շուրջ 27764 գործազրություն: Նպաստառու գործազրությունների թվաքանակն ամսական հաստատված 21000-ի փոխարեն կազմեց 24546՝ 3546 անձով ավելի:

«Վարձատրվող հասարակական աշխատանքներ»-ի կազմակերպում ծրագրում ընդգրկվել է 314 համայնք (որից 31-ը՝ քաղաքային, 283-ը՝ գյուղական), նախորդ տարվա 218-ի փոխարեն: Իրականացվել է 457 ծրագիր՝ 204699 մարդ/օր ծավալով: Ծրագրում ընդգրկված անձանց թիվը կազմել է 6254, նախորդ տարվա 4703-ի փոխարեն:

Աշխատանքային օրենսդրության բարելավման շրջանակներում 2010 թվականին նախատեսված էր աշխատանքային օրենսդրության բարեփոխումների իրականացում: 2010 թվականի հունիսի 24-ին ընդունվեց համապատասխան օրենքների նախագծերի փաթեթը: Կատարված օրենսդրական փոփոխությունները նպատակ ունեն ՀՀ աշխատանքային օրենսդրությունը համապատասխանեցնել միջազգային իրավունքի նորմերին, լուծել աշխատանքային օրենսգրքի ընդունումից հետո իրավակիրառական պրակտիկայում առաջ եկած և մի շարք իրավական նորմերի ներքին հակասություններով պայմանավորված խնդիրները: Փաթեթում ընդգրկված դրույթները նպատակառությամբ են նաև Հայաստանի գործարար միջավայրի բարելավմանը և արդյունքում՝ տնտեսական աճի խթանմանը: Այս շրջանակներում ամրագրվել են աշխատանքային բանավոր պայմանագրի ինստիտուտի ներդրում (կողմերի համաձայնությամբ աշխատանքային հարաբերությունները կարող են ծագել աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով՝ առանց գրավոր աշխատանքային պայմանագրի), ծանր, առանձնապես ծանր ու վնասակար, արտաժամյա և գիշերային աշխատանքների համար տրվող հավելումների չափերի նվազեցում և հստակեցում, միջին ամսական աշխատավարձի հաշվարկման մեխանիզմների ամբողջականացում և պարզեցում, ինչպես նաև վերացվել է գործատուների կողմից ՀՀ աշխատանքի պետական տեսչությանը տարեկան հաշվետվություն ներկայացնելու պահանջը:

Տեսչության գործունեությունը հիմնականում ուղղված էր աշխատանքային օրենսդրության նկատմամբ պետական վերահսկողության ապահովմանը, խախտումների բացահայտմանն ու կանխարգելմանը, գործատուներին անհրաժեշտ մեթոդական և գործնական օգնության ցուցաբերմանը, սոցիալական գործընկերության կայացմանը:

2010 թվականին ՀՀ աշխատանքի պետական տեսչության կողմից իրականացվել է ընդհանուր թվով 586 ստուգում: Ստուգումների արդյունքներով նշանակվել է 138 մլն 759 հազար դրամ վարչական տուգանք, հայտնաբերվել է անօրինական աշխատանքի 560 դեպք, արձանագրվել է 457 մլն 667 հազար դրամի չփառագած աշխատավարձ: ՀՀ վարչապետի համաձայնությամբ իրականացվել է 97 ուսումնասիրություն, որի արդյունքում հայտնաբերվել է անօրինական

աշխատանքի 423 դեպք, արծանագրվել է 27 մլն դրամ չվճարած աշխատավարձ: Գործատուներին տրվել է հանձնարարական՝ արծանագրված խախտումները վերացնելու համար:

#### ԿԵՆՍԱԹԵՇՎԱԿԱյին ապահովություն

Տարվա ընթացքում կատարված աշխատանքները միտված են եղել կենսաթեշվակային բարեփոխումների իրականացման գործընթացի մեկնարկի իրավական հենքի ապահովմանը: Շահագրգիռ բոլոր կողմերի՝ տարբեր նախարարությունների, ԱԺ խմբակցությունների, պատգամավորների, միջազգային և այլ կազմակերպությունների մասնակցությամբ մեծածավալ աշխատանքներ են տարվել կենսաթեշվակային բարեփոխումների իրականացումն ապահովող օրենքների նախագծերի փաթեթի լրամշակման ուղղությամբ (ընդունվել է << Ազգային ժողովի կողմից 2010 թվականի դեկտեմբերի 22-ին>):

2011 թվականից սկսել է գործել կամավոր կենսաթեշվակային ապահովագրության համակարգը, ներկայիս կենսաթեշվակառուների համար՝ կենսաթեշվակների վճարման կանխիկ և անկանխիկ եղանակները: 2011 թվականին կծնավորվի անհատական հաշվառման տեղեկատվական համակարգը, կմշակվեն համապատասխան ենթաօրենսդրական իրավական ակտերը, ինչն էլ հնարավորություն կտա 2014 թվականից գործարկել պարտադիր կուտակային կենսաթեշվակային համակարգը:

2011 թվականի հունվարի 1-ի դրությամբ հաշվառված է եղել 519828 կենսաթեշվակառու, որից 464753-ը՝ ապահովագրական կենսաթեշվակ ստացող, 50888-ը՝ սոցիալական կենսաթեշվակ ստացող:

Գաղի սակագների բարձրացմամբ պայմանավորված՝ սոցիալապես առավել խոցելի խմբերին դրամական օժանդակություն ցուցաբերելու նպատակով << կառավարության որոշմամբ 2010 թվականի նոյեմբերի 1-ից հիմնական կենսաթեշվակի չափը 8000 դրամի փոխարեն սահմանվել է 10500 դրամ, որի արդյունքում ապահովագրական կենսաթեշվակի միջին չափը կազմել է 28700 դրամ՝ նախկին 26000 դրամի փոխարեն:

Միասնականացվել է կենսաթեշվակառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստի չափը՝ անկախ կենսաթեշվակի տեսակից, ինչպես նաև կանոնակարգվել են կենսաթեշվակների նշանակմանը և վճարմանը վերաբերող դրույթները:

Բազմասիճան կենսաթեշվակային համակարգի բնականոն գործունեությունն ապահովելու շրջանակներում աշխատանքներ են տարվել եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման համակարգի ներդրման մրցութային փաթեթի ամբողջացման, համապատասխան ենթակառուցվածքների ստեղծման հիմքերի ձևավորման, կարողությունների հզորացման և հանրային իրազեկման ու բարեփոխումների լուսաբանման ուղղությամբ: Ըստ այդմ,

առաջիկայում հիմնական խնդիր է դիտարկվում կամավոր կենսաթոշակային ապահովագրության համակարգի գործարկումը և անձնավորված հաշվառման համակարգի ներդրման (համապատասխան մրցույթի անցկացման) ապահովումը:

### Սոցիալական աջակցություն

2010 թվականի պետական նպաստների բնագավառում կատարված փոփոխությունները հիմնականում նպատակ են ունեցել մեծացնել ծրագրերի հասցեականությունը՝ պահպանելով սոցիալական աջակցության տրամադրման սկզբունքները:

Համաձայն <<ԱՎԾ 2009 թվականի տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության տվյալների՝ ընտանեկան նպաստի հասցեականությունը մեծացել է 2008 թվականի համեմատ. նպաստառուների 76.5%-ը, որոնք ստանում են ծրագրին հատկացված ֆինանսական միջոցների 75.9%-ը, գտնվում են սպառման բաշխվածության ստորին երկու քվանտիլներում: Սակայն համակարգի կատարելագործման անհրաժեշտությունը դեռևս օրակարգային խնդիր է, քանի որ նպաստառուների 10.6%-ը, որոնց հատկացվում է ուսուրսների 11.3%-ը՝ վերին երկու քվանտիլների բնակչության կազմում են:

Տարվա ընթացքում իրականացվել են ընտանեկան նպաստի հասցեականության մեծացմանն ուղղված միջոցառումներ:

<< կառավարության 2010 թվականի հունիսի 17-ի նիստի N 23 արձանագրությամբ հավանության է արժանացել «Պետական նպաստների համակարգում տեղեկատվության հավաքագրման արդյունավետության մեծացման միջոցառումների ժամանակացույցը»:

Այդ աշխատանքների շրջանակներում 2010 թվականի դեկտեմբերի 30-ին ընդունվել է << կառավարության «<< կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշումը, որով ապահովվել է մի շարք տեղեկատվական բազաներում (<<ԿԱ ոստիկանության ճանապարհային ոստիկանության, << արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստր, << ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի) հաշվառված անձանց սոցիալական ապահովության քարտի համարների ներառումը՝ հետագա համադրումների արդյունավետությունը բարձրացնելու և տեղեկատվության առցանց ստացումն ապահովելու նպատակով:

2010 թվականի մայիսի 1-ից բազային նպաստի չափը բարձրացվել է 3500 դրամով և կազմել 13500: Տարվա ընթացքում իրականացվել են ընտանեկան նպաստի համակարգի հասցեականությանն ուղղված միջոցառումներ, մասնավորապես, ընտանեկան նպաստի տեղեկատվական բազայի տվյալները համադրվել են հարակից մի շարք այլ տեղեկատվական

բազաներում առկա տվյալների հետ, որի արդյունքում կրճատվել է նպաստառու ընտանիքների թիվը (հունվարին շուրջ 108 հազար ընտանիք, իսկ դեկտեմբերին՝ շուրջ 102 հազար ընտանիք), կամ 2010 թվականի ընթացքում ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված 138000 ընտանիքներից ընտանեկան նպաստ ստացել են ամսական միջինում 105005-ը, նպաստի միջին չափը (վերջին 8 ամիսներին) կազմել է 26850 դրամ: Երեխայի ծննդյան միանվագ նպաստ է տրվել 43033 երեխայի համար, այդ թվում՝ ընտանիքում ծնված երրորդ և հաջորդող 6662 երեխայի համար: Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ տրվել է ամսական միջինում 9844 ընտանիքի, զոհված՝ Հայաստանի ազգային հերոսի և Մարտական խաչ շքանշանով պարգևատրված ընտանիքի նպաստ՝ 80 ընտանիքի:

2010 թվականին նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993թ. հունիսի 10-ը դրամական ավանդ ներդրած անձանցից փոխհատուցում վճարվել է մինչև 34124 հերթական համարում ներառված անձանց:

2010 թվականի հունիսից սկսվել են Հայրենական մեծ պատերազմի վետերաններին՝ նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993թ. հունիսի 10-ը դրամական ավանդների դիմաց փոխհատուցման վճարումները: Ավանդի փոխհատուցում ստանալու համար հաշվառվել են 2569 վետերան, որոնցից 2416 վետերան ստացել են իրենց փոխհատուցումներ՝ ընդհանուր 545 մլն դրամի չափով:

Ժամանակավոր անաշխատունակության նպաստների նշանակման և վճարման կապակցությամբ առկա խնդիրների կարգավորման նպատակով մշակվել է «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» <<օրենքի նախագիծը, որն ընդունվել և ուժի մեջ է մտել 2010 թվականի դեկտեմբերի 1-ից: Տրամադրվող նպաստի առավելագույն չափի սահմանափակման հետ կապված առաջացել են որոշակի խնդիրներ, և <<վարչապետի հանձնարարականի համաձայն իրականացվել են օրենսդրական փոփոխություններ՝ հասարակության որոշ խմբերին հուզող խնդիրները լուծելու նպատակով:

### Հաշմանդամների և տարեցների հիմնահարցեր

Ելնելով «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2006-2015թթ. ռազմավարության» դրույթներից և ի կատարումն «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2010թ. տարեկան ծրագրի» շարունակվել են աշխատանքները հաշմանդամներին հասարակությանն ինտեգրելու ուղղությամբ:

Մշակվել են «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» <<օրենքի և «Աշխատունակության կորստի աստիճանի որոշման

հիման վրա հաշմանդամության սահմանման մոդելին անցնելու հայեցակարգը և հայեցակարգի իրականացումն ապահովող միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» <<կառավարության որոշման նախագծերը:

Օրենքի նախագծի նպատակն է հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների կարգավորման ուղղությամբ նոր սկզբունքների ամրագրումը, ինչը հնարավորություն կտա հաշմանդամության բնագավառում վարվող սոցիալական պաշտպանության քաղաքականությունից անցում կատարել սոցիալական ներառման քաղաքականությանը: Հաշմանդամության սահմանման նոր մոդելի ներդրման արդյունքում կստեղծվի մի համակարգ, որի հիմքում դրված կլինի հաշմանդամություն ունեցող անձի պահպանված աշխատանքային կարողությունների գնահատումը և ըստ այդմ՝ վերականգնողական գործընթացի կազմակերպումը, կենսաթոշակի նշանակումը, ինչպես նաև սոցիալական աջակցության այլ տեսակների որոշումը:

2011 թվականի հունվարի 1-ի դրությամբ հաշմանդամների հաշվառման շտեմարանում հաշվառված է 186983 հաշմանդամ:

Բժշկասոցիալական փորձաքննություն անցնելու նպատակով առողջապահական կազմակերպությունների կողմից առաջին անգամ ուղեգործվել է 17242 անձ, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 1215-ով: Առաջին անգամ հաշմանդամ է ճանաչվել 15708 անձ, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 1253-ով: Նրանցից 6.1%-ին սահմանվել է 1-ին խումբ, 40.4%-ին՝ 2-րդ, 47.1%-ին՝ 3-րդ, իսկ 6.4%-ին՝ «հաշմանդամ երեխա» կարգավիճակ: Առաջնակի մերժումների%-ը նախորդ տարվա համեմատ ավելացել է 0.9%-ով՝ կազմելով 6%:

Վերափորձաքննվել է 55863 անձ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 2264-ով, որոնցից 2.8%-ը վերափորձաքննության արդյունքում հաշմանդամ չեն ճանաչվել: Այս ցուցանիշը նվազել է 0.2%-ով:

«Հաշմանդամների մասնագիտական վերականգնողական ծրագրերի շրջանակներում» մասնագիտական ուսուցման եզրակացություններ են տրվել 100 հաշմանդամ-դիմորդների՝ բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորելու համար:

Տարվա ընթացքում վերականգնողական բուժում է ստացել 1071 հաշմանդամ, հատկացվել է 17689 պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագա, այդ թվում՝ իրականացվել են աչքի 70 պրոթեզավորման և ձայնաստեղծ 100 սարքերով ապահովման, տեսողության խնդիրներ ունեցող անձանց սոցիալական ներառումն ապահովող և այլ ծրագրեր:

2010 թվականին սկսել է գործել Գյումրու «Հաշմանդամների մասնագիտական կողմնորոշման և աշխատանքային վերականգնողական կենտրոնը»:

Տարվա ընթացքում շարունակվել է 1034 տարեցների խնամքը համակարգի 4 տուն-ինտերնատներում, անօթևան մարդկանց ժամանակավոր կացարանում սպասարկվել են շուրջ 450 անձ: Պետական աջակցություն է ցուցաբերվել (211.3 մլն դրամ) միայնակ տարեցներին և հաշմանդամներին խնամքի և սոցիալական սպասարկման ծառայություններ մատուցող հասարակական կազմակերպություններին, ինչի արդյունքում ապահովվել է շուրջ 5500 տարեց և հաշմանդամ քաղաքացիների խնամքի ու սպասարկման ծառայությունների տրամադրումը:

Հաշվետու տարում բնակարանային պայմանների բարելավման նպատակով արտոնյալ պայմաններով վարկ է տրամադրվել 41 բռնադատվածի կարգավիճակ ունեցող կամ բռնադատվածի առաջին հերթի ժառանգ հանդիսացող քաղաքացու:

#### Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցեր

Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի բնագավառում շարունակվում է երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի հզորացմանը, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների պաշտպանությանը, ինչպես նաև կանանց վիճակի բարելավմանը և հասարակության մեջ նրանց դերի բարձրացմանը, թրաֆիքինգի երևոյթի կանխարգելմանն ուղղված քաղաքականության իրականացումը:

Նախարարության համակարգի 7 մանկատներում իրականացվել է առանց ծնողական խնամքի մնացած 791 երեխաների խնամք, որից 393-ը՝ մասնագիտացված մանկատներում, ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիքների 784 երեխաների խնամք՝ երեխաների խնամքի ու պաշտպանության գիշերօթիկ 8 հաստատություններում:

Իրականացվել է նախարարության համակարգի երեխաների ցերեկային հոգածության 2 կենտրոններում ոիսկի խմբի շուրջ 200 երեխաներին և նրանց ընտանիքներին ծառայությունների մատուցում:

«ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Առավոտ» հասարակական կազմակերպության հետ կնքված պայմանագրի համաձայն 2010 թվականին հաստատություններից 40 երեխա վերադարձել է կենսաբանական ընտանիք, 10 երեխայի մուտք հաստատություն կանխարգելվել է:

«Պետական աջակցություն ՀՀ-ում մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագրի շրջանակներում «Հայ օգնության միություն» հասարակական կազմակերպության հետ համատեղ 2010 թվականին աջակցություն է ցուցաբերվել 40 շահառուի (շրջանավարտների ուսումնասիրություն և անհատական ծրագրերի կազմում, սոցիալական պատրոնաժ, մասնագիտական կողմնորոշում, ուսուցում, վերապատրաստում, հիմնական

կարիքները բավարարող եկամտի ապահովում՝ դրամական օգնություն, կրթաթոշակի հատկացում, միանվագ դրամական օգնություն, բժշկական օգնության տրամադրում, բժշկական խորհրդատվություն, իրավաբանական աջակցության տրամադրում):

Իրականացվել է «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության Տավուշի մարզի 4 ցերեկային կենտրոններին աջակցության ծրագիրը (տարվա ընթացքում 4 կենտրոններում աջակցություն են ստանում շուրջ 750 շահառուներ):

Իրականացվել է «Խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդրում» ծրագիրը, ըստ որի ներկայումս մանկատան 23 երեխա խնամվում է 20 ընտանիքում:

Կենտրոնացված հաշվառման է վերցվել 179 որդեգրման ենթակա երեխա, 385 որդեգրողների թեկնածուներ, որդեգրվել է 69 երեխա, ինչպես նաև կենտրոնացված հաշվառման է վերցվել առանց ծնողական խնամքի մնացած 324 երեխա:

Մի շարք միջազգային կազմակերպությունների հետ իրականացվել է գենդերային և թրաֆիքինգի հիմնախնդիրներին ուղղված միջոցառումներ:

#### Ժողովրդագրության հիմնահարցեր

Կատարված աշխատանքներն ուղղված են եղել ժողովրդագրական իրավիճակի և զարգացումների վերաբերյալ հետազոտությունների իրականացմանը, տեղեկատվության ստացման համակարգի ներդրմանը, ժողովրդագրական զարգացման ընթացքի մոնիթորինգի միասնական համակարգի ստեղծմանը և դրանց համար անհրաժեշտ իրավական հենքի ձևավորմանը: Կատարված աշխատանքների արդյունքում տարեցտարի ավելի առարկայական է դառնում կապը ժողովրդագրական իրավիճակի բարելավման ամենամյա տարեկան ծրագրի միջոցառումների և 2009 թվականին << կառավարության հաստատած ժողովրդագրական քաղաքականության 2009-2035թթ. ռազմավարության դրույթների միջև: Ըստ այդմ, մշակվել է «Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի բարելավման ամենամյա պետական ծրագրի մոնիթորինգի իրականացման կարգը հաստատելու մասին» << կառավարության որոշման նախագիծը, որի նպատակն է ժողովրդագրական իրավիճակի բարելավման ամենամյա պետական ծրագրում ընդգրկված միջոցառումների ազդեցության գնահատումը և ժողովրդագրական իրավիճակի բարելավման նպատակով առաջարկությունների ներկայացումը: Պատրաստվել է նաև ժողովրդագրական իրավիճակի բարելավման ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն՝ հանրությանը ներկայացնելու համար:

Որպես գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլեր իրականացվել են նաև «Հանրապետության բնակչության վերաբերողողական վարքագծի ուսումնասիրություն» և

«Ժողովրդագրական քաղաքականության ազդեցությունների վերլուծություն և գնահատում» ընտրանքային հետազոտությունները, որոնց արդյունքում արված եզրահանգումներն առաջարկությունների ձևով ընդգրկվել են «Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2011 թվականի պետական ծրագրին և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» << կառավարության արձանագրային որոշման նախագծում:

Մշակվել է նաև համապատասխան մեթոդաբանություն, որի միջոցով, փորձնական կարգով, կատարվել է 2010 թվականի պետական բյուջեի միջոցներով իրականացվող և ժողովրդագրական ազդեցություններ ունեցող ծրագրերի փորձաքննություն և տրվել է դրանց ֆինանսական ամփոփ գնահատականը:

### Համագործակցություն միջազգային, ոչ պետական և բարեգործական կազմակերպությունների հետ

Ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունների գծով խնդիրների լուծման գործընթացն իրականացնելիս նախարարությունը կարևորում է համագործակցությունը ինչպես միջազգային, այնպես էլ բարեգործական և ոչ պետական կազմակերպությունների հետ: Շարունակվել են աշխատանքները ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության, Համաշխարհային բանկի, ՄԱԿ-ի Աշխատանքի միջազգային կազմակերպության, ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերազույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակ, Պարենի համաշխարհային ծրագրի, Գերմանիայի տեխնիկական համագործակցության ընկերության, Միգրացիայի միջազգային կազմակերպության, «Վորլդ Վիժն», «Փրկենք երեխաներին», «Ամքոր», «Առաքելություն Հայաստան» և այլ կառույցների ու կազմակերպությունների հետ:

Ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում մշակվել և Աշխատանքի միջազգային կազմակերպություն են ներկայացվել թվով 11 ազգային գեկույցներ՝ ԱՄԿ կոնվենցիաների կատարման ընթացքի վերաբերյալ, պատրաստվել է «Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայի» կիրարկման վերաբերյալ չորրորդ ազգային գեկույցը, պարբերական հաշվետվություններ են ներկայացվել Եվրոպական հարևանության քաղաքականության գործողությունների ծրագրի կատարման ընթացքի վերաբերյալ:

Բարեգործական կազմակերպությունների հետ համագործակցությամբ «Երբ գալիս է սեպտեմբերը» ծրագրի շրջանակներում հասարակական կազմակերպությունների միջոցով ԱԳՀ-ում հաշվառված նպաստառու 5-16.5 տարեկան դպրոցահասակ երեխաներ ունեցող 8428 ընտանիքների

42043 Երեխաների տրամադրվել են գրենական պարագաներ, պայուսակներ, սնունդ, հագուստ և այլ օգնություններ:

### **Տարածքային կառավարման ոլորտ**

2010 թվականին աշխատանքներ են իրականացվել Տարածքային համաչափ զարգացման ռազմավարության իրականացման ուղղությամբ: Մասնավորապես՝ մշակվել է << տարածքային զարգացման հայեցակարգը: Փաստաթուղթը քննարկվել է ԵՄ և միջազգային այլ կառուցների փորձագետների, հասարակական և գիտական կազմակերպությունների հետ: Կազմվել են հինգ մարզերի զարգացման ծրագրեր, դրանով իսկ ամբողջականացվել է մարզերի զարգացման ծրագրերի կազմման գործընթացը: Տարածաշրջանային վիճակագրական համակարգի ստեղծման նպատակով << ազգային վիճակագրական ծառայության հետ համատեղ Հայաստան-ԵՄ համագործակցության արդյունքում առաջին անգամ <<-ում մշակվել և ներդրվել են վիճակագրական տարածաշրջանային ցուցանիշներ (մարզային կտրվածքով):

Տարածքային կառավարման համակարգում բարեփոխումների շրջանակներում 2010 թվականին մշակվել է «Հայաստանի Հանրապետության մարզերում տարածքային կառավարման մարմինների գործունեության կարգը սահմանելու մասին» << նախագահի նոր հրամանագրի նախագիծը: 2010 թվականին առաջին անգամ իրականացվել է մարզպետների 2009 թվականի գործունեության արդյունքների գնահատում նոր չափանիշներով:

<< հակակոռուպցիոն ռազմավարության շրջանակներում մշակվել է համայնքի սեփականություն համարվող գույքի կառավարման պլանների մշակման վերաբերյալ ուղեցույց, որը տրամադրվել է բոլոր համայնքներին: Իրականացվում է մոնիթորինգ՝ համայնքի սեփականություն համարվող գույքի սակարկությունների իրականացման գործընթացի հրապարակայնության և թափանցիկության նկատմամբ: Մշակվել է օրինագիծ «Տեղական ինքնակառավարման մասին» << օրենքում լրացում կատարելու մասին, ինչը պայմանավորված է համայնքների ավագանիների կողմից Վերահսկիչ պալատի և այլ պետական մարմինների կողմից իրականացված ստուգումների արդյունքների պարտադիր քննարկման պահանջի օրենսդրական կարգավորման անհրաժեշտությամբ: Իրականացվել է համայնքային սեփականություն համարվող շինությունների մոնիթորինգ: Պետական հատվածի արդիականացման ծրագրի շրջանակներում մշակվել և << 225 համայնքներում ներդրվել է համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ, որն ապահովում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող գործառույթների ավտոմատացումը:

Ընդունվել են տեղական ինքնակառավարման մարմինների ուսուլային հնարավորությունների ընդարձակմանն ուղղված մի շարք օրենսդրական փաթեթներ, մասնավորապես՝ «Հարկերի մասին», «Բյուջետային համակարգի մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքները: Այդ օրինագծերի համաձայն բոլոր տեղական հարկերի հետ կապված վարչարարությունը սահմանվում է որպես տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորություն:

2010 թվականին մշակվել է «Աղբահանության և սանհիտարական մաքրման մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը:

2010 թվականին մշակվել է «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքի նախագիծը, ինչպես նաև մշակվել է «Հյուրանոցային հարկի մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

2010 թվականի ընթացքում ընդունվեց «Հողի հարկի արտոնություններ տրամադրելու մասին» Հայստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքը, որի ընդունման կարևորությունն ու հրատապությունը պայմանավորված էր «Հողի հարկի արտոնություններ տրամադրելու մասին» ՀՀ օրենքով սահմանված արտոնությունների ժամկետի երկարաձգման անհրաժեշտությամբ:

Համայնքներում նախադպրոցական բնագավառում մատուցվող ծառայությունների որակը բարձրացնելու, այդ բնագավառում համայնքի ղեկավարի պարտադիր լիազորությունների իրականացման ընթացքում ծագող հարաբերությունները հստակեցնելու նպատակով մշակվել և սահմանված կարգով ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Նախադպրոցական կրթության բնագավառում համայնքի ղեկավարի պարտադիր լիազորությունների իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

2010 թվականին ստեղծվել է համայնքների համար գույքահարկի և հողի հարկի համար տեղեկատվական միասնական բանկ: Հողի հարկի և գույքահարկի միասնական տեղեկատվական համակարգը տեղադրված է ՀՀ բոլոր մարզերում և Երևան քաղաքում, ինչպես նաև ՀՀ տարածքային կառավարման նախարարությունում: Աշխատանքներ են տարվում համակարգի

շահագործման ուղղությամբ: Ամբողջական համակարգի շահագործումը հնարավորություն կտա բարելավել համայնքային բյուջեների պլանավորման, հողի հարկի և գույքահարկի համապատասխան հաշվետվությունների ձևավորման, << տարածքային կառավարման նախարարության կողմից իրականացվող մոնիթորինգի գործընթացները:

Աշխատանքներ են տարվել նաև տեղական ինքնակառավարման մարմինների կողմից սեփական և պատվիրակված լիազորությունների իրականացման որակի բարձրացման, վարչատարածքային բարեփոխումների, հողային ռեսուրսների արդյունավետ կառավարման ուղղություններով:

### **Առողջապահություն**

Առողջապահության ոլորտում << կառավարության առաջնահերթ ռազմավարական նպատակներն են՝ բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովումը, բնակչության առողջության առաջնային պահպանումը, մոր և մանկան առողջության պահպանումը, բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության տրամադրումը, սոցիալական և հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների բուժօգնության ապահովումը, դեղագործական գործունեության կազմակերպումը, բնակչությանը անվտանգ, արդյունավետ և որակյալ դեղերով ապահովումը:

### **Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովում**

Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովումը պետական կարևորագույն խնդիրներից է և երաշխավորվում է «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

2010 թվականի ընթացքում շարունակվել է սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման միասնական պետական քաղաքականության հետագա ձևավորումը և մշակումը, իրավական դաշտի լրամշակումը, պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության աշխատանքի համակարգման, կազմակերպական և մեթոդական դեկավարման բարելավումը:

Այդ նպատակով ներկա զարգացումներին համապատասխան մշակվել են բնակչության առողջության պահպանման, վարակիչ, մասնագիտական, զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների ու թունավորումների կանխարգելման, մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար ու վտանգավոր գործոնների ազդեցության բացառման հարցերը

կանոնակարգող մի շարք իրավական ակտեր, սանհիտարական նորմեր և կանոններ, ՀՀ առողջապահության նախարարի հրամաններ, մեթոդական ցուցումներ, հրահանգներ:

2010 թվականին չեն արձանագրվել այնպիսի վարակիչ հիվանդություններ, ինչպիսիք են դիֆթերիան, սուր պոլիոմիելիտը, սիբիրյան խոցը, խոլերան, ոիկետցիոզները (այդ թվում՝ բծավոր տիֆ, Բրիլի հիվանդություն) և այլն: Սկսած 2006 թվականից՝ հանրապետությունում մալարիայի տեղական դեպքեր չեն արձանագրվել, և Հայաստանը դիմել է Առողջապահության համաշխարհային կազմակերպությանը որպես մալարիայից ազատ գոտի հավաստագրվելու համար:

Իրականացվել են մի շարք կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումներ Հայաստանի Հանրապետությունում գրիպի A (H1N1) վիրուսային վարակի ներկրման և հետագա տարածման կանխարգելման համար:

#### **Բնակչության առողջության առաջնային պահպանում**

Որպես առաջնահերթություն շարունակվել է առողջության առաջնային պահպանման ոլորտի գարգացում՝ որպես առողջապահության համակարգի բարեփոխումների հիմք և բնակչությանը ցուցաբերվող բժշկական օգնության մատչելիությունն ապահովող հիմնական օղակ: Առաջնային օղակում իրականացվող բուժօգնության և մատուցվող ծառայությունների որակի բարելավման նպատակով շարունակել են իրենց գործունեությունը ՀՀ մարզերում և Երևանում ստեղծված որակի վերահսկման խորհրդներն ու որակի համակարգողները, որոնք կատարել են աջակցող վերահսկման այցելություններ իրենց ամրագրված ամբողջառ-պոլիկլինիկական հաստատություններ, կատարել որակի մոնիթորինգ: Առողջապահության նախարարին կից առողջության առաջնային պահպանման որակի բարելավման խորհրդի կողմից քննարկվել և ամփոփվել են տարվա ընթացքում կատարված մշտադիտարկման արդյունքները, որի արդյունքում տրվել են հանձնարարականներ՝ ուղղված առաջնային օղակում իրականացվող բուժօգնության և մատուցվող ծառայությունների որակի հետագա բարելավմանը: 16.11.2010թ. ԱԱՊ որակի N1850-Ա հրամանով հաստատվել է «Որակի ապահովման գործնական միջոցների վերանայված փաթեթը», որով սահմանվում էր 3-ից պակաս բժիշկ ունեցող առաջնային բուժօգնության հաստատություններում որակի ապահովման գործնական միջոցները:

Շարունակվել է բնակչի կողմից առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի ազատ ընտրության գործընթացը, որի ընդգրկումը 2010 թվականին պահպանվել է նախկին՝ 85%-ի մակարդակին:

#### **Մոր և մանկան առողջության պահպանում**

Մոր և մանկան առողջության պահպանումն առողջապահության ոլորտի կարևոր առաջնահերթություններից է: 2010 թվականին կարևորվել է կանաց և երեխաների բժշկական օգնության կազմակերպման անհրաժեշտ ծավալների և մատչելիության, ինչպես նաև հիվանդությունների կանխարգելման միջոցառումների ապահովումը՝ ուղղված երեխաների և մայրերի մահացության ու հիվանդացության ցուցանիշների նվազմանը:

Շարունակաբար ներդրվել է «Ծննդօգնության պետական հավաստագրի ծրագիրը», որն ուղղված է կանաց համար առավել մատչելի և իրապես անվճար ծննդօգնության ծառայությունների մատուցմանը, որը նպաստել է ծննդաբերությունների ավելացմանը մոտ 7.5%-ով: Բացի այդ, եռամյա կտրվածքով արձանագրվել է մայրական մահացության իշեցում 5%-ի չափով:

2010 թվականի ընթացքում շարունակել են իրականացվել երեխաների մահացության, հիվանդացության և հաշմանդամության կանխարգելմանն ուղղված, ինչպես նաև ֆենիլկետոնուրիայի, հիպոթիրեոզի և լսողության նորածնային սկրինինգի իրականացման ծրագրերը: Իրականացվել են մի շարք ծրագրեր՝ երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման, աղջիկների վերարտադրողական առողջության գնահատման ու բուժման, խրոնիկ հիվանդ և հաշմանդամ երեխաների վերականգնողական բուժման ուղղությամբ:

Միջազգային համագործակցության շրջանակներում որոշակի աշխատանք է կատարվել երեխաների և կանաց բժշկական օգնության որակի բարելավման, մասնագետների գիտելիքների բարձրացման, բուժհաստատությունների նյութատեխնիկական հագեցվածության բարձրացման, կարողությունների հզորացման, մանկական և մայրական մահացության նվազեցման, անպտուղ ամուսնության հիմնախնդրի հաղթահարման ուղղությամբ:

**Բնակչության սոցիալապես անապահով և առանձին /հատուկ/ խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության տրամադրումը, սոցիալական և հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների բուժօգնության ապահովում**

Սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների վաղ հայտնաբերումը, հիվանդների բուժօգնության կազմակերպումը և շարունակական հսկողությունը, բնակչության շրջանում առողջ ապրելակերպի և հիգիենայի վերաբերյալ գիտելիքների քարոզությունը սկզբունքային նշանակություն ունեն բնակչության առողջության պահպանման հարցում, նպատակն է՝ բնակչության աղքատ խավերի սոցիալապես անապահով առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության և սպասարկման մատչելիության բարձրացումը և առավելագույն ապահովումը:

Կարևոր է նաև սոցիալական առումով հատուկ նշանակություն ունեցող և անապահով բնակչության համար մեծ ոիսկ ներկայացնող այնպիսի հիվանդությունների դեմ պայքարի

արդյունավետությունը, կանխարգելումը և հետագա տարածումը, ինչպիսիք են հոգեկան, նարկոլոգիական, ինֆեկցիոն, սեռական ճանապարհով փոխանցվող, արյունաբանական (այդ թվում՝ օնկրիեմոտոլոգիական) հիվանդությունները, ախտորոշված չարորակ նորագոյացությունները, վերակենդանացման և անհետաձգելի միջոցառումներ պահանջող հիվանդությունները և վիճակները, մալարիան, տոլբերկուլյոզը, ՄԻԱՎ-ը և այլն:

### **Դեղագործական գործունեության կազմակերպում, դեղերով և տեխնոլոգիաներով ապահովում**

Բնակչությանը պատշաճ որակի բժշկական օգնության և սպասարկման ծառայություն մատուցելու գործում կարևոր նշանակություն ունի ՀՀ-ում անվտանգ, արդյունավետ և որակյալ դեղերի առկայությունը և դրանց մատչելիությունը՝ համապատասխան տեսականիով (ՀՀ հիմնական դեղերի ցանկ): 2010 թվականին կարևորվել է ՀՀ հիմնական դեղերի ցանկում առկա, բայց ՀՀ-ում չգրանցված և ցածր պահանջարկ ունեցող, սակայն կենսականորեն անհրաժեշտ դեղերի՝ ՀՀ-ում առկայության ապահովման նպատակով դրանց պետական գրանցումը:

2010 թվականին կարևորվել է կենտրոնացված կարգով ձեռքբերվող դեղերի անվանացանկի համալրումը նորագույն բուժման սխեմաների համար անհրաժեշտ դեղերով, պարբերաբար իրականացվել են դեղագործական շուկայում դեղերի գների ուսումնասիրություններ, որը հնարավորություն է տվել բժշկական հաստատությունների կողմից բնակչությանն անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերով ապահովելիս վերահսկել դրանց գները:

### **Կրթություն և գիտություն**

Հայաստանում պետական ու ազգային կարևորագույն խնդիր է համարվում կրթության համակարգի պահպանումը, զարգացումը և միջազգային ասպարեզում նրա մրցունակության ապահովումը: ՀՀ կրթության բնագավառի 2010 թվականի գերակա խնդիրներն են եղել նախադպրոցական կրթության մատչելիության բարձրացումը, հանրակրթության ոլորտի բարեփոխումները, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության զարգացումը, բարձրագույն կրթության բարեփոխումները՝ ըստ Բոլոնիայի գործընթացի հիմնական ուղղությունների:

Նախադպրոցական կրթության ոլորտում հիմնական աշխատանքներն իրականացվել են համաձայն «ՀՀ-ում նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015թթ. ռազմավարական ծրագրի»: ՀՀ Արարատի և Արագածոտնի մարզերի 41 համայնքում ավագ նախադպրոցական տարիքի երեխաների համար հիմնվել են նախակրթարաններ:

Հանրակրթության կառավարման ոլորտում կադրային քաղաքականության տեսակետից կարևորագույն ձեռքբերումներից է դպրոցների տնօրենների հավաստագրման և վերապատրաստման նոր կարգի ընդունումը: Ընդունվել է նաև ուսուցիչների ատեստավորման նոր կարգը, որը հնարավորություն է տալիս իրականացնել տարբերակված ֆինանսավորում և մասնագիտական հետագա կատարելագործման համար ստեղծում խրախուսման խթաններ:

2010 թվականին ևս 43 դպրոցներ վերակազմավորվել են առանձին գործող ավագ դպրոցների:

Շարունակվել է դպրոցների համակարգչայնացման և համացանցայնացման աշխատանքը՝ ինտերնետը հասանելի է դարձել ևս 300 դպրոցում, ընդհանուր առմամբ 944 դպրոց ապահովված է ինտերնետի մուտքով:

Մասնագիտական կրթության ոլորտում կառավարության քաղաքականությունն ուղղված է եղել աշխատաշուկայի պահանջներին միտված մասնագիտական կրթության և կրթական ծառայությունների մատուցման բարձր որակի ապահովմանը:

Հանրապետության 86 նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում վերապատրաստվել են շուրջ 1000 տնօրեններ, փոխտնօրեններ և մասնագետներ:

Տեխնիկական աջակցության ծրագրի շրջանակներում 12 փորձարարական քոլեջների տրամադրվել են 9 տեսակի 20 մասնագիտական ուսումնական լաբորատորիաներ: 4 ուսումնական հաստատությունների տրամադրվել են թվով 352 սարքեր և սարքավորումներ:

2010/2011 ուսումնական տարվանից << բարձրագույն և հետքուհական մասնագիտական կրթության երրորդ աստիճանում (հետազոտողի կրթական ծրագրով) ներդրվել է կրեդիտային համակարգ:

Մեկնարկել է բուհերի մրցակցային ֆինանսավորման փորձնական ծրագիրը, որը հնարավորություն է տալիս բոլոր բուհերին մրցութային կարգով ստանալ դրամաշնորհներ: Ընդունվել է «Բարձրագույն և հետքուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների հեռավար (դիստանցիոն) ձևով ուսուցման կարգը»: Մշակվել են մասնագիտական կրթության որակավորումների բնութագրերը՝ ըստ որակավորման աստիճանների, որը <<այսատանի որակավորումների ազգային շրջանակի մասն է կազմելու:

Մշակվել է «Կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագիրը», որի հիմքում դրվել են նաև << կառավարության կողմից հաստատված կրթության առանձին ոլորտների ռազմավարական ծրագրերը և զարգացման հայեցակարգերը:

Մշակվել է << ՀՆԱ-ի աճի վրա գիտության և կրթության ոլորտի ազդեցության վերաբերյալ առաջարկությունների փաթեթը:

2010 թվականին հանրակրթական դպրոցներում աշակերտ/ուսուցչական դրույք և աշակերտ/ոչ ուսուցիչ հարաբերակցությունների մակարդակը կազմել է 14.56 և 24.15, իսկ 2009 թվականին կազմել են համապատասխանաբար 14.55 և 24.11:

Ուսուցիչների ուսումնական ծանրաբեռնվածությունը 2010 թվականին կազմել է շաբաթական 22 ժամ, ինչպես նախորդ տարին էր:

Հայաստանում ուսուցիչների միջին ամսական հաշվարկային աշխատավարձի՝ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի նկատմամբ հարաբերակցությունը 2005 թվականի 1.0-ից 2010 թվականին հասցվել է 1.4-ի:

Հայաստանում 2010 թվականին գործել է 1404 դպրոց (հանրակրթական դպրոց՝ 1372, հատուկ դպրոց՝ 24, մասնագիտացված դպրոց՝ 8), 54 արտադրոցական կազմակերպություն: Դպրոցների մանկավարժների միջին ամսական աշխատավարձը կազմել է 118093 դրամ, վարչական անձնակազմինը՝ 176143 դրամ:

### ***Սպորտ և երիտասարդության հարցեր***

Սպորտի և երիտասարդության ոլորտում կառավարության վարած քաղաքականության իրականացումը ենթադրում է մի շարք հիմնական խնդիրների լուծում, որոնք ներկայում գտնվում են կառավարության ուշադրության կենտրոնում՝ զանգվածային ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառումների անցկացում, հանրապետական փառատոնների անցկացում, հաշմանդամների տարբեր խմբերի շրջանում ֆիզկուլտուրային-առողջարարական աշխատանքների հետագա բարելավում, հաշմանդամ մարզիկների, աշխարհի և Եվրոպայի առաջնություններին հանրապետության մարզիկների մասնակցությանն աջակցություն, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզչությանը և առողջ ապրելակերպի արմատավորման քարոզմանն ուղղված համայիր միջոցառումների և ծրագրերի իրականացում, ոլորտը կարգավորող իրավական ակտերի մշակման գործընթացի կազմակերպում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում բարեփոխումներ կատարելու, Եվրախորհրդի ծրագրերին, սպորտի Եվրոպական խարտիայի պահանջներից բխող հիմնահարցերին, խնդիրներին ծանոթացնելու նպատակով հանրապետական, մարզային, համայնքային սեմինար-խորհրդակցությունների անցկացում, բնակչության, մասնավորապես՝ ուսումնական հաստատություններում ֆիզիկական դաստիարակության անընդհատությանը, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության դաստիարակությանը նպատող միջոցառումների անցկացում:

Համակարգում գործում են 25 մանկապատանեկան մարզադպրոց և օլիմպիական հերթափոխի պետական մարզական 2 քոլեզ: Նշված մանկապատանեկան մարզադպրոցների, ինչպես նաև

պետական աջակցություն ստացող «Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի», «Հայաստան», «Սևան», «Դինամո» հասարակական կազմակերպությունների 23 մանկապատանեկան մարզադպրոցների հիմնական խնդիրներն են մատաղ սերնդի առողջության պահպանում ու ամրապնդումը, ընտրած մարզաձևերում մարզական հերթափոխի պատրաստումը, պարապողների մարզական ունակությունների կատարելագործումը, Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի համալրումը, միջազգային ասպարեզում վերջիններիս արդյունավետ մրցունակության ապահովումը: Նշված խնդիրները, ինչպես նաև կրտսեր մասնագետների պատրաստման հարցերը կոչված են լուծելու օլիմպիական հերթափոխի պետական մարզական 2 քոլեջները:

Կառավարության քաղաքականության առաջնահերթ խնդիրը և ուղղությունն են համարվում մարզական հերթափոխի պատրաստման համակարգի պահպանումն ու զարգացումը, մատուցվող ծառայությունների բարելավումը, նրանց որակի և արդյունավետության բարձրացումը, ինչն իր հերթին կնպաստի երեխաների և պատանիների շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայականացման հետագա զարգացմանը և համակարգի կազմակերպություններում աշխատող մարզիչ-մանկավարժների ու դեկավար անձնակազմի սոցիալական վիճակի բարելավմանը:

Ներկայումս հանրապետությունում գործող Երևանի և Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջներում սովորում են համապատասխանաբար 558 և 286 սովորող, որից 529-ը ստանում է կրթաթոշակ:

Օլիմպիական հերթափոխի քոլեջը եզակի նշանակություն ունեցող միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է, որը կոչված է հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցների լավագույն և հեռանկարային մարզիկների համար ապահովելու պայմաններ՝ մարզումները և կրթական գործընթացը համատեղելու, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի համար մասնագետներ պատրաստելու նպատակով: Քոլեջներում ուսուցումն իրականացվում է անվճար հիմունքներով: 2010 թվականին իրականացվել է մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների համար վերապատրաստման ծրագիր՝ 6956,2 հազ. դրամ արժեքով:

Մեծ նվաճումների սպորտի բնագավառում կառավարության իրականացրած քաղաքականությունն ուղղված է.

- սպորտի բարձրագույն նվաճումների քաղաքականության ապահովմանը,
- սպորտի զարգացման նպատակային ծրագրերի մշակմանն ու իրագործմանը,
- մարզիչ-մանկավարժների վերապատրաստման աշխատանքների կազմակերպմանը,
- օլիմպիական շարժման զարգացմանը, Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի և մարզական ֆեդերացիաների գործունեության աջակցմանը,

- մարզածերի գարգացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի ամրապնդմանն ու գարգացմանը,
- միջազգային, այդ թվում՝ սփյուռքի հետ կապերի ամրապնդմանը,
- մարզածերի հավաքական թիմերի գիտամեթոդական աշխատանքների ապահովմանը,
- միջայտական մարզական հարաբերությունների գարգացմանը:

2010 թվականին անցկացվել են Հայաստանի Հանրապետության 90 առաջնություններ, որոնց մասնակցել են 7600 մարզիկներ: Աշխարհի և Եվրոպայի առաջնություններին, գավաթի խաղարկություններին և միջազգային մրցումներին նախապատրաստվելու նպատակով մարզածերի Հայաստանի Հանրապետության հավաքականներում ընդգրկված 3950 մարզիկների համար կազմակերպվել են 127 ուսումնամարզական հավաքներ: Տարբեր մարզածերից Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի 1991 մարզիկներ մասնակցել են աշխարհի և Եվրոպայի առաջնությունների՝ նվաճելով 257 մեդալ, որից՝ 43 ոսկե, 51 արծաթե, 63 բրոնզե:

Մասսայական և մանկապատանեկան սպորտի բնագավառում կառավարության իրականացրած քաղաքականությունն ուղղված է.

- տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների մարզական ոլորտի աշխատանքների ակտիվացմանը,
- մարզական ակտիվի ներուժի օգտագործմանը, մարզական միջոցառումներում գյուղական երիտասարդության ներգրավմանը,
- հաշմանդամ-մարզիկների համար սպորտով զբաղվելու համապատասխան պայմանների ստեղծմանը:

Պետական երիտասարդական քաղաքականության ոլորտի 2010 թվականի ռազմավարական ուղղվածությունը հանգում է հետևյալ նպատակների իրականացմանը՝

- զարգացնել մարզերում իրականացվող երիտասարդական պետական քաղաքականությունը (մարզային երիտասարդական կենտրոնների գործունեության ապահովում և համայնքային երիտասարդական կենտրոնների ստեղծում, գյուղական և սահմանամերձ շրջանների երիտասարդության զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացում),
- բարձրացնել հասարակական, քաղաքական զարգացումներին նրանց մասնակցության աստիճանը,
- նպաստել երիտասարդության գործունեությունն ապահովող իրավական դաշտի զարգացմանը, երիտասարդության շրջանում հոգևոր-մշակութային և գիտական մակարդակի բարձրացմանը, ազատ ժամանցի ակտիվ և նպատակային կազմակերպմանը,

- ուսումնասիրել առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները և բարելավել երիտասարդների կենսապայմանները,
- հայտնաբերել և խրախուսել տաղանդավոր երիտասարդներին,
- նպաստել երիտասարդության շրջանում հայրենասիրական դաստիարակությանը, քաղաքացիական գիտակցության բարձրացմանը,
- ակտիվացնել և զարգացնել համագործակցությունը միջազգային երիտասարդական կառույցների հետ,
- ստեղծել պայմաններ երիտասարդությանը անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովելու համար,
- ստեղծել պայմաններ նրանց լիակատար ինքնադրսնորման համար:

### ***Եներգետիկա և բնական պաշարներ***

Էներգետիկայի և բնական պաշարների ոլորտներում << կառավարության 2010 թվականի գերակա խնդիրների իրականացման արդյունքները բերված են ստորև:

#### **Էներգետիկա արտադրող հզորությունների ստեղծում և վերազինում**

Որոտանի ՀԷԿ-երի համակարգի վերազինման աշխատանքների իրականացման նպատակով վարկային համաձայնագրի ստորագրում, գործընթացի կազմակերպում և վերահսկում: Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիրի վերականգնման ծրագրի իրականացման համար << ֆինանսների նախարարության, Գերմանական KfW բանկի և «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ՓԲԸ-ի միջև 2010թ. հոկտեմբերի 20-ին կնքվեց վարկի տրամադրման և իրականացման պայմանագիր 51 մլն եվրո գումարի չափով: Ենթավարկի տրամադրման նպատակով «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ՓԲԸ-ի և << ֆինանսների նախարարության միջև 2010թ. դեկտեմբերի 15-ին կնքվեց ենթավարկային համաձայնագիր: Իրականացվում է Որոտանի ՀԷԿ-երի համալիրի վերազինման ծրագրի վարկային պայմանագրի առանձին մաս հանդիսացող «Հատուկ համաձայնագրի» համաձայնեցման և ստորագրման գործընթացը:

Մեղրի ՀԷԿ-ի շինարարության ծրագրի շուրջ իրանական կողմի հետ տարվող բանակցությունների ավարտում, անհրաժեշտ համաձայնագրերի ու պայմանագրերի կնքում: 2010 թվականի մարտի 11-12-ը Երևանում տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև Արաքս գետի հիդրոէլեկտրակայանների (ՀԷԿ) նախագծի իրականացման համատեղ տեխնիկական-գործադիր կոմիտեի երկրորդ նիստը: Նիստի ընթացքում

քննարկվեց նաև իրանական ներդրող ընկերության ներկայացրած առաջարկը՝ Մեղրի ՀԷԿ-ը ՅՈՒ Եղանակով կառուցելու վերաբերյալ:

2010 թվականի սեպտեմբերի 16-ին << կառավարությունը հավանություն տվեց Հայաստանի Հանրապետության կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության «Թավան Աար Արագ» ընկերության միջև «Մեղրի հիդրոէլեկտրակայանի կառուցում-տնօրինում-շահագործում-փոխանցում հիմունքներով կառուցման» թույլտվության պայմանագրի կնքման առաջարկությանը:

2010թ. հոկտեմբերի 14-15-ը ԻԻՀ Էնեգետիկայի նախարարի գլխավորած պատվիրակության՝ Հայաստանի Հանրապետություն կատարած այցի ընթացքում << կառավարության, ի դեմս << Էներգետիկայի և բնական պաշարների նախարության և «Թավան Աար Արագ» ընկերության միջև ստորագրվեց Թույլտվության համաձայնագիր՝ Արաքս գետի վրա կառուցում-տնօրինում-շահագործում-փոխանցում սկզբունքով՝ Մեղրի հիդրոէլեկտրակայան կառուցելու վերաբերյալ: Ստորագրվեցին նաև Փոխըմբռնման հուշագրեր՝ Էլեկտրաէներգիայի բնագավառում և Երկու երկրների ընդհանուր սահմանում բնապահպանական կանոնների և Արաքս գետի ջրի որակի պահպանման ոլորտում համագործակցության զարգացման վերաբերյալ:

2010 թվականի դեկտեմբերի 19-ին Նորդուզում և Ագարակում տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև Արաքս գետի հիդրոէլեկտրակայանների (ՀԷԿ) նախագծի իրականացման համատեղ տեխնիկական-գործադիր կոմիտեի երրորդ նիստը, որի ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց ծրագրի գործնական աշխատանքների մեկնարկի, ինչպես նաև Արաքս գետի ջրերի աղտոտվածության վերացման խնդիրների վերաբերյալ:

#### Տարածաշրջանային ինտեգրացում և Էլեկտրաէներգետիկական համակարգի տեխնիկական վերազինում

Իրան-Հայաստան և Վրաստան-Հայաստան 400 կՎ լարման Էլեկտրահաղորդման օդային գծերի կառուցման համար անհրաժեշտ համաձայնագրերի ու պայմանագրերի կնքում: 2010 թվականի հուլիսի 9-ին «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ և Իրանական «Սանիր» ընկերության միջև ստորագրվել է համաձայնագիր, ըստ որի՝ օդային գծի Հայաստանում գտնվող հատվածի (ԻԻՀ սահման-«Հրազդանի 5-րդ Էներգաբլոկ» 275 կմ) և «Նորավան» Ենթակայանի շինարարությունն իրականացվելու է 18 ամսվա ընթացքում, նախատեսված 20% կանխավճարը «Սանիր» ընկերությանը փոխանցելուց հետո:

2010 թվականի հոկտեմբերի 15-ին տեղի ունեցավ «Իրան-Հայաստան 400 կՎ երրորդ երկշղթա Էլեկտրահաղորդման գծի» շինարարության հիմնարկեքի արարողությունը:

Ավարտվել են Իրան-Հայաստան 400 կՎ օդային գծի նախագծերի փորձաքննական աշխատանքները: «Նորավան» 400/220 կՎ ենթակայանի նախագծային աշխատանքները շարունակվում են:

2010 թվականի հունվարի 21-ին ընդունվեց << կառավարության «Վրաստան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի՝ Հայաստանի Հանրապետության տարածքով անցնող մասի ծրագրի մասին» N28 որոշումը: 2010թ. հունվարի 26-ին ք. Երևանում (<<և Վրաստանի միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 8-րդ նիստի ընթացքում) «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» և «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ների և «Վրացական պետական էներգահամակարգ» ՍՊԸ-ի միջև ստորագրվեց «Համաձայնագիր»՝ 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի շինարարության վերաբերյալ, որով սահմանվեցին կողմերի պարտականությունները և կատարվող աշխատանքների ծավալները:

Հայաստան-Վրաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի շինարարավերականգնողական աշխատանքների տեխնիկական խնդիրները կարգավորելու նպատակով ստեղծվեց համատեղ աշխատանքային խումբ: 2010 թվականի մարտի 15-16-ը ք. Թբիլիսիում կայացավ աշխատանքային խմբի առաջին հանդիպումը: Կողմերը հաստատեցին աշխատանքային խմբի կազմը և հետագա 6 ամիսների պլան-գրաֆիկը, ստորագրեցին «Ալավերդի» բարձր լարման էլեկտրահաղորդման գծի համար էլեկտրաէներգիայի փաստացի ծավալների հաշվարկի մեթոդիկայի նախագիծը, քննարկեցին Հայաստանի Հանրապետության և Վրաստանի էներգահամակարգերի գուգահեռ աշխատանքի իրականացման հետ կապված տեխնիկական և այլ հարցեր՝ հաշվի առնելով երկու երկրների օրենսդրությունը:

<< կառավարության 2010 թվականի մայիսի 13-ի թիվ 557-Ա և թիվ 617-Ա որոշումներով համաձայնություն տրվեց «Հայաստանի Հանրապետության և Վրաստանի կառավարությունների միջև էլեկտրաէներգետիկական օբյեկտներում վթարների և այլ արտակարգ իրավիճակների դեպքում փոխօգնության մասին», «Հայաստանի Հանրապետության և Վրաստանի կառավարությունների միջև էլեկտրաէներգիայի և հղորությունների տարանցման մասին» համաձայնագրերի կնքման առաջարկություններին: Հաշվի առնելով << շահագրգիռ գերատեսչություններից և համապատասխան կազմակերպություններից ստացված դիտողությունները և առաջարկությունները՝ նշված համաձայնագրերի նախագծերը լրամշակվեցին և 2010 թվականի սեպտեմբերին փոխանցվեցին վրացական կողմին:

2010 թվականի հոկտեմբերի 12-13-ը, նոյեմբերի 23-25-ը ք. Թբիլիսիում կայացան աշխատանքային խմբի հերթական հանդիպումները, որոնց ընթացքում քննարկվեցին և

փոխհամաձայնեցվեցին էլեկտրաէներգիայի արտահանման և ներմուծման կազմակերպման համար ծառայող մի շարք պայմանագրերի և մեթոդիկաների նախագծեր:

Սակայն Վրացական կողմը կասեցրել է Հայաստան-Վրաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի շինարարության վերաբերյալ համաձայնագիրը՝ վեճերի լուծման վերաբերյալ կողմերի միջև առաջացած տարածայնությունների պատճառով:

### **ԶՐԱՅԻՆ ՄՆՄՔԵՍՈՒԹՅՈՒՆ**

2010 թվականի ընթացքում ջրային տնտեսության ոլորտում << կառավարության գործունեության հիմքում ընկած էին << ջրային օրենսգրքի, ջրի ազգային ծրագրի և ջրի ազգային քաղաքականության մասին օրենքների հիմնարրույթները, ինչպես նաև << կառավարության ջրային ոլորտի բարեփոխումներին նվիրված որոշումները (այդ թվում՝ Կայուն զարգացման և պետական միջնաժամկետ ծրագրերը), գերակա խնդիրներն ու միջոցառումները, որոնցով հաստատված են համակարգի հիմնական ծրագրային ուղղությունները:

Հաշվետու տարում շարունակվել են աշխատանքները՝ համակարգում կառուցվածքային փոփոխությունների, հաշվառման համակարգի ներդրման ու կատարելագործման, ջրամատակարարման տևողության ավելացման ու ջրի որակի բարելավման, մասնավոր կառավարման պայմանագրերի վերահսկման, մատակարարված ջրի դիմաց վճարների հավաքման մակարդակի բարձրացման, համակարգում կորուստների նվազեցման և ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացման, ջրաչափական սարքերի տեղադրման, բյուջետային և վարկային միջոցների արդյունավետ օգտագործման և նոր վարկային ու դրամաշնորհային միջոցների ներգրավման և այլ ուղղություններով:

Զրային տնտեսության ոլորտում 2010 թվականի ընթացքում կատարվել են հետևյալ հիմնական աշխատանքները:

Կնքված պայմանագրերի շրջանակներում ապահովվել է «Հայջրմուղկոյուղի», «Լողի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների արդյունավետ բնականոն գործունեությունը: Նշված ընկերությունների մասով ապահովվել է նաև Համաշխարհային բանկի, Ասիական Զարգացման բանկի, Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի, KfW բանկի վարկային ներդրումային ծրագրերի համապատասխան չափաբաժիններով իրականացումը: 2010 թվականի ընթացքում ջրային տնտեսության համակարգի կազմակերպությունների կողմից ապահովվել է միջինում 1 ժամով ջրամատակարարման տևողության ավելացում:

Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի (EBRD) ֆինանսավորմամբ Աևան, Զերմուկ, Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքներում ծրագրով նախատեսված կոյուղագծերի կառուցման աշխատանքները հիմնականում ավարտվել են, և կառուցվել է շուրջ 23 կմ կոյուղագիծ: Հանրապետությունում առաջին անգամ Գավառի, Մարտունու, Վարդենիսի մաքրման կայանների կառուցման մասով մշակվել և կազմվել են նախագծանախահաշվային փաստաթղթեր:

Աբու-Դաբիի Զարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրով Արփա-Աևան թունելի վթարային հատվածներում շինարարական աշխատանքներ կատարելու նպատակով մրցութային կարգով ընտրվել է կապալառու կազմակերպություն և սկսվել է Արփա-Աևան թունելի վթարավտանգ հատվածների շինարարական աշխատանքների իրականացումը: Ընդունում, 2010թ. ընթացքում Արփա-Աևան թունելի վերականգնման նպատակով կատարվել են 1.1 մլրդ դրամի շինարարական աշխատանքներ:

Ոռոգում ջրառ իրականացնող «Աևան-Հրազդանյան-ջրառ», «Ախուրյան-Արաքս-ջրառ» և «Դեբետ-Աղստև-ջրառ» ՓԲԸ-ների, ինչպես նաև ոռոգման ջուր մատակարարող 44 ջրօգտագործողների ընկերությունների գործունեության արդյունքներով ապահովվել է կայուն ջրամատակարարում, և ընկերություններն ունեցել են ֆինանսական կայուն վիճակ:

Համակարգի կազմակերպությունների հիմնական գործունեության վերլուծությունը ցույց է տալիս, որ իրագործվում են հաստատված ծրագրեր՝ տալով զգալի դրական տեղաշարժեր: Միայն հավաքագրումների գծով 2010 թվականին համակարգի գանձումը կազմել է շուրջ 18.73 մլրդ դրամ՝ 2009 թվականի 16.85 մլրդ դրամի փոխարեն կամ ավել է գանձվել շուրջ 1.88 մլրդ դրամ: Խմելու ջրի մասով գանձվել է շուրջ 15.17 մլրդ դրամ՝ 2009 թվականի 13.63 մլրդ դրամի դիմաց կամ ավել է գանձվել շուրջ 1.54 մլրդ դրամ, իսկ ոռոգման ոլորտում գանձվել է 3.56 մլրդ դրամ՝ 2009 թվականի 3.22 մլրդ դրամի դիմաց կամ ավել է գանձվել շուրջ 0.34 մլրդ դրամ: Ընդունում, ոռոգման ոլորտում գանձման տոկոսը 2010 թվականին կազմել է 81.7%՝ 2009 թվականի 87.4%-ի դիմաց: Էլեկտրաէներգիայի ծախսի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ համակարգում իրականացված ներդրումային և կազմակերպչական միջոցառումների արդյունքում հնարավորություն է ստեղծվել ավելի քիչ էլեկտրաէներգիա ծախսել՝ անցած տարիների համեմատությամբ:

2010 թվականի ընթացքում ջրային տնտեսության համակարգի կազմակերպություններից ՀՀ պետական բյուջե են փոխանցվել շուրջ 5.5 մլրդ դրամի հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ, որը 2009 թվականի համեմատ ավել է շուրջ 30 մլն դրամի չափով:

Եթե խմելու ջրի ոլորտի բոլոր կազմակերպությունները նախկինում սուբսիդավորվում էին, ապա ներկայումս «Երևան Ջուր» ՓԲԸ-ն ոչ միայն չի սուբսիդավորվում, այլև <<պետական բյուջե է վճարել շուրջ 2.51 մլրդ դրամ:

«Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-Ջրմուղկոյուղի», «Շիրակ-Ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների սպասարկման տարածքներում տեղի են ոնեցել ջրամատակարարման տևողության ավելացումներ:

2010 թվականին Սևանա լճից (առանց Մարտունու տարածաշրջանի պոմպակայաններով իրականացված ջրառը հաշվի առնելով) բաց է թողնվել 156.44 մլն մ<sup>3</sup> ջուր, որը նախորդ տարվա նույն ցուցանիշը գերազանցում է 31.34 մլն մ<sup>3</sup>-ով:

Սևանա լիճ է տեղափոխվել 236.96 մլն մ<sup>3</sup> ջուր, որը նախորդ տարվա նույն ցուցանիշը գերազանցում է 79.91 մլն մ<sup>3</sup>-ով: 2010 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Սևանա լիճ մակարդակը կազմել է 1899.71 մ, որը նախորդ տարվա նույն ցուցանիշը գերազանցում է 46 սանտիմետրով:

Շարունակել է բարելավվել հաշվառման համակարգը, կատարվել են ջրամատակարար կազմակերպությունների միջև գույքային հարաբերությունների և պարտավորությունների ճշգրտումներ, ինչպես նաև իրականացվել են կանոնադրությամբ վերապահված այլ լիազորություններ: Միաժամանակ համակարգի խմելու ջուր մատակարարող կազմակերպությունների սպասարկման տարածքում բաժանորդների մոտ ապահովվել է ջրաչափական սարքերի տեղադրման գործընթացը: Եթե 2009 թվականին այն կազմել է 587700, ապա 2010 թվականին՝ 607100, որը երկու տարիների համեմատությամբ ավել է 19400-ով:

Աջակցություն է ցուցաբերվել Հազարամյակի մարտահրավերներ ծրագրի ոռոգման ոլորտին ուղղված աշխատանքների իրականացմանը:

2010 թվականի ընթացքում կառուցվել են 901 կմ խողովակաշարեր և ջրատարներ, խմելու ջրագեր՝ 697 կմ, կոյուղու կոլեկտորներ՝ 23 կմ և ոռոգման ջրանցքներ և ջրատարներ՝ 181 կմ:

Աշխատանքներ են իրականացվել կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և նորոգման աշխատանքների, ինչպես նաև գրունտային ջրերի մակարդակների որոշման աշխատանքների իրականացման ուղղություններով:

Իրականացվել են դրենաժների մաքրման և խորացման աշխատանքներ՝ 346 կմ-ի չափով, այդ թվում՝ մայր կոլեկտորների երկրորդային և երրորդային չորացուցիչների մաքրում և խորացում՝ 168 կմ-ի չափով, երրորդ կարգի դրենաժային համակարգերի մաքրում՝ 178 կմ-ի չափով: Միաժամանակ աշխատանքներ են իրականացվել գրունտային ջրերի մակարդակների որոշման աշխատանքների իրականացման ուղղություններով:

Զրային տնտեսության ոլորտում վերը նշված աշխատանքների իրականացման արդյունքում խմելու և ոռոգման ջրերի մատակարարման, ինչպես նաև ջրահեռացման ոլորտներում 2010 թվականի ընթացքում ապահովվել է համակարգերի հուսալի և անվտանգ շահագործումը, բարելավվել է խմելու և ոռոգման ջրամատակարարումը, իրականացվել է համակարգի անվտանգ շահագործումը, կրճատվել են կորուստները, ապահովվել է էներգախնայողությունը, բարելավվել է ծառայությունների մատուցման որակը, ապահովվել է ջրամատակարարման շարունակականության ավելացումը և այլն:

### **Տրանսպորտ և կապ**

Տրանսպորտի և կապի բնագավառում կառավարության 2010 թվականի տնտեսական քաղաքականության հիմնական նպատակը շարունակել է մնալ փոխադրումների և հուսալի կապի իրականացման ապահովումը՝ գոյություն ունեցող ճանապարհների (Երկաթուղային, ավտոմոբիլային) ամբողջական ու արդյունավետ օգտագործմամբ, ինչպես նաև Հյուսիս-Հարավ ավտոմայրուղու և Երկաթուղու շինարարությամբ ու կապի համակարգերի կատարելագործմամբ:

Ընդհանուր առմամբ 2010 թվականին նծված բնագավառում << կառավարության ռազմավարության հիմնական ուղղություններնեն եղել՝

- Ճանապարհների պահպանման և շահագործման նոր կարգի ներդրումը՝ կատարողականի վրա հիմնված մեթոդի կիրառմամբ, որը հնարավորություն կտա ավելի արդյունավետ կազմակերպել և իրականացնել ճանապարհների պահպանման և շահագործման աշխատանքները.
- Շուրջ 350 կմ Երկարությամբ ճանապարհահատվածների վերանորոգման աշխատանքները, այդ թվում՝ 224 կմ-ը՝ ներգրավված վարկային միջոցների հաշվին, իսկ 126 կմ-ը՝ պետական բյուջեի ֆինանսավորմամբ.
- Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող կենսական նշանակության ավտոճանապարհների բարելավման ծրագրով 130.1 կմ Երկարությամբ ճանապարհահատվածների հիմնանորոգումը.
- Ասիական զարգացման բանկի աջակցությամբ գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրով վերականգնված և շահագործման հանձնված 89 կմ ընդհանուր Երկարությամբ ավտոճանապարհները << Արարատի, Գեղարքունիքի և Կոտայքի մարզերում.
- «Տրանսպորտային փոխադրումներ» ՊՈԱԿ-ի ստեղծումը, որի հիմնական գործառույթը Հայաստանի Հանրապետությունում մեկ ընդհանուր միասնական Երթուղային ցանցի ձևավորումն է և ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղիների և

չվագուցակների սխեմաների մշակումը, որը կհանգեցնի երթուղիների օպտիմալ աշխատանքին, կապահովի տրանսպորտի առանձին տեսակների փոխհամագործակցումը.

• Էլեկտրոնային լիցենզավորման համակարգի ներդրումը, որի օգնությամբ հնարավոր է դարձել լիցենզիա ստանալու համար էլեկտրոնային եղանակով ներկայացնել հայտ և ստանալ լիցենզիան.

• «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ-ի հետ համատեղ Հյուսիս-Հարավ երկաթուղային գծի շինարարության տեխնիկատնտեսական հիմնավորում իրականացնող խորհրդատուի տեխնիկական առաջադրանքի նախապատրաստումը և հաստատումը.

• Վանաձոր-Ֆիոլետովո նոր երկաթուղու ծրագրի ընտրության նպատակով միջգերատեսչական աշխատանքային խմբի ստեղծումը և նոր երկաթուղու կառուցման նախընտրելի տարբերակի վերաբերյալ առաջարկության մշակումը.

• Հայկական երկաթուղու վրա կատարված շուրջ 20.7 մլրդ դրամի ներդրումները.

• Երկաթուղով բեռնափոխադրումների ծավալի աճը, որը նախորդ տարվա համեմատ կազմել է 2.6% (2839,9 հազար տոննա, այդ թվում՝ ներհանրապետական բեռնափոխադրումների ծավալն աճել է 2.9%-ով) և ուղևորաշրջանառության ծավալի 49.8%-ով աճը.

• Հաստատվել են «Հարավկովկայան երկաթուղի» ՓԲԸ-ի 2011 թվականի հասցեական ներդրումների և եռամյա ծրագրերը (2011-2013թթ. համար).

• Ազատականացվել են տրանսպորտային միջոցների տեխնիկական գննության անցկացման վայրի ընտրությունը և տեխնիկական գննություն իրականացնելու գործընթացը, այսինքն՝ ստեղծվել է ազատ մրցակցության միջավայր: Ներդրվել է տեխնիկական գննության գրանցամատյանի վարման համակարգչային ծրագիր, որի միջոցով տվյալներն ամեն օր համալրվում են և վերահսկվում.

• << տարածքում միջազգային, ֆիքսված և բջջային հեռախոսակապի ծառայությունների շուկայի բաժանորդների աճը (ֆիքսված հեռախոսակապի բաժանորդների թիվը հասել է 620.000-ի, այդ թվում՝ Երևան քաղաքում՝ ավելի քան 530.000-ի, իսկ բջջային կապի ծառայություններին՝ 2.770.000-ի).>>

• Հանրապետության ողջ տարածքում 3G ստանդարտով գործող համակարգերի 100% ծածկույթի ապահովումը և ճկուն սակագնային քաղաքականության կիրառումը՝ նվազագույն սակագների և առաջարկվող ծառայություններից օգտվողների համար համընդհանուր հասանելիության ապահովմամբ.

• Հանրապետության տարածքում 4G ստանդարտի տեխնոլոգիաների ներդրման և գործող համակարգերի տեխնիկական վերագինման մասով աշխատանքների իրականացումը.

- «Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի ստեղծումը: Իրականացվել է խորհրդատվական ծառայությունների ձեռքբերումը շուրջ 590.0 մլն դրամի սահմաններում: Ծրագրիը կշարունակվի 2011 թվականին:

### **Պերական Եկամուտների քաղաքականություն**

2010 թվականին շրջանառության փոքր ծավալներ ունեցող տնտեսավարող սուբյեկտների հարկման առավել պարզեցված՝ արտոնագրային ռեժիմի կիրառության շրջանակների ընդլայնման, հարկային մարմնին որոշ հարկատեսակների գծով հաշվետվությունների ներկայացման պարբերականության կրճատման և ժամկետների միասնականացման նպատակով մշակվել է օրենսդրական նախագծերի փաթեթ, որն ընդունվել է <<Ազգային ժողովի կողմից:

Գերավճարների և (կամ) գերավճարից տարբերվող գումարների վերադարձն ուշացնելու դեպքում հարկ վճարողների օգտին տույժերի հաշվարկման օրենսդրական հիմքի ձևավորման նպատակով մշակվել է օրենսդրական նախագիծ, որն ընդունվել է <<Ազգային ժողովի կողմից, և ընդունվել է նաև այդ օրենսդրական փոփոխությունից բխող <<կառավարության որոշում:

Խոշոր բիզնեսն արհեստականորեն մասնատելու և դրանով իսկ փոքր և միջին բիզնեսի համար սահմանված՝ հարկման առավել մեղմ պայմաններից օգտվելու դեմ այլքարի նպատակով մշակվել է օրենսդրական նախագծերի փաթեթ, որն ընդունվել է <<Ազգային ժողովի կողմից:

Մաքսային հսկողության իրականացման արդյունավետության բարձրացման և մաքսային ընթացակարգերի պարզեցման նպատակով մշակվել է «<<մաքսային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» <<օրենքը, որն ընդունվել է <<Ազգային ժողովի կողմից:

Տնտեսության մեջ որոշ ապրանքների շրջանառության իրական ծավալների հաշվառման համակարգի ներդրման օրենսդրական հիմքերի ձևավորման նպատակով մշակվել է օրենսդրական նախագծերի փաթեթ, որն առաջին ընթերցմամբ ընդունվել է <<Ազգային ժողովի կողմից:

Մշակվել է «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» <<օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» <<օրենքի նախագիծը, որի նպատակն է մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար սահմանել ողյալթ՝ որպես բնօգտագործման վճարի տեսակ:

2010 թվականի հունվարի 18-22-ը Լոնդոնում կայացել են «<<կառավարության և Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իոլանդիայի Միացյալ Թագավորության կառավարության միջև Եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» կոնվենցիայի նախագծի շուրջ բանակցություններ, որոնց արդյունքում կոնվենցիայի նախագիծը նախաստորագրվել է:

2010 թվականի նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 1-ը Նիկոսիայում տեղի է ունեցել «Հայաստանի Հանրապետության կառավարության և Կիպրոսի Հանրապետության կառավարության միջև եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» համաձայնագրի նախագծի շուրջ բանակցությունների երկրորդ փուլը, և համաձայնագրի նախագծի տեքստը նախաստորագրվել է:

### **ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐՁԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽԱԼՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՄ**

Պետական ներձին ֆինանսական խալողության ոլորտում՝

- Մշակվել և << կառավարության կողմից հաստատվել է «Պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների ռազմավարությունը»: Ռազմավարությամբ մատնանշվում են պետական ֆինանսների կառավարման բնագավառում 2010-2020թթ. ընթացքում կառավարության գերակայությունները և իրականացվելիք միջոցառումների առաջնահերթությունները:

• Մշակվել և << կառավարության կողմից հաստատվել է «Պետական ներձին ֆինանսական խալողության համակարգի բարեփոխումների ռազմավարությունը», որով սահմանվում են ֆինանսական կառավարման, խալողության և ներձին առողիտի բնագավառների բարեփոխումների օրակարգը և ժամանակացույցը:

- Մշակվել և 2010 թվականի դեկտեմբերի 22-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Ներձին առողիտի մասին» << օրենքը, որով անհրաժեշտ իրավական դաշտ է ստեղծվում ներձին առողիտի համակարգի ներդրման և արդյունավետ գործունեության համար:

• Մշակվել է «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մասին» << օրենքի նախագիծը, որով հանրային հատվածում հաշվապահական հաշվառման գործընթացը կստանա ամբողջական իրավական կարգավորում: Ներկայումս նախագիծը քննարկվում է ՀԲ-ի փորձագետների հետ:

• Վարկային և դրամաշնորհային միջոցներ շրջանառող ԾԻԳ-երի հաշիվները առևտրային բանկերից տեղափոխվել են << գանձապետարան, ինչը, բացի տնտեսական արդյունավետությունից, փաստում է << գանձապետական համակարգի աշխատանքի արդյունավետության մասին և դրա նկատմամբ միջազգային դռնոր կազմակերպությունների, մասնավորապես՝ Համաշխարհային բանկի կողմից տրվող բարձր գնահատականի մասին:

### **ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ և ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՈԼՈՐՄ**

**Պետական գնումների ոլորտում՝**

- Մշակվել և 2010 թվականի դեկտեմբերի 22-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Գնումների մասին» << նոր օրենքը, որով գնումների հետ կապված հարաբերությունների կարգավորման համար նախատեսվում են առավել արդիական և լիարժեք մեխանիզմներ:

• Հայաստանը անդամակցել է Առևտուրի համաշխարհային կազմակերպության Պետական գնումների համաձայնագրին, որը բացի մի շարք քաղաքական և տնտեսական հնարավորություններ ընձեռելուց, փաստում է այն հանգամանքը, որ Հայաստանի գնումների իրավական համակարգը համապատասխանում է լավագույն միջազգային չափանիշներին:

• Մշակվել և ներդրման փուլում է գտնվում էլեկտրոնային գնումների համակարգը, որով հնարավորինս ավտոմատացվում է գնումների գործընթացը՝ բարձրացնելով համակարգի թափանցիկությունը և արդյունավետությունը ու նվազեցնում կոռուպցիոն ռիսկերը: Համակարգի ամբողջական ներդրումը նախատեսվում է 2011 թվականի ընթացքում:

• Նվազել են ոչ մրցակցային ծներով՝ մեկ անձից գնման ծնով կատարվող գնումների ծավալները: Մասնավորապես՝ 2010 թվականի դեկտեմբերի դրությամբ մեկ անձից գնման ծնով պետական գաղտնիք պարունակող գնումների ծավալը 2009 թվականի համեմատ նվազել է շուրջ 67%-ով, իսկ գաղտնիք չպարունակող գնումների ծավալը՝ շուրջ 27.7%-ով:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 2010 ԹՎԱԿԱՆԻՆ

2010 թվականի փաստացի տվյալների ամփոփումը ցույց տվեց, որ տարվա ընթացքում արձանագրվել է տնտեսության աստիճանական վերականգնում: Տնտեսական ակտիվության վերականգնման գործընթացը հիմնականում պայմանավորված էր՝ թե՝ համաշխարհային տնտեսության վերականգնմամբ, և թե՝ << կառավարության նախորդ տարվա ընթացքում իրականացրած հականգնաժամային ակտիվ գործողություններով: 2010 թվականի փաստացի տնտեսական աճի տեմպը գերազանցել է տարվա պետական բյուջեի նախագծի և 2011-2013 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրի շրջանակներում կանխատեսված ցուցանիշները:

2010 թվականին գրանցվել է 2.1% տնտեսական աճ, որն արձանագրվել է տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում, բացառությամբ գյուղատնտեսության: Տեղի է ունեցել արտաքին առևտրաշրջանառության աճ, հատկապես գրանցելով արտահանման բարձր աճ՝ 42.4%: Տնտեսության վերականգնմամբ և գյուղատնտեսության ճյուղի զարգացումներով պայմանավորված՝ 2010 թվականին գրանցվել է համեմատաբար բարձր՝ 8.2% միջին գնաճ, որի միայն 3.6 տոկոսային կետն ապահովվել է ընդամենը 6 ապրանքատեսակների և ծառայությունների գծով (կարտոֆիլ, տավարի միս, շաքարավագ, բենզին, բնակչությանը մատակարարվող գազ և հիվանդանոցային ծառայություններ): Հաջուկու ժամանակաշրջանում արձանագրվել է նաև պետական բյուջեի եկամուտների անվանական շուրջ 13.1% աճ, իսկ ծախսերի գծով աճը կազմել է 2.7%, արդյունքում հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունն ամբողջական պահանջարկի վրա եղել է զայտող:

**Համախառն պահանջարկ<sup>1</sup>:** 2010 թվականին վերջնական սպառումն իրականացած արտահայտությամբ աճել է շուրջ 4.9%-ով: Վերջնական սպառման աճը հիմնականում պայմանավորված է նախորդ տարվա նկատմամբ բնակչության տնօրինվող եկամուտների աճով: Վերջնական սպառման կառուցվածքում պետական և մասնավոր սպառման տեսակարար կշիռները 2010 թվականին կազմել են համապատասխանաբար 13.2 և 86.8 տոկոս, ընդ որում, իրականացած արտահայտությամբ մասնավոր սպառումը նախորդ տարվա համեմատ աճել է շուրջ 4.8%-ով, իսկ պետական սպառումը՝ 5.5%-ով:

Կապիտալ ներդրումներն իրականացած արտահայտությամբ նվազել են 2.8%-ով՝ հիմնականում պետական ներդրումների նվազման հաշվին, որը, սակայն, գուգակցվել է մասնավոր ներդրումների շուրջ 1.6% աճով:


<sup>1</sup> Այս հատվածում բերված ցուցանիշները << ֆինանսների նախարարության գնահատականներն են:

2010 թվականին ապրանքների և ծառայությունների գուտ արտահանումը դրամային արտահայտությամբ ՀՆԱ-ի մեջ բարելավվել է 2.2 տոկոսային կետով, ընդ որում արտահանման իրական ծավալն աճել է 21.7%-ով՝ պայմանավորված համաշխարհային տնտեսությունում պահանջարկի աստիճանական վերականգնմամբ, ինչպես նաև նախորդ տարիներին կառավարության հակաճնաժամային գործողությունների շրջանակներում արտահանողներին ցուցաբերված օժանդակությամբ: Մյուս կողմից, ապրանքների և ծառայությունների ներմուծումն իրական արտահայտությամբ աճել է 13.8%-ով:

**Համախառն առաջարկ:** 2010 թվականին համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) կազմել է 3461.9 մլրդ դրամ, ընդ որում իրական ՀՆԱ-ն աճել է 2.1%-ով, 9.2% դեֆյատորի պայմաններում: Պետք է նշել, որ տնտեսության բոլոր ճյուղերում, բացառությամբ գյուղատնտեսության, գրանցվել են աճի ցուցանիշներ:

2010 թվականին ծառայությունների ոլորտը տնտեսական աճին մեծ նպաստում է ունեցել: Նշված ժամանակահատվածում ծառայությունների հաշվին ապահովվել է տնտեսական աճի 1.8 տոկոսային կետը, իսկ ծառայությունների իրական աճը կազմել է 4.5%: Արդյունաբերությունը (ներառյալ էներգետիկան) աճել է 10%-ով՝ տնտեսական աճին նպաստելով 1.4 տոկոսային կետով, իսկ շինարարությունն աճել է 3.0%-ով և նպաստել տնտեսական աճին 0.5 տոկոսային կետով: Գյուղատնտեսությունը դիտարկվող ժամանակահատվածում նվազել է 15.7%-ով՝ 2.6 տոկոսային կետով բացասական նպաստում ունենալով աճին: Գծապատկեր 1-ում ներկայացված են տնտեսության առանձին ճյուղերում արձանագրված իրական աճի նպաստման չափերը:

Գծապատկեր 1. 2009 և 2010 թվականների ՀՆԱ-ի իրական աճին տնտեսության ճյուղերի նպաստման չափը, տոկոսային կետ



Աղյուսակ 1. 2004-2010 թվականների իրական ծավալի ինդեքսները նախորդ տարվա նկատմամբ

	<b>2004</b>	<b>2005</b>	<b>2006</b>	<b>2007</b>	<b>2008</b>	<b>2009</b>	<b>2010</b>
Համախառն ներքին արդյունք	110.5	113.9	113.2	113.7	106.9	85.8	102.1
Գյուղատնտեսություն	114.2	111.2	100.5	110.4	103.3	99.9	84.3
Արդյունաբերություն	102.2	105.6	97.5	102.8	102.1	92.1	110.0
Շինարարություն	115.3	127.9	137.7	118.2	111.3	57.7	103.0
Ծառայություններ	112.7	115.0	116.0	112.5	104.8	99.9	104.5
Զուտ անուղակի հարկեր	102.4	112.4	114.9	135.9	117.1	79.3	109.2

**Արդյունաբերություն<sup>2</sup>:** 2010 թվականին արձանագրվել է արդյունաբերական արտադրանքի ծավալների 9.7% աճ՝ 2009 թվականի 7.8% նվազման դիմաց: Ընդ որում, արդյունաբերական արտադրանքի իրացումը հանրապետությունից դուրս կազմել է ընդհանուր իրացման 34.8%-ը՝ 6.7 տոկոսային կետով բարելավելով նախորդ տարվա նույն ցուցանիշը: Արդյունաբերական արտադրանքի աճը հիմնականում պայմանավորված էր հանքագործական արդյունաբերության և մշակող արդյունաբերության համապատասխանաբար 24.3% և 11.5% աճերով: Հանքագործական արդյունաբերության աճին նպաստել են համաշխարհային շուկայում մետաղների գների բարձրացումը և արտաքին պահանջարկի վերականգնումը: Մշակող արդյունաբերության ոլորտում նշանակալի են պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրության 31.6%, իսմիջների արտադրության՝ 31.6%, ինչպես նաև էլեկտրական սարքավորանքի արտադրության 30.3% աճերը:

Զրամատակարարման, կոյուղու և թափոնների մշակման ճյուղում ևս արձանագրվել է 6.7% աճ: Էլեկտրաէներգիայի ճյուղի բնեղեն արտադրության ցուցանիշն աճել է 14.5%-ով, որը պայմանավորված է եղել հիմնականում ՀԵԿ-երի կողմից արտադրված էլեկտրաէներգիայի ծավալների աճով (կշիռն ընդհանուրի մեջ կազմել է շուրջ 40%), իսկ ճյուղի ֆիզիկական ծավալի ինդեքսն արժեքային արտահայտությամբ նվազել է 9.5%-ով՝ պայմանավորված ՀԵԿ-երի կողմից արտադրվող էլեկտրաէներգիայի էժան լինելու հանգամանքով:

**Գյուղատնտեսություն:** 2010 թվականին գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության համախառն արտադրանքի ծավալը նախորդ տարվա ցուցանիշի նկատմամբ նվազել է 13.4%-ով, ընդ որում, բուսաբուծությունը նվազել է 20.3%-ով, անտառային տնտեսությունը՝ 10.7%-ով և

<sup>2</sup> 2010 թվականի արդյունաբերության ցուցանիշները վերաբերում են ոչ թե ավելացված արժեքներին, այլ թողարկման ծավալներին:


ձկնորսությունը՝ 3.9%-ով: Բուսաբուծության անկումը կրել է նաև տարվա առաջին ամիսների անբարենպաստ բնակլիմայական պայմանների ազդեցությունը:

Անասնաբուծությունում անշան' 0.3% աճ է արձանագրվել: Ընդ որում, թեև սպանողի համար իրացված անասունի և թոչնի ու կաթի արտադրությունը նվազել են համապատասխանաբար 1.5%-ով և 2.4%-ով, վերջիններիս անկումը փոխհատուցվել է ծվի արտադրության 14.1% աճով: Անտառային տնտեսության ենթաճյուղում համախառն արտադրանքի 10.7% անկումը պայմանավորված էր փայտամթերումների 3.4%, անտառաբուծության՝ 4.7% և անտառաբուծության ու փայտամթերումների ոլորտում մատուցված ծառայությունների 13.4% նվազմամբ:

**Շինարարություն:** Ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին իրականացված շինարարության ծավալները 2010 թվականին կազմել են շուրջ 579.8 մլրդ դրամ և նախորդ տարվա համեմատ նվազել 3.3%-ով: Իրականացված շինարարության (ըստ ֆինանսավորման աղբյուրների) կառուցվածքում կազմակերպությունների միջոցները կազմել են 47.2%, որոնց հաշվին իրականացված շինարարության ծավալները նախորդ տարվա համեմատ աճել են 35.3%-ով: Պետական բյուջեի միջոցներով իրականացված շինարարությունը նվազել է 1.7%-ով: Նախորդ տարվա համեմատ միջազգային վարկերի միջոցների հաշվին իրականացված շինարարության կշիռը նվազել է 7.6 տոկոսային կետով, իսկ ծավալների անկումը կազմել է 43.1%: Շարունակում են անկում ապրել նախորդ տարվանից սկսված՝ բնակչության կողմից ֆինանսավորվող շինարարության ծավալները, որը հիմնականում բնակարանային շինարարությունն է: Մասնավորապես՝ իրականացված շինարարության կառուցվածքում բնակչության միջոցները կազմել են 20.5%՝ իրական արտահայտությամբ նվազելով 38.5%-ով:

Շինարարության հիմնական միջոցները (ըստ տնտեսության ճյուղերի) գերազանցապես ուղղվել են անշարժ գույքի հետ կապված գործառնություններին և տրանսպորտին, որոնց բաժին է ընկել կատարված շինարարության ծավալների համապատասխանաբար 30.9 և 10.7 տոկոսը: Շինարարության մեջ աճել են նաև տեղեկատվության և կապի, մշակող արդյունաբերության, գյուղատնտեսության տեսակարար կշիռները՝ վկայելով շինարարության՝ ըստ տնտեսության ճյուղերի բազմատեսակավորման մասին, որը հետագայում կարող է հիմք հանդիսանալ նշված ճյուղերի ավելացված արժեքների աճի ծևավորման համար (տես Գծապատկեր 2):

Գծապատկեր 2. 2009 և 2010 թվականներին շինարարության ծավալներն ըստ տնտեսության ճյուղերի



**Ծառայություններ և առևտուր:** 2010 թվականին մատուցված ծառայությունների ծավալը նախորդ տարվա նկատմամբ աճել է 3.8%-ով: Ծառայությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են ունեցել տեղեկատվության և կապի (24.3%), տրանսպորտի (21.6%), ֆինանսական և ապահովագրական գործունեության (20.8%), ինչպես նաև մասնագիտական, գիտական և տեխնիկական (6.7%) և կրթության (5.2%) ծառայությունները:

2010 թվականին առևտուրի շրջանառությունն ընթացիկ գներով կազմել է 1779.4 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նկատմամբ, համարելի գներով, աճել է 4.2%-ով: Ընդ որում, մանրածախ առևտուրն աճել է 0.6%-ով, մեծածախ և ավտոմեքենաների առևտուրը՝ համապատասխանաբար 12 և 7.9 տոկոսով՝ վկայելով տնտեսական աշխուժացման մասին: Չնայած առևտուրի շրջանառության մեջ ամենամեծ աճն ունեցել է մեծածախ առևտուրը, սակայն մանրածախ առևտուրի նպաստումը առևտուրին եղել է ամենաբարձրը:

**Տրանսպորտ և կապ:** 2010 թվականին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալը 2009 թվականի նկատմամբ աճել է 7.9%-ով: Բեռնափոխադրումների ծավալն ըստ ավտոմոբիլային, մայրուղային խողովակաշարային, օդային և երկաթուղային տրանսպորտի տեսակների աճել է համապատասխանաբար 9.9, 7.4, 4.8 և 4.1 տոկոսով: Երկաթուղային տրանսպորտում բեռնափոխադրումների ծավալի աճը նկատվել է ըստ բեռների գրեթե բոլոր խմբերի, բացառությամբ ցեմենտի: Նկատվել է նաև երկաթուղային բեռնափոխադրումներում արտահանման ծավալի նվազում:

2010 թվականի ընթացքում կապի ծառայություններից ստացված հասույթը նախորդ տարվա նկատմամբ համարելի գներով աճել է 0.2%-ով: Կապի ոլորտում աննշան աճը հիմնականում տեղի է ունեցել հեռուստածրագրերի կազմման և հեռարձակման ծառայությունների 2.1 անգամ և հեռահաղորդակցության ծառայությունների ոլորտում ինտերնետ հասանելիության ծառայությունների 23.8% աճի հաշվին:

**Գներ և սակագներ:** 2010 թվականի տարեվերջին 12-ամսյա գնաճը կազմել է 9.4%: Բարձր գնաճային միջավայրը հիմնականում պայմանավորվել է առաջարկի գործոններով՝ առավելապես գյուղատնտեսության ճյուղի խորը անկմամբ, ինչի հետևանքով արձանագրվեց գյուղատնտեսական ապրանքների աննախադեպ բարձր գնաճ: Բարձր գնաճին նպաստել են նաև որոշ պարենային և հումքային ապրանքների (ցորեն, շաքար, նավթ) միջազգային գների զգալի բարձրացումը և 2010 թվականի ապրիլի 1-ից գազի և ջրի սակագների բարձրացումը:

Այսպիսով, 9.4% գնաճը հիմնականում պայմանավորված է եղել պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների 14% (նպաստումը գնաճին՝ 7.5 տոկոսային կետ), ոչ պարենային ապրանքների գների 4.6% (նպաստումը գնաճին՝ 0.7 տոկոսային կետ) և ծառայությունների սակագների 4.2% (նպաստումը գնաճին՝ 1.2 տոկոսային կետ) աճով: Ընդ որում հատկանշական է, որ 9.4% գնաճի միայն 7.5 տոկոսային կետը պայմանավորվել է պարենային ապրանքների գների աճով, որից 2 տոկոսային կետը նպաստել է հացամթերքի, 5 տոկոսային կետը՝ գյուղատնտեսական պարենային ապրանքների գների աճը:

#### Աղյուսակ 2. Գնաճի կառուցվածքը 2010 թվականին

	Ժամանակահատվածի վերջ	Միջին տարեկան	Կշիռն ընդհանուրի մեջ
<b>Ընդհանուր գնաճ,</b>	<b>9.4</b>	<b>8.2</b>	<b>100</b>
որից՝			
<b>Գյուղատնտեսական ապրանքների հաշվին</b>	<b>5.0</b>	<b>2.7</b>	<b>15.1</b>
բուսաբուծություն	2.5	1.6	6.1
անասնապահություն և թռչնաբուծություն	2.5	1.1	9

Եթե ժամանակահատվածի վերջի գնաճի ցուցանիշը դիտարկենք ըստ առանձին ապրանքատեսակների, ապա միայն 6 ապրանքատեսակներ՝ հաց, տավարի միս, պանիր տնական կովի կաթից, ձու, խնձոր և կարտոֆիլ, ապահովել են գնաճի 5.1 տոկոսային կետը:

Այսուակ 3. 2010 թվականի գնաճին ամենամեծ նպաստումն ունեցող ապրանքատեսակները

	<b>Ժամանակահատվածի վերջի</b>	<b>Ժամանակահատվածի վերջի</b>		<b>Տարեկան միջին</b>		
	<b>Ամենամեծ նպաստումն ունեցող ապրանքատեսակները</b>	<b>գնաճ տոկոս</b>	<b>նպաս- տումը գնաճին</b>	<b>գնաճ տոկոս</b>	<b>նպաս- տումը գնաճին</b>	<b>Կշիռն ընդհա- նուրի մեջ</b>
1	Հաց բարձր տեսակի	11.2	0.72	3.6	0.2	6.41
2	Տավարի միս	37.4	1.39	28.1	1.0	3.72
3	Պանիր տնական (կովի կաթից)	38.5	0.50	6.6	0.1	1.30
4	Զու	25.7	0.45	-6.2	-0.1	1.76
5	Խնձոր	124.2	0.58	38.3	0.2	0.47
6	Կարտոֆիլ	98.8	1.45	55.6	0.8	1.47
7	Շաքարավազ	6.5	0.10	19.5	0.3	1.44
8	Բենզին	0.8	0.02	17.3	0.5	2.61
9	Խողովակաշարերով բնակչությանը գազային վառելիքի վաճառքի ծառայություններ	37.5	0.51	32.3	0.4	1.35
10	Բուժսպասարկման ծառայություններ	3.5	0.3	6.4	0.6	9.11
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>6.02</b>		<b>4.0</b>	<b>29.64</b>

2010 թվականի միջին գնաճը կազմել է 8.2%, որը հիմնականում պայմանավորված է եղել պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների 8.6% (նպաստումը գնաճին՝ 4.6 տոկոսային կետ), ոչ պարենային ապրանքների գների 9.6% (նպաստումը գնաճին՝ 1.6 տոկոսային կետ) և ծառայությունների սակագների 6.8% (նպաստումը գնաճին՝ 2 տոկոսային կետ) աճով:

2010 թվականին սպառողական գների միջին ամսական հավելաճը կազմել է 0.8%, ինչը 0.3 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

**Աշխատանքի շուկա:** Ըստ նախնական տվյալների, 2010 թվականին դրությամբ գործազրկության պաշտոնական մակարդակը հանրապետությունում նախորդ տարվա նկատմամբ փոփոխություն չի կրել և կազմել է 7.0% (83.3 հազ. մարդ): Սակայն 2010 թվականի տարվա սկզբին արձանագրված 7.3% գործազրկության մակարդակը ապրիլ ամսից ունեցել է նվազման միտում: 2010 թվականին զբաղվածների թիվը նախորդ տարվա համեմատ՝ պայմանավորված տնտեսության աշխատացմամբ, աճել է 1.3%-ով՝ կազմելով 1103.5 հազ. մարդ:

2010 թվականի միջին ամսական անվանական աշխատավարձը 2009 թվականին գրանցված ցուցանիշի նկատմամբ, ըստ նախնական տվյալների, աճել է 6.6%-ով, ինչը պայմանավորված է տնտեսության գրեթե բոլոր ճյուղերի աշխատացմամբ (բացառությամբ գյուղատնտեսության):


Պետական հատվածում միջին աշխատավարձի աճը (3.2%) զիջել է մասնավոր հատվածի միջին աշխատավարձի աճին (6.9%): 2010 թվականին իրական աշխատավարձը նախորդ տարվա համապատասխան ցուցանիշի համեմատ աճել է 1.9%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում, ըստ նախնական տվյալների, տնտեսության պետական և ոչ պետական հատվածներում միջին անվանական աշխատավարձը համապատասխանաբար կազմել է 87630 դրամ և 135913 դրամ, իսկ միջին աշխատավարձը՝ 108840 դրամ:

**Արտաքին հատված:** Հակաճնաժամային միջոցառումների շրջանակներում ՀՀ կառավարության քաղաքականությունը արտահանման խթանման ուղղությամբ տվեց իր դրական արդյունքները՝ տնտեսության արտաքին հատվածի բարելավումը ծնավորվել է ավելի արագ, քան սպասվում էր: Արտաքին պահանջարկի աճի հետ մեկտեղ տարեսկզբից ավելացել են նաև Հայաստան ներհոսող տրանսֆերտները և գործոնային եկամուտները՝ նպաստելով ընթացիկ հաշվի պակասուրդի կրճատմանը մինչև ՀՆԱ-ի 14%-ը:

**Արդարքին առևտուր:** 2010 թվականին ապրանքների գծով արտաքին առևտուրի բացասական մնացորդը (տե՛ս Գծապատկեր 3) կազմել է 2141.8 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 60.6 մլն ԱՄՆ դոլարով կամ 2.9%-ով և կազմելով ՀՆԱ-ի 23.1%-ը՝ նախորդ տարվա 24.4%-ի դիմաց:

Գծապատկեր 3. Ընթացիկ հաշվի տարրերի դինամիկան 2000-2010 թվականներին  
(մլն ԱՄՆ դոլար)



ՀՆԱ-ի նկատմամբ ապրանքների և ծառայությունների արտահանման կշիռը (միջին հակումը) 2010 թվականին կազմել է 20.1% (2009 թվականին՝ 15.7%): Ապրանքների և ծառայությունների ներմուծումը կազմել է 2010 թվականի ՀՆԱ-ի 45.8%-ը՝ նախորդ տարվա 43.2%-ի դիմաց:

Արդարին ապրանքաշրջանառությունը<sup>3</sup> 2010 թվականի արդյունքներով կազմել է 4794.3 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշի համեմատ աճելով 18.9%-ով: Հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել դոլարային արտահայտությամբ արտահանման և ներմուծման ծավալների աճ. արտահանումն աճել է 42.4%-ով՝ կազմելով 1011.4 մլն դոլար, իսկ ներմուծումը՝ 13.9%-ով և կազմել է 3782.9 մլն դոլար:

**Ներմուծում:** Ներմուծման աճը հիմնականում պայմանավորված էր ընթացիկ տարում ինչպես բնակչության տնօրինվող եկամուտների աճով, այնպես էլ տնտեսության վերականգմամբ: Ներմուծման աճ է արձանագրվել կառուցվածքում մեծ կշիռ ունեցող գրեթե բոլոր, այդ թվում նաև ներդրումային բնույթի ապրանքների գծով. ընդհանուր ներմուծման մեջ «Մեքենաներ, սարքավորումներ, մեխանիզմներ», «Սարքեր և ապարատներ» և «Տարբեր արդյունաբերական ապրանքներ» ապրանքախմբերի տեսակակար կշիռը կազմել է 21.0%, որոնց աճը 1.5 տոկոսային կետով նպաստել է ներմուծման աճին: Ընդ որում, ամենաբարձր՝ 4.2 տոկոսային կետը պայմանավորվել է «Հանքահումքային արտադրանք», 2.0 տոկոսային կետը՝ «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ», 1.6 տոկոսային կետը՝ «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և 0.8 տոկոսային կետը՝ «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբերի ներմուծման աճով, որոնք համապատասխանաբար կազմել են 25.6, 28.1, 48.0 և 4.2 տոկոս:

**Արդարանում:** Տնտեսության արտահանման ոլորտում << կառավարության հակաճնաժամային միջոցառումների արդյունքները՝ զուգորդվելով հումքային բնույթի ապրանքատեսակների արտահանման շուկաների վիճակի բարելավման հետ, արդեն իսկ 2009 թվականի երրորդ եռամյակից արտահայտվեցին արտահանման որոշակի աշխուժացման և ծավալների աստիճանական վերականգնման տեսքով, իսկ 2010 թվականի ողջ ժամանակահատվածում ամրապնդեցին արտահանման նշված ձեռքբերումները:


2010 թվականի արդյունքներով արտահանման 42.4% աճի ամենաբարձր՝ 18.4 տոկոսային կետը պայմանավորվել է «Հանքահումքային արտադրանք» ապրանքախմբի արտահանման 89.9% ավելացմամբ: Արտահանման աճի 14.3 տոկոսային կետը պայմանավորվել է «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», 4.5 տոկոսային կետը՝ «Պատրաստի սննդի արտադրանք» և 4.1 տոկոսային կետը՝ «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից

<sup>3</sup> Արտանահումը ՖՕԲ, ներմուծումը՝ ՄԻՖ գներով:

իրեր» ապրանքախմբերի ծավալների աճով, որոնք կազմել են համապատասխանաբար՝ 43.8, 31.7 և 27.6 տոկոս:

**Նորմալացված առևտրային հաշվեկշիռ<sup>4</sup>:** Տնտեսական անվտանգությունը բնութագրող ցուցանիշներից է նորմալացված առևտրային հաշվեկշորի գործակիցը, որը 1997 թվականի -0.6-ից աստիճանաբար բարելավվել է՝ 2002-2005 թվականներին պահպանելով -0.3 մակարդակը, այնուհետև ցուցաբերել է վատթարացման միտում՝ 2010 թվականին գրեթե հավասարվելով 1997 թվականի նշված ցուցանիշին (տես Գծապատկեր 4): 2006-ից 2008 թվականներին նորմալացված հաշվեկշորի նման վարքագիծը պայմանավորված էր արտահանման աճի տեմպերի նկատմամբ ներմուծման առաջանցիկ աճի տեմպերով, իսկ վերջինս էլ տնտեսությունում սպառողական և ներդրումային ապրանքների նկատմամբ անընդհատ աճող պահանջարկի, ինչպես նաև 2003 թվականից արժենորվող փոխարժեքի արդյունք է: 2009 թվականին նորմալացված հաշվեկշորի գործակիցը կազմել է -0.65՝ վատթարացման խորացումը հիմնականում պայմանավորված էր դոլարային արտահայտությամբ արտահանման առաջանցիկ անկմամբ, իսկ 2010 թվականին՝ արտահանման դոլարային արտահայտությամբ առաջանցիկ աճով պայմանավորված, այդ ցուցանիշը կազմել է -0.58՝ ցուցաբերելով որոշակի բարելավում նախորդի համեմատ:

Գծապատկեր 4. Նորմալացված առևտրային հաշվեկշորի գործակիցը 1997-2010 թվականներին




**Ներմուծման ծածկման գործակից:** 2010 թվականին ներմուծման ծածկման գործակիցը նախորդ տարվա համեմատ աճել է 7.6 տոկոսային կետով. արտահանման հաշվին ֆինանսավորվել է ներմուծման 43.9%-ը (տես Գծապատկեր 5):

Գծապատկեր 5. 1996-2010 թվականների ներմուծման ծածկման գործակիցը<sup>5</sup>, տոկոսներով

<sup>4</sup> Նշված ցուցանիշը հաշվարկվում է որպես առևտրային հաշվեկշորի և ապրանքաշրջանառության հարաբերակցություն և ցույց է տալիս թե միավոր արտաքին ապրանքաշրջանառության մեջ որքան զուտ արտահանված ապրանք կա:

<sup>5</sup> Ներմուծման ծածկման գործակիցը հաշվարկված է որպես ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման հարաբերակցություն (ՖՕԲ գներով):




Ներճյուղային առևտուր: 2010 թվականի << ներճյուղային<sup>6</sup> առևտուրի մակարդակի վերլուծությունը վկայում է «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», «Թանկարժեք ու կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և «Արվեստի ստեղծագործություններ» ապրանքախմբերի գծով համեմատաբար կայուն երկկողմանի արտաքին առևտուրի պահպանման մասին:

Մնացած ապրանքախմբերով տեղի է ունեցել մեծ մասամբ միակողմանի առևտուր՝ ներքին պահանջարկը բավարարելու ուղղությամբ (բացասական առևտրային մնացորդ):

#### Գծապատկեր 6. 2010 թվականի ներճյուղային առևտուրը

<sup>6</sup> Ներճյուղային առևտուրը տեղի է ունենալ, եթե երկիրը և ներմուծում, և արտահանում է առանձին ճյուղում արտադրվող ապրանքատեսակները: Ներճյուղային առևտուրի գործակիցը իրենից ներկայացնում է արտահանման և ներմուծման բացարձակ արժեքով փոքրի հարաբերակցությունը մեծին: “0” նշանակում է լրիվ միակողմանի, իսկ “1” լրիվ երկկողմանի առևտուր: Գծապատկերում դրական և բացասական նշանները տրամադրում են լրացուցիչ տեղեկատվություն և պայմանավորված են համապատասխան ապրանքախմբերի արտաքին առևտրային հաշվեկշռի դրական կամ բացասական մնացորդով:




Արդարին առևտուրն ըստ գործընկեր երկրների: 2010 թվականի ՀՀ արտաքին առևտրաշրջանառության 28%-ը բաժին է ընկել ԱՊՀ և 32%-ը՝ ԵՄ երկրներին, 2009 թվականին համապատասխան ցուցանիշները կազմել են 29.3 և 30 տոկոս: ԱՊՀ երկրների համեմատ ԵՄ երկրների ՀՀ ապրանքաշրջանառության աճն առաջանցիկ էր և նախորդ տարվա համեմատ կազմել է 27%՝ ԱՊՀ երկրների արտաքին առևտրաշրջանառության 13.7% աճի դիմաց: ՀՀ խոշոր առևտրային գործընկեր-երկրների շրջանակում ընդգրկված են Չինաստանը (առևտրաշրջանառության 9.1%), Գերմանիան (7.2%), Բուլղարիան (5.6%), Իրանը (5.6%), Շուլքիան (4.4%), ԱՄՆ-ն (4.1%), ինչպես նաև ԱՊՀ երկրներից Ռուսաստանը (20.8%) և Ուկրաինան (5%): Վերջիններիս բաժին է ընկել ՀՀ և ԱՊՀ երկրների միջև տարվա ընթացքում կատարված ապրանքաշրջանառության շուրջ 92%-ը: Հանրապետության թվով 38 հիմնական գործընկեր երկրները մեծամասամբ (մոտ 80%-ը) հանդիսանում են ԱՀԿ անդամ աետություններ:

**Փոխարժեք:** 2009 թվականին և 2010 թվականի տարեսկզբի ընթացքում ձևավորված ԱՄ դոլարի նկատմամբ << դրամի փոխարժեքի արժեզրկման միտումները 2010 թվականի երկրորդ եռամյակից փոփոխվել են, և դրսևորվել է ամսական միջին փոխարժեքների դանդաղ արժևորման միտում: 2010 թվականի ընթացքում արժեզրկման առավելագույն ցուցանիշը տեղի է ունեցել փետրվար ամսին, երբ ամսական միջին փոխարժեքը կազմել է 380.49 (2009-ին՝ 305.47) << դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց և նախորդ տարվա համապատասխան ամսվա համեմատ արժեզրկվել է 19.7%-ով, իսկ դեկտեմբերի միջին փոխարժեքը կազմել է 360.5 դրամ (2009-ին՝ 380.47)՝ նախորդ տարվա համեմատ գրանցելով դրամի անվանական փոխարժեքի 5.5% արժևորում: Ինչ վերաբերում է դրամի ԱՄՆ դոլարի նկատմամբ տարեկան միջին փոխարժեքին, ապա վերջինս 2010 թվականին կազմել է 373.66 դրամ նախորդ տարվա 363.28 դրամի փոխարժեն՝ արժեզրկվելով 2.9%-ով:

ՀՀ ազգային արժույթը արտաքին առևտուրի տեսանկյունից առավել կարևոր մի քանի արժույթներից բաղկացած «զամբյուղի» նկատմամբ (անվանական արդյունավետ փոխարժեք<sup>7)</sup> 2010 թվականին նախորդ տարվա համեմատ արժեզրկվել է 2.4%-ով: Սակայն ՀՀ ազգային արժույթի իրական արդյունավետ փոխարժեքը 2009 թվականի 5.4% արժեզրկման դիմաց 2010 թվականի ընթացքում արժեսրությունը է 1.1%-ով՝ պայմանավորված ՀՀ-ում գործընկեր երկրների համեմատ գնաճի ավելի բարձր մակարդակով<sup>8</sup>, ընդ որում միտումը պահպանելու դեպքում դա կարող է բացասաբար անդրադառնալ արտաքին շուկաներում հայրենական ապրանքների մրցունակության և ընթացիկ հաշվի վրա:

Գծապատկեր 7. Իրական արդյունավետ փոխարժեքի<sup>9</sup> ամսական միջին շարժընթացը 2009 և 2010 թվականներին.



**Ֆինանսական շուկա:** 2010 թվականի վերջում փողի բազան կազմել է 507.6 մլրդ դրամ՝ տարեսկզբի նկատմամբ նվազելով 0.8%-ով: Ընդ որում զուտ արտաքին ակտիվները նվազել են 13.8, իսկ զուտ ներքին ակտիվներն աճել են 5.8 անգամ:

Նոյն ժամանակահատվածում փողի բազայում ԿԲ-ից դուրս կանխիկն աճել է 8.6%-ով, արդյունքում տարեսկզբի նկատմամբ կանխիկի տեսակարար կշիռը փողի բազայում աճել է 5.9

<sup>7</sup> Արդյունավետ փոխարժեքը ցոյց է տալիս ազգային արժույթի փոխարժեքի միջինացված շարժընթացը ոչ թե մեկ, այլ մի քանի, հանրապետության համար ավելի կարևոր արժույթներից բաղկացած “զամբյուղի” նկատմամբ: Ընդ որում, հաշվարկներում զամբյուղը կազմող արժույթները նախ բերվում են դոլարային արտահայտության, որից հետո ճշգրտվում են ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքով, այսինքն հաշվարկվում է դրամի կրոս կուրսը՝ յուրաքանչյուր տարադրամի 1 միավորի դիմաց (դրամի անուղղակի գնանշում):

<sup>8</sup> Հաշվարկներում օգտագործվել են ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայքի 2011թ. փետրվարի 11-ի դրությամբ տվյալները:

<sup>9</sup> Իրական արդյունավետ փոխարժեքի ինդեքսը անվանական արդյունավետ փոխարժեքն է ճշտված գներով և հանդիսանում է այն հիմնական ցուցանիշը, որը բնութագրում է հիմնական արժույթների միավորված շարժընթացն ու շարժման ուղղությունը և կարող է հիմք հանդիսանալ վերջիններիս զարգացման տենդենցների կողմնորոշիչ հետևողություններ անելու համար: Բացի դրանից այն հիմնական ցուցանիշն է, որն բնութագրում է երկրի մրցունակությունը միջազգային շուկայում: Իրական արդյունավետ փոխարժեքը ցոյց է տալիս մեր և գործընկեր երկրների միջև հարաբերական գների վարժագիծը՝ բերված մեկ արժույթի:

տոկոսային կետով՝ կազմելով շուրջ 68.6%: Պարտադիր պահուատները դրամով աճել են 42.2%-ով, իսկ արտարժույթով՝ նվազել 40.7%-ով, արդյունքում վերջինիս կշիռը փողի բազայում տարեսկզբի նկատմամբ նվազել է 8.2 տոկոսային կետով՝ կազմելով շուրջ 28.7%:

2010 թվականի տարեվերջին փողի զանգվածը կազմել է 911.4 մլրդ դրամ՝ տարեսկզբի նկատմամբ աճելով 11.8%-ով: Ընդ որում, զուտ արտաքին ակտիվները նվազել են 45.3%-ով, իսկ զուտ ներքին ակտիվները՝ աճել 56.3%-ով:

Նույն ժամանակահատվածում փողի զանգվածում բանկային համակարգից դուրս կանխիկն աճել է 7.7%-ով, իսկ դրամային և արտարժութային ավանդները՝ համապատասխանաբար 29 և 7 տոկոսով: Ընդ որում, փողի զանգվածում բանկային համակարգից դուրս կանխիկը և դրամային ավանդները նպաստել են փողի զանգվածի աճին համապատասխանաբար 2.7 և 6.0 տոկոսային կետով, իսկ արտարժութային ավանդների հաշվին ապահովվել է աճի ընդամենը 3.1 տոկոսային կետը<sup>10</sup>:

Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները 2010 թվականի վերջին նախորդ տարվա համեմատ ավելացել են 6.9%-ով<sup>11</sup> և ՀՆԱ-ի մեջ կազմել 20.3%: Նշենք, որ տարվա ընթացքում նկատվել է դոլարայնացման մակարդակի նվազում. ներգրավված ավանդների 69%-ն են կազմել արտարժույթով ավանդները՝ նախորդ տարվա 73.4%-ի փոխարեն: Նշվածը պայմանավորվել է ԿԲ-ի և Կառավարության կողմից ապադուարայնացման միջոցառումների իրականացմամբ (մասնավորապես՝ ԿԲ-ն փուլերով իրականացրել է պարտադիր պահուատավորման նորմատիվի փոփոխություն՝ աստիճանաբար անցում կատարելով << դրամով պահուատավորմանը: Սահմանվել է, որ բանկերի կողմից արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց ԿԲ-ում տեղաբաշխվող պարտադիր պահուատների, որոնք կազմում են ներգրավված միջոցների 12%-ը, կեսի կամ ներգրավված արտարժութային միջոցների 6%-ի չափով պետք է իրականացվի << դրամով պահուատավորում): Առևտրային բանկերի մինչև մեկ տարի ժամկետով դրամով ներգրավված ավանդների տոկոսադրույթները 2010 թվականի դեկտեմբերին միջին հաշվով կազմել են 8.76%՝ 2009 թվականի դեկտեմբերի 8.1%-ի համեմատ:

Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրված վարկերը 2010 թվականի վերջի դրությամբ նախորդ տարվա համեմատ ավելացել են 214.6 մլրդ դրամով կամ 29.2%-ով<sup>12</sup> և ՀՆԱ-ի մեջ կազմել 27.4%, ինչը 3.7 տոկոսային կետով բարձր է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից (վարկերի 57.5%-ը կազմում են արտարժույթով վարկերը): Նշենք, որ

<sup>10</sup> Նշենք, որ փողի ագրեգատներում ոչ ռեզիդենտների ավանդները չեն ընդգրկվում:

<sup>11</sup> Ընդգրկված չեն կուտակված տոկոսները:

<sup>12</sup> Ընդգրկված չեն կուտակված տոկոսները: Վարկերի մեջ ներառված են նաև ֆակտորինգային, լիգինգային գործառնությունները և ուղղութանակարերը:

2010 թվականի վերջի դրությամբ արդյունաբերության ոլորտին տրված վարկերի կշիռը << առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի մեջ կազմել է 23.01% և նախորդ տարվա նկատմամբ աճել է 2 տոկոսային կետով (մյուս ոլորտներում զգալի փոփոխություններ չեն արձանագրվել): Առևտրային բանկերի՝ դրամով տրամադրված վարկերի տոկոսադրույքները 2010 թվականի դեկտեմբերին միջին հաշվով կազմել են 18.9%՝ 2009 թվականի դեկտեմբերի 18.79%-ի համեմատ:

Տարվա ընթացքում ԿԲ կողմից իրականացվող տոկոսադրույքների քաղաքականությունը համահունչ էր ծևավորված մակրոտնտեսական միջավայրին: Այսպես, գնաճային ճնշումները մեղմելու համար ԿԲ-ն 2010 թվականի հունվարից իրականացրել է կոշտ դրամավարկային քաղաքականություն՝ առաջին հինգ ամիսներին շարունակ բարձրացնելով վերաֆինանսավորման տոկոսադրույքը (ընդհանուր առմամբ՝ 2.5 տոկոսային կետով՝ հասցնելով այն 7.25%-ի): Հատկանշական է, որ 2010 թվականի մայիս ամսից վերաֆինանսավորման տոկոսադրույքը պահպել էր հաստատուն՝ շուկային հստակ հաղորդելով, որ բարձր գնաճը պայմանավորված էր առաջարկի գործոններով, իսկ պահանջարկի կարգավորման գործիքներով դրան հակագդելը կհանգեցնի տնտեսության այլ ճյուղերի (որտեղ առկա չէր առաջարկի կտրուկ կրճատում) աճի տեմպերի զսպման:

2010 թվականի ընթացքում << պետական (շուկայական) պարտատոմսերի շուկայում նկատվել է տոկոսադրույքների աճ: Այսպես, եթե 2009 թվականի ընթացքում տեղաբաշխված պետական արժեթղթերի միջին եկամտաբերությունը կազմել է 10.87%, ապա 2010 թվականին այն կազմել է 11.9%: 2010 թվականի ընթացքում տեղաբաշխված պետական արժեթղթերի ծավալը կազմել է 115.3 մլրդ դրամ: Հաշվետու ժամանակահատվածում տեղաբաշխված պետական արժեթղթերի միջին ժամկետայնությունը կազմել է 1032 օր:

2010 թվականի վերջին պետական (շուկայական) պարտատոմսերի նկատմամբ պահանջարկը գերազանցել է թողարկման ցուցանիշը՝ 1.84 անգամ, իսկ տեղաբաշխում/թողարկում հարաբերակցության միջին մեծությունը կազմել է 0.87:

#### Աղյուսակ 4. Ֆինանսական շուկայի տոկոսադրույքները 2010 թվականի ընթացքում

Ամիսներ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Առևտրային բանկերի	19.07	19.88	19.10	19.94	20.02	18.66	18.32	19.24	18.78	18.97	19.52	18.9

Վարկեր*											
Առևտուային բանկերի ավանդներ*	7.79	8.56	8.54	9.08	9.73	9.17	9.53	9.45	8.94	8.81	9.04
ՀՀ ԿԲ ռեպո գործառնու- թյուններ	5.50	6.00	6.50	7.00	7.25	7.25	7.25	7.25	7.25	7.25	7.25

**Հարկաբյուջետային հատված:** Տարվա ընթացքում իրականացվող հարկաբյուջետային քաղաքականության մոտեցումը եղել է արդյունավետ պարտքի կառավարման և պակասուրդի աստիճանական կրճատման ապահովումը:


Տարվա ընթացում ըստ նախնական արդյունքների պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են ՀՆԱ-ի 22.5%-ը՝ նախորդ տարվա 22.2-ի դիմաց, իսկ հարկային եկամուտները՝ ներառյալ սոցիալական ապահովագրության վճարները, կազմել են ՀՆԱ-ի 20.2%-ը՝ պահպանվելով նախորդ տարվա մակարդակին: Նախորդ տարվա նկատմամբ պետական բյուջեի եկամուտների անվանական աճը կազմել է 13.1%, իսկ հարկային եկամուտներինը՝ ներառյալ սոցիալական ապահովագրության վճարները՝ 11.9%, ընդ որում աճ է գրանցվել գրեթե բոլոր հարկատեսակների գծով, բացառությամբ շահութահարկի, հաստատագրված վճարի, հողի հարկի և գույքահարկի:

ՀՀ պետական բյուջեի ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը 2010 թվականի արդյունքներով նախորդ տարվա նկատմամբ դրսևորել է նվազման միտում՝ 2.4 տոկոսային կետի չափով և կազմել 27.6%: Ընթացիկ ծախսերի մասով գրանցվել է 6.2% անվանական աճ, սակայն ՀՆԱ-ի նկատմամբ արձանագրվել է անկում. ընթացիկ ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 22%՝ նախորդ տարվա 23.2%-ի դիմաց: Կապիտալ ծախսերը 2010 թվականին կազմել են ՀՆԱ-ի 5.5%-ը՝ նախորդ տարվա 7.1%-ի փոխարեն:

ՀՀ պետական բյուջեի պակասուրդը 2010 թվականին կազմել է ՀՆԱ-ի 5%-ը՝ նախորդ տարվա 7.7%-ի դիմաց:

**Հարկաբյուջետային ազդակը:** 2009 թվականի ողջ ժամանակատվածում գրանցված ընդլայնող հարկաբյուջետային ազդակի դիմաց 2010 թվականի արդյունքներով գրանցվել է զսպող հարկաբյուջետային ազդակ, ընդ որում եկամուտների գծով գրանցվել է 0.12%, իսկ ծախսերի գծով՝ 2.33% զսպող ազդակներ:


Գծապատկեր 8. Հարկաբյուջետային ազդակը 2009 թվականից եռամսյակներով



## ՀՀ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեով, ելնելով 1.2% տնտեսական աճի կանխատեսումից, ծրագրվել էր ստանալ ավելի քան 742.1 մլրդ դրամ եկամուտներ, որից 699.6 մլրդ դրամը՝ սեփական եկամուտների, 42.5 մլրդ դրամը՝ արտաքին պաշտոնական դրամաշնորհների տեսքով: «ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ կետի և 11-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներից ելնելով՝ պետության դրամական միջոցների համախմբված հաշվառման նպատակով պետական բյուջեի ծրագրային և փաստացի ցուցանիշներում ներառվել են նաև «ՀՀ պետական հիմնարկների համար կառավարության որոշումներով բացված արտարյուջետային հաշիվների համապատասխան շրջանառությունը, ինչպես նաև առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումները: Նշված միջոցները ներառյալ, ինչպես նաև հաշվի առնելով կառավարության լիազորությունների շրջանակներում կատարված մյուս փոփոխությունները՝ ՀՀ պետական բյուջեի եկամուտների ծրագիրն ավելացվել է 30.8 մլրդ դրամով (4.2%-ով) և կազմել շուրջ 773 մլրդ դրամ, որից 725.4 մլրդ դրամը՝ սեփական եկամուտների, 47.6 մլրդ դրամը՝ պաշտոնական դրամաշնորհների գծով: 2010 թվականի համաշխարհային տնտեսական աճը դրական ազդեցություն ունեցավ նաև «ՀՀ տնտեսության վրա, որի արդյունքում արձանագրվեց եկամուտների ծավալների աճ: 2010 թվականի փաստացի եկամուտները կազմել են շուրջ 780.4 մլրդ դրամ, որոնք նախորդ տարվա ցուցանիշը գերազանցել են 90.4 մլրդ դրամով կամ 13.1%-ով, իսկ ծրագրային ցուցանիշը՝ 1%-ով, այն դեպքում, երբ պաշտոնական դրամաշնորհների կանխատեսված մակարդակն ապահովվել է ընդամենը 64.3%-ով կամ կանխատեսվածից պակաս է ստացվել 17 մլրդ դրամ: Հարկային եկամուտները (ներառյալ՝ պետական տուրքերը և պարտադիր սոցիալական ապահովության վճարները) և այլ եկամուտները գերազանցել են ճշտված ծրագրային ցուցանիշները համապատասխանաբար 2%-ով և 27.3%-ով:

Գծապատկեր 9. ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի եկամուտները



■ Ակզենտական ծրագիր


■ Զշագած ծրագիր

■ 2010թ. փաստացի

Հաշվետու տարում ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի եկամուտների հարաբերակցությունը կազմել է 22.5%, որը 0.3 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը և 0.6 տոկոսային կետով զիշել է կանխատեսված ցուցանիշը:


Ինչպես նշվեց, 2009 թվականի համեմատ պետական բյուջեի եկամուտներն աճել են 13.1%-ով կամ 90.4 մլրդ դրամով: Եկամուտների աճը գերազանցապես պայմանավորված է հարկային եկամուտների ավելացմամբ (14.1%-ով կամ 70.7 մլրդ դրամով): Հարկ է նշել, որ նախորդ տարվա համեմատ աճ է արձանագրվել նաև մյուս եկամտատեսակների գծով, մասնավորապես՝ պաշտոնական դրամաշնորհներն ավելացել են 41.1%-ով (8.9 մլրդ դրամով), այլ եկամուտները՝ 17.2%-ով (7.4 մլրդ դրամով), պարտադիր սոցիալական ապահովության վճարները՝ 2.4%-ով (2.4 մլրդ դրամով), իսկ պետական տուրքերը՝ 5.3%-ով (1 մլրդ դրամով):

Գծապատկեր 10. ՀՀ պետական բյուջեի եկամուտների կատարողականը 2009-2010թթ.



Պաշտոնական դրամաշնորհների և այլ եկամուտների համամեմատաբար բարձր աճի արդյունքում 2009 թվականի համեմատ 2010 թվականի պետական բյուջեի եկամուտներում 0.8 տոկոսային կետով ավելացել է պաշտոնական դրամաշնորհների, 0.2 տոկոսային կետով՝ այլ եկամուտների տեսակարար կշիռը, իսկ հարկային եկամուտների (ներառյալ՝ պետական տուրքերը և պարտադիր սոցիալական ապահովության վճարները) գծով նոյն ցուցանիշը նվազել է 1 տոկոսային կետով: Հարկ է նշել, որ 0.6 տոկոսային կետով ավելացել է հարկային եկամուտների տեսակարար կշիռը, իսկ պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով նոյն ցուցանիշը նվազել է համապատասխանաբար 0.2 և 1.4 տոկոսային կետերով:


Գծապատկեր 11. ՀՀ պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը



**Հարկային եկամուտներ և պետական տուրքեր**

ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի եկամուտների 76.1%-ն ապահովվել է հարկային եկամուտների և պետական տուրքերի հաշվին, որոնք կազմել են շուրջ 594.1 մլրդ դրամ և 2.3%-ով գերազանցել կառավարության լիազորությունների շրջանակներում ճշտված տարեկան ծրագիրը: Նշված գումարից շուրջ 574.1 մլրդ դրամը կազմել են հարկային եկամուտները, 20 մլրդ դրամը՝ պետական տուրքերը: Դիտարկելով հարկային եկամուտների ամսական շարժը՝ կարելի է արձանագրել, որ 2010 թվականին հարկային եկամուտներն ունեցել են հիմնականում կայուն վարքագիծ, տարվա ընթացքում արձանագրվել է նաև եռամսյակային ծրագրերի գերակատարում:

Գծապատկեր 12. ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ ամիսների, 2009-2010թթ.




2009 թվականի համեմատ հարկային եկամուտները և պետական տուրքերն աճել են 13.7%-ով կամ 71.7 մլրդ դրամով: Հարկերի աճը հիմնականում ապահովվել է ավելացված արժեքի հարկի, եկամտահարկի, ակցիզային հարկի և մաքսատուրքի մուտքերի հաշվին:

2010 թվականին ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների և պետական տուրքերի հարաբերակցության ցուցանիշը կազմել է 17.2%՝ 0.5 տոկոսային կետով զիջելով կանխատեսված և 0.4 տոկոսային կետով գերազանցելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշները: Արդյունքում հարկային սահունության գործակիցը 2010 թվականին կազմել է 1.19 (ՀՆԱ-ի աճի յուրաքանչյուր տոկոսային կետին բաժին է ընկել հարկերի 1,19 տոկոսային կետով ավելացում), 2009 թվականին հարկային մուտքերի և ՀՆԱ-ի ցուցանիշների նվազման պարագայում ստացված 1.07-ի դիմաց:

### Հարկային եկամուտներ

2010 թվականին ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 574.1 մլրդ դրամ հարկային եկամուտներ՝ 2.5%-ով գերազանցելով ծրագրված և 14.1%-ով՝ նախորդ տարվա ցուցանիշները: 2009 թվականի համեմատ հարկային եկամուտների կազմում գրանցվել է ուղղակի հարկերի տեսակարար կշռի նվազում՝ եկամտահարկի և շահութահարկի տեսակարար կշիռը նվազել է 1.6 տոկոսային կետով և կազմել 26.4%: Միևնույն ժամանակ, 2.2 տոկոսային կետով աճել է անուղղակի հարկերի բաժինը, մասնավորապես՝ ավելացված արժեքի հարկի տեսակարար կշիռն աճել է 2 տոկոսային կետով՝ կազմելով 52.6%:

Գծապատկեր 13. ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների կառուցվածքը, 2009-2010թթ.



2010 թվականին հարկային եկամուտների 52.6%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին, որը կազմել է 301.7 մլրդ դրամ: Նշված գումարից 186 մլրդ դրամը ստացվել է ՀՀ սահմանին

հարկումից, 115.7 մլրդ դրամը՝ ապրանքների և ծառայությունների ներքին շրջանառությունից: Նախորդ տարվա համեմատ պետական բյուջե մուտքագրված ԱԱՀ-ն աճել է 18.7%-ով կամ 47.6 մլրդ դրամով: ԱԱՀ-ի աճի հիմնական աղբյուր են հանդիսացել ներմուծման ծավալների և տնտեսվարող սուբյեկտների կողմից իրացման ծավալների աճը: Հատկանշական է, որ ներքին շրջանառությունից ստացված մուտքերն ապահովել են սահմանին գանձվող գումարների նկատմամբ առաջանցիկ աճ: Եթե ապրանքների ներմուծումից ստացված ավելացված արժեքի հարկը 10.1%-ով է գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը, ապա ներքին շրջանառության գծով աճը կազմել է 35.7%:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում կատարվել է լրացում, որի համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվում է նաև թանկարժեք մետաղների իրացումը (օրենքն ընդունվել է 2010 թվականի փետրվարի 25-ին): «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում կատարված մեկ այլ փոփոխությամբ սահմանվել է, որ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից իրավաբանական անձանց կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում գույքի ներդրումն ազատվում է ավելացված արժեքի հարկից (օրենքն ընդունվել է 2010 թվականի հոկտեմբերի 27-ին):

**Ակցիզային հարկից մուտքերը հաշվետու տարում կազմել են ավելի քան 48.1 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հանրապետություն ներմուծված ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է շուրջ 33.5 մլրդ դրամ, որից 14.3 մլրդ դրամը՝ բենզինի և դիզելային վառելիքի, 13.7 մլրդ դրամը՝ ծխախոտի ներմուծման հարկումից: Հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից պետական բյուջեի մուտքերը կազմել են շուրջ 14.7 մլրդ դրամ, որից 8.3 մլրդ դրամը ստացվել է ներքին արտադրության ծխախոտի, 6.4 մլրդ դրամը՝ ոգելից խմիչքների իրացումից: 2009 թվականի համեմատ ակցիզային հարկի մուտքերն աճել են 12.6%-ով կամ 5.4 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է հանրապետություն ներմուծվող ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացված մուտքերի 17.4% աճով: Նշենք նաև, որ 2.8%-ով կամ շուրջ 402.4 մլն դրամով ավելացել են հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից մուտքերը՝ հիմնականում պայմանավորված տեղական արտադրության ծխախոտի իրացումից ստացված հարկի աճով, որը կազմել է 4.2% կամ 332.3 մլն դրամ:**

«Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի փոփոխությամբ սահմանվել է, որ ակցիզային հարկ վճարող անձանց, ինչպես նաև ակցիզային հարկ վճարող չհամարվող կազմակերպությունների և (կամ) անհատ ձեռնարկատերերի կողմից ԱՏԳ ԱԱ 2207 ապրանքախմբի ծածկագրին դասվող՝ շշացված ապրանքների և 2208 ապրանքախմբի ծածկագրին դասվող ապրանքների օտարման (այդ թվում՝ անհատույց) դեպքում այդ ապրանքների օտարման գինը (ներառյալ՝ ակցիզային հարկը և (կամ) ավելացված արժեքի հարկը) չի կարող պակաս լինել 1 լիտրի համար 3500 ՀՀ դրամից՝ 100-տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2010թ. հունվարի 1-ից):

2010 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների 13.6%-ն ապահովվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով 77.8 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ շահութահարկի մուտքերը նվազել են 3.7%-ով կամ 3 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությամբ, քանի որ տնտեսավարողները 2010 թվականի շահութահարկի կանխավճարները վճարել են՝ իհմք ընդունելով 2009 թվականի փաստացի շահութահարկի գումարները:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում կատարվել է լրացում, որի համաձայն թանկարժեք քարերի իրացման, ուսկերչական իրերի արտադրության և իրացման, թանկարժեք մետաղների արտադրության և (կամ) իրացման համար սահմանվել են նվազագույն շահութահարկի հաշվարկման բազայի այլ նվազեցումներ (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2010թ. մարտի 25-ից): «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում կատարված մեկ այլ փոփոխությամբ ուժը կորցրած է ճանաչվել հայաստանյան աղբյուրներից ոչ ռեզիդենտի ստացած շահաբաժնների՝ Օ տոկոս դրույթաչափով հարկման վերաբերյալ դրույթը (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2009թ. ռեկտեմբերի 5-ից):

Հաշվետու տարում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել ավելի քան 73.9 մլրդ դրամ եկամուտահարկ՝ ապահովելով հարկային եկամուտների 12.9%-ը: 2009 թվականի համեմատ եկամտահարկի մուտքերն աճել են 22.8%-ով կամ 13.7 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է հետևյալով. 2010 թվականին արձանագրված անվանական աշխատավարձերի աճով, 2008-2009 թվականներին պարզեցված հարկից հարկման ընդհանուր դաշտ տեղափոխված հարկատուների կողմից 2010 թվականին վճարված 2009 թվականի եկամտահարկի գումարի և եկամտահարկի նվազագույն գումարների տարբերությամբ, ինչպես նաև 2010 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխությամբ, ըստ որի հաստատագրված վճարներով հարկվող առևտիրի գործունեությունը տեղափոխվեց հարկման ընդհանուր դաշտ, որի արդյունքում 2010 թվականից տեղափոխված հարկ վճարողները սկսեցին վճարել եկամտահարկի կանխավճարներ և նվազագույն եկամտահարկ:

«Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքում կատարված մեկ այլ փոփոխության համաձայն, հողության և ծննդաբերության համար տրամադրվող նպաստները ներառվում են հարկվող եկամտի մեջ և հարկվում են ընդհանուր սահմանված կարգով (օրենքն ուժի մեջ է մտել 2010 թվականի դեկտեմբերի 1-ից և տարածվում է օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ծագած ժամանակավոր անաշխատունակության դեպքերի վրա): «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածում կատարվել է լրացում, որի համաձայն համախառն եկամտից նվազեցվում են գործատուների կողմից իրենց վարձու աշխատողների առողջության ապահովության համար կատարված ապահովագրավճարները՝ յուրաքանչյուր վարձու աշխատողի համար եկամտի

ստացման յուրաքանչյուր ամսվա հաշվով մինչև տասը հազար դրամի չափով (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2010թ. ապրիլի 23-ից):

Հաշվետու տարվա ընթացքում պետական բյուջե մուտքագրված մաքսակուրքը կազմել է շուրջ 29.4 մլրդ դրամ: Ներմուծման ծավալների ավելացման հետևանքով նախորդ տարվա համեմատ մաքսատուրքի գծով բյուջետային մուտքերն աճել են 16.9%-ով կամ շուրջ 4.3 մլրդ դրամով:

2010 թվականին պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 22 մլրդ դրամ հաստատագրված վճարներ (առանց ծխախոտի արտադրանքի, ներմուծվող բենզինի ու դիզելային վառելիքի հաստատագրված վճարների՝ ապահովելով հարկային եկամուտների 3.8%-ը: Մուտքերի 75.2%-ը (16.5 մլրդ դրամ) ստացվել է սպասարկման ոլորտից, 14.6%-ը (3.2 մլրդ դրամ)՝ հանրային սննդի ոլորտից, 4.5%-ը (999.9 մլն դրամ)՝ առևտրական գործունեությունից, 3.6%-ը (800.5 մլն դրամ)՝ ներմուծողների կողմից բենզինի իրացման, 2.1%-ը (454 մլն դրամ)՝ ներմուծողների կողմից դիզելային վառելիքի իրացման համար: Հաշվետու տարում հաստատագրված վճարները նախորդ տարվա համեմատ նվազել են 7.7%-ով կամ 1.8 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է 2010 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխությամբ, ըստ որի հաստատագրված վճարներով հարկվող առևտրի գործունեությունը տեղափոխվել է հարկման ընդհանուր դաշտ: Բացի այդ, 2010 թվականի մայիսի 20-ի «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2010 թվականի հունիսի 3-ին) «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքում լրացված 59.8-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվել է, որ օրենքի դրույթները չեն տարածվում այն ավտոտրանսպորտային միջոցների գազալցման կայանների միջոցով իրականացվող ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեության վրա, որտեղ ՀՀ կառավարության սահմանած տեխնիկական կանոնակարգին համապատասխան առկա են լիցքավորման բաշխիչ աշտարակներ: Վերջինս նշանակում է, որ նշված ավտոտրանսպորտային միջոցների գազալցման կայանների միջոցով իրականացվող ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեությունը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած տեխնիկական կանոնակարգին համապատասխան բաշխիչ աշտարակների առկայության դեպքում կիարկվի հարկման ընդհանուր համակարգում (ավելացված արժեքի հարկով և շահութահարկով (եկամտահարկով)): Հարկ է նշել, որ հանրային սննդի և սպասարկման ոլորտներից գանձված հաստատագրված վճարները նախորդ տարվա համեմատ արձանագրել են համապատասխանաբար 15.7 և 8.5 տոկոս աճ:

2010 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 9.1 մլրդ դրամ բնօգուագործման և բնապահպանական վճարներ, որից 5.2 մլրդ դրամը կազմել են բնապահպանական վճարները, 3.9 մլրդ դրամը՝ բնօգտագործման վճարները: Մասնավորապես՝ 3.6

մլրդ դրամ է մուտքագրվել օգտակար հանածոների արդյունահանման համար, 2 մլրդ դրամը՝ այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու, 1.5 մլրդ դրամը՝ ՀՀ ներմուծվող շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար: Հիմնականում նշված երեք վճարների գծով արձանագրված մուտքերի աճի արդյունքում նախորդ տարվա համեմատ բնօգտագործման և բնապահպանական վճարներն ավելացել են 48.7%-ով կամ 3 մլրդ դրամով: Մասնավորապես՝ 127.3%-ով կամ 2 մլրդ դրամով աճել են օգտակար հանածոների արդյունահանման համար վճարված բնօգտագործման վճարները (որի հիմնական պատճառ է հանդիսացել օգտակար հանածոների արդյունահանման ծավալների աճը), 26.1%-ով կամ 423.7 մլն դրամով՝ մաքսային մարմինների կողմից գանձվող այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութերի արտանետման դիմաց վճարված բնապահպանական վճարները և 24.4%-ով կամ 299.6 մլն դրամով՝ ՀՀ ներմուծվող շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների դիմաց վճարված բնապահպանական վճարները:

Հաշվետու տարվա ընթացքում պետական բյուջե են մուտքագրվել 12 մլրդ դրամի այլ հարկեր: Մասնավորապես՝ 3.9 մլրդ դրամ է կազմել «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված ռոյալթին, 3.1 մլրդ դրամ՝ ճանապարհային վճարները, 2.2 մլրդ դրամ՝ հարկային օրենսդրության խախտման համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված սույգանքները, շուրջ 1.1 մլրդ դրամ՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, 221.1 մլն դրամ՝ «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կոնցեսիոն վճարը, 93 մլն դրամ՝ հարկային մարմինների կողմից ՀՀ պետական կառավարման մարմիններում և պետական հիմնարկներում կատարված ստուգումների և վերստուգումների արդյունքում առաջադրված լրացուցիչ հարկային և մաքսային պարտավորությունների մարման համար պետական բյուջեից իրականացվող վճարումները, 16 մլն դրամ՝ արտոնագրային վճարները և 1.6 մլրդ դրամ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման ֆոնդի եկամուտները: 2009 թվականի համեմատ այլ հարկային եկամուտներն արձանագրել են 16%-ով (1.7 մլրդ դրամով) աճ, որը հիմնականում պայմանավորված է ռոյալթի գծով մուտքերի շուրջ կրկնակի աճով: Վերջինիս հիմնական պատճառ է հանդիսացել ինչպես օգտակար հանածոների արդյունահանման ծավալների, այնպես էլ միջազգային շուկայում մետաղների (պղնձի, մոլիբդենի) գների աճը:

«Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կոնցեսիոն վճարի գծով փաստացի մուտքերը 47.4%-ով գերազանցել են կանխատեսված և 45.5%-ով՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշները, ինչը հիմնականում պայմանավորված է տվյալ տարում ուսումնասիրված օբյեկտների քանակով, ուսումնասիրության տրամադրված տարածքների մակերեսներով, հանքարդյունահանող

տնտեսավարող սուբյեկտների քանակով և նախկինում կուտակված պարտքերի մարման հանգամանքով:

Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների գծով գանձված 1.1 մլրդ դրամից 656.8 մլն դրամը կազմել է ռադիոհաճախականության օգտագործման թույտվության տրամադրման վճարը՝ նախատեսված 100 մլն դրամի դիմաց, որը հիմնականում պայմանավորված է նրանով, որ «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ի ցանցի զարգացման համար վճարվել է 353.3 մլն դրամ։ Նախատեսված չափով գանձվել են հանրային ծառայությունների կարգավորման այլ պարտադիր վճարները՝ կազմելով 418 մլն դրամ։

Նշենք, որ 2010 թվականին նախորդ տարվա համեմատ արտոնագրային վճարներն աճել են 66.8%-ով, որի հիմնական պատճառը տվյալ հարկատեսակով հարկվող գործունեության տեսակներով գրաղվող անձանց հարկման դաշտ ներգրավման ավելացումն է։

Նոխորդ տարվա համեմատ աճ է արձանագրվել նաև ճանապարհային վճարների գծով՝ 6.1% կամ 179.2 մլն դրամ, ինչը հիմնականում ապահովվել է մաքսային սահմանին գանձված գումարների հաշվին։

### **Պետական բույր**

2010 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել ավելի քան 20 մլրդ դրամ պետական բույրեր՝ ապահովելով պետական բյուջեի եկամուտների 2.6%-ը։ Պետական տուրքի փաստացի մուտքերը 1.5%-ով կամ 314.3 մլն դրամով զիջել են ՀՀ կառավարության լիազորությունների շրջանակներում ճշտված ծրագիրը։ Շեղումը հիմնականում պայմանավորված է ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար, ինչպես նաև օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների համար գանձված տուրքերի համեմատաբար ցածր կատարողականով՝ կազմելով համապատասխանաբար 81.6 և 95.4 տոկոս։ Միաժամանակ, որոշ տուրքերի գծով արձանագրվել են կանխատեսվածից բարձր ցուցանիշներ։ Մասնավորապես՝ ծրագիրը գերազանցել են լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու (11%-ով) և դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների դատարանների վճիռների և որոշումների դեմ տրվող վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու (7.7%-ով) համար գանձված տուրքերը։

Նախորդ տարվա համեմատ պետական տուրքի մուտքերն աճել են 5.3%-ով կամ 1 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ՀՀ-ից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց ելքի, պետական գրանցման, լիցենզավորման ենթակա գործունեություն

իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու և հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող տուրքերի աճով:

2010 թվականին դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանների վճիռների և որոշումների դեմ տրվող վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական բյուջեն է վճարվել ավելի քան 1.1 մլրդ դրամ (որից 411.3 մլն դրամը կազմում են պետական կառավարման մարմինների կողմից վճարված և պետական բյուջեից փոխհատուցված գումարները՝ նախատեսված 1 մլրդ դրամի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված մուտքերը նվազել են 2.3%-ով կամ 26 մլն դրամով:

Հյայստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հյայստանի Հանրապետության քաղաքացիության փոփոխման համար վճարվող տուրքերը կազմել են շուրջ 19.7 մլն դրամ՝ ապահովելով 207.2% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված տուրքերի գծով արձանագրվել է 8.9% աճ:

Հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների դիմաց պետական բյուջեն է վճարվել ավելի քան 1.8 մլրդ դրամ՝ 99.1%-ով ապահովելով կանխատեսված ցուցանիշը: 2009 թվականի համեմատ նշված տուրքերն աճել են 6.8%-ով կամ 117.4 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է հյուպատոսական ծառայությունների քանակի ավելացմամբ:

Պետական տուրքերի 14.8%-ը բյուջեն է վճարվել պետական գրանցումների դիմաց՝ կազմելով շուրջ 3 մլրդ դրամ, որը 0.5%-ով գերազանցում է նախատեսված ցուցանիշը և 10.1%-ով՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը: Դա պայմանավորված է ավտոմեքենայի պետհամարանիշ տալու և կորցրածը վերականգնելու, ավտոմեքենայի (մոտոցիկլետի) տեխնիկական անձնագիր (գրանցման վկայական) և կորցրած տեխնիկական անձնագրի (գրանցման վկայականի) կրկնօրինակ տալու, ինչպես նաև գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար գանձված տուրքերի ավելացմամբ:

Մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիր տրամադրելու դիմաց 2010 թվականին պետական բյուջեն է վճարվել 1.1 մլն դրամ, որը 19.2%-ով գերազանցում է նախատեսվածը և 3.9%-ով՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը: Աճը պայմանավորված է մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի դիմաց տրամադրված վկայագրերի թվի ավելացմամբ. հաշվետու տարում այն կազմել է 214՝ 2009 թվականի 206-ի դիմաց:

Գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, ֆիրմային անվանումների, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված

գործողությունների համար հաշվետու տարում ՀՀ պետական բյուջե է վճարվել 291.5 մլն դրամ պետական տուրք՝ 12.1%-ով գերազանցելով կանխատեսված ցուցանիշը, ինչը պայմանավորված է հայտատունների թվի ավելացմամբ: 2009 թվականի համեմատ այս մուտքերն էական փոփոխություն չեն կրել:

Ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակության փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար 2010 թվականին գանձվել է ավելի քան 2.1 մլրդ դրամ, որը 18.4%-ով զիջում է կանխատեսված ցուցանիշը և 5%-ով՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը:

Հաշվետու տարում պետական բյուջե մուտքագրված պետական տուրքերի 20.8%-ը ստացվել է լիցենզիաների տրամադրման դիմաց: Նշված աղբյուրից պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 4.2 մլրդ դրամ՝ 11%-ով գերազանցելով կանխատեսված և 4.8%-ով՝ նախորդ տարվա մուտքերը: Աճը հիմնականում պայմանավորված է հեռահաղորդակցության բնագավառում և պարզ ընթացակարգով տրվող լիցենզիաներ տալու համար գանձվող տուրքերի ավելացմամբ: Հեռահաղորդակցության բնագավառում լիցենզիաներ տալու համար հաշվետու տարում գանձվել է 180.3 մլն դրամ՝ 3 անգամ գերազանցելով կանխատեսված և 2.8 անգամ՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը: Նշված տուրքերի աճը պայմանավորված է նրանով, որ 2009 թվականին հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման լիցենզավորման մրցույթներ չեն անցկացվել, իսկ 2010 թվականին անցկացվել է թվային հեռարձակման ցանցի միջոցով հեռուստաձրագրերի եթերային հեռարձակում իրականացնելու հեռուստահեռարձակողների լիցենզավորման 25 մրցույթ՝ պայմանավորված «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով: Նշենք նաև, որ հաշվետու տարում հատկացվել է հեռուստահաղորդումների կաբելային (մալուխային) հեռարձակման 11 լիցենզիա՝ նախորդ տարվա 5-ի դիմաց: 2010 թվականին պարզ ընթացակարգով տրված լիցենզիաների դիմաց պետական բյուջե է մուտքագրվել 639.7 մլն դրամ՝ 32.4%-ով գերազանցելով ծրագրված և 24%-ով՝ նախորդ տարվա մուտքերը: Այս տուրքերի աճը պայմանավորված է լիցենզավորված անձանց թվի աճով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությամբ դադարել է գործել հատուկ ընդհանուր կրթական ծրագրերի, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերի, միջին մասնագիտական կրթական ծրագրերի, (բացառությամբ բժշկական միջին մասնագիտական ծրագրերի), ինչպես նաև բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի (բացառությամբ բժշկական բարձրագույն կրթական ծրագրերի) իրականացման համար սահմանված բազային տուրքի 25-ապատիկից մինչև 300-ապատիկի չափով պետական տուրքերը (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2010 թվականի հունվարից): «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում կատարված մեկ այլ փոփոխությամբ ներկայումս երկակի նշանակության ապրանքների և

տեխնոլոգիաների արտահանման թույլտվություն տալու համար բազային տուրքի 20-ապատիկի չափով սահմանված պետական տուրքի փոխարեն սահմանվել է երկակի նշանակության ապրանքների արտահանման և երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման անհատական թույլտվություն տալու համար՝ բազային տուրքի 20-ապատիկի չափով, իսկ վերոնշյալ գործունեության արդյունքների փոխանցման ընդհանուր թույլտվություն տալու համար՝ բազային տուրքի 30-ապատակի չափով պետական տուրքեր (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2010 թվականի մայիսի 15-ից): Օրենքի մեկ այլ փոփոխությամբ լիցենզիայի մեջից ավելի յուրաքանչյուր հաջորդ ներդիրի կամ կորցրած ներդիրի կրկնօրինակը տալու համար սահմանված տուրքերի փոխարեն սահմանվել է լիցենզիայի ներդիրի կրկնօրինակը տալու համար պետական տուրք (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2010 թվականի հունիսի 11-ից): Պետական տուրք է սահմանվել նաև տրանսպորտային միջոց վարելու ուսուցում իրականացնելու համար՝ տարեկան բազային տուրքի 10-ապատիկի չափով (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2010 թվականի սեպտեմբերից), որը 2011 հունվարից հանվել է:

2010 թվականին այլ ծառայությունների և գործողությունների համար գանձվել են ավելի քան 7.5 մլրդ դրամ պետական տուրքեր՝ ապահովելով 95.4% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված տուրքերն աճել են 8%-ով կամ 561 մլն դրամով, որը մեծ մասամբ պայմանավորված է նշված խմբում մեծ տեսակարար կշիռ ունեցող՝ օդային տրանսպորտով ֆիզիկական անձանց ելքի համար բյուջե մուտքագրված տուրքերի ավելացմամբ: Հաշվետու տարում այս մուտքերը կազմել են 6.2 մլրդ դրամ՝ 7.2%-ով զիջելով կանխատեսված և 6.4%-ով գերազանցելով նախորդ տարվա փաստացի ցուցանիշը, որը պայմանավորված է նախորդ տարվա համեմատ 2010 թվականին փոխադրված ուղևորների թվաքանակի ավելացմամբ:

### **Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ**

2010 թվականին պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով բյուջետային եկամուտները կազմել են 105.3 մլրդ դրամ՝ ապահովելով 100.1% կատարողական: 2009 թվականի համեմատ նշված վճարներն աճել են 2.4%-ով կամ ավելի քան 2.4 մլրդ դրամով: Ստացված գումարից 87.7 մլրդ դրամը վճարվել է գործատուների կողմից, 14.5 մլրդ դրամը՝ աշխատավարձից և դրան հավասարեցված եկամուտներից, 3.1 մլրդ դրամ՝ անհատ ձեռնարկատերների կողմից:

«Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձինք (այդ թվում՝ օտարերկրյա իրավաբանական անձի հիմնարկը, օտարերկրյա իրավաբանական անձի մասնաճյուղը կամ ներկայացուցչությունը), պետական և համայնքային ենթակայության հիմնարկները, օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուց-

չությունները և հյուպատոսական հիմնարկներն ու միջազգային միջազնութական (միջկառավարական) կազմակերպությունները, ֆիզիկական անձինք՝ իրենց հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար, ինչպես նաև վարձու աշխատողները պարտավոր են կատարել սոցիալական վճարումներ: Միաժամանակ, սահմանվել է նաև, որ Հայաստանի Հանրապետությունում ծեռնարկատիրական և այլ գործունեություն իրականացնող օտարերկրյա քաղաքացիներն ու քաղաքացիություն չունեցող անձինք, ինչպես նաև նրանց վարձու աշխատանքն օգտագործող գործատունները սոցիալական վճարումներ կատարում են ընդհանուր հիմունքներով: Նույն օրենքի համաձայն, փոփոխվել է նաև պարտադիր սոցիալական ապահովության վճարների հաշվարկման և վճարման կարգը: Մասնավորապես, գործատունները յուրաքանչյուր ամիս հաշվարկում են սոցիալական վճարներ, դրանց հաշվին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և չափերով հաշվարկում ու վճարում են վարձու աշխատողի մահվան դեպքում տրվող թաղման նպաստը և ժամանակավոր անաշխատունակության նպաստները (բացառությամբ օրենսդրությամբ սահմանված՝ ժամանակավոր անաշխատունակության առաջին երեք օրվա համար գործատուի միջոցների հաշվին վճարվող գումարների՝ մնացած գումարները փոխանցելով պետական բյուջե մինչև հաջորդ ամսվա 20-ը ներառյալ: Յուրաքանչյուր ամսում փաստացի վճարված նպաստների գումարների չափով պակասեցումը (բայց ոչ ավելի, քան տվյալ ամսվա համար հաշվարկված սոցիալական վճարների գումարը) գործատուն կատարում է հաջորդ ամսվա 20-ին (փոփոխություններն ուժի մեջ են մտել 2010 թվականի դեկտեմբերին):

### **Դաշտոնական դրամաշնորհներ**

2010 թվականին արտաքին աղբյուրներից տրամադրվել են ավելի քան 30.6 մլրդ դրամ պաշտոնական դրամաշնորհներ՝ կազմելով տարեկան ճշտված ծրագրի 64.3%-ը: Ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է ԱՄՆ-ի կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի և Եվրոպական հարևանության շրջանակներում ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների ցածր կատարողականով: «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ստացվել է 19 մլրդ դրամ կամ ծրագրված միջոցների 73.5%-ը: Շեղումն արձանագրվել է հիմնականում ծրագրի ոռոգվող գյուղատնտեսության բաղադրիչի շրջանակներում: Եվրոպական հանձնաժողովից Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո 2007-2010թթ. ազգային ինդիկատիվ ծրագրի շրջանակներում 2010 թվականին ՀՀ-ին նախատեսված 8 մլրդ դրամի դիմաց տրամադրվել է 3.4 մլրդ դրամի (42.9%) չափով աջակցություն:

Հաշվետու տարում ճապոնիայի կառավարության կողմից «Պարենային արտադրության աճ» ծրագրի շրջանակներում տրամադրված ապրանքանյութական արժեքների դրամայնացումից նախատեսված 345 մլն դրամի դիմաց պետական բյուջե է մուտքագրվել 284.5 մլն դրամ։ Իսկ «Արմենիա-2010» ուսումնավարժության անցկացում» ծրագրի շրջանակներում ստացվել է 57.1 մլն դրամ՝ նախատեսված 74.6 մլն դրամի դիմաց։

Հաշվետու ժամանակահատվածում նպատակային դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում ստացվել է 24.5 մլրդ դրամ, որից շուրջ 19 մլրդ դրամը (նախատեսվածի 73.5%-ը), ինչպես նշվեց, ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» ծրագրի շրջանակներում, 1.8 մլրդ դրամ (նախատեսվածի 68.2%-ը)՝ Համաշխարհային բանկի, 1.7 մլրդ դրամ (նախատեսվածի 100%-ը)՝ Լինսի հիմնադրամի, 1.9 մլրդ դրամ (նախատեսվածի 47.7%-ը)՝ Գերմանիայի զարգացման վարկերի բանկի, 172.5 մլն դրամ (նախատեսվածի 12.7%-ը)՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում։

Հաշվետու տարում Լինսի հիմնադրամից ստացված 1.7 մլրդ դրամն ամբողջությամբ ուղղվել է կրթական հաստատությունների վերականգնման ֆինանսավորմանը։

2010 թվականի պետական բյուջեում նախատեսված հետևյալ 10 դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում նախատեսված միջոցները չեն ստացվել։

- Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Շիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագիր՝ 1.5 մլրդ դրամ։
- Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Հանրային մասնավոր համագործակցություն» և Սևանա լճի բնապահպանական ծրագրեր՝ համապատասխանաբար 69 մլն դրամ և 1.1 մլրդ դրամ։
- Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող հանրային հատվածի ներքին առողջիւթիւ իրականացման և ոչ առևտրային կազմակերպությունների ֆինուցիար վերահսկողության փորձնական դրամաշնորհային ծրագրեր՝ համապատասխանաբար 187 մլն դրամ և 164.2 մլն դրամ։
- Դանիական թագավորության աջակցությամբ իրականացվող «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» դրամաշնորհային ծրագիր՝ 285.9 մլն դրամ։
- Ֆրանսիայի հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրին տրամադրվող տեխնիկական աջակցության ծրագիր՝ 207.7 մլն դրամ։

- Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» դրամաշնորհային ծրագրի՝ շուրջ 69.6 մլն դրամ:

2010 թվականին 2.3 մլրդ դրամ մուտքագրվել է պետական հիմնարկների արտաքյութեային հաշիվներին՝ նրանց կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում, որի հիմնական մասը (շուրջ 2 մլրդ դրամ) ուղղվել է առողջապահության ոլորտին:

Նախորդ տարվա համեմատ պաշտոնական դրամաշնորհներից պետական բյուջեի մուտքերն աճել են 41.1%-ով կամ 8.9 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ստացված միջոցների ավելացմամբ:

### Այլ Եկամուտներ

2010 թվականին ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 50.4 մլրդ դրամ այլ եկամուտներ, որը կազմում է բյուջեի եկամուտների 6.5%-ը՝ նախորդ տարվա 6.2%-ի դիմաց: Այլ եկամուտները 27.3%-ով կամ 10.8 մլրդ դրամով գերազանցել են կառավարության լիազորությունների շրջանակներում ճշտված ծրագրով սահմանված ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների բարձր ցուցանիշով, որոնք նախատեսված 5.9 մլրդ դրամի դիմաց կազմել են 14.4 մլրդ դրամ: Հիմնականում նշված եկամուտների աճի արդյունքում նախորդ տարվա համեմատ այլ եկամուտների գծով արձանագրվել է 17.2%-ով կամ 7.4 մլրդ դրամով աճ: Մուտքերի նման բարձր մակարդակը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ 2010 թվականի համար տոկոսավճարների կանխատեսումները կազմելիս հիմք է ընդունվել 2009 թվականի պետական բյուջեի ամբողջական կատարումը, այնինչ 2009 թվականի պետական բյուջեի կատարման արդյունքում գանձապետական միասնական հաշվի մնացորդն էաւես գերազանցեց բյուջեով ծրագրված մակարդակը: Իսկ ինչ վերաբերում է 2010 թվականի բյուջեի կատարմանը, ապա հատկապես տարվա առաջին կիսամյակում արձանագրված եկամուտների ավել հավաքագրումները և ծախսերի խնայողությունները, ինչպես նաև գանձապետական միասնական հաշվի միջոցների ակտիվ կառավարումը թույլ տվեցին գերակատարել ծրագրված մակարդակը: Նշենք, որ նախորդ տարվա համեմատ նշված մուտքերն ավելացել են 42.6%-ով կամ 4.3 մլրդ դրամով:

Բացի վերոհիշյալ մուտքերից, որոշ այլ եկամտատեսակների գծով ևս արձանագրվել է ծրագրի գերազանցում: Մասնավորապես՝ իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերը կազմել են ավելի քան 6 մլրդ դրամ՝

13.6%-ով գերազանցելով ծրագիրը և 4.7%-ով՝ նախորդ տարվա ցուցանիշը: Աճը հիմնականում պայմանավորված է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կողմից կիրառված վարչական տուգանքների գանձումների ավելացմամբ:

Տիրազորկ, ժառանգության իրավունքով, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանցից (բացառությամբ ՀՀ համայնքների, միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների) նվիրատվության կարգով պետությանը որպես սեփականություն անցած դրամական միջոցներից, ինչպես նաև հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող գույքի օտարումից մուտքերը կազմել են 225.2 մլն դրամ՝ 4.6 անգամ գերազանցելով ծրագրային և 3.5 անգամ՝ նախորդ տարվա ցուցանիշները:

Պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության դիմաց 2010 թվականին ՀՀ պետական բյուջեն է մուտքագրվել շուրջ 858.2 մլն դրամ՝ 16.1%-ով գերազանցելով ծրագիրը և 1.8%-ով նվազելով նախորդ տարվա համեմատ: Մասնավորապես՝ 755.6 մլն դրամ է մուտքագրվել գույքի (բացառությամբ հողի) վարձակալության վարձավճարներից, 73.3 մլն դրամ՝ պետական պահուստի հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարներից, 29.3 մլն դրամը՝ պետական անտառների և անտառային հողերի օգտագործման վճարներից, համապատասխանաբար 10.2%-ով, 2.2 անգամ և 46.3%-ով գերազանցելով ծրագրային ցուցանիշները: Նախորդ տարվա համեմատ գույքի վարձակալության վարձավճարներից մուտքերն էական փոփոխություն չեն կրել, հողի վարձակալությունից մուտքերի անկումը, որը կազմել է 44.1 մլն դրամ կամ 37.6%, հիմնականում պայմանավորված է նրանով, որ 2010 թվականին, ի տարբերություն նախորդ տարվա, Երևան քաղաքի տարածքում վարձակալած հողերի վարձավճարներն ու հողի վաճառքից եկամուտները մուտքագրվել են համայնքի բյուջե: Նշենք, որ պետական անտառների և անտառային հողերի օգտագործման վճարներից նախորդ տարի մուտքեր չեն ստացվել:

Հաշվետու տարում իրավաբանական անձանց բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից ստացվել են 658.7 մլն դրամի շահաբաժններ՝ 3%-ով գերազանցելով ծրագրային ցուցանիշը և 4.7%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ցուցանիշի անկումը մեծ մասամբ պայմանավորված է Երևանի կարգավիճակի փոփոխությամբ, որի արդյունքում նշված միջոցները մուտքագրվել են Երևան քաղաքի համայնքային բյուջե:

Պետության տվյալ վարկերի օգտագործման դիմաց ստացվել են 6.5 մլրդ դրամ տոկոսավճարներ, որից շուրջ 6.3 մլրդ դրամը (ծրագրի 95.1%-ը) ստացվել է ռեզիդենտներին, իսկ 201.7 մլն դրամը (ծրագրի 100.7%-ը)՝ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման դիմաց: Նախորդ տարվա համեմատ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման դիմաց տոկոսավճարներն աճել են 2.7 անգամ կամ 3.9 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է Լինսի հիմնադրամի և ձեռնարկությունների զարգացման ծրագրերի

շրջանակներում տրամադրված վարկերի դիմաց ստացված տոկոսավճարների աճով: Պետության կողմից ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման դիմաց տոկոսավճարները նախորդ տարվա համեմատ աճել են 25.7%-ով կամ 41.2 մլն դրամով: Նշված գումարից 42.5 մլն դրամը հանդիսանում է 2009 թվականի պարտավորությունը, որը վրացական կողմը փոխանցել է 2009 թվականի դեկտեմբերի վերջին, սակայն Գանձապետական միասնական հաշվին մուտքագրվել է 2010 թվականի հունվարի 5-ին: Միևնույն ժամանակ, 2010 թվականի վերջին վճարումը՝ 38.1 մլն դրամը, փոխանցվել է 2010 թվականի դեկտեմբերի վերջին և Գանձապետական միասնական հաշվին մուտքագրվել է 2011 թվականի հունվարին:

Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների գծով պետական բյուջե է մուտքագրվել 21.7 մլրդ դրամ՝ 8.1%-ով գերազանցելով ծրագիրը: Վերջինս հիմնականում պայմանավորված է պետական հիմնարկների արտաբյուջետային եկամուտների, ինչպես նաև հանքարդյունահանման լիցենզառուի կողմից վճարված բոնուսի ծրագրի համապատասխանաբար 5.7%-ով և 10 անգամ գերազանցման հանգամանքով: Վերջինս 6 անգամ գերազանցել է նաև նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված անցկացված աճուրդների և աճուրդի դրված օգտակար հանածոների պաշարների քանակի ավելացմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված մուտքերը նվազել են 5.6%-ով կամ 1.3 մլրդ դրամով, որը պայմանավորված է ՀՀ շարժական կապի գլոբալ համակարգի ծառայությունների մատուցման երրորդ օպերատորի մրցույթի հաղթողի կողմից 2009 թվականին կատարված վճարումներով, ինչպես նաև ռադիոհաճախականության օգտագործման վճարի նվազմամբ:

## **ՀՀ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ**

ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի մասին օրենքով նախատեսվել էր 935.5 մլրդ դրամ ծախսերի կատարում: Տարվա ընթացքում, հաշվի առնելով «ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ կետի և 11-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները, պետության դրամական միջոցների համախմբված հաշվառման նպատակով, պետական բյուջեի ծրագրային և փաստացի ցուցանիշներում ներառվել են նաև ՀՀ պետական հիմնարկների համար կառավարության որոշումներով բացված արտարյուջետային հաշիվների համապատասխան շրջանառությունը, ինչպես նաև առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումները: Նշված միջոցները ներառյալ, ինչպես նաև հաշվի առնելով կառավարության լիազորությունների շրջանակներում կատարված մյուս փոփոխությունները՝ ՀՀ պետական բյուջեի ծախսերի ծրագիրն ավելացվել է 40.8 մլրդ դրամով (4.4%-ով) և կազմել շուրջ 976.3 մլրդ դրամ: ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի ծախսերի կատարողականը կազմել է 97.7% կամ 954.3 մլրդ դրամ: Շեղումը մասամբ պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի ցածր կատարողականով, առանց որոնց ծախսերի կատարողականը կազմում է 99%:

2010 թվականին նախորդ տարվա համեմատ ՀՆԱ-ի անվանական մեծության 11.6% աճի պայմաններում ՀՀ պետական բյուջեի ծախսերն ավելացել են 2.7%-ով, ինչը հանգեցրել է ՀՆԱ-ի նկատմամբ ծախսերի հարաբերակցության նվազմանը. այն կազմել է 27.6%՝ պետական բյուջեի մասին օրենքում կանխատեսված 29.1%-ի և 2009 թվականի 29.9%-ի դիմաց:

### **Տնտեսագիտական դասակարգում**

Ըստ տնտեսագիտական բովանդակության՝ ՀՀ 2010 պետական բյուջեի փաստացի ծախսերի շեղումը ծրագրից կազմել է 2.3% կամ 22 մլրդ դրամ, որից 12.4 մլրդ դրամը բաժին է ընկել ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններին, 9.6 մլրդ դրամը՝ ընթացիկ ծախսերին: Նախորդ տարվա համեմատ բյուջեի ծախսերի 2.7% աճն առավելապես պայմանավորված է ընթացիկ ծախսերի աճով, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերի նվազմամբ: Արդյունքում 2009 թվականի համեմատ բյուջետային ծախսերի կազմում 2.7 տոկոսային կետով նվազել է ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների տեսակարար կշիռը և համապատասխանաբար՝ ավելացել ընթացիկ ծախսերի կշիռը: ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի ծախսերն ունեցել են հետևյալ կառուցվածքը՝ դրանց 80%-ն ուղղվել է ընթացիկ ծախսերին և 20%-ը՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններին:

## Ընթացիկ ծախսեր

ՀՀ 2010 թվականի պետական բյուջեից ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը տրամադրվել է 763.1 մլրդ դրամ, որը կազմում է տարեկան ծրագրի 98.8%-ը: Տնտեսումներ են արձանագրվել հիմնականում աշխատավարձի, ծառայությունների ու ապրանքների ձեռքբերման և այլ ծախսերի հոդվածներում:

Հաշվետու տարում ընթացիկ ծախսերի 10.3%-ը՝ շուրջ 78.3 մլրդ դրամ, տրամադրվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատանքի վարձատրությանը: Նշված ծախսերի գծով օգտագործվել է տարեկան նախատեսված միջոցների 97.8%-ը: Նախորդ տարվա համեմատ աշխատանքի վարձատրության ծախսերն ավելացել են 3.6%-ով:

2010 թվականին ծառայությունների և ապրանքների ձեռքբերման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 159.9 մլրդ դրամ կամ բյուջեի ընթացիկ ծախսերի 20.9%-ը: Նշված ծախսերի տարեկան ծրագիրը կատարվել է 98.5%-ով: Ընդ որում, բոլոր ծախսային հոդվածներում արձանագրվել են ծրագրից որոշակի շեղումներ: Նախորդ տարվա համեմատ ծառայությունների և ապրանքների ձեռքբերման ծախսերն ավելացել են 4.9%-ով՝ հիմնականում պայմանավորված ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերի աճով:

Հաշվետու տարվա ընթացքում պետական պարտքի սպասարկման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 30.4 մլրդ դրամ կամ ծրագրված միջոցների 100%-ը: Հատկացված գումարից 15.8 մլրդ դրամն ուղղվել է ներքին, իսկ 14.6 մլրդ դրամը՝ արտաքին պարտքի սպասարկմանը: Նախորդ տարվա համեմատ պետական պարտքի սպասարկման ծախսերն ավելացել են 86.9%-ով կամ 14.2 մլրդ դրամով: Մասնավորապես՝ 95.9%-ով (7.1 մլրդ դրամով) աճ է արձանագրվել արտաքին պարտքի, 79.4%-ով (7 մլրդ դրամով)՝ ներքին պարտքի սպասարկման ծախսերում: Արտաքին պետական պարտքի սպասարկման ծախսերի աճին նպաստող գործոններ են հանդիսացել պարտքի ծավալի և փոխարժեքի աճը, ինչպես նաև պարտքի կառուցվածքի փոփոխությունը՝ ոչ արտոնյալ վարկերի տեսակարար կշռի ավելացումը: Ներքին պետական պարտքի սպասարկման ծախսերի աճը ևս պայմանավորված է ներքին պարտքի ծավալի աճով, ինչպես նաև պետական պարտատոմսերի եկամտաբերության աճով:

2010 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են ավելի քան 17.8 մլրդ դրամի սուբսիդիաներ, որից շուրջ 16.8 մլրդ դրամը հատկացվել է պետական կազմակերպություններին, 1.1 մլրդ դրամը՝ ոչ պետական կազմակերպություններին: Հատկացված սուբսիդիաներից 7.7 մլրդ դրամը տրամադրվել է մշակույթի և սպորտի, 4.7 մլրդ դրամը՝ սոցիալական պաշտպանության բնագավառներին: Սուբսիդիաների գծով ծրագիրը կատարվել է 99.8%-ով: 2009 թվականի համեմատ՝ պետական բյուջեից տրամադրված սուբսիդիաների գումարը նվազել է 6.2%-ով, ինչը

հիմնականում պայմանավորված է տրանսպորտի և մշակույթի բանագավառներին կատարված հատկացումների նվազմամբ:

2010 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են շուրջ 94.4 մլրդ դրամի դրամաշնորհներ՝ ապահովելով 99.7% կատարողական: Մասնավորապես՝ 92.8 մլրդ դրամ է տրամադրվել պետական հատվածի այլ մակարդակներին, 1.5 մլրդ դրամ՝ միջազգային կազմակերպություններին, 116.8 մլն դրամ՝ օտարերկրյա պետություններին: Պետական բյուջեից համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաները հատկացվել են նախատեսված ամբողջ ծավալով՝ կազմելով 32.4 մլրդ դրամ, ինչը 17.9%-ով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը: Ավելի քան 5.4 մլրդ դրամի սուբվենցիաներ են տրամադրվել համայնքների բյուջեներին՝ 100%-ով կատարելով ծրագիրը: 2009 թվականի համեմատ պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհներն աճել են 17.9%-ով, որը հիմնականում պայմանավորված է համայնքներին տրամադրվող համահարթեցման դոտացիաների, սուբվենցիաների և այլ ընթացիկ դրամաշնորհների ավելացմամբ: Ընդ որում, սուբվենցիաների աճը հիմնականում պայմանավորված է Երևանի կարգավիճակի փոփոխությամբ, ինչի արդյունքում մի շարք ծրագրերի ֆինանսավորման համար հատկացվող գումարները 2010 թվականին տրամադրվել են սուբվենցիաների տեսքով:

Հաշվետու տարում պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 32%-ը կամ 244 մլրդ դրամ կազմել են սոցիալական նպաստները և կենսաթոշակները, որոնց տարեկան ծրագիրը կատարվել է 100%-ով: Հատկացումները բաշխվել են հետևյալ կերպ. շուրջ 65.2 մլրդ դրամն ուղղվել է նպաստների, 178.8 մլրդ դրամը՝ կենսաթոշակների ֆինանսավորմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.6%-ով, ընդ որում՝ 1.4%-ով ավելացել են նպաստների, 1.7%-ով՝ կենսաթոշակների ծախսերը:

2010 թվականի պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 17.6%-ը կամ 134.5 մլրդ դրամ կազմել են այլ ծախսերը, որոնց տարեկան ծրագիրը կատարվել է 96.6%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2%-ով:

### Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ

2010 թվականին պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են շուրջ 191.2 մլրդ դրամ, որոնք կազմում են ընդհանուր ծախսերի 20%-ը և տարեկան ծրագրի 93.9%-ը: Ծրագրից շեղումը հիմնականում արձանագրվել է շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման, շինարարության և վարչական սարքավորումների գծով ծախսերում: 2009 թվականի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների ցուցանիշը նվազել է 9.3%-ով կամ 19.6 մլրդ դրամով: Մասնավորապես՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով

ծախսերը նվազել են 13.4%-ով կամ շուրջ 29.7 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված շենքերի և շինությունների գծով կատարված ծախսերի նվազմամբ, իսկ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը՝ 10.1 մլրդ դրամով:

2010 թվականին ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը կազմել են 191.8 մլրդ դրամ, որից 172.2 մլրդ դրամն օգտագործվել է շենքերի և շինությունների ձեռքբերման, շինարարության և կապիտալ վերանորոգման, 15.9 մլրդ դրամը՝ մեքենաների և սարքավորումների ձեռքբերման, պահպանման և հիմնանորոգման, 2.2 մլրդ դրամը՝ այլ հիմնական միջոցների և 1.5 մլրդ դրամը՝ պաշարների ձեռքբերման նպատակով:

Հաշվետու տարվա ընթացքում շուրջ 564.5 մլն դրամ է մուտքագրվել ոչ ֆինանսական ակտիվների օտարումից՝ կանխատեսված 26.3 մլն դրամի և նախորդ տարվա 10.7 մլրդ դրամի դիմաց: Նշված գումարից 289.6 մլն դրամը ստացվել է հողի, 274.9 մլն դրամը՝ այլ ակտիվների օտարումից:

## Գործառական դասակարգում

### Ընդհանուր բնույթի պետական ծառայություններ

ՀՀ 2010 թվականի պետական բյուջեից 143.3 մլրդ դրամ է տրամադրվել ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերին՝ ապահովելով ծրագրի 97.7% կատարողական: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է պետական եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի միջոցների հաշվին նախատեսված ծախսերի ցածր կատարողականով: Նախորդ տարվա համեմատ ոլորտի ծախսերն աճել են 26.8%-ով: Աճի հիմնական մասը բաժին է ընկնում պետական պարտքի սպասարկմանը և ավելացված արժեքի հարկի վերադարձին:

«Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» դասի ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 13.4 մլրդ դրամ՝ ապահովելով նախատեսված ծախսերի 99.2%-ը: 2009 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 2.3%-ով՝ հիմնականում պայմանավորված վարչական օբյեկտների շինարարության և գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերի կրճատմամբ:

2010 թվականին ամբողջությամբ օգտագործվել են ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի և պատգամավորների պահպանման համար նախատեսված միջոցները՝ կազմելով 2.5 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ Ազգային ժողովի պահպանման ծախսերն ավելացել են 3.3%-ով, որը հիմնականում պայմանավորված է ԱԺ նոր մասնաշենքի շահագործման հետ կապված կոմունալ ծախսերի աճով և պետական ծառայողների աշխատավարձի ֆոնդի ավելացմամբ:

Հաշվետու տարում 681.1 մլն դրամ հատկացվել է ՀՀ վերահսկիչ պալատի պահպանմանը՝ կազմելով ծրագրի 99%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 3.1%-ով, որը հիմնականում պայմանավորված է աշխատավարձերի, պարտադիր սոցիալական ապահովության վճարների և գործուղման ծախսերի աճով:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանմանը տրամադրվել է շուրջ 6 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 99.1%-ը: Հատկացված միջոցներով իրականացվել է ՀՀ նախագահի և կառավարության աշխատակազմերի, ինպես նաև մարզպետարանների պահպանումը: Նախորդ տարվա համեմատ վերջիններիս պահպանման ծախսերը նվազել են 8.2%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ մինչև 2010 թվականը Երևանի քաղաքապետարանի պահպանման ծախսերը ֆինանսավորվում էին պետական բյուջեից:

ՀՀ նախարարությունների պահպանման ծախսերը՝ նախարարների աշխատակազմերի մասով, 2010 թվականին կազմել են 872.8 մլն դրամ, իսկ նախարարությունների աշխատակազմերի մասով՝ 785.4 մլն դրամ, և ապահովել համապատասխանաբար 97.6% և 98.6% կատարողական: Նախորդ տարվա համեմատ վերոհիշյալ ծախսերից առաջինի գծով կատարված ծախսերը գրեթե չեն փոփոխվել, իսկ երկրորդի գծով նվազել են 15.8%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ ՀՀ սփյուռքի նախարարությունում կառուցվածքային փոփոխությունների արդյունքում կատարվել են կրճատումներ, իսկ ՀՀ տարածքային կառավարման նախարարությունից առանձնացվել է «Միգրացիոն պետական ծառայություն» հիմնարկը, որի պահպանման ծախսերն ընդգրկվել են սոցիալական պաշտպանության ոլորտում:

Վարչական օբյեկտների շինարարության ծրագրով կատարվել են 214.9 մլն դրամի ծախսեր՝ կազմելով ծրագրի 99.3%-ը և 78.4%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Ծախսերի անկումը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2009 թվականին ավարտվել են ՀՀ Ազգային ժողովի նոր մասնաշենքի կառուցման աշխատանքները, որոնց հատկացվել էր 562.5 մլն դրամ, ինչպես նաև ՀՀ նախագահի աշխատակազմին հատկացված միջոցների նվազմամբ:

Վարչական օբյեկտների հիմնանորոգմանը տրամադրվել է 1.1 մլրդ դրամ, որն իրականացվել է 99.7%-ով: Հատկացված միջոցներով իրականացվել է ՀՀ նախագահի, ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ կառավարության աշխատակազմերի, ինչպես նաև ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության և Շիրակի մարզպետարանի վարչական շենքերի վերանորոգումը: Նախորդ տարվա համեմատ վարչական օբյեկտների հիմնանորոգման ծախսերում արձանագրվել է 79.3% աճ, որը հիմնականում պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի նիստերի դահլիճի վերանորոգման համար կատարված հատկացումներով:

Քաղաքական հետազոտություններ իրականացնելու նպատակով 2010 թվականի պետական բյուջեով նախատեսված 116 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է՝ 1.7%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

ՀՀ վերահսկիչ պալատի պահուատային ֆոնդի գծով նախատեսված 13.7 մլն դրամ նույնպես ամբողջությամբ տրամադրվել է՝ նախորդ տարվա ցուցանիշը զիջելով 1%-ով:

Հաշվետու տարվա ընթացքում 547.7 մլն դրամի սուբվենցիաներ են հատկացվել ՀՀ համայնքային բյուջեներին՝ ապահովելով ծրագրի 100%-ը: Նշենք, որ 2009 թվականին այս նպատակով հատկացվել էր 1 մլն դրամ: Ի տարբերություն նախորդ տարվա, 2010 թվականին «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի ընդունման հետ կապված՝ միջոցները Երևան քաղաքին հատկացվել են սուբվենցիայի տեսքով:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացմանը տրամադրվել է 279.7 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.4%-ը և 27.9%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կարողությունների զարգացման համար նախատեսված արտաբյուջետային միջոցների հաշվին նախատեսված 187.3 մլն դրամի ծախսերն ամբողջությամբ կատարվել են՝ 60.9%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

Նախատեսված ծավալով իրականացվել են նաև ՀՀ կառավարության գործունեության գնահատականների, կյանքի որակի և համայնքային կարիքների գնահատման հետազոտությունների և արտաբյուջետային միջոցների հաշվին նախատեսված վարչական օբյեկտների հիմնանորոգման ծախսերը, որոնք կազմել են համապատասխանաբար՝ 87.3 և 17.2 մլն դրամ: Նշված արտաբյուջետային միջոցներն օգտագործվել են Գեղարքունիքի մարզպետարանի վարչական շենքի հիմնանորոգման նպատակով: Նախորդ տարի վերոհիշյալ երկու ծրագրերի գծով պետական բյուջեից միջոցներ չեն հատկացվել:

Ֆինանսական և հարկաբյուջեկային հարաբերությունների դասի ծրագրերի կատարմանը հաշվետու տարում տրամադրվել է 42.4 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 94.7%-ը: Շեղումը, որը կազմել է 2.4 մլրդ դրամ, հիմնականում պայմանավորված է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի միջոցների պակաս օգտագործմամբ: 2009 թվականի համեմատ նշված դասի ծախսերն աճել են 28.6%-ով, որը հիմնականում ավելացված արժեքի հարկի վերադարձի ծախսերի աճի արդյունք է:

Գործադիր իշխանության մարմինների պահպանման ծրագրի շրջանակներում տրամադրվել է 9.6 մլրդ դրամ, որը կազմում է նախատեսվածի 99.9%-ը: Միջոցներն ուղղվել են ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 1.1%-ով:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանմանը (նախարարությունների աշխատակազմերի մասով) տրամադրվել է 1.3 մլրդ դրամ, որի կատարողականը կազմել է 99.1%: Միջոցներն ուղղվել են ՀՀ ֆինանսների նախարարության պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.9%-ով:

Հաշվետու տարում ՀՀ գանձապետական համակարգի վճարահաշվարկային սպասարկման նպատակով տրամադրվել է 135.7 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 99.4%-ը: 2009 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 26.9%-ով:

Ամբողջությամբ կատարվել են ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակիցների խրախուսման նպատակային ֆոնդի, ՀՀ պետական պարտատոմսերի գովազդի և ակցիզային

դրոշմանիշների ձեռքբերման ծախսերը, որոնք կազմել են համապատասխանաբար 578.8 մլն դրամ, 50 մլն դրամ և 664.2 մլն դրամ:

Ավելացված արժեքի հարկի գերավճարների վերադարձի նպատակով 2010 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 23.6 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 57.2%-ով:

Հարկային վարչարարությանն օժանդակության նպատակով վիճակահանության անցկացման և պարզեցնելու համար տրամադրման նպատակով օգտագործվել է 1.4 մլրդ դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Նշված ծախսերը նախորդ տարվա համեմատ էական փոփոխություն չեն կրել:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի ծախսերը կազմել են 5.1 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 68.2%-ը:

Հաշվետու տարում 9.3 մլրդ դրամ է տրամադրվել *արդարին հարաբերությունների* ռասի ծրագրերին, որը կազմել է նախատեսված հատկացումների 99.8%-ը: Արտաքին հարաբերությունների ծախսերը 2009 թվականի համեմատ ավելացել են 32.1%-ով հիմնականում պայմանավորված ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանման և միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության ծախսերի աճով:

Արտաքին հարաբերությունների ծախսերից 6.2 մլրդ դրամն ուղղվել է ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանմանը՝ կազմելով նախատեսվածի 99.9%-ը: 2009 թվականի համեմատ նշված ծախսերը ավելացել են 37.4%-ով հիմնականում պայմանավորված ՀՀ 7 նոր դեսպանությունների բացումով և արտարժույթի փոխարժեքի բարձրացմամբ:

Միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարների գծով ծախսերը կատարվել են ամբողջությամբ՝ կազմելով 1.3 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 42%-ով՝ պայմանավորված արտարժույթի փոխարժեքի բարձրացմամբ:

Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելությունների և արտասահմանյան պաշտոնական գործուղումների նպատակով հաշվետու տարում օգտագործվել է համապատասխանաբար 397.2 մլն դրամ և 425.8 մլն դրամ, որոնք կատարվել են 99.3%-ով և 98.4%-ով:

ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմի «Պետական արարողակարգի ծառայություն» գործակալության պահպանմանը հատկացվել է 122.9 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 99.6% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 13.3%-ով՝ պայմանավորված գործուղման ծախսերի նվազմամբ:

Գործադիր իշխանության, պետական կառավարման մարմինների պահպանման ծրագրի շրջանակներում ՀՀ արտաքին գործերի նախարարությանը տրամադրվել է 755.5 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 99.8% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Նախատեսված ողջ ծավալով իրականացվել են դեսպանությունների շենքերի գնման՝ 37 մլն դրամ, Հայաստանի Հանրապետությանը սուվերեն վարկանիշ շնորհելու կապակցությամբ կազմակերպությունների մատուցած ծառայությունների դիմաց վճարման՝ 63 մլն դրամ, և Երևանում Եվրոպայի խորհրդի տեղեկատվական գրասենյակի պահպանման՝ 5.8 մլն դրամի չափով ծախսերը: Դեսպանությունների շենքերի գնման համար հատկացված միջոցներն ուղղվել են Բյուսելում ՀՀ դեսպանության շենքի գնման նպատակով վերցված վարկի գծով 2010 թվականի պարտավորության մարմանը: Նշված ծախսերը 2009 թվականի համեմատ նվազել են 79.1%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ նախորդ տարի պետական բյուջեից միջոցներ էին հատկացվել Մինսկում ՀՀ դեսպանության շենքի գնման նպատակով: Հայաստանի Հանրապետությանը սուվերեն վարկանիշ շնորհելու կապակցությամբ կազմակերպությունների մատուցած ծառայությունների դիմաց վճարման ծախսերը նվազել են 42%-ով: Իսկ Երևանում Եվրոպայի խորհրդի տեղեկատվական գրասենյակի պահպանման համար 2010 թվականին միջոցներ հատկացվել են առաջին անգամ:

Ընդհանուր բնույթի ծառայությունների խմբի ծախսերը 2010 թվականին կազմել են 2 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99%-ը: 2009 թվականի համեմատ ընդհանուր բնույթի ծառայությունների խմբի ծախսերը նվազել են 3.2%-ով:

Հաշվետու տարում 363.8 մլն դրամ է տրամադրվել աշխատակազմի (կադրերի) գծով ընդհանուր բնույթի ծառայությունների դասի ֆինանսավորմանը՝ կազմելով ծրագրի 98.4%-ը:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը կազմել են 174.9 մլն դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 99.3% կատարողական և պահպանվելով 2009 թվականի մակարդակին: Միջոցներն ուղղվել են ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի պահպանմանը:

Քաղաքացիական ծառայության կադրերի ոեզերվում գտնվող քաղաքացիական ծառայողների վարձատրության հետ կապված ծախսերը կազմել են 45.1 մլն դրամ կամ նախատեսվածի 97%-ը և 14.2%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորման նպատակով հաշվետու տարվա ընթացքում պետական բյուջեից տրամադրվել է 143.8 մլն դրամ՝ նախատեսվածի 97.6%-ը, և 2.6%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը:

«Ծրագրման և վիճակագրական ընդհանուր ծառայություններ» դասի ծախսերը հաշվետու տարում կազմել են 979.4 մլն դրամ կամ նախատեսվածի 98.6%-ը:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը կազմել են 593.4 մլն դրամ կամ ծրագրի 99.1%-ը: Միջոցները հատկացվել են ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրման ծախսերը կազմել են 266.6 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 98.7%-ը և 4.2%-ով զիջելով 2009 թվականի ցուցանիշը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայությունների հատկացումները կազմել են 72.5 մլն դրամ կամ նախատեսվածի 98.8%-ը: 2009 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 57.3%-ով: Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ԲԲԸ-ի «Կանոնադրական խնդիրների իրականացում» միջոցառումը 2009 թվականին իրականացվել է «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայություններ» ծրագրի շրջանակներում, իսկ 2010 թվականին՝ որպես առանձին ծրագիր, բացի այդ, համաձայն ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 20-ի «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայությունների 2010 թվականի ծրագիրը հաստատելու մասին» N 666-Ն որոշման՝ նախատեսված էր «ԱրմՁԵք 2010 Հայաստանի բարձր տեխնոլոգիաների ոլորտի Գլոբալ համաժողովի կազմակերպում» միջոցառումը, սակայն վերոնշյալ միջոցառման ծևաչափի փոփոխության հետևանքով գլոբալ համաժողովի փոխարեն տեղի է ունեցել աշխատաժողով:

2011 թվականի մարդահամարի նախապատրաստման աշխատանքների կազմակերպման ծախսերը կազմել են 43.8 մլն դրամ կամ նախատեսվածի 92.4%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է մի շարք պայմանագրեր ցածր արժեքով կնքելու հանգամանքով:

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող «Միջազգային համադրումներ» ծրագրի շրջանակներում նախատեսված ծախսերն ամբողջությամբ կատարվել են՝ կազմելով 3.1 մլն դրամ:

Հնդիանուր բնույթի այլ ծառայությունների դասին հաշվետու տարում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 696.2 մլն դրամ, որից 305.8 մլն դրամը՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների, 4.2 մլն դրամը՝ Գեղարքունիքի մարզի Արծվաշեն համայնքի ղեկավարի աշխատակազմի պահպանմանը, որոնց կատարողականը կազմել է համապատասխանաբար 99.6% և 99.8%: 2009 թվականի համեմատ ընդհանուր բնույթի այլ ծառայությունների դասի ծախսերն ավելացել են 11.8%-ով՝ պայմանավորված գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային

կառավարման մարմինների պահպանման հատկացումների աճով: Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերն աճել են 30.5%-ով՝ պայմանավորված գույքի և սարքավորումների վարձակալության ծախսերի ավելացմամբ, իսկ Արծվաշեն համայնքի ղեկավարի աշխատակազմի պահպանման ծախսերը փոփոխություն չեն կրել:

«ՀՀ պետական գնումների գործակալություն» և «Սպասարկում» ՊՈԱԿ-ներին պետական աջակցությունը տրամադրվել է նախատեսված ողջ ծավալով՝ կազմելով համապատասխանաբար 150.3 մլն դրամ և 235.9 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

2009 թվականին «Ընդհանուր բնույթի հետազոտական աշխատանք» խմբին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 5.6 մլրդ դրամ, որը կազմել է նախատեսված ցուցանիշի 96.1%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի ցածր կատարողականությունունում: Նախորդ տարվա համեմատ խմբի ծախսերն աճել են 1.9%-ով:

Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարները կազմել են 524.1 մլն դրամ՝ ապահովելով 99.2% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ», «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանում ու զարգացում» և «Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանում» ծրագրերը կատարվել են նախատեսված ծավալով՝ կազմելով համապատասխանաբար 8.7 մլն դրամ, 4.6 մլրդ դրամ և 241.6 մլն դրամ:

ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագիրն իրականացվել է 45.6%-ով: Ծրագրի շրջանակներում 2010 թվականի ընթացքում օգտագործվել է 187.5 մլն դրամ: Շեղումը պայմանավորված է նախատեսված աշխատանքների ծավալների կրճատմամբ: Ծրագրի շրջանակներում 2010 թվականին ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից իրականացվող տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունը (ԿՄԱՀ) օգտագործվել է ծրագրի մոնիթորինգի և գնահատման նպատակով: Բացի այդ, ՀՄՀ-Հայաստան (Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան) ծրագրի «Ոլոզման ենթակառուցվածք» բաղադրիչի շրջանակներում իրականացվող երրորդ կարգի ջրանցքների վերականգնման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել է երրորդ կարգի ջրանցքների հետազոտություն, իսկ «Զրից դեպի շուկա» բաղադրիչի շրջանակներում իրականացվող վերապատրաստման

դասընթացների ազդեցության գնահատման համար մեկնարկել են գյուղատնտեսական գործունեության հետազոտության երրորդ փուլի դաշտային աշխատանքները: Իրականացվել են ԶՕԸ-երի և ջրօգտագործողների հետազոտության առաջին փուլի աշխատանքները, ինչպես նաև ՀՄՀ-Հայաստան ծրագրի տարբեր բաղադրիչների գործընթացի որակական վերլուծության աշխատանքները: 2010 թվականին ավարտվել են ՀՄՀ-Հայաստան ծրագրի տվյալների որակի գնահատումը և ՀՄՀ-Հայաստան ծրագրի նպատակային մակարդակի աղքատության ցուցանիշների վերանայումը, սկսվել է «Ձեռնարկությունների կիրառման հետազոտության» իրականացումը:

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազուրական և նախագծային աշխարհանքների խմբի ծախսերը հաշվետու տարում կազմել են 1.7 մլրդ դրամ կամ նախատեսվածի 100%-ը: 2009 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 13.7%-ով՝ պայմանավորված 2009 թվականի պետական բյուջեից Երևանի համաքաղաքային ծախսերի ֆինանսավորմամբ:

Տվյալ խմբում ընդգրկված՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ ու գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտություններ ծրագրերի հատկացումներն իրականացվել են ամբողջությամբ: Խմբի ծախսերի զգալի մասը՝ ավելի քան 1.5 մլրդ դրամ, տրամադրվել է գիտական ու գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններին: Հաշվետու տարում ծրագրի շրջանակներում ֆինանսավորվել է 710 գիտական թեմա: Գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտությունների շրջանակներում 123 մլն դրամ է հատկացվել ՀՀ ԳԱԱ «Պատմության ինստիտուտ» ՊՈԱԿ-ին՝ «Հայոց պատմություն» եռահատորյակի և ՀՀ ԳԱԱ «Արևելագիտության ինստիտուտ» ՊՈԱԿին՝ «Հայաստանի հարակից երկրների պատմություն» եռահատորյակի տպագրության համար: Նախորդ տարվա համեմատ նշված երկու ծրագրերի ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների (այլ դասերի չպատկանող) խմբի ծախսերը հաշվետու տարում կազմել են 5.7 մլրդ դրամ կամ նախատեսվածի 89.5%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրերի ցածր կատարողականով: Նախորդ տարվա համեմատ այլ դասերին չպատկանող ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների խմբի ծախսերն աճել են 5.7%-ով, որը հիմնականում պայմանավորված է վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

Հաշվետու տարվա ընթացքում 536 մլն դրամ է տրամադրվել այս խմբում ընդգրկված պետական կառավարման մարմինների՝ ՀՀ հանրային ծառայությունների կարգավորման հանձնաժողովի և ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի պահպանմանը, որը կազմել է ծրագրի 97.7%-ը:

2010 թվականին փորձաքննությունների կատարման ծառայությունների ծեռքբերմանը տրամադրվել է 281.2 մլն դրամ, որը կատարվել է 100%-ով: Նախորդ տարվա նկատմամբ տվյալ

ծախսերն ավելացել են 38.3%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է կատարված փորձաքննությունների քանակի աճով:

Աճուրդների կազմակերպման և անցկացման աշխատանքներին տրամադրվել է 21 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով ծրագրված մակարդակը: Նախորդ տարվա նկատմամբ տվյալ ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Աշխարհագրական անվանումների հաշվառման և գրանցման աշխատանքներին տրամադրվել է 8.3 մլն դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 99.9% կատարողական: Հատկացված միջոցներով իրականացվել են ՀՀ աշխարհագրական օբյեկտների անվանումների հաշվառման ու գրանցման, պետական քարտադարանի վարման և թարմացման, «Աշխարհի աշխարհագրական անվանումների պաշտոնական տեղեկատուի» և «Աշխարհի պետությունների համառոտ տեղեկատու-քառարանի» նախապատրաստման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 30.8%-ով՝ պայմանավորված ծրագրով նախատեսված աշխատանքների ծավալների կրճատմամբ:

Պետական մասշտաբային շարքի բազային քարտեզների ստեղծման և օդալուսանկարահանման աշխատանքներ ծրագրի շրջանակներում տրամադրվել է 91.3 մլն դրամ (նախատեսվածի 100%-ը): Ծրագրի շրջանակներում իրականացվել են ՀՀ պետական մասշտաբային շարքի տեղագրական քարտեզների թարմացման, ինչպես նաև ՀՀ սահմաններից դուրս տարածքների պետական մասշտաբային շարքի 1:50 000, 1:100000 և 1:200000 մասշտաբների տեղագրական քարտեզների, 2009-2010 թվականներին ձեռք բերված տիեզերալուսանկարահանման նյութերի հիման վրա ՀՀ սահմաններից դուրս գտնվող տարածքների 1:50 000, 1:100 000 և 1:200 000 մասշտաբների 47 թերթ տեղագրական թվային քարտեզների ստեղծման աշխատանքները: Տիեզերալուսանկարահանման նյութերի հիման վրա շարունակվել են ՀՀ պետական մասշտաբային շարքի տեղագրական քարտեզների թարմացման աշխատանքները: Այդ նպատակով կատարվել են մոտ 3600 քառ. կմ տարածքի տիեզերալուսանկարահանման նյութերի պլանաբարձրությային հիմքի ստեղծման, դաշտային վերծանման, գեղողեզիական խտացման, հավասարակշռման, օրթոֆոտոների ստացման և ՀՀ պետական մասշտաբային շարքի տեղագրական թարմացված քարտեզների թվայնացման աշխատանքները: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 45.3%-ով, որը պայմանավորված է Անշարժ գույքի կադաստրի զարգացման 2010 թվականի ծրագրով նախատեսված աշխատանքների ծավալների նվազեցմամբ:

Անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տեղեկատվության տրամադրմանը հատկացվել է 30 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: 2009 թվականի համեմատ տվյալ ծախսերը փոփոխություն չեն կրել:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող պետական հատվածի բարեփոխումների վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 338.1 մլն դրամ կամ նախատեսվածի 109.5%-ը, ընդ որում վարկի միջոցներից՝ 316.8 մլն դրամ, իսկ կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 21.3 մլն դրամ: Նախատեսվածից ավել ծախսերն իրականացվել են նախորդ տարիներին ստացված կանխավճարների հաշվին:

Պետական հատվածի արդիականացման վարկային ծրագրի նպատակն է պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացումն ընտրված հաստատություններում մոդելային նորարարությունների իրականացման միջոցով, պետական կառավարման համակարգի թափանցիկության և հաշվետվողականության բարձրացումը և կառավարության կողմից որոշումների կայացումն ու քաղաքականության իրականացումն արդյունավետորեն վերահսկելու համար համապատասխան մեխանիզմների ստեղծումը:

2010 թվականին իրականացվել են ծրագրով նախատեսված հետևյալ աշխատանքները.

- Էլեկտրոնային գնումների համակարգի ներդրման համար իրականացվել են պատրաստի ծրագրային ապահովման մշակման և հարմարեցման աշխատանքներ.
- Քաղաքականության մշակման բարելավման բաղադրիչի շրջանակներում իրականացվել է Էլեկտրոնային կառավարման համակարգի անվտանգության առողջությունը: << 8 պետական մարմինների, << կառավարության տեղեկատվական կենտրոնի և աշխատակազմի փաստաթղթերի Էլեկտրոնային շարժի կառավարման համակարգի ներդրման համար մատակարարվել են լրացուցիչ վիդեո և SS սարքավորումներ:

Ծրագրով նախատեսված հիմնական աշխատանքներն իրականացվել են մինչև 2010 թվականի դեկտեմբերի 30-ը: 2011 թվականին նախատեսվում է ավարտել Էլեկտրոնային պետական գնումների համակարգի համար ծրագրային ապահովման և այլ աշխատանքներ, ինչպես նաև իրականացնել ավարտական առողջությունը:

Պետական գույքի հաշվառման, գույքագրման, ուսումնասիրությունների և գնահատման աշխատանքների իրականացման ծախսերը նույնականացվում է կատարվել են՝ կազմելով 35 մլն դրամ: Նախորդ տարվա նկատմամբ տվյալ ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Մեջմիկ պաշտպանության ազգային ծառայությանը հաշվետու տարում տրամադրվել է 423.9 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը՝ 1.7%-ով զիջելով 2009 թվականի ցուցանիշը:

<< կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժնումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների հաշվին կոմիտեի համակարգի պահպանման ծախսերը կազմել են 2.3 մլրդ դրամ՝ ապահովելով 97.2% կատարողական, իսկ նույն աղյուղից ֆինանսավորվող՝ կոմիտեի համակարգի կարողությունների գարգացման ծախսերը կազմել են 328.9 մլն դրամ՝ ապահովելով 99.1% կատարողական: Նախորդ

տարվա համեմատ համակարգի պահպանման ծախսերը գրեթե չեն փոփոխվել, իսկ կարողությունների զարգացման ծախսերն ավելացել են 78.6%-ով, ինչը պայմանավորված է 2010 թվականին շենքերի ու շինությունների, տրանսպորտային սարքավորումների ձեռք բերման, կապիտալ վերանորոգման և նախագծահետազոտական ծախսերի աճով:

Երկրատեղեկատվական համակարգի նախագծման, ներդրման և սպասարկման նպատակով պետական բյուջեով նախատեսված 74.7 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի տարածքում իրականացվել են 4099 հա տարածքի կադաստրային և տեղագրական հատակագծերի համադրման, անցտությունների հանութագրման, թարմացման, ստորգետնյա մայրուղային հաղորդակցուղիների հանութագրման, երկրատեղեկատվական համակարգի տվյալների հավաքման, շերտերի ստեղծման և դասակարգման աշխատանքներ: «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել է Սևանա լճի ափամերձ՝ մինչև 1905 մ բացարձակ նիշը տարածքի 1:1000 մասշտաբի տեղագրական և կադաստրային հատակագծերի, ինչպես նաև անշարժ գույքի օգտագործողների ցուցակների կազմման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 14.1%-ով, որը պայմանավորված է Անշարժ գույքի կադաստրի զարգացման 2010 թվականի ծրագրով նախատեսված աշխատանքների ծավալների նվազեցմամբ:

Հողամասերի, շենքերի և շինությունների համակարգված դիտարկումների և անշարժ գույքի շուկայի վերլուծությունների իրականացման ծախսերը կազմել են 30 մլն դրամ՝ ամբողջությամբ կատարելով ծրագիրը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը փոփոխություն չեն կրել:

Հանրային իրազեկման միջոցառումների իրականացմանը տրամադրվել է 4.9 մլն դրամ (98.9%): Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը փոփոխություն չեն կրել:

Սահմանների ամրացման ծառայություններին տրամադրվել է 58.4 մլն դրամ, որն օգտագործվել է ՀՀ վարչատարածքային միավորների՝ համայնքների սահմանների ճշտման և ամրացման աշխատանքների ֆինանսավորման համար: Ծրագրի շրջանակներում 2010 թվականին իրականացվել են Արմավիրի մարզի 97 համայնքների կադաստրային, տեղագրական և համայնքների վարչական սահմանների նկարագրման, քարտեզների համադրման և դրա արդյունքում անցտությունների ուղղման, վարչական սահմանների ամրացման աշխատանքներ: 2009 թվականի համեմատ նշված ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացման ծրագրի շրջանակներում 10.6 մլն դրամ (99.3%) է տրամադրվել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող օտարերկրյա ներդրումների և արտահանման աջակցության երկրորդ դրամաշնորհային ծրագրի իրականացման համար

օգտագործվել է 251.5 մլն դրամ կամ նախատեսվածի 57.6%-ը: Ծախսերից 208.4 մլն դրամը կատարվել է դրամաշնորհային միջոցների, 43.1 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ցածր կատարողականի պատճառներից հիմնականն այն է, որ 2010 թվականին նախատեսվում էր Զարգացման հայկական գործակալության վարչական շենքի չորրորդ հարկի կապիտալ, ինչպես նաև ամբողջ շենքի կոսմետիկ վերանորոգման աշխատանքների իրականացում, սակայն հիմք ընդունելով << կառավարության որոշումը շենքի օտարման վերաբերյալ՝ վերոնշյալ աշխատանքները չեն իրականացվել:

Ծրագրի նպատակն է օժանդակել Հայաստանին ներդրումների և արտահանման խթանման գործում, ինչպես նաև բարելավել բիզնես և ներդրումային միջավայրը, որի շնորհիվ օժանդակություն կցուցաբերվի նաև տնտեսական և սոցիալական անցումային գործընթացին: 2010 թվականին իրականացվել են ծրագրով նախատեսված հետևյալ աշխատանքները.

- Ենթակառուցվածքների և հմտությունների զարգացում,
- Ներդրողների և արտահանողների սպասարկման ինստիտուցիոնալ ամրապնդում,
- Ներդրումների և արտահանման խթանում,
- Ծրագրի կառավարում, մոնիթորինգ և գնահատում:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող վիճակագրական մաստեր-պլանի մշակման և վիճակագրական կարողությունների ուժեղացման միջոցով տեխնիկական աջակցության դրամաշնորհային ծրագրի գծով օգտագործվել է 22.5 մլն դրամ կամ նախատեսվածի 96.7%-ը, ընդ որում դրամաշնորհային միջոցներից՝ 19.1 մլն դրամ, իսկ կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 3.4 մլն դրամ: Ծրագրի հիմնական նպատակն է աջակցություն ցուցաբերել Ազգային վիճակագրական ծառայությանը Վիճակագրական գլխավոր ծրագրի մշակման գործում, որը հիմք կհանդիսանա վիճակագրական կարողությունների կառուցման և պաշտոնական վիճակագրության ռազմավարության մշակման գործում: 2010 թվականին իրականացվել են ծրագրով նախատեսված վիճակագրական գլխավոր ծրագրի մշակման աշխատանքները և ծրագրի առիդիտը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող պետական պարտքի կառավարման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված 47.2 մլն դրամի փոխարեն օգտագործվել է 63.9 մլն դրամ (135.2%), ընդ որում դրամաշնորհային միջոցներից՝ 51.4 մլն դրամ, իսկ կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 12.5 մլն դրամ: 2010 թվականին նախատեսվածից ավել ծախսերն իրականացվել են ի հաշիվ նախորդ տարիներին ստացված դրամաշնորհային միջոցների հաշվին կատարված կանխավճարների:

Ծրագրի նպատակն է ամրապնդել << ֆինանսների նախարարության պետական պարտքի կառավարման վարչության ինստիտուցիոնալ կարողությունները:

2010 թվականին իրականացվել են ծրագրով նախատեսված պետական պարտքի կառավարումն ուժեղացնելու և ներքին պարտքի շուկայի զարգացմանն ուղղված հետևյալ աշխատանքները.

- տվյալների հավաքագրում, կանխիկ հոսքերի մոդելավորում, ոիսկի չափորոշիչների և հաշվետվությունների ձևավորում,
- առաջնային գրասենյակի ներուժի ստեղծման, առաջնային դիլերների համակարգի բարեփոխման գնահատում,
- դրամային շուկաների և իրացվելիության ծրագրի մշակում:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող հանրային հատվածի ներքին առողջապահության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսվել էր ծախսել 187 մլն դրամ: Սակայն ծրագիրը չի իրականացվել, քանի որ ՀԲ-ի և շահառուների հետ համաձայնեցված տեխնիկական հանձնարարականի հիման վրա 2010 թվականին վերահայտարարված մրցույթով նախատեսվում է պայմանագիրը կնքել միայն 2011 թվականին:

Անշարժ գույքի կադաստրային գնահատման ծառայություններին տրամադրվել է 60 մլն դրամ, որն օգտագործվել է գույքահարկի և հողի հարկի 2011-2013թթ. ժամանակահատվածի բազաների ձևավորման համար:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ոչ առևտրային կազմակերպությունների ֆիդուցիար վերահսկողության փորձնական դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսվել էին 164.2 մլն դրամի ծախսեր: Ծրագրի շրջանակներում խորհրդատվական ծառայությունների գնման պայմանագիրը կնքվել է 2010 թվականի օգոստոս ամսին: Պայմանագրի շրջանակներում 2010 թվականին խորհրդատուի կողմից ներկայացվել են թվով 2 հաշվետվություններ, որոնք ներկայում գտնվում են հաստատման փուլում: Այս հանգամանքով պայմանավորված 2010 թվականին նախատեսված միջոցներից ծախսեր չեն իրականացվել:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Հկոնոմիկայի նախարարության կարողությունների զարգացման ծրագրի շրջանակներում նախատեսված 120.1 մլն դրամի փոխարեն օգտագործվել է 140.4 մլն դրամ (117%), ընդ որում դրամաշնորհային միջոցներից՝ 88.3 մլն դրամ, իսկ կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 31.8 մլն դրամ: Նախատեսվածից ավել ծախսերն իրականացվել են ի հաշիվ նախորդ տարիներին ստացված դրամաշնորհային միջոցների հաշվին կատարված կանխավճարների:

Ծրագրի նպատակն է «Հկոնոմիկայի նախարարության ներքին ընթացակարգերի շրջանակներում նոր և նորարարական միջոցառումների ներդրման, ինչպես նաև քաղաքականության կառուցման առաջատար մոդելների փորձարկման միջոցով ապահովել «

Էկոնոմիկայի նախարարությունում համապատասխան ներուժի զարգացումը՝ 2010 թվականին իրականացվել են ինստիտուցիոնալ զարգացման խթանմանը և քաղաքականության վերլուծության ներուժի ամրապնդմանն ուղղված աշխատանքներ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող տեխնոլոգիաների մրցունակության բարձրացման ծրագրի նախապատրաստման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված 194.2 մլն դրամի փոխարեն օգտագործվել է 272.3 մլն դրամ (140.2%), ընդ որում դրամաշնորհային միջոցներից՝ 203.9 մլն դրամ, կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 68.4 մլն դրամ: Նախատեսվածից ավել ծախսերն իրականացվել են ի հաշիվ նախորդ տարիներին ստացված դրամաշնորհային միջոցների հաշվին կատարված կանխավճարների:

Ծրագրի նպատակն է ստեղծել օժանդակ միջավայր Հայաստանում ինովացիոն և մրցունակ գիտելիքահենք հասարակություն ձևավորելու նպատակով՝ զարգացած տեղեկատվական ենթակառուցվածքով, էլեկտրոնային ծառայություններով և հզոր տեղական տեխնոլոգիական ոլորտներով: 2010 թվականին իրականացվել են էլեկտրոնային հասարակության, ինովացիոն և SS ոլորտի ենթակառուցվածքների զարգացման աշխատանքներ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Կառավարության արդյունքների մոնիթորինգի բարելավման կարողությունների ստեղծման դրամաշնորհային ծրագրի համաձայնագիրը Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի և Հայաստանի Հանրապետության միջև ստորագրվել է 2009 թվականի մարտի 24-ին և ուժի մեջ մտել 2010 թվականի ապրիլի 21-ին: Ծրագրի իրականացման ժամկետն է մինչև 2012 թվականի ապրիլի 21-ը: Ծրագրի իրականացումը նախատեսվածից ուշ սկսվելու հետևանքով նախատեսված 108.9 մլն դրամի փոխարեն օգտագործվել է 95.5 մլն դրամ (87.7%), որից 80.5 մլն դրամը՝ դրամաշնորհային միջոցների, 15 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին:

Ծրագրի նպատակը կառավարությունում ինստիտուցիոնալ գիտելիքի և կարողությունների ստեղծումն է մոնիթորինգի և գնահատման (M&E) ազգային համակարգի հիմունքների ձևավորման միջոցով պետական կառավարման համակարգի աշխատանքային ընթացակարգերի բարեփոխման համար: 2010 թվականին իրականացվել են գործող ընթացակարգերի վերլուծության և նոր աշխատանքային ու M&E ընթացակարգերի ներդրման, ինչպես նաև կատարողականի մոնիթորինգի կարողությունների ստեղծման աշխատանքներ: ՀԲ-ի և շահառուների հետ համաձայնեցված տեխնիկական հանձնարարականի հիման վրա տեղական ընկերության հետ կնքվել է պայմանագիր: Աշխատանքներն իրականացման ընթացքում են:

Ֆիզիկայի բնագավառում արդիական գիտական ներուժի ապահովմանը տրամադրվել է 29.9 մլն դրամ, որը կատարվել է 100%-ով: Ծրագրիը 2010 թվականին պետական բյուջեից ֆինանսավորվել է առաջին անգամ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող զարգացման քաղաքականության վարկի երկրորդ ծրագրի նախապատրաստման կանխավճարի ծրագրի շրջանակներում նախատեսված 123.7 մլն դրամի փոխարեն օգտագործվել է 120 մլն դրամ (97%), որից 90.1 մլն դրամը՝ դրամաշնորհային միջոցների, 29.9 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի շրջանակներում 2010 թվականին տեխնիկական աջակցություն է ցուցաբերվել զարգացման քաղաքականության վարկի երկրորդ ծրագրի նախապատրաստմանը և իրականացվել են ծրագրի կառավարման աշխատանքները: 2011 թվականին նախատեսվում է իրականացնել կանխավճարի ավարտական առողջիւթյուն:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Երևան քաղաքի պինդ աղբի կառավարման նպատակով պետական մասնավոր համագործակցության կառուցի համար գործադրի խորհրդատվական աջակցության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված 136.2 մլն դրամի փոխարեն օգտագործվել է 52.9 մլն դրամ (38.8%), որից 25.7 մլն դրամը՝ դրամաշնորհային միջոցների, 27.2 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի նպատակն է աջակցություն ցուցաբերել Երևան քաղաքի երկու գոտիների աղբահավաքման և սանիտարական մաքրման համար կոնցենտրացիայի գործարքների, ինչպես նաև Երևան քաղաքի Նուբարաշենի աղբանոցի նախագծման-ֆինանսավորման-կառուցման-շահագործման (ՆՖԿԾ) գործարքի նախապատրաստման և իրականացման գործում: Ծրագրի շրջանակներում 2010 թվականին իրականացվել են Երևան քաղաքի աղբի կառավարման համակարգի բարելավման վերաբերյալ առաջարկությունների վերանայման և բարելավման աշխատանքներ: ՀԲ-ի և շահառուների հետ համաձայնեցված տեխնիկական հանձնարարականի հիման վրա արտասահմանյան ընկերության հետ կնքվել է պայմանագիր: Աշխատանքներն իրականացման ընթացքում են:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող գանձապետական համակարգի երկրորդ սերնդի բարեփոխումների իրականացման և պետական հատվածի հաշվապահական հաշվառման բարեփոխումների իրականացման դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում օգտագործվել է 1-ական մլն դրամ, որը հատկացվել է առողջիւրական ծառայությունների ձեռքբերմանը: Պետական հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների ներդրման և Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական կառավարման տեղեկատվական համակարգի (ԿՖԿՏՀ) ստեղծման նպատակով Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրերը նախատեսվում էր ավարտել 2009 թվականին: Սակայն նշված ծրագրերից կատարված վճարումների վերաբերյալ փաստաթղթերը ՀԲ-ի կողմից ուշ հաստատվելու հանգամանքով պայմանավորված՝ առողջիւրական հաշվետվությունները ՀՀ ֆինանսների նախարարություն են ներկայացվել և վերջինիս կողմից

ընդունվել 2010 թվականի մարտ ամսին, որից հետո կատարվել է նշված ծառայությունների դիմաց վճարումը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 36.7 մլն դրամ կամ նախատեսվածի 54.7%-ը, ընդ որում վարկի միջոցներից՝ 24.5 մլն դրամ, կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 12.2 մլն դրամ: Ծրագրի նպատակն է կատարելագործել հանրային հատվածի կառավարման իրականացումը և ծառայությունների մատուցումը քաղաքականության մշակման ոլորտում գերատեսչական հզորությունների ուժեղացման, մարդկային կապիտալի արդյունավետությունն առավելագույնի հասցնելու և ներքին աշխատանքային հոսքերի և արտաքին հաղորդակցության համար տեղեկատվական համակարգերի ստեղծման միջոցով: Մշակված գնումների ժամանակացուցի և այլ փաստաթղթերի հիման վրա 2010 թվականին իրականացվել են գնումների բնականոն ընթացքի համար անհրաժեշտ մեկնարկային աշխատանքներ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրոնային հասարակության և ինովացիոն ծրագրի նախապատրաստման կանխավճարի վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 8.6 մլն դրամ կամ նախատեսվածի 11.9%-ը, որից վարկի միջոցներից՝ 4.9 մլն դրամ, կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 3.7 մլն դրամ: Համաձայնագիրը Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի և Հայաստանի Հանրապետության միջև ստորագրվել է 2010թ. հունիսի 11-ին, ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացվել է 2010թ. հունիսի 24-ին և ուժի մեջ մտել 2010թ. հունիսի 27-ին: Ծրագրի նպատակն է օժանդակել Էլեկտրոնային հասարակության և ինովացիոն ծրագրի նախապատրաստմանը, որի նպատակներն են տնային տնտեսությունների, բիզնեսի և պետական կազմակերպությունների համար հիմնացանցի, համակարգիչների և Էլեկտրոնային ծառայությունների մատչելիությունը և հասանելիությունը, գիտելիքահեն և տեխնոլոգիահեն հատվածի ծավալները և տվյալ հատվածում զբաղվածության աճը, ինչպես նաև հասանելիությունը շուկաներին, ֆինանսներին, հմտություններին:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Էլեկտրոնային հասարակության ենթակառուցվածքների զարգացում,
- ձեռնարկությունների ինովացիոն ենթակառուցվածքների խթանում,
- ծրագրի կառավարում և իրականացում:

2010 թվականին մշակված գնումների ժամանակացուցի և այլ փաստաթղթերի հիման վրա իրականացվել են գնումների բնականոն ընթացքի համար անհրաժեշտ մեկնարկային աշխատանքներ:

2010 թվականին պետական պարունակությունների ծախսերը նախատեսված ծավալով կատարվել են՝ կազմելով 30.4 մլրդ դրամ: Նշված գումարից 15.5 մլրդ դրամ տրամադրվել է

պետական արժեթղթերի (գանձապետական պարտատոմսերի) սպասարկմանը: Օտարերկրյա պետություններից, միջազգային կազմակերպություններից և այլ արտաքին աղբյուրներից ստացված վարկերի սպասարկմանը տրամադրվել է 14.6 մլրդ դրամ: Մուրհակների սպասարկման ծախսերը կազմել են 922.4 հազար դրամ: 350.9 մլն դրամ է տրամադրվել «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի նկատմամբ պարտավորությունների սպասարկմանը: Նախորդ տարվա համեմատ պետական պարտքի գծով գործառնությունների ծախսերն աճել են 86.9%-ով: Մասնավորապես՝ 86.2%-ով աճել են գանձապետական պարտատոմսերի, 95.9%-ով՝ արտաքին պետական պարտքի սպասարկման ծախսերը:

2010 թվականին ՀՀ պետական բյուջեից կառավարության տարբեր մակարդակների միջև իրականացվող ընդհանուր բնույթի տրանսֆերտներն ամբողջությամբ ֆինանսավորվել են՝ կազմելով 32.7 մլրդ դրամ: Նշված գումարից 32.5 մլրդ դրամը կազմել են համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դուտացիաները և Ազգային ժողովի ընդունած օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցումը: «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ բնապահպանական ծրագրերի իրականացման համար ՀՀ համայնքներին տրամադրվել են 213.5 մլն դրամի սուբվենցիաներ: Նախորդ տարվա համեմատ կառավարության տարբեր մակարդակների միջև իրականացվող ընդհանուր բնույթի տրանսֆերտներն աճել են 16.6%-ով:

### **Պաշտպանություն**

2010 թվականին պաշտպանության բնագավառում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 147.6 մլրդ դրամ՝ 99.9%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Նախորդ տարվա համեմատ ոլորտի ծախսերն աճել են 13.3%-ով՝ պայմանավորված ռազմական կարիքների բավարարման ծախսերի աճով:

Հաշվետու տարում ռազմական պաշտպանության խմբին հատկացվել է շուրջ 142.2 մլրդ դրամ, որից 142 մլրդ դրամը՝ ռազմական կարիքների բավարարմանը, որը կազմում է ծրագրի 99.9%-ը: ՀՀ ռազմական կցորդների պահպանմանը հատկացվել է 217.6 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 99.2%-ը: 2009 թվականի համեմատ ռազմական պաշտպանության ծախսերն ավելացել են 13.8%-ով կամ 17.2 մլրդ դրամով:

Արդարին ռազմական օգնությանը տրամադրվել է 129.6 մլն դրամ կամ ծրագրված միջոցների 99.9%-ը: Այս դասում ներառված՝ ՆԱՏՕ-ում Հայաստանի Հանրապետության ռազմական ներկայացուցչության պահպանման, ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի

համադրման օղակում << կապի սպայի գործունեության ապահովման և Երևանում ՆԱՏՕ-ի հասարակական տեղեկատվական կենտրոնի շենքի վարձակալության նպատակով բյուջեից հատկացումները կազմել են համապատասխանաբար 49.9 մլն դրամ, 37 մլն դրամ և 9.6 մլն դրամ, որոնք ամբողջությամբ ֆինանսավորվել են: ՆԱՏՕ-ի վերափոխման հրամանատարությունում << փոխգործակցության ներկայացուցչի պահպանման նպատակով ծախսվել է 33.1 մլն դրամ՝ ապահովելով 99.7% կատարողական: Արտաքին ռազմական օգնության ծախսերը 19.7%-ով գերազանցել են 2009 թվականի ցուցանիշը:

*Պաշտպանության ոլորդում հետազողական և նախագծային աշխարհանքների խմբում ներառված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պետական նպատակային-ծրագրային ֆինանսավորում» ծրագրի շրջանակներում կատարվող հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 893 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական և նախորդ տարվա համեմատ ավելանալով 5.2%-ով:*

*Պաշտպանության ծառայությունների (այլ դասերին չպարկանող) ծախսերին տրամադրվել է շուրջ 4.4 մլրդ դրամ, որից 4.3 մլրդ դրամը կազմել են պաշտպանության բնագավառի այլ ծախսերը, 38.9 մլն դրամ՝ զորակոչիկներին վարորդական իրավունքի վկայականների տրման և քննությունների ընդունման ծախսերը, 53.2 մլն դրամ՝ արտաքրութեային միջոցների հաշվին կատարված ծախսերը: Նախորդ տարվա համեմատ տվյալ խմբի ծախսերն աճել են 2%-ով:*

### **Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն**

Հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեության բնագավառներին << 2010 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 67.4 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 97.9%-ը: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է ոստիկանության որոշ ծրագրերի համեմատաբար ցածր կատարողականով:

Բաժնի ծախսերի 68.3%-ը կամ 46 մլրդ դրամ կազմել են հասարակական կարգի և անվտանգության խմբի ծախսերը, որոնց ծրագիրը կատարվել է 97.6%-ով: Նշված գումարից 34.1 մլրդ դրամը կազմել են ոստիկանության, 11.9 մլրդ դրամը՝ Ազգային անվտանգության ծախսերը, որոնք կատարվել են համապատասխանաբար 96.9%-ով և 99.8%-ով: Նախորդ տարվա համեմատ հասարակական կարգի և անվտանգության խմբի ծախսերը նվազել են 1.7%-ով կամ 805.4 մլն դրամով:

2009 թվականի համեմատ ոստիկանության ծախսերը գրեթե չեն փոփոխվել: << անձնագրերի բլանկների տպագրության ծախսերը կազմել են 170.9 մլն դրամ կամ նախատեսվածի 99.3%-ը:

Հասարակական կարգի պահպանության ապահովման համար նախատեսված ծախսերը կատարվել են ամբողջությամբ՝ կազմելով 22.5 մլրդ դրամ և 5.8%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը։ Պետավտոհամարանիշների ծեռքբերման համար պետական բյուջեից տրամադրվել է 235.7 մլն դրամ՝ ապահովելով 99.8% կատարողական։ Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել։ Հաշվետու տարում 5.8 մլրդ դրամի ծախսեր են կատարվել ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության ստորաբաժանումների կողմից պայմանագրային հիմունքներով պահպանության և անվտանգության ապահովման գծով իրականացվող ծառայությունների դիմաց ստացվող արտաբյուջետային միջոցների հաշվին, որոնք կազմել են նախատեսվածի 95.6%-ը և 7.9%-ով (419.7 մլն դրամով) գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը։ ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության ճանապարհային ոստիկանության կողմից արձանագրված խախտումների համար վարչական տուգանքների գանձումներից, գրանցման-քննական ծառայությունների դիմաց վճարումներից և այլ վճարովի ծառայություններից ստացված արտաբյուջետային միջոցների օգտագործումը հաշվետու տարում կազմել է 5.2 մլրդ դրամ կամ նախատեսվածի 86.6%-ը։ 2009 թվականի համեմատ տվյալ ծախսերն ավելացել են 22.6%-ով։ Քաղաքացիներին բժշկական օգնության և սպասարկման վճարովի ծառայությունների մատուցման նպատակով արտաբյուջետային միջոցներից տրամադրվել է 7.1 մլն դրամ կամ նախատեսվածի 94.7%-ը, որոնք նախորդ տարվա համեմատ ավելացել են 2.3%-ով։ ՀՀ քաղաքացու անձնագիր տալու կամ փոխանակելու վճարովի ծառայության մատուցումից ստացվող միջոցներն օգտագործվել են 94.3%-ով՝ կազմելով 210.3 մլն դրամ։

2010 թվականի ընթացքում Ազգային անվտանգության բնագավառին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 11.9 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 99.8%-ը։ 2009 թվականի համեմատ Ազգային անվտանգության ծախսերը նվազել են 6.8%-ով կամ 869.5 մլն դրամով։ Մասնավորապես 9.7 մլրդ դրամ հատկացվել է ազգային անվտանգության ապահովման ծրագրի ֆինանսավորմանը, որը կազմում է նախատեսվածի 100%-ը։ 2009 թվականի համեմատ տվյալ ծախսերը նվազել են 11.6%-ով, որը հիմնականում պայմանավորված է շինարարական աշխատանքների և կապիտալ նորոգման ծախսերի դադարեցմամբ։

Պետական պահպանության ապահովման ծախսերի կատարողականը կազմել է 100% կամ շուրջ 1.8 մլրդ դրամ։ Նախորդ տարվա համեմատ պետական պահպանության ապահովման ծախսերն ավելացել են 29.7%-ով կամ շուրջ 402.7 մլն դրամով, որը պայմանավորված է տեխնիկական վերագինման ծախսերով։ ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմի պահպանման ծրագրի շրջանակներում օգտագործվել է 289.6 մլն դրամ (98.8%)՝ 27.8%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված արտասահմանյան գործուղումների ծախսերի աճով։

ՀՀ կառավարական կապի անվտանգության ապահովման նպատակով արտարյուջետային միջոցների հաշվին իրականացվել են 151.5 մլն դրամի ծախսեր, որոնց կատարողականը կազմել է 90.3%: 2009 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 24.8%-ով:

Հայաստանի փրկարար ծառայության համակարգի պահպանման նպատակով հաշվետու տարում ծախսվել է 4.3 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 99.9%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.3%-ով: Այս դասում ընդգրկված գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծրագրի ծախսերը կազմել են 303.4 մլն դրամ՝ ապահովելով 99.7% կատարողական: Միջոցներն ուղղվել են ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության պահպանմանը: Հայաստանի փրկարար ծառայության համակարգի ստորաբաժանումների պահպանման ծախսերը կատարվել են նախատեսված ողջ ծավալով՝ կազմելով 4 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.1%-ով:

Դադական գործունեության և իրավական պաշտպանության խմբի ծրագրերին ՀՀ 2010 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 9.2 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 96.6%-ը: 2009 թվականի համեմատ խմբի ծախսերը նվազել են 9.7%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի, ինչպես նաև դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի պահպանման ծախսերի կրճատմամբ:

Հաշվետու տարվա պետական բյուջեից 5.3 մլրդ դրամ տրամադրվել է դատական իշխանության մարմինների պահպանմանը՝ նախատեսված 5.4 մլրդ դրամի փոխարեն (98.2%): Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 2.7%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է դատավորների և դատական ծառայողների աշխատավարձերի՝ մասնագիտական ստաժի հետ կապված բարձրացմամբ:

Դատադիրավական բարեփոխումների երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում 2010 թվականին կատարվել են 2 մլրդ դրամի ծախսեր կամ նախատեսվածի 84.7%-ը, որից վարկային միջոցներից 1.6 մլրդ դրամ, կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 455.4 մլն դրամ: Ծրագրի ցածր կատարողականը պայմանավորված է Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքի դատարանի նոր շենքի և ՀՀ դատական ակադեմիայի նոր շենքային համալիրի կառուցման մրցութային գործընթացների երկարածման հանգամանքով: Արդյունքում 2010 թվականի երկրորդ եռամյակում նախատեսված երկու ամենախոշոր շինարարական աշխատանքների ծրագրերը փաստացի մեկնարկել են շուրջ 4-5 ամիս ուղացումով, ինչը անհնարին է դարձրել նախատեսված

միջոցների իրացումը 2010 թվականի ընթացքում: Ծրագիրը բաղկացած է վեց հիմնական բաղադրիչներից:

- դատական համակարգի կառավարման ու վարչարարության ուժեղացում,
- դատարանների շենքերի վերականգնում,
- դատավորների վերապատրաստման դպրոց,
- դատական ակտերի հարկադիր կատարման բարելավում,
- արբիտրաժի ծառայությունների ուժեղացում,
- իրավական տեղեկատվության մատչելիության ընդարձակում և հանրային իրազեկության բարձրացում

2010 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում հիմնականում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- 2010 թվականին ավարտվել և շահագործման են հանձնվել երեք ընդհանուր իրավասության դատարանների նորակառուց շենքեր՝ Սպիտակ, Չարենցավան և Գորիս քաղաքներում,
- 2010 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում մեկնարկվել են մի շարք դատարանների վերակառուցման և կառուցման աշխատանքներ, այդ թվում՝ Ապարան, Մեղրի և Եղեգնաձոր քաղաքներում տեղակայված դատարանների շենքերի համար,
- շինարարական աշխատանքներին զուգահեռ բոլոր դատարանների համար 2010 թվականի ընթացքում գնվել են անհրաժեշտ կահավորանք և սարքավորումներ ծրագրի շահառուների՝ ՀՀ դատական դեպարտամենտի, դատարանների և ՀՀ արդարադատության նախարարության ԴԱՀԿ ծառայության կարիքների համար:

Հաշվետու տարում 563.1 մլն դրամ է տրամադրվել Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության պահպանմանը, որը կազմել է նախատեսվածի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5.1%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների ավելացմամբ:

ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ դատարանների պահուատային ֆոնդերից օգտագործվել է համապատասխանաբար 7.2 մլն դրամ և 101.2 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի համապատասխանաբար 99.9%-ը և 96%-ը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող դատաիրավական բարեփոխումների երկրորդ վարկային ծրագրում ճապոնական դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 116.3 մլն դրամ կամ նախատեսվածի 60.4%-ը, որից 76.5 մլն դրամ՝ դրամաշնորհային միջոցներից, 39.7 մլն դրամ՝ համաֆինանսավորման միջոցներից: Ցածր կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ մի շարք պայմանագրեր, որոնք

նախատեսվել էին իրականացնել ճապոնական դրամաշնորհի հաշվին, ֆինանսավորվել են հոլանդական դրամաշնորհի միջոցներից: Այդպիսով տնտեսվել են << պետական բյուջեի համաֆինանսավորման միջոցները, քանի որ հոլանդական դրամաշնորհը << կառավարության համաֆինանսավորում չի նախատեսում: Վերոնշյալով էլ պայմանավորված է հոլանդական դրամաշնորհային միջոցներից կատարված ծախսերի ծրագրի գերազանցումը: 2010 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում հիմնականում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- իրականացվել են հանրապետության դատարանների բոլոր նստավայրերում տեղադրված և շահագործվող վարչարարության և դատական գործերի կառավարման տեղեկատվական համակարգի երկրորդ սերնդի ներդրման աշխատանքները, ինչպես նաև բոլոր դատական ծառայողների համար կազմակերպվել են դասընթացներ,

- իրականացվել են կառուցման և վերակառուցման ենթակա շենքերի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ, այդ թվում՝ Սևան, Կապան և Իջևան քաղաքներում տեղակայված դատարանների շենքերի համար,

- իրականացվել են հեղինակային և տեխնիկական հսկողության աշխատանքներ Մեղրի, Գորիս, Ապարան, Եղեգնաձոր քաղաքների դատարանների, ինչպես նաև << արդարադատության ակադեմիայի շենքերի շինարարության համար:

Համաշխարհային Բանկի աջակցությամբ իրականացվող դատաիրավական բարեփոխումների երկրորդ վարկային ծրագրում հոլանդական դրամաշնորհային ծրագրի ծախսերը կազմել են 663.1 մլն դրամ՝ 52.3%-ով գերազանցելով նախատեսված ցուցանիշը: 2010 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում հիմնականում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- << արդարադատության խորհրդի աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու և << դատական դեպարտամենտի ֆունկցիոնալ խնդիրների իրականացման նպատակով տեխնիկական օժանդակցության համալիր խորհրդատվության իրականացում.

- 2010 թվականի հոկտեմբեր ամսից պիլտային եղանակով շահագործվում է նաև «Դատալեքս» տեղեկատվական համակարգի ինտերնետային կայքը.

- շարունակվում է ծրագրի օժանդակությունը «Արյիս» տեղեկատվական համակարգին.

- 2009 թվականից սկսած << հանրային հեռուստատեսության առաջին ալիքի եթերում հեռահարձակվում է ծրագրի շրջանակներում ստեղծված «Դատաժամ» հաղորդաշարը, որի նպատակն է հանրությանը ծանոթացնել դատական համակարգի հետ, ինչպես նաև իրազեկել դատական կարգով իրավունքները պաշտպանելու եղանակների մասին.

- միջազգային և տեղական խորհրդատունների թիմն իրականացրել է առևտրային արդիտրաժի գործառույթների ներդրման համապարփակ ուսումնասիրություն և << արդարադատության նախարարությանը ներկայացրել է առաջարկների փաթեթ, ինչի հիման վրա

հետագայում պետք է շարունակվի տվյալ տեսակի այլընտրանքային վեճերի լուծման մեխանիզմների կիրառման քաղաքականության և ռազմավարության մշակումը: Ծրագրի իրականացման շրջանակներում տարվա ընթացքում կազմակերպվել են գիտաժողովներ, մասնագիտական քննարկումներ և դասախոսական կազմերի ուսուցման ծրագրեր: Խորհրդատուների կողմից մշակվել և հրատարակվել է նաև արբիտրաժի ծառայությունների վերաբերյալ ուսումնական ձեռնարկ:

Հաշվետու տարում պետական բյուջեից 391.5 մլն դրամ է տրամադրվել իրավական պաշտպանության դասի ծրագրերին՝ կազմելով նախատեսվածի 98.4%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 9.6%-ով, ինչը պայմանավորված է մարդու իրավունքների պաշտպանին միջազգային և դոնոր կազմակերպությունների կողմից հատկացվող ֆինանսական աջակցության, ինչպես նաև դատավարություններին ընդգրկված թարգմանիչների, փորձագետների և վկաների վարձատրության ծախսերի աճով:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի պահպանման ծախսերը 2010 թվականին կազմել են 119.7 մլն դրամ կամ նախատեսվածի 95.4%-ը: Համեմատաբար ցածր կատարողականը տնտեսումների արդյունք է: 2009 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 2.6%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ 2010 թվականին կապիտալ ծախսեր չեն կատարվել:

Հանրային պաշտպանի գրասենյակի պահպանման ծախսերը կատարվել են նախատեսված ծավալով՝ կազմելով 152.4 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Դատավարություններին ընդգրկված թարգմանիչների, փորձագետների և վկաների վարձատրության փոխհատուցման ծախսերը կազմել են 43.1 մլն դրամ (98.8%), որը երկու անգամ գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված թարգմանչական աշխատանքների ծավալների աճով:

Անվճարունակության գործերով կառավարիչներին իրենց մատուցած ծառայությունների դիմաց փոփոխատուցման ծախսերը կազմել են 6.5 մլն դրամ (100%)՝ 58.5%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը:

Արտաքրութետային միջոցների հաշվին իրականացվող մարդու իրավունքների պաշտպանին միջազգային և դոնոր կազմակերպությունների կողմից հատկացվող ֆինանսական աջակցության հաշվին կատարված ծախսերը կազմել են 69.8 մլն դրամ (99.9%): Ծրագրի շրջանակներում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը Եվրոպայի Խորհրդի ֆինանսական աջակցությամբ իրականացրել է «Կանխարգելման Ազգային մեխանիզմներին նվիրված երրորդ թեմատիկ սեմինարը»: Եվրոպական Հանձնաժողովի աջակցությամբ 2010 թվականին շարունակվել է 2009 թվականի մարտի 1-ից իրականացվող «Մարդու իրավունքների արդյունավետ

պաշտպանությունը մարդու իրավունքների պաշտպանի հաստատության միջոցով՝ որպես Ազգային կանխարգելող մեխանիզմ՝ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը» թեմայով ծրագրի շրջանակներում կազմակերպվել է ՄԱԿ-ի ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մոսկովյան գրասենյակի աջակցությամբ «Կլիմայական փոփոխությունների վերաբերյալ էթիկայի նորմերի հոչակագրի» մշակման համար երկօրյա միջազգային խորհրդաժողով։ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը ԵՀԱԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ իրականացրել է «Հայաստանում ազգային փոքրամասնությունների իրավունքների ուսումնասիրություն» ծրագիրը։ 2009 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 56.2%-ով՝ պայմանավորված միջոցառումների թվի աճով և ընդգրկման աստիճանով։

2010 թվականին 2.7 մլրդ դրամ է տրամադրվել դատախազության խմբի ծրագրերին՝ կազմելով նախատեսվածի 99%-ը։ Նախորդ տարվա համեմատ տվյալ խմբի ծախսերը գրեթե չեն փոփոխվել։ Հաշվետու տարում 2.4 մլրդ դրամ տրամադրվել է ՀՀ դատախազության պահպանմանը, որը կատարվել է 99.1%-ով։ 2009 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 4.6%-ով։ 99.9%-ով օգտագործվել են ՀՀ դատախազության պահուստային ֆոնդի հաշվին նախատեսված միջոցները՝ կազմելով 53.5 մլն դրամ։

2010 թվականի պետական բյուջեից ՀՀ հատուկ քննչական ծառայության պահպանմանը տրամադրվել է 240.8 մլն դրամ (97.7%): Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել։

Քրեակատարողական համակարգի պահպանության ծախսերը 2010 թվականին կազմել են 5.2 մլրդ դրամ կամ ծրագրային հատկացումների 99.9%-ը։ 2009 թվականի համեմատ դրանք նվազել են 3.6%-ով։

### **Տնտեսական հարաբերություններ**

ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի ծախսերի 11.8%-ը տրամադրվել է ყննդեսական հարաբերությունների բաժնին՝ կազմելով 112.5 մլրդ դրամ և ապահովելով ծրագրի կատարումը 95.3%-ով։ Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի ցածր կատարողականով։ Բաժնի հետևյալ երեք՝ լեռնարդյունահանման, արդյունաբերության և շինարարության, կապի ու տնտեսական հարաբերությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքների խմբերում արձանագրվել է 100% կատարողական։ Վառելիքի ու էներգետիկայի բնագավառի ծախսերը 40.1%-ով գերազանցել են ծրագիրը՝ պայմանավորված խմբում ընդգրկված ճապոնիայի կառավարության աջակցությամբ

իրականացվող վարկային ծրագրերի բարձր կատարողականությունը: Բաժնում ընդգրկված ևս մեկ խմբի՝ այլ բնագավառների ծախսերը նույնապես գերազանցել են ծրագիրը՝ 2.4%-ով: Բաժնի մյուս չորս խմբերում նախատեսված ծախսերն ամբողջությամբ չեն կատարվել: Հատկացված ֆինանսական միջոցների գգալի մասն ուղղվել է երեք բնագավառների՝ գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնորսության և որսորդության (35.6%), տրանսպորտի (32.6%) և վառելիքի ու Էներգետիկայի (24.3%) ծրագրերի իրականացմանը:

Հաշվետու տարում ընդհանուր բնույթի դրամական, առևտուրային և աշխատանքի գծով հարաբերությունների խմբի ծախսերը կազմել են ավելի քան 2.8 մլրդ դրամ՝ 98.5%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Խմբում ընդգրկված են 12 ծրագրեր, որոնցից 8-ի գծով արձանագրվել է 100% կատարողական:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը կազմել են 202.1 մլն դրամ, որը հատկացվել է ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 2%-ով կամ 4 մլն դրամով:

Ստանդարտների մշակման ծառայությունների ծախսերը կազմել են 14 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 22.2%-ով կամ 4 մլն դրամով, որը պայմանավորված է մշակված ստանդարտների թվաքանակի նվազմամբ:

«Շանհայ Էքսպո 2010» համաշխարհային ցուցահանդեսին ՀՀ մասնակցության ծրագրի գծով օգտագործվել է շուրջ 500 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 6.4 անգամ կամ 422.3 մլն դրամով, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2009 թվականին հատկացումները կատարվել են ցուցահանդեսի նախապատրաստման աշխատանքների համար, իսկ ցուցահանդեսը կազմակերպվել և ավարտվել է 2010 թվականին, ինչն էլ պահանջել է ավելի շատ ֆինանսական միջոցներ:

Հիդրոօդերևութաբանության ծառայությունների գծով կատարված ծախսերը կազմել են 530 մլն դրամ, որն օգտագործվել է «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից հիդրոօդերևութաբանական դիտարկումների իրականացման նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 0.9%-ով կամ 4.6 մլն դրամով:

Տնտեսական գործունեության արդյունավետ վարման և աջակցման միջոցառումների իրականացման ծախսերը կազմել են 126.9 մլն դրամ: Ծրագիրն իրականացնում է «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ն, որի արժեթղթերի 100%-ը պատկանում է ՀՀ կառավարությանը և բաժնետոմսերի կառավարման լիազորությունը վերապահված է ՀՀ կառավարության աշխատակազմին: Ընկերության հիմնական նպատակն է օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավումը և արտահանման խթանումը, ինչպես նաև գործարար միջավայրի և

տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման խոչընդոտների ուսումնասիրությունը և դրանց վերացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացումը: Հաշվետու տարում իրականացվել են մի շարք միջոցառումներ՝ ուղղված օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավմանը, արտահանման զարգացմանը, գործարար միջավայրի բարելավմանը և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը մնացել են անփոփոխ:

Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության ծրագրին հատկացվել է 150 մլն դրամ: Հաշվետու տարում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից ՓՄՁ պետական աջակցության 2010 թվականի ծրագրի շրջանակներում վարկային երաշխավորությունների տրամադրման, սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության, ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի/մատուցվող ծառայությունների դեպի շուկաներ առաջմլման, ուսուցողական, տեղեկատվական և խորհրդատվական ուղղություններով աջակցություն է ցուցաբերվել 3766 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտի: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը նվազել են 73.8%-ով կամ 423.5 մլն դրամով, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2010 թվականին միջոցներ են հատկացվել միայն ՓՄՁ ԶԱԿ-ի պահպանման նպատակով:

Գյումրու տեխնոպարկի գործունեության իրականացման ծրագրի ֆինանսավորման նպատակով տրամադրվել է 200 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են տեխնոպարկի գործունեության կառավարման, տեղական և միջազգային ճանաչում ունեցող ընկերությունների հետ մեխանիկայի և Էլեկտրոնիկայի ոլորտների ուսումնական և գիտահետազոտական լաբորատորիաներ հիմնելու, նորարարությունների ու ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման աջակցությանն ուղղված ծրագրերի իրագործման և տեխնոպարկի տարածքում ազատ առևտուրի գոտու ստեղծման համար բիզնես մոդելի մշակման միջոցառումները: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.2 անգամ կամ 136.5 մլն դրամով, քանի որ 2010 թվականին նախատեսվել և իրականացվել են առավել մեծ ծավալի միջոցառումներ՝ ուղղված Գյումրու տեխնոպարկի ընդլայնմանը և գործարար ակտիվության բարձրացմանը:

«Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ԲԲԸ-ի կանոնադրական խնդիրների իրականացման համար պետական աջակցության ծախսերը կազմել են 36 մլն դրամ: Հաշվետու տարում ծրագրի շրջանակներում աշխատանքներ են իրականացվել Էլեկտրոնային ստորագրության տրամադրման և Էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրման ուղղությամբ: Նշենք, որ 2009 թվականին նշված ծախսերը պետական բյուջեից ֆինանսավորվել են «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայություններ» ծրագրի շրջանակներում:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծրագրի գծով (նախարարությունների աշխատակազմերի մասով) օգտագործված միջոցները կազմել են շուրջ 533.9 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 99.8%-ը: Միջոցներն ուղղվել են ՀՀ Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ 8.7%-ով կամ 50.8 մլն դրամով նվազում է իմնականում պայմանավորված է նախարարության աշխատակազմի հաստիքացուցակով ավելի ցածր վարձատրվող քաղաքացիական ծառայողների պաշտոնների սահմանմամբ:

Հաշվետու տարում 91.1 մլն դրամ է տրամադրվել արտասահմանում առևտրային ներկայացուցչությունների պահպանմանը, որը կազմել է նախատեսվածի 99%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 33.7%-ով կամ 22.9 մլն դրամով, որը պայմանավորված է փոխարժեքի աճով:

2010 թվականին «Հայաստանի ազգային մրցունակության իիմնադրամի» կանոնադրական հիմնախնդիրների իրականացման պետական աջակցության ծախսերը կազմել են 247 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 93.6%-ը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ նշված ծրագրի շրջանակներում ՀՀ Էկոնոմիկայի նախարարության և Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի միջև կնքված պայմանագրի համաձայն «Կրթություն» միջոցառման համար նախատեսված էր 17 մլն դրամ, որը ներկայացվել է Հոգաբարձուների խորհրդին վերջնական հաստատման, սակայն վերջինիս գնահատմամբ վերոնշյալ ծրագիրը պահանջում է առավել ֆինանսական միջոցներ, քան նախատեսված է 2010 թվականին: Ուստի արդյունքում որոշվեց «Կրթություն» միջոցառման իրականացումը տեղափոխել 2011 թվական: Հարկ է նշել, որ Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացման նպատակով պետական աջակցությունը 2010 թվականին իրականացվել է առաջին անգամ:

Ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- Տաթևի վերածնունդ ծրագիր: 2010 թվականի հոկտեմբերի 16-ին ավարտվել և շահագործման է հանձնվել «Տաթև» ճոպանությին՝ ազդարարելով «Տաթևի վերածնունդ» ծրագրի մեկնարկը: Ճոպանությին միացնում է Հալիձոր և Տաթև գյուղերը՝ միևնույն ժամանակ հանդիսանալով տարածաշրջանի համար նոր զբոսաշրջային արդյունք: Վերականգնվել և շահագործման է հանձնվել Տաթևի վանքի միջնադարյան ձեթի արտադրամասը՝ Զիթիանը: Այսօր այն հանդիսանում է ինտերակտիվ թանգարան, որը ներկայացնում է հայկական միջնադարյան տեխնոլոգիան և ապրելակերպը Տաթև այցելող զբոսաշրջիկներին: ՀՀ կառավարության ֆինանսական և տեխնիկական աջակցությամբ ամբողջովին վերակառուցվել է մայր ճանապարհից դեպի Տաթև

տանող ճանապարհը: Մայրուղուց մինչև Սատանայի կամուրջ տանող հատվածն ասֆալտապատվել է, և վերականգնվել է Սատանայի կամուրջից մինչև Տաթև տանող ճանապարհի հիմքը:

- Առողջապահություն: 2010 թվականի հունվար ամսին ՀՀ կառավարության հրավերով և ՀԱՄՀ աջակցությամբ, McKinsey&Company գերմանական ընկերության աշխատանքային խումբը մշակել է ոռուցքաբանության գերազանցության հայկակական կենտրոնի (ՈՒԳՀԿ) ծրագիրը: 2010 թվականի մարտ ամսին Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի նախաձեռնությամբ Երևանում կայացել են հանդիպում-քննարկումներ ճապոնիայի դիվանագիտական, միջազգային և առևտրային կառուցների ներկայացուցիչների հետ, որոնցում ներկայացվել են Հայաստանում միջուկային բժշկության ներդրման ու զարգացման ծրագրային մոտեցումները՝ նպատակ ունենալով ճապոնիայի հետ այս ոլորտում համագործակցության ձևավորումը և այդ երկրից հնարավոր ներդրումների խթանումը:

ՀԱՄՀ կողմից մշակվել է ՀՀ-ում ոռուցքաբանության և միջուկային բժշկության ոլորտների զարգացմանն աջակցելու և Երևանի ֆիզիկայի ինստիտուտի տարածքում ռադիոնուկլիդների արտադրության կենտրոնի հիմնման և համապատասխան ֆինանսավորման ապահովման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

- Կրթություն: 2010 թվականիի չորրորդ եռամյակում Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամը մշակել է կրթության ծրագրի նախնական հայեցակարգը: Ծրագրը կվենտրոնանաբարձրագույն կրթության ոլորտում համալսարանական հետազոտությունների գործառույթի հզորացման, ինչպես նաև համալսարանների ու գործարար համայնքի միջև կապի ամրապնդման վրա՝ հետազոտական գործունեության առևտրականացման միջոցով: Ծրագրի շրջանակներում կկառուցվի համագործակցություն մեկ կամ ավելի առաջատար համալսարանների ընտրված տեխնիկական ոլորտների ֆակուլտետների հետ՝ իրականացնելով մասնավոր-պետական գործընկերության վրա հիմնված ներդրումային ծրագիր, որի շնորհիվ համալսարանների համար կապահովվեն համատեղ ռեսուրսներ և դրամաշնորհներ, ինչպես նաև կստեղծվեն կապեր միջազգային գերազանցության կենտրոնների հետ:

- Ոլորտները հատող ծրագրեր: Իրականացվել են տեխնոլոգիաների մրցունակության բարձրացման և ինտերնետի մատչելիության բարելավման միջոցառումներ, ստեղծվել են գրոսաշրջության, առողջապահության և ինովացիայի գծով աջակից խորհուրդներ, կազմակերպվել են շրջայցեր:

- Աջակից ծրագրերի շրջանակներում իրականացվել են ֆոնդահայթայթման գծով միջոցառումներ:

2010 թվականին ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերությունների դասում գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային

կառավարման մարմինների պահպանման նպատակով 186.9 մլն դրամ օգտագործվել է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության արտաքյուղետային միջոցներից՝ ապահովելով ծրագրի 88.8%-ը, ինչը պայմանավորված է տնտեսումներով և որոշ մրցույթներ չկայանալու հանգամանքով։ Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.2 անգամ կամ 128.5 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության համար վարչական սարքավորումների և տրանսպորտային միջոցների ձեռքբերմամբ։

2010 թվականի ընթացքում գյուղակնդեսության, անդառային գյուղեսության, ձկնաբուծության և որտորդության բնագավառներում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 40.1 մլրդ դրամ կամ ծրագրվածի 87.1%-ը։ Շեղումը հիմնականում պայմանավորված է ոռոգման բնագավառում արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի ցածր կատարողականով։

Հաշվետու տարում գյուղակնդեսության ոլորտի ծախսերը կազմել են շուրջ 7.2 մլրդ դրամ կամ ծրագրվածի 100.8%-ը։ Նշենք, որ տվյալ ոլորտում ծրագրի գերազանցում է արձանագրվել Նավթ արդյունահանող երկրների կազմակերպության աջակցությամբ իրականացվող «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» ծրագրի, և աջակցությամբ իրականացվող թունագրիափին հակազդելու ծրագրի ու գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման ծրագրի գծով՝ համապատասխանաբար 7.9%-ով, 37.7%-ով և 10.1 անգամ։ Միևնույն ժամանակ, ցածր կատարողականներ են արձանագրվել Դանիական թագավորության աջակցությամբ իրականացվող «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» և Ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող տավարաբուծության զարգացման («Դրամաշնորհային աջակցություն սակավ ապահով ֆերմերներին») դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում, որոնք կազմել են համապատասխանաբար 28.7% և 83.1%։

Գյուղատնտեսության ոլորտին կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 27 ծրագրեր, այդ թվում՝ արտաքին աջակցությամբ ֆինանսավորվել են 6-ական վարկային և դրամաշնորհային ծրագրեր։

Հաշվետու տարում 2.3 մլրդ դրամ է օգտագործվել Նավթ արդյունահանող երկրների կազմակերպության աջակցությամբ իրականացվող՝ «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» վարկային ծրագրի շրջանակներում, որից 1.4 մլրդ դրամը՝ վարկային միջոցներից, 893.5 մլն դրամը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին։ Կատարված ծախսերը 7.9%-ով գերազանցել են ծրագրված ցուցանիշը։ Ծրագրի նպատակն է բարելավել Հայաստանի Հանրապետության գյուղական աղքատ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը սոցիալական ենթակառուցվածքների վերականգնման միջոցով։ Ծրագրին ունի 2 հիմնական բաղադրիչ՝ «Տնտեսապես հիմնավորված ենթակառուցվածքների վերականգնում» և «Ծրագրի վերլուծություն և կառավարում»։ Տնտեսապես հիմնավորված ենթակառուցվածքների վերականգնման բաղադրիչի

խնդիրն է բարելավել հիմնական շահառու խմբի կենսամակարդակը և ներդրումային միջավայրը շահութաբեր ձեռնարկատիրության զարգացման և կայուն գյուղական տնտեսական աճի համար: Բաղադրիչի ներդրումները նպատակառուղղվել են սոցիալական ենթակառուցվածքների վերականգման ծրագրերին: Ներդրումների միջոցով հանրապետության 18 համայնքներում իրականացվել են ոռոգման ու խմելու ջրի ցանցերի կապիտալ նորոգման, գետերի հունի մաքրման և դրենաժային համակարգերի վերականգնման, 28 համայնքներում՝ գազաֆիկացման, իսկ մեկ համայնքում՝ ներհամայնքային ավտոճանապարհի վերականգնման աշխատանքներ:

Դանիական թագավորության աջակցությամբ իրականացվող՝ «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 84 մլն դրամ, որից 77.2 մլն դրամը՝ դրամաշնորհային միջոցներից, 6.8 մլն դրամը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ ապահովելով 28.7% կատարողական: Շեղումը պայմանավորված է Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի (ՖՐԵԴԱ) կողմից կազմակերպություններում բաժնետիրական ներդրումների գործընթացի ուշացմամբ: Ծրագրի նպատակն է բարելավել Հայաստանի Հանրապետության գյուղական աղքատ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը: Ծրագրի խնդիրն է նախաներդրումային, ներդրումային և հետներդրումային տեխնիկական օժանդակության տրամադրումը ՖՐԵԴԱ-ի միջոցով ֆինանսավորվող ձեռնարկություններին, ՖՐԵԴԱ-ին մասնագիտացված տեխնիկական օժանդակության ցուցաբերումը: 2010 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացվել են սերտիֆիկացման համար անհրաժեշտ խորհրդատվական ծառայությունների մատուցման, ընկերությունների հաշվառման և հաշվետվությունների կազմման, ցուցահանդեսների կազմակերպման, «Բաժնեմասային ներդրման մասին» ձեռնարկի պատրաստման աշխատանքներ, կատարվել են ուսումնասիրություններ մարզերում առանձին ոլորտների զարգացման հեռանկարների ուղղությամբ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Թոշնագրիափին հակազդելու վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է ավելի քան 350.3 մլն դրամ, որից 305 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 45.4 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի գծով արձանագրվել է բյուջեով նախատեսված ծախսերի 37.7%-ով գերազանցում, ինչը պայմանավորված է նախատեսված աշխատանքների կատարման ճշգրտումներով և ծրագրի ավարտով: Օգտագործված միջոցներից 260.2 մլն դրամը կազմել են շենքերի և շինությունների շինարարության ծախսերը, որի շրջանակներում իրականացվել են «Հանրապետական անասնաբուժական հակահամաճարակային և ախտորոշիչ կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքի շինարարության և Մեղրիի (Ազարակ) սահմանային հսկիչ անցակետի կառուցման աշխատանքները: 59.5 մլն դրամ են կազմել այլ մեքենաների և սարքավորումների ծախսերը: Գումարը հատկացվել է

Հանրապետական անասնաբուժական հակահամաճարակային և ախտորոշիչ կենտրոն» ՊՈԱԿ-ի նյութատեխնիկական բազայի համալրման նպատակով համակարգչային տեխնիկայի, լաբորատոր սարքավորումների և կահույքի ձեռքբերմանը: Եվս 30.7 մլն դրամ տրամադրվել է ծրագրի իրականացման աշխատակազմի, ինչպես նաև անասնաբուժական ծառայությունների ավտոմեքենաների պահպանման նպատակով:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Թոչնագրիային հակազդելու ճապոնական դրամաշնորհային ծրագրի գծով 2010 թվականին խորհրդատվական և ուսուցողական ծրագրերի իրականացման համար նախատեսվել էր հատկացնել 35.5 մլն դրամ, որը կատարվել է 75.2%-ով՝ կազմելով 26.7 մլն դրամ: Շեղումը պայմանավորված է ծրագրում կատարված ճշգրտումներով և դրա ավարտով: Ծրագրի շրջանակներում միջազգային խորհրդատուի կողմից մատուցվել են ծառայություններ տեղեկատվության գծով, կազմակերպվել է ուսուցում «ՀՀ խոշոր և մանր եղերավոր անասունների բրյուցելողի դեմ պայքարի» ուսումնական մշակման համար:

Գյուղատնտեսության գարգացման միջազգային հիմնադրամի (ԳՀՄՀ) աջակցությամբ իրականացվող՝ «Շուկայական հնարավորություն ֆերմերներին» վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է 308.4 մլն դրամ, որից 269.8 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 38.6 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի ծախսերը 8.3%-ով գերազանցել են նախատեսված ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման ու նախագծահետազոտական ծախսերով, որոնք 2010 թվականի պետական բյուջեում չեն նախատեսվել, սակայն փաստացի կատարվել են 2009 թվականի խնայողությունների հաշվին: Ծրագրի նպատակն է բարելավել Հայաստանի Հանրապետության գյուղական աղքատ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը: Ծրագրի խնդիրն է աջակցել համեմատական տնտեսական առավելություններ ունեցող առաջնային արտադրողների և առավել բարենպաստ աշխատանքային հնարավորություններ փնտրող գյուղաբնակների հետ սերտ կապ ունեցող գյուղական ձեռնարկությունների աճին, տրամադրել ներդրումային գործիքներ և հարակից ֆինանսական միջոցներ, որոնք կրավարարեն գյուղական բաժնետիրական ֆինանսավորման պահանջարկը, և աջակցել Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական ոլորտի հետագա զարգացմանը: Ծրագրին ունի 3 հիմնական բաղադրիչ՝ «Գյուղական ձեռնարկատիրության ֆինանսավորում», «Տնտեսապես հիմնավորված ենթակառուցվածքների վերականգնում» և «Ծրագրի վերլուծություն և կառավարում»: Առաջին բաղադրիչի խնդիրն է խթանել գյուղական մանրածավալ արտադրողների և ՓՄՁ-ների տնտեսական կայուն ակտիվության աճը՝ համապատասխան նորարարական ֆինանսական ծառայություններ տրամադրելու ճանապարհով: Բաղադրիչի նպատակն է հիմնել գյուղական բաժնետիրական հիմնադրամ, ՓՄՁ-երին տրամադրել ներդրումային վարկեր և ֆերմերային տնտեսություններին՝ զարգացման վարկեր: 2010 թվականի

ընթացքում ծրագրի ներդրումային կոմիտեի կողմից կատարվել է չորս բաժնետիրական ներդրումներ՝ թռչնաբուծության, սառնարային տնտեսության, պահածոների և գինիների արտադրության ոլորտներում: Ծրագրում ընդգրկված «Տնտեսապես իմնավորված ենթակառուցվածքների վերականգնում» բաղադրիչի խնդիրն է բարելավել իմնական շահառու խմբի կենսամակարդակը և ներդրումային միջավայրը շահութաբեր ձեռնարկատիրության զարգացման և կայուն գյուղական տնտեսական աճի համար: Բաղադրիչի շրջանակներում ներդրումները նպատակառությունների վերականգնման ծրագրերին:

Նշված վարկային ծրագրին աջակցելու նպատակով ԳՀՄՀ-ի կողմից տրամադրված դրամաշնորհի հաշվին կատարվել են ավելի քան 51.4 մլն դրամի ծախսեր՝ կազմելով նախատեսվածի 68.7%-ը, որոնք ծախսվել են միջազգային խորհրդատվական ծառայությունների գնման և իմնական աշխատակազմի աշխատավարձի վճարման և ուսուցման ուղղությամբ: Ցածր կատարողականը պայմանավորված է ծրագրի իրականացման գրասենյակի պահպանման ծախսերի տնտեսումներով: Նշենք, որ հաշվետու տարում ԳՀՄՀ-ից ֆինանսավորում չի ստացվել, և ծախսերը կատարվել են նախորդ տարվա մնացորդի հաշվին:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման լրացուցիչ ֆինանսավորման վարկային ծրագրի գծով նախատեսվել էր հատկացնել 83.5 մլն դրամ, որը կատարվել է 121.7%-ով՝ կազմելով 101.6 մլն դրամ: Գերազանցումը պայմանավորված է կատարված աշխատանքների ծավալներով: Ծրագիրն ուժի մեջ է մտել 2009 թվականի ապրիլի 13-ից (վարկային համաձայնագիրը կնքվել է 2009 թվականի փետրվարի 26-ին) և նախատեսվել էր ավարտել 2010 թվականի մայիսի 30-ին: Աշխատանքները կատարվել են համաձայն ժամանակացուցիչ: Ծրագիրը նախատեսվել է որպես լրացուցիչ ֆինանսավորում գյուղական համայնքների վերականգնման և զարգացման ծրագրերի իրականացման համար: Ծրագրի շրջանակներում իրականացվել են գազաֆիկացման ու խմելու ջրի ցանցերի վերանորոգման աշխատանքներ և գյուղտեխնիկայի ձեռքբերում:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել են շուրջ 90 մլն դրամ վարկային միջոցներ՝ 10.1 անգամ գերազանցելով նախատեսվածը, ինչը պայմանավորված է ՀԲ-ի և ՀՀ կառավարության կողմից ընդունված ծրագրի ժամկետի երկարացման հետևանքով կատարված աշխատանքների ծավալների և պահպանման ծախսերի ավելացմամբ: Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանի փոքր և միջին գյուղական ձեռնարկությունների զարգացմանը ֆերմերների ու գյուղական ձեռնարկատերերի համար շուկաներն առավել մատչելի դարձնելու և գյուղական շրջաններում ներդրումները խթանելու միջոցով: Օգտագործված

միջոցներից տրամադրվել են 13.2 մլն դրամ դրամաշնորհներ, որի հաշվին գյուղատնտեսության ենթակառուցվածքների վերականգնման և զարգացման ծրագրերի իրականացման համար 2010 թվականին կատարվել են համայնքների գազաֆիկացման և խմելու ջրի ցանցերի վերանորոգման, գյուղտեխնիկայի ձեռքբերման աշխատանքներ: 60.7 մլն դրամ տրամադրվել է այլ ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը, որի հաշվին իրականացվել են ծրագրի իրականացման գրասենյակի, «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի պահպանման և մասնագետների ուսուցուման ծախսերը: Ծրագրի շրջանակներում 10.9 մլն դրամ տրամադրվել է «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի համար գյուղտեխնիկայի ձեռքբերմանը:

Գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման վարկային ծրագրի համաֆինանսավորման մաս կազմող ճապոնական դրամաշնորհի հաշվին կատարվել են 148.3 մլն դրամի ծախսեր կամ նախատեսվածի 85.3%-ը: Ցածր կատարողականը պայմանավորված է խորհրդատվական ծառայությունների շրջանակներում առաջացած խնայողություններով: Ծրագիրն ընդգրկում է երկու բաղադրիչ՝ «Աջակցություն ֆերմերային տնտեսության զարգացմանը» և «Համայնքների տնտեսական զարգացում»: Ֆերմերային տնտեսությանն աջակցության զարգացման բաղադրիչի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել ծախսերի տնտեսման և ճիշտ հաշվարկման եղանակների մշակման, ինչպես նաև ուսուցողական ծրագրերի մշակման գործում: Համայնքների տնտեսական զարգացման բաղադրիչի շրջանակներում խորհրդատվական ծառայություններ են մատուցվել համայնքների զարգացման գծով միջազգային մասնագետների կողմից: 6 մարզային աջակցության թիմերի տեղական խորհրդատունների կողմից իրականացվել են համայնքներում կատարվող աշխատանքների մոնիթորինգ:

Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (ԳՀՄՀ) և Նավթ արտահանող երկրների կազմակերպության (ՕՊԵԿ) աջակցությամբ իրականացվող՝ Գյուղական տարածքների տնտեսական զարգացման վարկային ծրագրի շրջանակներում կատարվել են 4.5 մլն դրամի ծախսեր կամ նախատեսվածի 26.8%-ը, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ նշված ծրագիրն ավարտվել էր 2009 թվականին, սակայն ԳՀՄՀ-ից ֆինանսավորվել է ֆոնդի մնացորդը, որը տարեվերջին ՀՀ կառավարության որոշմամբ արտացոլվել է 2010 թվականի պետական բյուջեի ծրագրում: Ծրագրի շրջանակում 2010 թվականին իրականացվել է ծրագրի առողջիւթյուն:

Տավարաբուծության զարգացման ծրագրի (Ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող «Դրամաշնորհային աջակցություն սակավ ապահով ֆերմերներին» ծրագրի շրջանակներում) գծով ծախսերը կազմել են 286.8 մլն դրամ կամ նախատեսվածի 83.1%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է բյուջեում կանխատեսված և փաստացի ձևավորված փոխարժեքների տարբերությամբ: Ծրագրի շրջանակներում 2010 թվականին Հայաստանի

Հանրապետությունում կաթի արտադրության ծավալների խթանման և կաթնային տավարաբուծության զարգացման նպատակով հանրապետություն են ներկրվել 262 գլուխ հոլշտինյան, շվից ցեղերի տոհմային երինջներ, որոնք տարածամկետ վճարման պայմանով (4 տարի) վաճառվել են հանրապետության ֆերմերային տնտեսություններին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 13.4%-ով կամ 44.6 մլն դրամով՝ պայմանավորված ծրագրի շրջանակներում ձեռք բերված անասունների գլխաքանակի նվազմամբ:

ՄԱԿ-ի զարգացման աջակցության ծրագրի գծով 2010 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 89.9 մլն դրամ՝ ապահովելով 108.4% կատարողական: Ծրագրի շրջանակներում օգտագործված միջոցներից շուրջ 68 մլն դրամը կազմել են աճեցվող ակտիվների, 15 մլն դրամը՝ տրանսպորտային սարքավորումների, 1.8 մլն դրամը՝ մասնագիտական ծառայությունների ձեռքբերման, 5.2 մլն դրամը՝ այլ ծախսերը:

Հաշվետու տարում գյուղատնտեսության դասում ընդգրկված հետևյալ 8 ծրագրերի գծով արձանագրվել է 100% կատարողական:

Սերմերի որակի ստուգման ու պետական սորտավորձարկման միջոցառումների իրականացման նպատակով ծախսվել է շուրջ 46.3 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են սորտային նույնականացման աշխատանքներ, սերմերի խմբաքանակներից նմուշների ընտրություն և նմուշառում, սերմանմուշների լաբորատոր փորձաքննություն, սորտային սերմադաշտերի ապրոբացիա: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 28.2%-ով կամ 10.2 մլն դրամով՝ պայմանավորված մատուցված ծառայությունների ծավալների ավելացմամբ:

Բույսերի պաշտպանության միջոցառումների գծով ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են 68.6 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում գյուղատնտեսական մշակաբույսերի առավել վնասակար օրգանիզմների դեմ իրականացվել են մի շարք միջոցառումներ: 15.2 մլն դրամ տրամադրվել է 2560 հա հողատարածության վրա տրակտորային սրսկիչներով մորեխների դեմ պայքարի ծառայությունների, 35.1 մլն դրամ՝ համայնքների միջոցով մկնանման կրծողների դեմ պայքարի միջոցառումների ֆինանսավորմանը: Նշված բաղադրիչի շրջանակներում ձեռք բերված թունանյութերն անհատույց տրամադրվել են հանրապետության բոլոր մարզերի առավել վարակված տարածքների հողօգտագործողներին, որոնց միջոցով պայքարի աշխատանքներ են տարվել շուրջ 136944 հա հողատարածության վրա: 18.4 մլն դրամ տրամադրվել է 3000 հա տարածքի վրա տրակտորային ցրիչներով մկնանման կրծողների դեմ պայքարի միջոցառումների իրականացման համար: 2009 թվականի համեմատ այս ծրագրի գծով ծախսերի 1.2%-ով նվազումը պայմանավորված է մատուցված աշխատանքների ծավալների և ձեռքբերված թունանյութերի քանակի նվազմամբ:

Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների ծախսերը կազմել են 45.1 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում 2010 թվականին իրականացվել են

61490 հեկտար գյուղատնտեսական հողատեսքերի ագրոքիմիական դաշտային հետազոտություններ, հողանմուշների, պարարտանյութերի և բուսաբուծական մթերքների լաբորատոր փորձաքննություններ և 141 համայնքներում մշակաբույսերի պարարտացման հանձնարարականների կազմում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 3.8%-ով կամ 1.8 մլն դրամով, որը պայմանավորված է մատուցված ծառայությունների ծավալների պակասեցմամբ:

ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության անասնաբուժական ոստիկանական դասակի կողմից կարանտինային սահմանափակումների իրականացման նպատակով տրամադրվել է շուրջ 40.2 մլն դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 34.5%-ով՝ պայմանավորված ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանական ծառայության ստորաբաժանումների կողմից պայմանագրային հիմունքներով պահպանության և անվտանգության ծառայությունների դիմաց աշխատավարձի բարձրացմամբ: Նշված ծախսերն ուղղվել են ՀՀ ոստիկանության հասարակական կարգի ապահովման (<ԿԱ) վարչության կազմում ստեղծված ոստիկանության հատուկ դասակի պահպանությանը, որոնք համաճարակային բռնկումների ժամանակ գյուղատնտեսական կենդանիների հիվանդություններն օջախներում լոկալիզացնելու, ինչպես նաև դրանց հետագա տարածումները կանխելու նպատակով իրականացրել են կարանտինային սահմանափակումներ:

Գյուղատնտեսական խորհրդատվական ծառայությունների գծով կատարվել են 293.1 մլն դրամի ծախսեր: Ծրագրի շրջանակներում խորհրդատվական ծառայություններ մատուցող Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների (ԳԱՄԿ-ների) և Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնների (ԳԱՀԿ-ների) միջոցով ագրոտեխնիկական կանոններին և նոր տեխնոլոգիաներին համապատասխան գյուղատնտեսության վարման նպատակով գյուղացիական տնտեսություններին մատուցվել են խորհրդատվական ծառայություններ: 2009 թվականին նշված ծախսերն իրականացվել են Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման վարկային ծրագրի շրջանակներում, որի ավարտի հետ կապված՝ նշված ծախսերի կատարումն ապահովվել է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին, ինչի արդյունքում նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 60.4%-ով կամ 110.4 մլն դրամով:

Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի փորձաքննության միջոցառումների իրականացման համար ծախսվել է 185 մլն դրամ: Իրականացվել են գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի, համաճարակային վիճակի վերլուծության, մոնիթորինգի, հանրապետության բարձր լեռնային տարածաշրջաններում կենդանիների վարակիչ հիվանդությունների ներթափանցումից պաշտպանելու, կենդանական ծագում ունեցող հումքի և

մթերքների լաբորատոր փորձաքնության միջոցառումներ: 2009 թվականի համեմատ ծախսերի 32.4 մլն դրամով կամ 14.9%-ով նվազումը պայմանավորված է մատուցված ծառայությունների ծավալների նվազմամբ:

Գյուղատնտեսական հողատեսքերի պահպանման, բարելավման և ինժեներական կառուցվածքների վերականգնման աշխատանքների իրականացման համար հաշվետու տարում պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 379.8 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Հրազդան գետի հունի մաքրման և հողաթմբերի ամրացման, Արագածոտնի մարզի Քոչարի հեղեղատարների հուների մաքրման և ափերի ամրացման, Մեղրաձոր համայնքի տարածքում Մարմարիկ գետի ափապաշտպան հենապատերի ամրացման, Կոտայքի մարզի Կապուտան համայնքի հեղեղատարների հուների մաքրման և ափերի ամրացման, Վայոց Ձորի մարզի Ելիխն համայնքի ոռոգման ջրավագանի վերանորոգման, Արմավիրի մարզի Զանֆիդա համայնքի տարածքում Արաքս գետի սահմանային նշանների հատվածում վթարված ափապաշտպան արգելաթմբի վերականգնման հրատապ աշխատանքները, ինչպես նաև վերոհիշյալ աշխատանքների կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության միջոցառումները: 2009 թվականի համեմատ այս ծախսերը նվազել են 20.6%-ով կամ 98.7 մլն դրամով՝ պայմանավորված աշխատանքների ծավալների նվազմամբ:

Ճապոնական կառավարության «Պարենային արտադրության աճ» ծրագրի շրջանակներում իրականացվող հակակարկտային կայանների տեղակայման ծախսերը հաշվետու տարում կազմել են ավելի քան 417.3 մլն դրամ: Հատկացված միջոցներով իրականացվել են ՀՀ Արարատի մարզում՝ 8, Արմավիրի մարզում՝ 40 հակակարկտային կայանների տեղակայման աշխատանքներ: 2009 թվականի համեմատ այս ծրագրի ծախսերն աճել են 70.9%-ով կամ 173.1 մլն դրամով՝ պայմանավորված աշխատանքների ծավալների ավելացմամբ:

Գյուղատնտեսության դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերը կազմել են ավելի քան 665.5 մլն դրամ կամ նախատեսվածի 99.8%-ը, որը հատկացվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

Գյուղատնտեսական կենդանիների պատվաստման ծախսերը կազմել են ավելի քան 991.5 մլն դրամ կամ նախատեսվածի 99.9%-ը: Ծրագրի շրջանակներում ծեռք են բերվել առանձին տեսակների կենսապատրաստուկներ: Նախորդ տարվա համեմատ գյուղատնտեսական կենդանիների պատվաստման ծախսերը նվազել են 34.8%-ով կամ 528.9 մլն դրամով, որը պայմանավորված է մատուցվող որոշ ծառայությունների ծավալների նվազմամբ:

Հայաստանի Հանրապետությունում ցորենի և գարու սերմնաբուծության զարգացմանն ուղղվել է շուրջ 76.5 մլն դրամ կամ նախատեսվածի 99.9%-ը: Ծրագրի շրջանակներում համակարգի գիտական կենտրոնների ու սուպեր էլիտային և էլիտային սերմնաբուծությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների կողմից արտադրվել են 1177 տոննա աշնանացան և գարնանացան ցորենի ու գարնանացան գարու սուպեր էլիտային և էլիտային սերմեր: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 1.2%-ով աճը պայմանավորված է կնքված պայմանագրերի քանակով:

Բոլորի կարանտինի և գյուղմշակաբույսերի բուսասանիտարական վիճակի մոնիթորինգի, լաբորատոր փորձաքննությունների հիման վրա կանխարգելիչ և ախտորոշիչ ծառայությունների իրականացմանը տրամադրվել է շուրջ 71.7 մլն դրամ՝ ապահովելով 99.4% կատարողական: Ծրագրի շրջանակներում կատարվել են 198 հազար հեկտարի հանրապետությունում գրանցված սահմանափակ տարածում ունեցող կարանտին օրգանիզմների տարածման արեալի ճշտում, նոր օջախների հայտնաբերում և բույսերի վնասատուների և հիվանդությունների հայտնաբերման մոնիթորինգ, փորձանմուշների և թունանյութերի նմուշների լաբորատոր փորձաքննություններ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 10.5%-ով կամ 8.4 մլն դրամով, որը պայմանավորված է մատուցվող ծառայությունների ծավալների նվազմամբ:

Գյուղատնտեսական հողօգտագործողներին պետական աջակցության տրամադրման համակարգման ծախսերը կազմել են ավելի քան 7.8 մլն դրամ՝ ապահովելով 99.8% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 68%-ով կամ 16.6 մլն դրամով, որից 13 մլն դրամը չի իրականացվել կարիք չլինելու պատճառով, իսկ 3.6 մլն դրամը պայմանավորված է աշխատանքների ծավալների նվազմամբ:

Գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման ծախսերը կազմել են 6.3 մլն դրամ՝ համապատասխանաբար 0.5%-ով և 1.2%-ով զիջելով նախատեսված և նախորդ տարվա ցուցանիշները, որը պայմանավորված է ծառայությունների ծեռքբերման նպատակով հայտարարված մրցույթների արդյունքում առաջացած խնայողություններով:

Սննդամթերքի լաբորատոր փորձաքննությունների ծախսերը կազմել են շուրջ 5 մլն դրամ, որը կատարվել է 99.7%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 81.3%-ով կամ 21.7 մլն դրամով նվազումը պայմանավորված է ՀՀ կառավարության 2009 թվականի մայիսի 29-ի «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» թիվ 594-Ա որոշմամբ՝ մինչև 70 մլն դրամ շրջանառություն ունեցող ծեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների մոտ ստուգումներ չկատարելու հանգամանքով:

Հաշվետու տարում ավելի քան 853.3 մլն դրամ է տրամադրվել անդառային գննիքներության բնագավառին, որը կազմել է նախատեսվածի 93.8%-ը: Շեղումը պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող անտառների պետական մոնիթորինգի

հզորացման դրամաշնորհային ծրագրի ցածր կատարողականով: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել են չորս ծրագրեր, որոնցում մեծ տեսակարար կշիռ ունեն անտառապահպանական ծառայություններին կատարված հատկացումները:

Հաշվետու տարում անտառապահպանական ծառայությունների իրականացման համար նախատեսվել է 712.5 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Այն տրամադրվել է «Հայանտառ» ՊՈԱԿ-ին՝ որպես դրամաշնորհ, իր կանոնադրական խնդիրներն իրականացնելու համար: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 3.1%-ով կամ 22.4 մլն դրամի նվազումը պայմանավորված է ՀՀ կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 5 թիվ 1209-Ն որոշմամբ՝ «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Մեղրիի անտառատնտեսություն» մասնաճյուղի գործունեության դադարմամբ, որի արդյունքում կրճատվել են կազմակերպության համապատասխան հաստիքները:

Անտառային պետական մոնիթորինգի նպատակով նախատեսված շուրջ 54 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է, որը նախորդ տարվա համեմատ գրեթե չի փոփոխվել: Հատկացված գումարների հաշվին իրականացվել է անտառտնտեսություններում, ազգային պարկերում, արգելավայրերում անտառապահպանության և անտառօգտագործման բնագավառում իրականացված աշխատանքների արդյունքների ուսումնասիրում, փայտանյութի սպառման շուկայի, փայտանյութի մթերման և արտահանման, ապօրինի հատումների և դրա արդյունքում բնափայտի տեղափոխումների, իրացման վերաբերյալ տվյալների հավաքում, մշակում, վերլուծություն և գնահատում:

Անտառվերականգնման և անտառաշինական աշխատանքների իրականացման համար 2010 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 46.5 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով ծրագրված ցուցանիշը: Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 2009 թվականի օգոստոսի 13-ի թիվ 931-Ն որոշմամբ սահմանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի միջև կնքված պայմանագրի շրջանակներում «Հայանտառ» ՊՈԱԿ-ը 2009 թվականի պայմանագիրը կատարում է ամբողջ ծավալով՝ պայմանով, որ պայմանագրի գումարի 46.5 մլն դրամ չափով ֆինանսավորումն իրականացվում է 2010 թվականի առաջին եռամյակում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 89.9%-ով կամ 412.3 մլն դրամով, քանի որ 2010 թվականին անտառվերականգնման և անտառաշինական աշխատանքներ չեն իրականացվել:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ անտառների պետական մոնիթորինգի հզորացման դրամաշնորհային ծրագրի գծով 2010 թվականին ծախսվել է շուրջ 40.3 մլն դրամ՝ 58.3%-ով զիջելով ծրագրված ցուցանիշը, ինչը պայմանավորված է նախատեսվածից քիչ պայմանագրերի կնքմամբ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են համակարգի

ուսումնասիրման, ներքին անվտանգության համակարգի և համակարգչային ցանցի նախագծման աշխատանքեր:

Հաշվետու տարում ավելի քան 32 մլրդ տրամադրվել է ռողուման բնագավառի ծախսերին՝ կազմելով ծրագրվածի 84.3%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ԱՄՆ-ի կառավարության աջակցությամբ իրականացվող՝ «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի և Աբու-Դաբիի Զարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Արփա-Սևան թունելի հիմնանորոգման վարկային ծրագրի ցածր կատարողականությունով: Միևնույն ժամանակ, նախատեսվածից բարձր կատարողական է արծանագրվել Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ռողուման համակարգերի վերականգնման իրատապ վարկային ծրագրի գծով: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 10 ծրագրեր, այդ թվում՝ արտաքին աղբյուրներից ֆինանսավորվել են չորս վարկային և մեկ դրամաշնորհային ծրագրեր:

ԱՄՆ-ի կառավարության աջակցությամբ իրականացվող՝ «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 73%-ը կամ շուրջ 17.1 մլրդ դրամ: Ցածր կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծրագրի բյուջեն ներկայացնելուց հետո՝ ֆինանսավորում ստանալու նպատակով՝ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիային ներկայացվող եռամսյակային հայտերում անհրաժեշտությունից ելնելով կատարվել են ֆինանսավորման համապատասխան կրճատումներ: Բացի այդ, 2010 թվականի համար նախատեսված որոշ ծախսեր տեղափոխվել են 2011 թվական:

Ծրագրին ունի երկու հիմնական բաղադրիչ՝ «Ռողուման Ենթակառուցվածքներ» և «Զրից դեպի շուկա»: Առաջին բաղադրիչի շրջանակներում վերականգնվել է Արզնի-Շամիրամ մայր ջրանցքի 1.6 կմ հատվածը: Արզնի-Շամիրամում և մնացած 5 ջրանցքներում (Արմավիր, Արտաշատ, Ստորին Հրազդան, Շիրակ և Թալին) արդեն իրականացվել է վթարային վիճակում գտնվող նախատեսված 245-ից 223 ռողուման կառուցվածքների վերականգնում, որից 146-ն իրականացվել է 2010 թվականին: Արզնի-Շամիրամ մայր ջրանցքը (100 կմ ընդհանուր երկարությամբ) անցնում է Արագածոտն և Կոտայք մարզերով և ռողում է 25000 հա հողատարածք: Վերականգման աշխատանքների ավարտին ավելի քան 60000 ջրօգտագործողներ 30 համայնքներում ունեցան ջրի կորստի կրճատումից և ջրի կառավարման բարելավումից առաջացած օգուտներ: Բաղադրիչի շրջանակներում Արզնի-Շամիրամ, Ստորին Հրազդան, Շիրակ և Արտաշատ մայր ջրանցքներում 2010 թվականին իրականացվել է նաև 25 կմ երկարությամբ հատվածների վերականգնում: Այգեգարդի, Շենիկի, Մանթաշի, Վարդենիսի և Սպիտակի ինքնահոս համակարգերում իրականացվել է 48.2 կմ ինքնահոս համակարգերի կառուցում և վերականգնում:

2009 թվականի սեպտեմբերի 30-ին ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը կնքեց իր ամենամեծ՝ 17 պոմպակայանների վերականգնման պայմանագիրը: 2010 թվականին շինարարական

աշխատանքների մոտ 74%-ն ավարտվել է: Ներկրվելիք 59 պոմագերից 47-ն արդեն ներկրվել են: Ներկրվել են նաև Էլեկտրամեխանիկական սարքավորումների 50%-ը, իսկ մնացած կեսի ներկրման կազմակերպման աշխատանքներն ընթացքի մեջ են: Աշխատանքները նախատեսվում է ավարտվել մինչև 2011 թվականի հուլիսի 15-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվում է նաև Արարատյան հարթավայրի դրենաժային համակարգի վերականգնումն աշխատանքային երկու փաթեթներով: Առաջին փաթեթով կատարվել է պայմանագրով նախատեսված ընդհանուր աշխատանքների 53%-ը, այդ թվում՝ 64.3 կմ մայր կողեկտորների և 49 կմ երկարությամբ երկրորդային և երրորդային ցամաքուրդների մաքրում և խորացում, իսկ երկրորդ փաթեթով՝ պայմանագրով նախատեսված ընդհանուր աշխատանքների 38%-ը, այդ թվում՝ 18 կմ մայր կողեկտորների և 36 կմ երկարությամբ երկրորդային և երրորդային ցամաքուրդների մաքրում և խորացում, 32 արտեզյան հորերի, 19 խողովականցումների, 8 հետիոտնային կամուրջների կառուցում և վերականգնում:

«Հազարամյակի մարտահրավեր» ծրագրի շրջանակներում նախատեսվում է հանրապետության 10 մարզերում թվով 96 համայնքների երրորդ կարգի ջրանցքների վերականգնում, որին համայնքները պետք է մասնակցեն 15 տոկոս համաֆինանսավորմամբ: Աշխատանքները կատարվում են աշխատանքային երկու փաթեթների շրջանակներում: Առաջին փաթեթով իրականացվել է 19.4 կմ երկարությամբ բետոնե վաքերի (ջրատակ կիսախողովակներ) տեղադրում, 550 մ խողովակաշարի տեղադրում, ինչպես նաև 50.3 կմ երկարությամբ հողային ջրանցքների մաքրում և վերականգնում: Երկրորդ փաթեթի աշխատանքներն իրականացվում են հանրապետության 10 մարզերի թվով 82 համայնքներում, կատարվել է 7.8 կմ վաքերի և 6.8 կմ խողովակաշարի տեղադրում: Աշխատանքները նախատեսվում է ավարտել 2011 թվականի հուլիս և օգոստոս ամիսներին:

Հաշվետու տարվա ընթացքում «Զրից դեպի շուկա» բաղադրիչի շրջանակներում շարունակվել են աշխատանքները ծրագրային հիմնական գործունեության ուղղությամբ՝ ֆերմերների վերապատրաստում և ցուցադրական տեղամասերի հիմնում Հայաստանի ողջ տարածքում, տեխնիկական օժանդակություն վարկային բաղադրիչի իրականացմանը, ինչպես նաև ֆերմերային խմբերին և գյուղատնտեսական արտադրանքի վերամշակողներին օժանդակության ակտիվացում: Զրի ներտնտեսային կառավարման (ՁՆԿ) տեխնոլոգիաների և բարձրարժեք գյուղատնտեսության (ԲԱԳ) բարելավումների ցուցադրումը շարունակվել է հանրապետության բոլոր 10 մարզերում: Արմավիրի մարզում հաջող գործունեություն է ծավալել շարժական լաբորատորիան: Շարունակելով արդեն իսկ ծանոթ տեխնոլոգիաների և մեթոդների ներդրումը՝ ՁՆԿ-ի բաղադրիչի կողմից լրամշակվել, թարմացվել և տպագրվել են 5000 օրինակ բրոշյուրներ, որոնք պարունակում են նորամուծությունների և բարեփոխումների, դրանց գների, ձեռքբերման վայրերի ու տեղադրումների վերաբերյալ տեխնիկական տեղեկատվություն: ՁՆԿ-ի բաղադրիչը յուրաքանչյուր այցելության կամ

կանչի ընթացքում շարունակում է ֆերմերներին տրամադրել խորհրդատվություն ոռոգման ջրի կառավարման բարելավումների վերաբերյալ:

ԲԱԳ բաղադրիչը ավելի մեծ ուշադրություն է դաձրել այլ բաղադրիչների հետ համագործակցությանը, նախագծել և իրականացրել է համատեղ ծրագրեր, ՀՄՀ ծրագրի շրջանակներում վերականգնված երրորդական կարգի ջրանցքների կողքին հիմնել է համատեղ ցուցադրական տեղամասեր: Հաշվետու տարում կառուցվել և փորձարկվել է նաև մեկ տեղական արտադրության պոլիէթիլենե ջերմատուն: Ներմուծվել են նոր տեսակի տնկանյութեր, մրգատու ծառերի և հատապտուղների տնկիներ:

Վերապատրաստման բաղադրիչը ներկայում իրականացվում է Հայաստանի 10 մարզերում: 2010 թվականին ԶՆԿ-ի գծով վերապատրաստվել է 295 խումբ (319 համայնք), իսկ ԲԱԳ-ի գծով 2010 թվականին վերապատրաստման դասընթացներին մասնակցել է 244 խումբ (256 համայնք):

Հետքերքահավաքային գործընթացների, վերամշակման և մարկետինգի (ՀՎՄ) բաղադրիչի շրջանակներում 2010 թվականին աջակցություն է ցուցադրերվել 92 ձեռնարկությունների/ֆերմերների խմբերի, իսկ դրանց ընդհանուր թիվը վերջին չորս տարվա ընթացքում հասել է 212-ի: ՀՎՄ բաղադրիչի կողմից տրամադրված օժանդակության տեսակներից են՝ շուկայական հնարավորությունների բացահայտումը և գնորդների ու պոտենցիալ մատակարարողների միջև կապերի հաստատումը, մարկետինգային աջակցությունը, գնորդների պահանջները բավարարելու համար մատակարարների կարողությունների հզորացումը, աջակցությունը մթերման և համախմբման կենտրոններին, հետքերքահավաքային պահպանման տեխնոլոգիաները և եղանակները: Հաշվետու տարում նախաձեռնված ամենակարևոր միջոցառումներից մեկը «Գնիր հայկականը» քարոզարշավի հաջողված սկիզբն ու ընթացքն էր, որին աջակցել է նաև ՀՀ կառավարությունը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի վերականգնման հրատապ ծրագրի շրջանակներում ծախսվել է ավելի քան 7.8 մլրդ դրամ, որից 6.6 մլրդ դրամը՝ վարկային միջոցներից, 1.3 մլրդ դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Կատարված ծախսերը 11.7%-ով գերազանցել են նախատեսված ցուցանիշը, ինչը պայմանավորված է աշխատանքները նախատեսվածից շուտ կատարելու հանգամանքով: Ծրագիրը բաղկացած է երկու բաղադրիչներից՝ «Թալինի 59.01 կմ-ի և Արմավիրի 24.8 կմ-ի ոռոգման համակարգերի գլխավոր ջրանցքների (ընդամենը 83,81 կմ մայր և ճյուղային ջրանցքների) վերականգնում» և «Ծրագրի կառավարման և ինստիտուցիոնալ գործողություններ»: Ծրագրի ավարտը սահմանվել է 2011 թվականի հունիսի 30-ին: 2010 թվականի ընթացքում ամբողջությամբ ավարտվել են Արմավիրի մայր ջրանցքի և Մեծամորի ջրհան կայանի հեռացնող ջրագծի վերականգնման աշխատանքները:

Աբու Դաբիի զարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Արփա-Սևան թունելի հիմնանորոգման վարկային ծրագրի շրջանակներում կատարվել են ավելի քան 1.1 մլրդ դրամի ծախսեր, որից 298.1 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 814.9 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 70.1%-ով կատարելով ծրագիրը: Նկատի ունենալով, որ Սևանա լիճը Հայաստանի միակ մեծ ջրային ռեզերվուարն է՝ ծրագրի նպատակն է ջրի մակարդակի բարձրացման և բնապահպանական կայունության պահպանման նպատակով գետերից Սևանա լիճ ջուր տեղափոխող 48 կմ երկարությամբ Արփա-Սևան հիդրոհամակարգային որոշ հատվածների վերականգնումը, վերանորոգումը և շինարարությունը: 2010 թվականի ընթացքում իրականացվել են 63.2 կմ երկարությամբ հիմնանորոգման աշխատանքներ: Ցածր կատարողականը պայմանավորված է վարկային ծրագրի կատարման ժամկետի երկարաձգմամբ: Նշենք, որ ծրագրի իրականացման ժամկետը է սահմանվել մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ պատվարների անվտանգության առաջին և երկրորդ ծրագրերի շրջանակներում նախատեսված 692.8 մլն դրամն օգտագործվել է ամբողջությամբ: Պատվարների անվտանգության ծրագրի հիմնական նպատակներն են պատվարների ներքին բյեֆի 350 հազար բնակչության անվտանգության ապահովումը և ոռոգման համակարգերի ջրապահովվածության ավելացումը, ինչպես նաև ենթակառուցվածքային և կազմակերպչական հիմնախնդիրների լուծման միջոցով մասնավոր սեկտորի զարգացմանը նպաստելը: Այս նպատակին հասնելու համար կատարվող ներդրումներն ուղղված են ոռոգման ենթակառուցվածքների վերականգնմանը և այնպիսի պայմանների ստեղծմանը, որոնք հնարավոր կդարձնեն մասնավոր սեկտորի մասնակցությունը ենթակառուցվածքների կառավարմանը, պահպանմանը և զարգացմանը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ պատվարների անվտանգության առաջին ծրագրի շրջանակներում կատարված ծախսերը կազմել են 611 մլն դրամ, որից 51.1 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 559.9 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի շրջանակներում 2010 թվականին կատարվել են Մարմարիկի պատվարի կառուցվածքների վերականգնման և սարքավորումների տեղադրման ու տեխնիկական վերահսկողության աշխատանքներ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ պատվարների անվտանգության երկրորդ ծրագրի շրջանակներում կատարված ծախսերը կազմել են 81.8 մլն դրամ: Ծրագիրն ավարտվել է 2009 թվականին, սակայն, համաձայն շինարարական աշխատանքների պայմանագրերի, կապալառուին պետք է վճարվի կատարված աշխատանքների հետերաշխիքային գումար, որը 2010 թվականի ընթացքում վճարվել է վարկային հատկացումների հաշվին:

Հաշվետու տարում ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին տրամադրվել է շուրջ 4.8 մլրդ դրամ աջակցություն, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է: Համակարգի հետագա զարգացման և ջրօգտագործողների ընկերությունների՝ որպես կենսունակ հաստատությունների կայացման հարցում միջնաժամկետ հեռանկարում մեծ դեր է վերագրվում պետական օժանդակությանը, որի անմիջական դրսերումներից է պետական ֆինանսական աջակցությունը: Ոռոգման համակարգին պետական ֆինանսական աջակցության շրջանակների հստակեցումը և տրամադրման մեխանիզմների բարեփոխումն է՝ լ ավելի է կարևորվում աղքատության հաղթահարման միջոցառումների համատեքստում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոռոգման ջրի կանոնավոր հասանելիությունը զգալիորեն նվազեցնում է աղքատության ռիսկը գյուղական բնակավայրերում: Ջրօգտագործողների ընկերություններին պետական ֆինանսական աջակցության բարեփոխումների հիմնական նպատակներն են ջրօգտագործողներին աջակցությունն ու մասնակցային կառավարման ամրապնդումը, ջրօգտագործողների ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացումն ու ինքնածախսածածկման մակարդակի աստիճանական ավելացումը, ոռոգման ջրի կորուստների կրճատումը, ինչպես նաև պետական ծախսերի կանխատեսելիության ու բաշխման արդյունավետության աճը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 9.4%-ով կամ 494.4 մլն դրամով նվազում պայմանավորված է ըստ տարիների սուբսիդիայի կրճատման սցենարով:

«Որոտան-Արփա-Սևան թունելների շահագործման վարչություն» պետական հիմնարկի պահպանման, Որոտան-Արփա-Սևան ջրային համակարգի շահագործման, տեխնիկական վիճակի բարելավման համար << 2010 թվականի պետական բյուջեով նախատեսված 264 մլն դրամն օգտագործվել է ամբողջությամբ: Ծրագրի շրջանակներում իրականացվում են Արփա-Սևան ջրային համակարգի շահագործման և Որոտան-Արփա թունելի պահպանման աշխատանքները: Ծրագրի ամբողջական իրականացումը հնարավորություն կընծեռի անվտանգ և անխափան շահագործել Որոտան-Արփա-Սևան հիդրոտեխնիկական համալիրը, ինչպես նաև Սևանա լիճ տեղափոխվող ջրի նախագծային ծավալը՝ տարեկան շուրջ 450 մլն խմ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 75.8%-ով կամ 826 մլն դրամով նվազում պայմանավորված է նրանով, որ 2010 թվականին վերանայվել է պայմանագրով պահպանման համար նախատեսված ամսական գումարը:

<< 2010 թվականի պետական բյուջեով ոռոգելի հողերի կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և ընթացիկ նորոգման համար տրամադրվել է շուրջ 225 մլն դրամ, որը կատարվել է 99.4%-ով: Ծրագրի իրականացման արդյունքում պահպանվում և շահագործվում են հանրապետությունում առկա կոլեկտորադրենաժային ցանցերը, և մաքրվում ու վերանորոգվում է կոլեկտորադրենաժային ցանցերի մի մասը, որոնցով հնարավորություն է տրվում Արարատյան հարթավայրի հողերի գրուտային ջրերի մակարդակները պահպանել թույլատրելի խորությունների

վրա՝ 19000 հեկտարից ոչ ավելի: Նշված արդյունքներին հասնելու համար նախատեսվել է իրականացնել կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և նորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում, կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրում և նորոգում, դրանց մաքրման և նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն, ինչպես նաև տեխնիկական վիճակի պահպանում և շահագործում: 2010 թվականի ընթացքում կատարվել են 178.12 կմ երկարությամբ կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 13.8%-ով կամ 36 մլն դրամով, որը պայմանավորված է նախատեսված աշխատանքների ծավալների նվազմամբ:

Կոլեկտորադրենաժային ցանցի պահպանման և շահագործման, գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման աշխատանքների իրականացման համար 2010 թվականի պետական բյուջեից նախատեսված 93.7 մլն դրամն ամբողջությամբ ֆինանսավորվել է: Ծրագրի շրջանակներում ոռոգելի հողերի մելիորատիվ վիճակի բարելավման նպատակով միջոցառումների մշակման համար իրականացվել է բաց կոլեկտորադրենաժային ցանցերի պահպանում և շահագործում (1051.83 կմ): 2009 թվականի համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Զրատեխնիկական կառույցների ուսումնասիրությունների ծախսերը կազմել են ավելի քան 10.8 մլն դրամ կամ ծրագրի 98.5%-ը, որը պայմանավորված է որոշակի ծառայությունների և նյութական արժեքների ծեռք բերման ծախսերի տնտեսմամբ: 2009 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 4.2%-ով:

**Վառելիքի և Էներգետիկայի բնագավառի ծախսերը** 2010 թվականին կազմել են 27.3 մլրդ դրամ՝ 40.1%-ով գերազանցելով ծրագիրը: Վերջինս հիմնականում պայմանավորված է ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող համակցված շղգեգագային ցիկլով էներգաբլոկի կառուցման և Էլեկտրահաղորդման գծերի և բաշխիչ ցանցերի վերականգնման վարկային ծրագրի բարձր կատարողականով:

Հաշվետու տարում **միջուկային վառելիքի** դասի ծախսերը կազմել են 184.3 մլն դրամ, որը հատկացվել է ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի պահպանմանը՝ ապահովելով 98.7% կատարողական: Շեղումը հիմնականում պայամանավորված է ապրանքների գնման և ծառայությունների վճարման ծախսերի տնտեսմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 6.8%-ով կամ կամ 11.7 մլն դրամով՝ պայմանավորված քաղաքացիական ծառայողների աշխատավարձերի բնականոն աճով, ինչպես նաև հատուկ փորձաքննությունների անցկացման ծառայություններ ծեռք բերելու համար «Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ին կատարված հատկացումներով:

Վառելիքի այլ գրեսակների դասի ծախսերը կազմել են 14.3 մլրդ դրամ՝ 61.1%-ով գերազանցելով ծրագիրը, որը հիմնականում պայմանավորված է ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող համակցված շոգեգազային ցիկլով Էներգաբլոկի կառուցման վարկային ծրագրի բարձր կատարողականով։ Կատարված հատկացումների հաշվին ֆինանսավորվել են արտաքին աջակցությամբ իրականացվող 2-ական վարկային և դրամաշնորհային ծրագրեր։

Մասնավորապես՝ ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող համակցված շոգեգազային ցիկլով Էներգաբլոկի կառուցման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է ավելի քան 13.4 մլրդ դրամ՝ 80%-ով գերազանցելով նախատեսված ցուցանիշը, որը պայմանավորված է խորհրդատու մասնագետների այցերի ավելացմամբ և փոխարժեքի աճով, ինչպես նաև գների աճի հետևանքով պայմանագրի շրջանակներում գների ճշգրտմամբ։ Երևանի համակացված շոգեգազային ցիկլով էլեկտրակայանը շահագործման է հանձնվել 2010 թվականի ապրիլ 21-ին։

2010 թվականին Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ջեռուցման ծրագրի շրջանակներում կատարվել են շուրջ 642.4 մլն դրամի ծախսեր, որից 543.7 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 98.7 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ ապահովելով 67.7% կատարողական։ Ծրագրի կատարողականը մեծ մասմբ պայմանավորված է այն հանգամանքով, որ 2010 թվականին դպրոցների ջերմամատակարարման համակարգերի վերականգնման և Էներգախնայողական միջոցառումների համար պայմանագրերը կնքվել են նախատեսվածից ցածր գումարներով։ Նախատեսված 593.9 մլն դրամի դիմաց կատարվել են 306.3 մլն դրամի ծախսեր։ Բացի այդ, հետաձգվել են նախատեսված որոշ նախագծահետազոտական ծախսեր, որոնց գծով նախատեսված 75.1 մլն դրամի դիմաց կատարվել են 39.2 մլն դրամի ծախսեր։ Ծրագրի նպատակն է մեծացնել մաքուր, արդյունավետ, ապահով և մատչելի ջեռուցման տեխնոլոգիաների օգտագործումը քաղաքային դպրոցներում և բազմաբնակարան շենքերում։ Ծրագրի շրջանակներում աշխատանքներ են իրականացվել հետևյալ 4 քաղադրիչների գծով՝ «Արյունավետ ու ապահով ջեռուցման ծառայությունների մատուցման համար նպաստավոր միջավայրի ստեղծում», «Բնակելի շենքերի ջեռուցում», «Դպրոցների ջեռուցում», «Աջակցություն ծրագրի իրականացմանը (ապրանքների, աշխատանքների և խորհրդատվական ծառայությունների տրամադրման միջոցով)»։ Հաշվետու տարվա ընթացքում իրականացվել են անապահով ընտանիքների բնակարանների գազաֆիլացման (2013 բնակարան), նախագծահետազոտական, վառարանների տեղադրման, 11 դպրոցների՝ գազի վրա հիմնված ջեռուցման համակարգերի վերականգնման, խորհրդատվության աշխատանքներ։

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Վերականգնվող Էներգետիկայի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված 360.2 մլն դրամի դիմաց ծախսվել է շուրջ 165.1 մլն դրամ, որից 145.1 մլն դրամը՝ դրամաշնորհային միջոցներից, 19.9 մլն դրամը՝

կառավարության համաֆինանսավորման հաշվին: Վերականգնվող էներգետիկայի դրամաշնորհային ծրագրի 45.8%-ով կատարումը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2010 թվականին տեխնիկական պատճառներով մրցույթների հետաձգման արդյունքում չեն իրականացվել գնումների ծրագրով նախատեսված երկու առաջադրանքներ: Վերականգնվող էներգետիկայի ծրագրի նպատակն է մեծացնել մասնավոր սեփականություն հանդիսացող և մասնավորի կողմից շահագործվող էլեկտրաէներգիայի արտադրության դերը, որն օգտագործում է վերականգնվող էներգիա, ինչպես նաև նվազեցնել ջերմոցային գազերի (ածխածնի երկօքսիդի) արտանետումների ծավալը՝ վերականգնվող էներգետիկայի զարգացմանը խոչընդոտող գործոնների վերացման միջոցով: Ծրագրին իրականացվել է ներդրումային ծրագրերին օժանդակելու, վերականգնվող էներգետիկայի զարգացման և վերականգնվող էներգետիկայի ոլորտում նորմատիվային և կարգավորող դաշտի բարելավման բաղադրիչների միջոցով: Նշենք, որ ծրագրի փակման նախապես սահմանված ժամկետը՝ 2010 թվականի հուլիսի 1-ը երկարաձգվել է մինչև 2011 թվականի ապրիլի 1-ը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Երկրաշերմային էներգիայի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 100.5 մլն դրամ, որից 93.4 մլն դրամը՝ դրամաշնորհային միջոցներից, 7.1 մլն դրամ՝՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրը կատարվել է 80.2%-ով, ինչը պայմանավորված է նրանով, որ ծրագրի առաջին փուլի առաջադրանքների իրականացման արդյունքում անհրաժեշտություն էր առաջացել դրամաշնորհի համաձայնագրում կատարել փոփոխություն՝ կապված երկրորդ փուլի առաջադրանքի փոփոխման հետ, ինչպես նաև երկարաձեռք դրամաշնորհային ծրագրի փակման ամսաթիվը: Այդ գործընթացների հաստատումը ստանալու համար մրցութային գործընթացի մեկնարկը տեղափոխվել է 2011 թվական: Ծրագրի նպատակն է իրականացնել գեղթերմալ տեղանքի հետազոտական բնույթի հորատման աշխատանքների տեխնիկա-տնտեսական հիմնավորման գնահատումը տվյալ առավել հեռանկարային գեղթերմալ տեղանքի համար: Տեղանքի հետախուզական աշխատանքների արդյունքում հնարավոր կիխնի բացահայտել նշված գեղթերմալ տեղանքներում հորատանցքեր հորատելու անհրաժեշտությունը, որոնք ընտրվել էին շարունակական դաշտային հետախուզական աշխատանքների արդյունքում:

Հաշվետու տարում էլեկտրաէներգիայի դասի ծախսերը կազմել են 12.8 մլրդ դրամ՝ 23%-ով գերազանցելով նախատեսված ցուցանիշը, ինչը պայմանավորված է դասում ընդգրկված արտաքին աջակցությամբ իրականացվող երկու վարկային ծրագրերի բարձր կատարողականով:

Ավելի քան 404.9 մլն դրամ են կազմել գործադիր իշխանության, պետական կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) համար օգտագործված միջոցները՝ ապահովելով ծրագրի 99.3%-ը: Միջոցները հատկացվել են ՀՀ

Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության պահպանմանը” Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը 9.1%-ով աճել են՝ պայմանավորված քաղաքացիական ծառայողների թափուր հաստիքային միավորների համալրմամբ:

Ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող էլեկտրահաղորդման գծերի և բաշխիչ ցանցերի վերականգնման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 11.9 մլրդ դրամ, որից 11.7 մլրդ դրամը՝ վարկային միջոցներից, 137.2 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի շրջանակներում ծախսվել են նախատեսվածից 45.6%-ով ավել միջոցներ: Հայաստանի Հանրապետության կառավարության և Միջազգային համագործակցության ճապոնական բանկի (ներկայում՝ Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալություն՝ ՃՄՀԳ) միջև կնքված «Էլեկտրահաղորդման և բաշխիչ համակարգեր» վարկային ծրագրի շրջանակներում Հայաստանում SCADA/կաաի համակարգի առաջին փուլի ներդրման աշխատանքներն ավարտվել են 2010 թվականի հոկտեմբերին: Ամբողջությամբ ավարտվել են 110 կՎ լարման թվով 17 ենթակայանների վերականգնման աշխատանքները: Բարձր կատարողականը պայմանավորված է կապալառուի կողմից նախորդ տարի նախատեսված սարքավորումների ուշ ներկրմամբ և աշխատանքների հետաձգմամբ, ինչպես նաև տարադրամի փոխարժեքի աճով:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրաէներգիայի տեղափոխման սեկտորի վերակառուցման ծրագրի շրջանակներում «Վանաձոր-1» ենթակայանի վերակառուցման համար ՀՀ 2010 թվականի պետական բյուջեից կատարվել են ավելի քան 361.7 մլն դրամի ծախսեր՝ 90.6%-ով գերազանցելով նախատեսվածը: Վերջինս պայմանավորված է ժամկետից շուրջ կատարված աշխատանքների դիմաց վճարումներով: Ծրագրի նպատակն է բարձրացնել էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիությունը, ինչպես նաև ապահովել էլեկտրաէներգիայի անխափան մատակարարում: Ծրագրի շրջանակներում «Ալավերդի-2» ենթակայանի վերակառուցման արդյունքում տնտեսված միջոցների հաշվին 2010 թվականի սեպտեմբերին ամբողջությամբ ավարտվել են «Վանաձոր-1» 110 կՎ ենթակայանի բաց բաշխիչ սարքավորման մասնակի վերակառուցման, ինչպես նաև «Գյումրի», «Լոռի», «Գուգարք1, 2», «Նորադուզ», «Լիճք» օդային գծերի վրա տեղադրված արգելափակիչները և զտիչները նորով փոխարինելու աշխատանքները:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող «Գյումրի-2» ենթակայանի վերականգնման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է 137.9 մլն դրամ, որից 128.5 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 9.4 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի 8.5% կատարողականը պայմանավորված է նրանով, որ հաշվետու տարվա չորրորդ եռամյակում պետք է ավարտվեր ծրագրի գլխավոր կապալառուի ընտրության միջազգային

մրցույթի գործընթացը, սակայն դրա ձգձգման պատճառով պլանավորված ժամկետներում ավատվեցին միայն գնահատման փուլերը: Ծրագրի նպատակն է «Գյումրի-2» 220 կՎ Ենթակայանի վերականգնումը: «Գյումրի-2» Ենթակայանն ունի տեղական և տարածաշրջանային ռազմավարական կարևորություն: Ենթակայանի վերականգնման արդյունքում ցանցի կարևոր բաղադրիչի ամբողջական աշխատունակության ճանապարհով կվերացվի 220 կՎ Էլեկտրահաղորդման համակարգի հիմնական թույլ տեղերից մեկը: Վերականգնման արդյունքում կբարձրանա Ենթակայանի, ինչպես նաև Էներգահամակարգի աշխատանքի հուսալիությունը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրամատակարարման հուսալիության և Էներգախնայողության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 32.9 մլն դրամ, որից 27.3 մլն դրամը՝ դրամաշնորհային միջոցներից, 5.6 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագիրը կատարվել է 78.5%-ով, որը պայմանավորված է գնումների պլանով նախատեսված գումարից ցածր արժեքով պայմանագիր կնքելու հանգամանքով, ինչպես նաև ծրագրի ժամկետի երկարաձգմամբ մինչև 2011 թվականի ապրիլի 1-ը: Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրամատակարարման հուսալիության և Էներգախնայողության դրամաշնորհային ծրագիրը ՀՀ կառավարության կողմից հաստատվել է 2010 թվականի ապրիլի 15-ին: Ծրագիրը ներառում է ինստիտուցիոնալ հենքի ամրապնդում և իրականացման լուծումների մշակում, կատարողականների ցուցանիշների և մոնիթորինգի մեխանիզմների մշակում, հանրային շենքերի ընտրություն և առաջին տարվա Էներգախնայողության ներդրումների նախապատրաստում, Էներգախնայողության գործողությունների ծրագրի մշակում: 2010 թվականին կնքվել են պայմանագրեր անհատ խորհրդատունների հետ, ինչպես նաև օժանդակության նպատակով ընտրված հանրային շենքերի համար Էներգետիկ ուսումնասիրության (փորձաքննության), Էներգախնայողության միջոցառումների փաստաթյեթերի պատրաստման վերաբերյալ:

Հաշվետու տարում ոչ Էլեկտրական Էներգիայի ծախսերը կազմել են 34.9 մլն դրամ, որը հատկացվել է ՀՀ նոր միջուկային Էներգաբլոկի (Էներգաբլոկների) շինարարության ծրագրերի իրականացման նպատակով կառավարման ծառայությունների պետական գնմանը՝ ապահովելով 97.2% կատարողական: Ծրագրի շրջանակներում.

- 2010 թվականի մարտի 26-ին ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության և ՌԴ «Ռոսատում» ատոմային Էներգիայի պետական կորպորացիայի միջև ստորագրվել է համաձայնագիր ՀՀ-ում կառուցվելիք նոր միջուկային Էներգաբլոկի «միջուկային կղզակի» սարքավորումների պատրաստման հղորությունների ռեզերվավորման մասին.

- 2010 թվականի օգոստոսի 20-ին ՌԴ և ՀՀ կառավարությունների միջև ստորագրվել է ՀՀ-ում նոր միջուկային Էներգաբլոկի(ների) կառուցման հարցերում համագործակցության մասին միջկառավարական համաձայնագիր.
- ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը սկսել է ՀՀ-ում նոր միջուկային Էներգաբլոկի կառուցման ազդեցությունը շրջակա միջավայրի վրա գնահատման վերջնական հաշվետվության մշակման աշխատանքները.
- ՀՀ բնապահպանության նախարարությունը Անդրսահմանային համատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ԷՍՊՈ) կոնվենցիայի շրջանակներում ԷՍՊՈ քարտուղարություն է ներկայացրել ՀՀ-ում նոր միջուկային Էներգաբլոկի կառուցման ազդեցությունը շրջակա միջավայրի վրա գնահատման վերաբերյալ ծանուցումը՝ ՀՀ հարևան պետություններին տրամադրելու խնդրանքով:
- «ՈւորլիՊարսոնս» ընկերության կողմից մշակվել է «ՀՀ-ում նոր միջուկային Էներգաբլոկի կառուցման բանկի համար ընդունելի տեխնիկատնտեսական հիմնավորում» փաստաթղթի վերջնական ամփոփ տարբերակը:

Հաշվետու տարում ՀՀ պետական բյուջեից 21 մլն դրամ տրամադրվել է լեռնաարդյունահանման, արդյունաբերության և շինարարության խմբի ծախսերին՝ ապահովելով 100% կատարողական:

Նշված գումարից 15 մլն դրամը կազմել են երկրաբանահետախուզական աշխատանքների աջակցման ծառայությունների ծախսերը: Ծրագրի նպատակն է իրականացնել երկրաբանահետախուզական աշխատանքներ, որոնց ցանկը հաստատվում է ՀՀ կառավարության կողմից: Ծրագրի վերջնական արդյունքն է ՀՀ ընդերքի պահպանումը, հաշվառումը և գրանցումը, դրա վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվության տրամադրումը: Ծրագրի շրջանակներում աշխատանքներ են իրականացվել Գեղամա լեռների հյուսիսային և արևմտյան ստորոտներում, ինչպես նաև ՀՀ տարածքի էկոնոմիկ (արտածին) երկրաբանական պրոցեսների (սողանքների) մոնիթորինգի վարման և ՀՀ պինդ օգտակար հանածոների հանքավայրերի և երևակումների վերաբերյալ համակարգչային տեղեկատվական համակարգի ստեղծման ուղղությամբ: Նշենք, որ հաշվետու տարում իրականացվել են նաև ռադիոակտիվ, վտանգավոր քիմիական նյութերի ու թափուների թաղման նպատակով ՀՀ տարածքում ընդերքի տեղամասերի քարտեզագրման աշխատանքներ, որոնց դիմաց 2009 թվականին տրամադրվել է 100% կանխավճար: Այդ հանգամանքով էլ պայմանավորված է 2009 թվականի համեմատ երկրաբանահետախուզական աշխատանքների աջակցման ծառայությունների ծախսերի 90.1%-ով նվազումը:

Հաշվետու տարում 6 մլն դրամ է տրամադրվել ընդերքի մասին տեղեկատվության տրամադրման ծառայությանը: Ծրագրի շրջանակներում իրականացվում են ՀՀ ընդերքի

պահպանման, հաշվառման և գրանցման, դրա վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվության տրամադրման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 3.8%-ով կամ 222 հազար դրամով նվազումը պայամանավորված է Էներգիայի և գրասենյակային ծախսերի կրճատմամբ:

2010 թվականի ընթացքում դրանսպորտի բնագավառի ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 36.7 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի կատարումը 84%-ով: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է ճանապարհային տրանսպորտի բնագավառում ընդգրկված՝ Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման և Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման վարկային ծրագրերի ցածր կատարողականով, ինչպես նաև Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման վարկային ծրագիրը չկատարվելու հանգամանքով: Միևնույն ժամանակ, նախատեսվածից բարձր կատարողական է արձանագրվել Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագրի երկրորդ լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի գծով:

Ճանապարհային դրանսպորտի բնագավառի ծախսերը կազմել են ավելի քան 32.5 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրվածի 82.5%-ը: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 12 ծրագրեր, որոնցից հինգը՝ վարկային և մեկը դրամաշնորհային ծրագրեր են:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ կենսական նշանակության ավտոճանապարհների բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծախսերը կազմել են շուրջ 10.6 մլրդ դրամ, որից 8.2 մլրդ դրամը՝ վարկային միջոցներից, 2.4 մլրդ դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագիրը կատարվել է 86.8%-ով, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ Համաշխարհային բանկի կողմից երկու մրցույթների (Գագարին-Գեղամավան և Մեծամոր-Գյո-Հովտաշատ ճանապարհահատվածներ) արդյունքների վերանայումը ուշ հաստատվելու պատճառով շինարարական պայմանագրերը կնքվել են նախատեսվածից ուշ, և նրանց ավարտը սահմանվել է 2011 թվականը: Ծրագրի շրջանակներում կնքվել է Մ-4 Ծաղկաձոր ճանապարհահատվածի վերանորոգման համար պայմանագրերը, որի ավարտը նույնպես նախատեսված է 2011 թվականին: Բացի այդ, ցածր կատարողականի պատճառ է հանդիսացել նաև փաստացի փոխարժեքի՝ ծրագրվածից ցածր մակարդակը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող կենսական նշանակության ճանապարհների բարելավման երկրորդ լրացուցիչ ֆինանսավորման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 5.3 մլրդ դրամ, որից 4.5 մլրդ դրամը՝ վարկային միջոցներից, 733 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի 44.1%-ով գերազանցումը

պայմանավորված է կատարված աշխատանքների ծավալներով: Օգտագործված միջոցներն ամբողջությամբ կազմել են շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման ծախսերը, որի շրջանակներում 2010 թվականին կնքվել է 33 պայմանագիր, ՀՀ ինը մարզերում վերականգնել են մոտ 143.6 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածներ, և Գյուլագարակ գյուղում իրականացվել է ճանապարհային անվտանգության բարելավման փորձնական նախագիծ: Մնացած բոլոր պայմանագրերով՝ մոտ 130.1 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածների վրա, աշխատանքները գրեթե ավարտված են և ընթանում են շահագործման ընդունման աշխատանքները: Ավարտվել է նախորդ տարի մեկնարկած Ճամբարակ-Վահան 5.7 կմ երկարությամբ ճանապարհի վերականգնումը, իրականացվել են ավելի քան 140 կմ երկարությամբ ճանապարհահատվածների վերականգնման նախագծերի նախապատրաստման աշխատանքներ և շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն, իրականացվել է շինարարական աշխատանքների տեխնիկական առողջիւտ, Հ-46 (Հալիծոր-Տաթև) ճանապարհահատվածի վերականգնման համար նախագծերի և բնապահպանական կառավարման պլանի նախապատրաստում, իրականացվել է ծրագրի ֆինանսական առողջիւտ:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրի շրջանակներում ծախսվել է ավելի քան 4.3 մլրդ դրամ, որից 3 մլրդ դրամը՝ վարկային միջոցներից, 1.3 մլրդ դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ ապահովելով 87.5% կատարողական: Օգտագործված միջոցներից 324.3 մլն դրամը կազմել են ընթացիկ, իսկ 3.9 մլրդ դրամը՝ շենքերի և շինությունների շինարարության ծախսերը: Ծրագրի համեմատաբար ցածր կատարողականը մեծ մասմբ պայմանավորված է շինարարության պայմանագրերի արժեքների նվազեցմամբ, մասամբ էլ՝ 4-րդ եռամյակում արտասահմանյան փորձագետի բացակայության պատճառով: Ծրագրի շրջանակներում նախատեսված շինարարական աշխատանքները կատարվել են ամբողջ ծավալով, վերականգնվել և շահագործման են հանձնվել 89 կմ ընդհանուր երկարությամբ ավտոճանապարհներ ՀՀ Արարատի, Գեղարքունիքի և Կոտայքի մարզերում:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է 562.9 մլն դրամ, որից 474.9 մլն դրամը՝ դրամաշնորհային միջոցներից, 88 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի 13.8% կատարողականը պայմանավորված է Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի մասը կազմող Երևան-Աշտարակ 11,71 կմ երկարությամբ ճանապարհային հատվածի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման մրցույթի արդյունքում հաղթող չճանաչվելու հանգամանքը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող կենսական նշանակության ավտոճանապարհների բարելավման ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 142.3 մլն դրամ, որից 86.4 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 55.9 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի գծով նախատեսված ցուցանիշը կատարվել է 44%-ով, սակայն հարկ է նշել, որ նախատեսված աշխատանքներն ամբողջությամբ իրականացվել են, և 2010 թվականին ծրագիրն ավարտվել է:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի ճանապարհային անվտանգության քարտուղարություն հիմնադրելու դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարվել են 9.7 մլն դրամի ծախսեր՝ կազմելով նախատեսվածի 50.4%-ը: Ծրագրի նպատակն է Հայաստանում ճանապարհային անվտանգության բարելավման նպատակով Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության անվտանգության ազգային խորհրդի քարտուղարության հիմնադրման և գործարկման աջակցությունը: Ցածր կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծրագրի ավարտը սահմանված էր 2010 թվականի օգոստոսի 31-ը, սակայն այն երկարաձգել է մինչև 2011 թվականի մայիսի 31-ը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված շուրջ 2.5 մլրդ դրամի միջոցները չեն օգտագործվել համաձայնագիրը չկնքվելու պատճառով, որի արդյունքում ծրագիրը փակվել է:

Հաշվետու տարում տրանսպորտի բնագավառում ընդգրկված 3 ծրագրերի գծով արձանագրվել է 100% կատարողական: Մասնավորապես՝ 2010 թվականին «Համայնքների բյուջեներին նպատակային հատկացումների» սուբյենցիաների տրամադրում» ծրագրի գծով կատարվել են ավելի քան 3.5 մլրդ դրամի ծախսեր: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5.9 անգամ կամ 2.9 մլրդ դրամով, ինչը պայմանավորված է նրանով, որ 2010 թվականին միջոցները հատկացվել են Երևանի բյուջեին, իսկ 2009 թվականին ծրագրի շրջանակներում միջոցները հատկացվել են Հայաստանի վեց մարզերի (Գեղարքունիք, Վայոց Ձոր, Արարատ, Լոռի, Շիրակ, Տավուշ) համայնքներին:

Հաշվետու տարվա պետական բյուջեից ավելի քան 1.3 մլրդ դրամ է տրամադրվել պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգմանը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են միջաշետական, հանրապետական նշանակության և այլ ճանապարհահատվածների հիմնանորոգման և բարեկարգման, ինչպես նաև հեղինակային և տեխնիկական հսկողության աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ կատարված աշխատանքների ծավալները կրճատվել են, ինչի հետ կապված՝ ծախսերը նվազել են 88.4%-ով կամ 10.2 մլրդ դրամով:

«Հազարամյակի մարտահրավեր» համաձայնագրով նախատեսված գյուղական ճանապարհների վերականգնման և դռնոր կազմակերպությունների ֆինանսական աջակցությամբ տրանսպորտի և կապի ոլորտի զարգացման ծրագրի շրջանակներում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության արտաքրութետային միջոցներից տրամադրվել է ավելի քան 274.4 մլն դրամ, որը «Հազարամյակի մարտահրավեր» համաձայնագրի շրջանակներում կնքված պայմանագրերով կատարված աշխատանքների դիմաց վճարման ենթակա գումարներից պահված հետավարտական երաշխիքային գումարն է:

Ավտոճանապարհների պահպանման և շահագործման ծախսերը կազմել են ավելի քան 5.4 մլրդ դրամ՝ ապահովելով նախատեսված ծախսերի 98.6%-ը: Շեղումը պայմանավորված է տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում կատարվել են 3393 կմ երկարությամբ միջային աշխատական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ և ձմեռային պահպանության աշխատանքներ՝ շուրջ 4.8 մլրդ դրամ արժեքով, սպասարկվել են 3 ավտոճանապարհային թունելներ (Պուշկին, Նալբանդ, Դիլիջան) և 5 խոշոր կամուրջներ՝ (Մեղրի, Եղվարդ, Աշտարակ, Ջերմուկ, Մ-3 Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման գ. Զորագետ)՝ 285.8 մլն դրամ արժեքով, կատարվել են նաև ավտոճանապարհների նշագծման աշխատանքներ՝ 270 մլն դրամ արժեքով, ինչպես նաև «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհներ» ՊՈԱԿ-ի կողմից պետական պատվերի ծրագրերի իրականացման համար տրամադրվել է 127 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ ավտոճանապարհների պահպանման և շահագործման ծախսերն աճել են 8.7%-ով կամ 436.5 մլն դրամով, որը պայմանավորված է կատարված աշխատանքների ծավալների ավելացմամբ:

Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանման, ընթացիկ պահպանման և շահագործման նպատակով ՀՀ 2010 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 726.3 մլն դրամ՝ ապահովելով նախատեսված ծախսերի 99.7%-ը: Նշված ծրագրի շրջանակներում ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ պահպանման, շահագործման և ձմեռային պահպանության ուղղություններով աշխատանքներ են կատարվել հանրապետության բոլոր մարզերում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

Հաշվետու տարում տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման ծախսերը կատարվել են 99%-ով՝ կազմելով 344.2 մլն դրամ: Մասնավորապես՝ 11.7 մլն դրամ է հատկացվել միջային աշխատական, 198 մլն դրամ՝ հանրապետական, 128.6 մլն դրամ՝ մարզային նշանակության ավտոճանապարհների տրանսպորտային օբյեկտների վրա կատարված շինարարական աշխատանքներին, 5.9 մլն դրամ՝ տեխնիկական հսկողության աշխատանքներին: Ծրագրի շրջանակներում հիմնանորոգվել են 8 կամուրջներ, որից 1-ը՝ միջային աշխատական, 5-ը՝ հանրապետական և 2-ը՝ տեղական նշանակության ճանապարհների վրա: 2010 թվականին պակասել է հիմնանորոգման ենթակա օբյեկտների քանակը,

ինչի հետ կապված՝ նախորդ տարվա համեմատ տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման ծախսերը նվազել են 17%-ով կամ 70.5 մլն դրամով:

2010 թվականին օդային փրանսպորտի գծով պետական բյուջեի ծախսերում արձանագրվել է 76.2% կատարողական՝ կազմելով 396.1 մլն դրամ: Շեղումը հիմնականում առաջացել է ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության արտաքրության միջոցներով իրականացվող պետական, տարածքային հանրապետական մարմինների պահպանման ծախսերի գծով, որոնք 31.6%-ով զիջել են ծրագիրը՝ կազմելով 259 մլն դրամ: Շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ նշված միջոցների հաշվին նախատեսվել էին անհատ անձանց և կազմակերպություններին (հիմնականում մշակույթի բնագավառի ներկայացուցիչներին) բարեգործական նպատակով տրամադրվող օգնություններ, որոնք նախատեսվածից քիչ են կազմել: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 31.4%-ով կամ 61.9 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված դրամաշնորհների և աշխատավարձի ծախսերի ավելացմամբ: Հիմնականում նշվածով պայմանավորված՝ 2009 թվականի համեմատ օդային տրանսպորտի ծախսերն աճել են 25.4%-ով:

Ավելի քան 125.5 մլն դրամ է ծախսվել ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պահպանման համար՝ ապահովելով ծրագրի 96.7%-ը, որը տնտեսումների արդյունք է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5.6%-ով կամ 6.7 մլն դրամով՝ պայմանավորված ծառայությունների և ապրանքների ձեռքբերման ու աշխատավարձի ծախսերի ավելացմամբ:

Մարդասիրական օգնության չվերթներ իրականացնող օդանավերի թոհք-վայրէջքի, օդանավակայանում օդանավերի կանգառի և մատուցված ծառայությունների դիմաց «Արմենիա» միջազգային օդանավակայաններ», «Զվարթնոց հենդիլինգ», «Հայաերոնավիգացիա» և «Ավիաօդերևութարանական» ՓԲԸ-ներին փոխհատուցման ծախսերը կազմել են շուրջ 11.6 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագիրը պետական բյուջեում նախատեսվել է 2010 թվականից:

Հաշվետու տարում խողովակաշարային և այլ փրանսպորտի գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 3.8 մլրդ դրամ՝ 100%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Նշված դասում ընդգրկված երեք ծրագրերը կատարվել են նախատեսված ամբողջ ծավալով:

2010 թվականին 2.3 մլրդ դրամ ուղղվել է Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 27.2%-ով կամ 500 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված 2009 թվականի կառավարության որոշմամբ սահմանված կասեցումներով:

276 մլն դրամի սուբվենցիաներ են տրամադրվել համայնքների բյուջեներին՝ վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայությունների շրջանակներում: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը չեն փոփոխվել:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերականգնման վարկային ծրագրի (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն) շրջանակներում ծախսվել է շուրջ 1.2 մլրդ դրամ:

2010 թվականին կապի ոլորտում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 400 մլն դրամ, որը նախատեսված ամբողջ ծավալով ծախսվել է հեռահաղորդակցության և կապի կանոնակարգման ծառայությունների ձեռքբերման նպատակով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ՀՀ հաճախությունների բաշխումների աղյուսակի կազմման, ռադիոեթերի մոնիթորինգի, ռադիոէլեկտրոնային միջոցների և բարձր հաճախականության սարքավորումների տեղադրման, փորձաքննության և չափումների անցկացման, կապի շինարարական աշխատանքների տեխնիկական նորմերին համապատասխանության ընդունման, եթերի խանգարման աղբյուրների հայտնաբերման և վերացման գործառույթները: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել 16.5%-ով կամ 79 մլն դրամով, որը պայմանավորված է 2010 թվականի ընթացքում ծրագրի ծավալների նվազմամբ:

2010 թվականի ընթացքում այլ բնագավառների խմբի ծախսերը կազմել են շուրջ 907.4 մլն դրամ՝ 2.4%-ով գերազանցելով նախատեսված ցուցանիշը՝ պայմանավորված «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի կատարողականով: Նշված ծրագրի ծախսերի աճով է պայմանավորված նաև նախորդ տարվա համեմատ խմբի ծախսերի 15.1%-ով կամ 119.2 մլն դրամով աճը:

«Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում 2010 թվականին կատարվել են շուրջ 857.4 մլն դրամի ծախսերը՝ ապահովելով 102.5% կատարողական: Ծրագրի տվյալ բաղադրիչի նպատակը ծրագրային գործունեության վերահսկումն ու կառավարումն է: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է լրացուցիչ գրասենյակային տարածքի վարձակալությամբ, թափուր տեղերի համալրման համար նոր աշխատակիցների ներգրավման հետ կապված ծախսերի ավելացմամբ, ծրագրի վերաբերյալ հանրության իրազեկման միջոցառումների ավելի մեծ ծավալի և, համապատասխանաբար, ավելի մեծ ծախսերի իրականացմամբ և այլն:

Հաշվետու տարում գրոսաշրջության ոլորտի ծախսերը կազմել են 50 մլն դրամ, որը նախատեսված ամբողջ ծավալով ծախսվել է գրոսաշրջության աջակցության ծառայությունների իրականացման համար: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Հայաստանի գրոսաշրջային արդյունքը ներկայացնող գովազդատեղեկատվական նյութերի պատրաստում և տարածում, օտարերկրյա լրագրողների և գրոսաշրջային օպերատորների Հայաստան ճանաչողական այցերի

կազմակերպում, ծրագրային միջոցառումների համար աշխատակազմի վարձատրություն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 37.5%-ով կամ 30 մլն դրամով, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցառումների մի մասն իրականացվել է «Պետական աջակցություն «Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամ»-ի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը» ծրագրով:

2010 թվականի ընթացքում դրա դրույթունների գծով հեղազուրական և նախագծային աշխաղանքների շրջանակներում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 110 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Խմբում ընդգրկված են 3 ծրագրեր:

Տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայություններին հաշվետու տարում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 50 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրին իրականացվում է «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, որի գործունեությունն ուղղված է «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով տեխնածին վթարների կանխարգելմանը, դրանց հետևանքների վերացմանը, նման վթարների հետևանքով հասարակությանը և տնտեսությանը հասցվող վնասների ռիսկի նվազեցմանը, ինչպես նաև բնակչության և շրջակա միջավայրի պաշտպանությանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 4.5%-ով կամ 2.3 մլն դրամով:

Հաշվետու տարում Սևանա լճի առափնյա տարածքների ծրագրային փաստաթղթերի մշակման ծախսերը կազմել են շուրջ 10 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 99.9%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 28.6%-ով կամ 4 մլն դրամով, որը պայմանավորված է հաշվետու տարվա պետական բյուջեում հատկացումների կրճատմամբ:

2010 թվականի ընթացքում «Գնագոյացման և ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ում ամբողջ ծավալով կատարվել են նախատեսված 50 մլն դրամի ներդրումները: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 4.1%-ով կամ 2 մլն դրամով:

2010 թվականին այլ դասերին չպարկանող դրա դրույթունների գծով փաստացի ցուցանիշը կազմել է 4.1 մլրդ դրամ՝ 92.6%-ով ապահովելով նախատեսվածը: Մասնավորապես՝ խմբում ընդգրկված ծրագրերի գծով կատարվել են շուրջ 4.7 մլրդ դրամի ծախսեր, իսկ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացվել է 564.5 մլն դրամ:

Հաշվետու տարում տվյալ խմբում կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 13 ծրագրեր, որոնցից երեքը Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերն են: Մասնավորապես՝ Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է 971 մլն դրամ, որից 733.8 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 237.2 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 12.3%-ով գերազանցելով

նախատեսվածը: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է նրանով, կատարվել են նախատեսվածից ավել շինարարական աշխատանքներ, բացի այդ, մշակույթի կենտրոնների համար դահլիճային բազկաթոռների գնումը ծրագրով նախատեսված չէ: Ծրագրի շրջանակներում ավարտվել են շինարարական աշխատանքները 17 օբյեկտներում, շինարարական աշխատանքներ են իրականացվել նաև 8 այլ օբյեկտներում, մշակույթի կենտրոնների համար գնվել են դահլիճային բազկաթոռներ, ծրագրի իրականացման գրասենյակի համար՝ կահույք և սարքավորումներ, ֆինանսավորվել են գրասենյակի գործառնական ծախսերը, ավարտվել է տեղական իշխանությունների ֆինանսական ուսուցման մեկ պայմանագիր:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ վարկային ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման շրջանակներում ծախսվել է 1.2 մլրդ դրամ, որից 1.1 մլրդ դրամը՝ վարկային միջոցներից, 167.9 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Նշված ծախսերը 22.4%-ով գերազանցել են նախատեսված ծավալը: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է նրանով, որ շինարարական աշխատանքներ են կատարվել և ավարտվել 36 օբյեկտներում՝ նախատեսված 30-ի դիմաց, շինարարական աշխատանքներ են կատարվել նաև 4 այլ օբյեկտներում (որոնց ավարտը նախատեսված է 2011 թվականին) և դպրոցական կահույքի պահանջարկը նախատեսվածից ավելի շատ էր:

Նշված վարկային ծրագրի երկրորդ լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում կատարվել են շուրջ 394.1 մլն դրամի ծախսեր, որից 339.8 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 54.3 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Նախատեսված ցուցանիշը կատարվել է 83.6%-ով: Ծրագրի ցածր կատարողականը պայմանավորված է դպրոցական կահույք չգնելու հանգամանքով՝ կապված ծրագրի ուշ մեկնարկի հետ (ծրագիրը նախատեսված էր մեկնարկել հունիսին, սակայն մեկնարկել է օգոստոսին), ինչպես նաև դպրոցական կահույքի մատակարարումը 2011 թվական տեղափոխելու հանգամանքով: Ծրագրի շրջանակներում ավարտվել են շինարարական աշխատանքները 3 օբյեկտներում, շինարարական աշխատանքներ են կատարվել նաև 9 օբյեկտներում, որոնց ավարտը նախատեսված է 2011 թվականին:

100% կատարողական է ապահովել «Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայության» ծրագիրը, որի շրջանակներում ծախսվել է ավելի քան 178.2 մլն դրամ՝ 24.1%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Վերջինս պայմանավորված է Արարատի մարզում նոր հակակարկուային կայանների տեղադրմամբ:

Շուրջ 339.2 մլն դրամ են կազմել գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերը՝ 98.6%-ով ապահովելով ծրագրի

կատարումը: Շեղումը պայմանավորված է տնտեսումներով: Միջոցները հատկացվել են ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի պահպանմանը: Նշված ծախսերը 2009 թվականի համեմատ ավելացել են 10.8%-ով կամ 33.1 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձի ծախսերի աճով:

Պետական ռեգերվների գործակալության համակարգի հիմնարկների պահպանման և նյութական ռեսուրսների ՀՀ պետական պահուստի ձևավորման ու պահպանման ծախսերը համապատասխանաբար կազմել են 70.1 մլն և 86 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի կատարումը 97.7%-ով և 97.2%-ով:

Պետական պահուստից նյութական արժեքների թարմացման, փոխարինման, փոխառման և ապամրագրման գործառնությունների գծով 2010 թվականին ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացվել են 21.5 մլն դրամ արտարյուջետային միջոցներ (նախատեսված 12 մլն դրամի դիմաց), որոնցից օգտագործվել է 7.3 մլն դրամը (նախատեսված 14.8 մլն դրամի դիմաց):

Ծախսերի այս խմբում ներառվել են «ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն կատարված հատկացումները: ՀՀ պետական բյուջեից առանց սահմանափակման իրականացվել են ավելի քան 1.4 մլրդ դրամի ծախսեր: Նշված գումարից 903.9 մլն դրամը կազմում են պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում պետական մասնակցության նվազեցման ճանապարհով ակտիվների կազմից գույք առանձնացնելիս գույքն ստացող պետական կառավարչական հիմնարկի կողմից մատակարարին վճարման ենթակա ԱԱՀ-ի պարտավորության կատարման գծով ծախսերը, 411.3 մլն դրամը՝ ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դատարան տրվող հայցադիմումների, դիմումների և գանգատների, դատարանների վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ բողոքների, ինչպես նաև դատարանի կողմից տրված փաստաթղթերի պատճենների տրամադրման ծախսերը, 93 մլն դրամը՝ ՀՀ հարկային և մաքսային մարմինների կողմից պետական կառավարման մարմիններում և պետական հիմնարկներում օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված ստուգումների և վերստուգումների արդյունքում առաջացած լրացուցիչ հարկային և մաքսային պարտավորությունների մարման համար անհրաժեշտ վճարումները:

### **Շրջակա միջավայրի պաշտպանություն**

2010 թվականի ընթացքում շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառում պետական բյուջեի ծախսերը կազմել են ավելի քան 4.9 մլրդ դրամ կամ ծրագրով նախատեսվածի 78.4%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎՀԵԲ) աջակցությամբ իրականացվող Սևանա լճի և Գերմանիայի զագացման վարկերի բանկի

աջակցությամբ իրականացվող Հարավային Կովկասի տարածաշրջանում բնապահպանական դրամաշնորհային ծրագրերի ցածր կատարողականով: 2009 թվականի համեմատ շրջակա միջավայրի պաշտպանության ծախսերն աճել են 25.9%-ով կամ 1 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցության ավելացմամբ:

Հաշվետու տարում ռադիոակտիվ թափոնների վնասազերծման ծառայությունների գծով նախատեսված 29 մլն դրամն օգտագործվել է ամբողջությամբ: Ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների նպատակն է միջուկային և ճառագայթային անվտանգության նորմերի ու կանոնների պահպանմամբ ռադիոակտիվ թափոնների կենտրոնացված փոխադրումը, ուսումնասիրումը, տեղափոխումը, վնասազերծումը, պահպանումը և թաղումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 6.4%-ով, որը պայմանավորված է աշխատավարձի բարձրացմամբ:

2010 թվականին օդի աղբուրման դեմ պայքարի ուղղությամբ կատարված ծախսերը կազմել են 119.1 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Հատկացված գումարից 7 մլն դրամը տրամադրվել է «Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ-ին: Վերջինիս կողմից իրականացվել են ՀՀ տարածքում 2008-2009 թվականներին առաջացած թափոնների վերաբերյալ մոտ 1100 վարչական վիճակագրական հաշվետվությունների ուսումնասիրում- վերլուծություն, թափոնների գոյացման, վերամշակման ու օգտագործման օբյեկտների ուսումնասիրում, թափոնների ու դրանց օգտագործման, վնասազերծման տեխնոլոգիաների վերաբերյալ տվյալների հավաքում, ուսումնասիրում և վերլուծություն, մաքուր տեխնոլոգիաների հայեցակարգի մշակում, շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա վտանգավոր քիմիական նյութերի և թափոնների անբարենպաստ ազդեցության ռիսկի գնահատման մեթոդաբանության մշակում: Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի ծախսերը փոփոխություն չեն կրել:

Զրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիթորինգի իրականացման նպատակով պետական աջակցության շրջանակներում նախատեսված 112 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի ծախսերը փոփոխություն չեն կրել:

2009 թվականի համեմատ օդի աղտոտման դեմ պայքարի ծախսերը նվազել են 32.4%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ նախորդ տարի տվյալ դասում, բացի վերոհիշյալ երկու ծրագրից, ֆինանսավորվել էին ևս երեք ծրագրեր՝ 57 մլն դրամ ընդհանուր գումարով:

Կենսաբազմազանության և բնության պաշտպանության ծրագրերին ուղղվել է 3.6 մլրդ դրամ՝ 85.3%-ով կատարելով տարեկան ծրագիրը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՎՀԵԲ աջակցությամբ իրականացվող՝ Սևանա լճի բնապահպանական դրամաշնորհային ծրագրի ցածր կատարողականով: Միևնույն ժամանակ, Սևանա լճի բնապահպանական վարկային ծրագրի գծով

արձանագրվել է նախատեսված ծավալի 28.3%-ով գերազանցում, իսկ նախորդ տարվա համեմատ՝ 4.2 անգամ աճ, ինչի արդյունքում կենսաբազմազանության և բնության պաշտպանության խմբի ծախսերում արձանագրվել է աճ 2.2 անգամ:

2010 թվականին ծկան պաշարների համալրման գծով պետական պատվերի ծախսերը կատարվել են ողջ ծավալով՝ կազմելով 28.8 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ ծրագրի ֆինանսավորման 49.7%-ով անկումը պայմանավորված է նրանով, որ 2010 թվականի ծրագրով նախատեսված էր գնել 3 գրամ քաշով 240 000 հատ Գեղարքունի ծկնատեսակ, որի գնման համար 7 անգամ հայտարարվել է մրցույթ, սակայն դրանք չեն կայացել՝ մասնակից չինելու պատճառով: Ելնելով վերոգրյալից, ծրագիրը վերանայվել է և ՀՀ կառավարության որոշմամբ 31.2 մլն դրամը հատկացվել է Սևանա լճի ջրածածկ անտառոտնկարկների մաքրման ծառայություններին՝ հատուկ բազմաֆունկցիոնալ էքսկավատորի գնման և շահագործման ծախսերը ֆինանսավորելու նպատակով: Արդյունքում Սևանա լճի ջրածածկ անտառոտնկարկների մաքրման աշխատանքների ուղղությամբ կատարված ծախսերն աճել են 12.4%-ով՝ կազմելով 288.7 մլն դրամ և ամբողջությամբ ապահովելով ծրագրային հատկացումները: Ծրագրի շրջանակներում «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից ընդհանուր առմամբ 2010 թվականին մաքրվել են 174 հա ջրածածկ տարածքներ:

Սևանա լճում և նրա ջրհավաք ավագանում ծկան և խեցգետնի պաշարների հաշվառման ծախսերը կազմել են 7.4 մլն դրամ՝ արձանագրելով 97.9% կատարողական: Ծրագրի շրջանակներում Սևանա լճում կատարվել են հիդրոակուստիկ դիտարկումներ ծկների տարածական տեղաբաշխման, խտության, պաշարների գնահատման ուղղությամբ: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն ավելացել են երկու անգամ՝ կապված հաշվառման աշխատանքների շրջանակների ընդլայնման և ծավալի ավելացման հետ:

2010 թվականին «Սևան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառատնտեսական աշխատանքների իրականացման համար նախատեսված շուրջ 177.4 մլն դրամ պետական աջակցությունն ամբողջությամբ տրամադրվել է: Ծրագրի շրջանակներում իրականացվել են «Սևան» ազգային պարկի պահպանությանը և տարածքների արդյունավետ օգտագործմանը նպատակառուղյան միջոցառումներ և ծրագրեր, մասնավորապես՝ ազգային պարկի տարածքում 6 հա-ի վրա կատարվել է անտառի տնկում: Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի ծախսերը փոփոխություն չեն կրել:

«Դիլիջան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառատնտեսական աշխատանքների իրականացման համար պետական բյուջեով նախատեսված 76.6 մլն դրամ պետական աջակցությունը նույնպես ամբողջությամբ տրամադրվել է: Ծրագրի շրջանակներում իրականացվել են «Դիլիջան» ազգային պարկի պահպանությանը և տարածքների արդյունավետ օգտագործմանը նպատակառուղյան, ինչպես նաև գիտական

ուսումնասիրությունների գծով համապատասխան միջոցառումներ և ծրագրեր: Ազգային պարկում կատարվել են 10 հա անտառի տնկում, 7.5 հա անտառի ցանքս, 5 հա անտառի լրացում, 70 հա անտառի խնամք, 2.2 տ անտառային սերմերի մթերում և այլ ծրագրային աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի ծախսերը փոփոխություն չեն կրել:

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո գտնվող բնության հատուկ պահպանվող (ԲՀՊ) տարածքների պահպանության, ԲՀՊ տարածքներում գիտական ուսումնասիրությունների, անտառատնտեսական աշխատանքների իրականացման համար հատկացվել է 74.1 մլն դրամ պետական աջակցություն, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է: Հաշվետու տարում իրականացվել են «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի պահպանությանը և տարածքների արդյունավետ օգտագործմանը նպատակաուղղված, ինչպես նաև գիտական ուսումնասիրությունների գծով համապատասխան միջոցառումներ և ծրագրեր: «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինման ներքո գտնվող ԲՀՊ տարածքներում կատարվել են ծրագրային աշխատանքներ, այդ թվում՝ «Էրեբունի» պետական արգելոցի և «Որդան կարմիր» պետական արգելավայրի, «Զրվեժ» անտառպարկի և 4 դենդրոպարկերի տարածքներում պահպանության, անտառատնտեսական և գիտահետազոտական աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի ծախսերը փոփոխություն չեն կրել:

«Շիկահող» պետական արգելոցի, «Սոսիների պուրակ» ու «Զանգեզուր» պետական արգելավայրերի պահպանության, գիտական ուսումնասիրությունների անտառատնտեսական աշխատանքների կատարման նպատակով նախատեսված 50 մլն դրամ պետական աջակցության ծախսերն ամբողջությամբ կատարվել են: «Շիկահող» պետական արգելոցում և «Զանգեզուր» պետական արգելավայրում 2010 թվականին իրականացվել են պահպանության աշխատանքներ, այդ թվում՝ հրդեհավտանգ տեղամասերում և հատվածներում իրականացվել են հակահրդեհային ճանապարհների շինարարության և ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, իսկ «Սոսու պուրակ» պետական արգելավայրում՝ 44 հա անտառկուլտուրաների միանվագ խնամք, 10 հա անտառկուլտուրաների լրացում, 5 հազար հատ տնկանյութի աճեցում, 20 հա տնկիների խնամք վերականգնվող տարածքում և այլ ծրագրային աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 43.8%-ով: Հատկացումների աճը կապված է «Զանգեզուր» պետական արգելավայրի հաշվառման աշխատանքների շրջանակների ընդլայնման և ծավալի ավելացման հետ:

«Խոսրովի անտառ» պետական արգելոցի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների իրականացման նպատակով հատկացվել է 77.5 մլն դրամ պետական աջակցություն՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Հաշվետու տարում «Խոսրովի անտառ» պետարգելոցի 23360 հա-ի վրա իրականացվել են պետական պատվերով նախատեսված պետարգելոցի պահպանության, արգելոցում գիտական ուսումնասիրությունների գծով

համապատասխան միջոցառումներ և ծրագրեր: «Խոսրովի անտառ» պետական արգելոցում հրդեհավտանգ ժամանակահատվածում կառուցվել (վերանորոգվել) են հակահրդեհային նշանակության 18 կմ ճանապարհներ, պետական արգելոցում և պետական արգելավայրերում էկոտուրիզմի զարգացման նպատակով մշակվել և իրականացվել են համապատասխան ծրագրեր: Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի ծախսերը փոփոխություն չեն կրել:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Սևանա լճի բնապահպանական վարկային ծրագրի գծով իրականացվել են 2.5 մլրդ դրամի աշխատանքներ, որից 2.1 մլրդ դրամը հատկացվել է վարկային միջոցներից, 419.9 մլն դրամը՝ ՀՀ կառավարության կողմից: Նշված ծախսերը 28.3%-ով գերազանցել են ծրագրված մակարդակը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ աշխատանքները կատարվել են նախատեսվածից շուտ: Վարկային համաձայնագրի հիման վրա շարունակվել են Գավառ, Վարդենիս, Մարտունի, Զերմուկ և Սևան քաղաքների կոյուղու ցանցերի վերանորոգման, ինչպես նաև Գավառ, Վարդենիս, Մարտունի քաղաքներում կոյուղու մաքրման կայանի կառուցման աշխատանքները, որոնք կրում են շարունակական բնույթ: Ծրագրի սկզբից իրականացվել են Գավառի՝ 5364.3 մ երկարությամբ կոյուղու ցանցերի, Մարտունու՝ 4602.9 մ ցանցերի, Վարդենիսի՝ 2816 մ ցանցերի, Սևանի՝ 5378 մ ցանցերի, Զերմուկի՝ 2978մ ցանցերի վերանորոգման, ինչպես նաև Գավառի, Մարտունու, Վարդենիսի կոյուղու մաքրման կայանի կառուցման աշխատանքները: 2009 թվականի համեմատ Սևանա լճի բնապահպանական վարկային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերն ավելացել են 4.2 անգամ՝ պայմանավորված շինարարական աշխատանքների ծավալների ավելացմամբ:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Սևանա լճի բնապահպանական դրամաշնորհային ծրագրի գծով իրականացվել են 77.8 մլն դրամի ծախսեր՝ կազմելով նախատեսվածի 6.8%-ը: Ցածր կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ Սևանա լճի բնապահպանական վարկային և դրամաշնորհային ծրագրերը սերտորեն կապված են միմյանց հետ, և դրամաշնորհային միջոցների մասհանումը կկատարվի վարկային միջոցների ծախսերը կատարելուց հետո:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Ինժեներիա, նախագծում և պայմանագրերի վերահսկողություն» դրամաշնորհային ծրագրի գծով իրականացվել են 172.5 մլն դրամի ծախսեր՝ կազմելով նախատեսվածի 78.4%-ը: Ծրագրի շրջանակներում «Ֆիխտներ» խորհրդատվական ընկերության կողմից մատուցվում է տեխնիկական աջակցություն խորհրդատվական ծառայության տեսքով: Ցածր կատարողականը պայմանավորված է փաստացի աշխատանքների ծավալներով:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Հանրային մասնավոր համագործակցություն» դրամաշնորհային ծրագրի ծախսերը կազմել են 2 մլն

դրամ կամ նախատեսվածի 2.8%-ը: Գումարը հատկացվել է ՀՀ կառավարության կողմից՝ որպես համաֆինանսավորում: Ծրագրի շրջանակներում «Ավագ Սույուշն» խորհրդատվական ընկերության կողմից մատուցվում է տեխնիկական աջակցություն խորհրդատվական ծառայության տեսքով: Ցածր կատարողականը պայմանավորված է փաստացի կատարված աշխատանքներով:

«Արփի լիճ» ազգային պարկի պահպանության ծառայություններին հատկացվել է 3.9 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: 2010 թվականին ծրագիրը պետական բյուջեից ֆինանսավորվել է առաջին անգամ:

Բնապահպանական ծրագրերի մշակման և իրականացման ծառայություններին հատկացվել է 31.2 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում իրականացվել են «Հայաստանի պահպանվող տարածքների զարգացում» ծրագրի 1-ին բաղադրիչի, «Շիկահող կենսոլորտային գոտու ստեղծում» ծրագրի համակարգման և Սևանա լիի ջրածածկ անտառապնդարկների մաքրման աշխատանքներ: 2010 թվականին ծրագիրն իրականացվել է առաջին անգամ:

«Արևիկ» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառապնդական աշխատանքների կատարման ծառայություններին հատկացվել է 22.4 մլն դրամ, որն ամբողջությամբ իրականացվել է: Ծրագրի շրջանակներում 34401.8 հա տարածքի վրա իրականացվել են բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության պահպանության, ինչպես նաև «Կլիմայի փոփոխության հետևանքների նկատմամբ Հայաստանի լեռնանտառային էկոհամակարգերի հարմարվողականության բարձրացում» ծրագրի շրջանակներում ազգային պարկի Նյուվադի-Շվանիձոր տեղամասում վնասատուներով վարակված և հրդեհված անտառային տարածքի (կաղնուտի) 18 հա տարածքում անտառվերականգնման աշխատանքներ: 2010 թվականին ծրագիրն իրականացվել է առաջին անգամ:

Շրջակա միջավայրի պաշտպանության (այլ դասերին չպատկանող) խմբի ծախսերը հաշվետու տարում կազմել են շուրջ 1.2 մլրդ դրամ կամ ծրագրվածի 61.4%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Հարավային Կովկասի տարածաշրջանում բնապահպանական դրամաշնորհային ծրագրի ցածր կատարողականով: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը նվազել են 43%-ով՝ հիմնականում պայմանավորված 2009 թվականի պետական բյուջեից ֆինանսավորված 15 ծրագրեր 2010 թվականին չնախատեսելու հանգամանքով:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերը կազմել են 777.9 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 98.6%-ը: Միջոցները հատկացվել են ՀՀ

բնապահպանության նախարարության պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Զրային պետական կադաստրի տեխնիկական իրականացման ծրագրով նախատեսված 18.8 մլն դրամի ծախսերը կատարվել են 99%-ով: Զրային պետական կադաստրի տեխնիկական իրականացման միջնաժամկետ ծրագրի շրջանակներում իրականացվել է զրային ռեսուրսների գետավազանների կողավորման համակարգի մշակումը և ներդրումը: Գետերի կողավորման տվյալների ինտեգրումը տվյալների բազային հնարավորություն է ընձեռում զրային ռեսուրսների, դրանց ջրահավաք ավազանների, ենթավազանների առանձնահատկությունների գնահատման համար՝ էապես հեշտացնելով տվյալների վերլուծության, ստուգման և տեղեկատվության տրամադրման հնարավորությունը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 9.7%-ով, որը հիմնականում պայմանավորված է նախատեսված աշխատանքների բովանդակության և ծավալների փոփոխությամբ:

Բնապահպանական ոլորտի գծով վերլուծական տեղեկատվական աշխատանքների, համակարգչային ցանցի սպասարկման և զարգացման իրականացման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 16.9 մլն դրամ պետական աջակցություն՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում իրականացվել է «Հնապահպանության նախարարության տեղային համակարգչային ցանցի և առկա համակարգչային տեխնիկայի ծրագրային ու տեխնիկական սպասարկումը և վերանորոգումը: Ապահովվել է բնապահպանական պաշտոնական ինտերնետային կայքի անխափան գործունեությունը, որը ներկայացված է երեք լեզվով: Բնապահպանական տեղեկատվությունը տրամադրվել է ըստ պահանջի և ինտերնետային կայքերի միջոցով: Տեղեկատվությունը տրամադրվում է նաև «Բնապահպանական տեղեկատվության հասարակական Օրիու կենտրոն»-ի միջոցով, որի գործունեությունը, տեխնիկայի սպասարկումը և կատարվում է կենտրոնի ուժերով: 2010 թվականին Օրիու կենտրոնում և կենտրոնի նախաձեռնությամբ անցկացվել են 15 տեղեկատվության մատչելիության հանդիպում, 17 էկոկրթությանը նպաստող միջոցառում, 7 էկոլոգիական օրերի նշում, 13 հանրային քննարկում և 3 հասարակական լսումներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Հայաստանի Հանրապետության տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական մոնիթորինգի ծառայություններին 2010 թվականին «Հնապահպանության բյուջեից հատկացվել է 18.1 մլն դրամ՝ ամբողջությամբ կատարելով ծրագրային ցուցանիշը: Հաշվետու տարում հիդրոերկրաբանական մոնիթորինգի վարման աշխատանքներն իրականացվել են Ախուրյանի, Սևան-Հրազդանի, Արարատյան, Հյուսիսային, Հարավային ավազանային կառավարման տարածքների սահմաններում: Նշված տեղամասերի սահմաններում հորատանցքերի և բնադրյուրների ընտրությունը կատարվել է արխիվային նյութերի հավաքման, մշակման,

վերլուծության, ինչպես նաև դաշտային հետազոտությունների ամփոփման արդյունքում: Մոնիթորինգի վարման համար ելակետային օբյեկտներ են հանդիսացել գոյություն ունեցող հորատանքերը և բնադրյուրները: Մոնիթորինգի վարում իր մեջ ներառում է ստորերկրյա ջրերի մակարդակի, ծախսի, ջերմաստիճանի չափումները և ջրերի քիմիական կազմի որոշումը, այսինքն՝ նրանց քանակական և որակական բնութագրերը: Հաշվետու տարում իրականացվել է ջրերի մակարդակի (ճնշման) 1728 չափում, ջրերի ծախսի 8784 չափում, ջրերի ջերմաստիճանի 4536 չափում, ջրերի լրիվ քիմիական 84 անալիզ: Զրոգտագործման թույլտվությունների տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթեր են կազմվել 161 ջրակետերի համար: Տարվա ընթացքում հիդրոերկրաբանական մշտադիտարկումների պայմանագրեր են կնքվել 44 ծկնաբուժական տնտեսությունների հետ: Բացի նշված աշխատանքներից, պայմանագրային կարգով, շահագործվող հանքային ջրերի թվով 6 հանքավայրերը (Ձերմուկ, Արզնի, Ֆրոլովա-Բալկա, Դիլիջան, Լիճք, Շենաթաղ) շահագործող 10 տնտեսությունների հետ կնքված պայմանագրերով իրականացվել են հիդրոերկրաբանական ռեժիմային դիտարկումներ հանքային ջրերի և ածխաթթու գազի քանակի և որակի նկատմամբ՝ նպատակ ունենալով կանոնակարգելու հանքային ջրերի օգտագործման ռեժիմը, ապահովելու ջրերի արդյունավետ օգտագործումը և պահպանությունը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը մնացել են անփոփոխ:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Հարավային Կովկասի տարածաշրջանում բնապահպանական դրամաշնորհային ծրագրի ծախսերը կազմել են 313 մլն դրամ կամ նախատեսվածի 30.3%-ը, որից 267.7 մլն դրամը կազմել են դրամաշնորհային միջոցները, 45.3 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորումը: Ծրագրի շրջանակներում ավարտվել են ազգային պարկի քարտեզագրման, արտաքին սահմանների և ներքին գործառնական գոտիների սահմանների նկարագրման աշխատանքները, ավարտվել են ազգային պարկի գրասենյակի, այցելուների կենտրոնի, իյուրատան, ավտոտնակների և պահակատան շինարարական աշխատանքները, ՀՀ բնապահպանության նախարարության և Գերմանիայի KfW բանկի կողմից հաստատվել են «Արփի լիճ» ազգային պարկի պահպանման գոտու համայնքների զարգացման առաջնահերթ փոքր ծրագրերը: Ցածր կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծրագրի կատարումը երկարաձգվել է մինչև 2011թվականի ավարտը:

«Բնապահպանական նպատակային ֆոնդ» ծրագրի շրջանակներում կատարվել են 17.5 մլն դրամի ծախսեր՝ կազմելով նախատեսվածի 100%-ը: Ծրագրու ֆինանսավորվել է ՀՀ բնապահպանության նախարարության արտաքյուցետային միջոցների հաշվին: Ծրագրի շրջանակներում 2010 թվականին օգտագործված գումարները բաշխվել են հետևյալ ուղղություններով՝

- Կարմիր գրքի հրատարակում,

- Կառավարական 3-րդ շենքի 5-րդ հարկի գրադեցրած տարածքի միջանցքի վերանորոգման աշխատանքներ,
- Վերանորոգման աշխատանքների համար հատուկ նյութերի ձեռքբերում,
- «Կովկասի տարածաշրջանային բնապականական կենտրոն» հայաստանյան մասնաճյուղի գրասենյակի տարածքի վարձակալության ծառայություններ,
- Անտառվերականգման աշխատանքներ:

### **Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ**

2010 թվականին բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների բնագավառին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 42.8 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 88.1%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Շիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման դրամաշնորհային ծրագիրը և Ֆրանսիայի հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրին տրամադրվող տեխնիկական աջակցության վարկային ծրագիրը չկատարելու հանգամանքով: Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների բաժնի ծախսերը 102.9%-ով գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված բնակարանային շինարարության ծախսերի աճով:

2010 թվականին բնակարանային շինարարության ոլորտին տրամադրվել է շուրջ 25.3 մլրդ դրամ՝ ամբողջությամբ կատարելով ծրագիրը: 2009 թվականի համեմատ տվյալ ծախսերն աճել են 9 անգամ կամ 22.4 մլրդ դրամով:

Գումարի գգալի մասը՝ շուրջ 25.1 մլրդ դրամ, կազմել են բնակարանային շինարարության ծախսերը: Ծրագրի նպատակն էր երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման համար պետական աջակցությունը «Գլենիել Հիլ» ՓԲԸ կողմից 2010 թվականին իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում: Ծրագրի շրջանակներում կառուցվել է 1579 բնակելի տուն, որից 1056-ը՝ Գյումրի քաղաքում, 220-ը՝ Սպիտակում, 303-ը՝ գյուղական բնակավայրերում:

Անավարտ շինարարության բնակշինարարական կոռուպտատիվների փայատերերի ներդրած միջոցների դիմաց պետական օգնության նպատակով նախատեսված 200 մլն դրամն ամբողջությամբ տրամադրվել է: Նախորդ տարվա համեմատ ծրագրի ծախսերը նվազել են 63%-ով:

Բաժնի ծախսերի 36.1%-ն ուղղվել է ջրամատակարարման խմբի ծրագրերի ֆինանսավորմանը: Նշված ծախսերը կազմել են ավելի քան 15.4 մլրդ դրամ կամ տարեկան ծրագրի 72.7%-ը, որը

հիմնականում պայմանավորված է Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Շիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման դրամաշնորհային ծրագրի և Ֆրանսիայի հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրին տրամադրվող տեխնիկական աջակցության վարկային ծրագիրը չկատարելու հանգամանքով:

Հաշվետու տարում գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը կազմել են 122.1 մլն դրամ՝ 98.9%-ով կատարելով ծրագիրը: Միջոցները հատկացվել են ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի պահպանմանը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերը գրեթե փոփոխության չեն ենթարկվել:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 5.9 մլրդ դրամ կամ նախատեսվածի 85.6%-ը: Շեղումը պայմանավորված է կատարված փաստացի աշխատանքներով: Ծրագիրը բաղկացած է երկու հիմնական բաղադրիչներից՝

- համայնքային ենթակառուցվածքների վերականգնում և բարելավում,
- կառավարման բարելավում և կարողությունների հզորություն:

2010 թվականին ծրագրի շրջանակներում շարունակվել են շենքերի և շինությունների վերանորոգման, Հայաստանի գյուղերում և քաղաքներում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման աշխատանքները: Ծրագրով նախատեսված աշխատանքները կրում են շարունակական բնույթ: 2010 թվականի ընթացքում թվով 21 համայնքներում իրականացվել են 176 կմ բաշխիչ ցանցի ջրագծի և անհատական տնային մուտքագերի ու 6940 հատ անհատական ջրաչափական հանգույցների կառուցում: Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի շրջանակներում կատարված ծախսերն ավելացել են 14.3%-ով, որը պայմանավորված է շինարարական աշխատանքների ծավալների աճով:

Հաշվետու տարում ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվել է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի խմելու ջրի մատակարարման ծառայությունների արդյունքում առաջացող ֆինանսական ճեղքվածքի մարմանն ուղղված սուբսիդավորումը, որի գծով նախատեսված 811.6 մլն դրամն ամբողջությամբ տրամադրվել է: 2009 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 6%-ով՝ պայմանավորված ըստ տարիների նախատեսված սուբսիդիայի կրճատման սցենարի հետ:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Շիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագրի գծով օգտագործվել է ավելի քան 540.9 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 38%-ը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ վճարումները կատարվել են փաստացի աշխատանքների հիման

Վրա: 2010 թվականի ընթացքում շարունակվել են ՀՀ Շիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման աշխատանքները, որոնք կրում են շարունակական բնույթ: Ծրագրի շրջանակներում 2010 թվականին վճարում է իրականացվել խորհրդատվական ծառայությունների դիմաց:

ՀԲ աջակցությամբ իրականացվող՝ Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման վարկային ծրագրի շրջանակներում կատարվել են 2.2 մլրդ դրամի ծախսեր՝ ապահովելով ծրագրված հատկացումների 94.7%-ը: Շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծրագրի շրջանակներում կնքված «Ջրագծերի, կոյուղագծերի, պոմպակայանների և ՕԿՁ-ների շինարարական աշխատանքների վերահսկողության խորհրդատվական ծառայությունների տրամադրման» պայմանագրի ժամկետը երկարաձգվել է մինչև 2011 թվականի դեկտեմբերի 31-ը, և այդ պատճառով վճարումների մի մասը 2010 թվականից տեղափոխվել է 2011 թվական: Բացի այդ, նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին իրականացված շինարարական աշխատանքների կատարողական ակտերը ներկայացվել են 2011 թվականին: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ջրամատակարարման բարելավման, պոմպակայանների վերակառուցման և խմբավորման, ջրատարի տեղադրման և փականային խցերի կառուցման, ջրագծերի վերակառուցման, դիտահորերի վերակառուցման և փոխարինման, Հրազդան գետը թափվող կոյուղագծի՝ 500 մմ դյուկերին միացման, ջրամբարների վերանորոգման և այլ աշխատանքներ:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող՝ ՀՀ Լոռու մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման դրամաշնորհային ծրագրի գծով օգտագործվել է 1.1 մլրդ դրամ՝ 14.9%-ով գերազանցելով ծրագրային ցուցանիշները, որը կապված է կատարված աշխատանքների ծավալների հետ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը ավելացել են 3 անգամ, որը պայմանավորված է կատարված աշխատանքների ծավալներով և ծրագրի ավարտով:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող՝ ՀՀ Շիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման դրամաշնորհային ծրագրի գծով նախատեսված շուրջ 1.5 մլրդ դրամը չի ծախսվել: Դրամաշնորհային գումարներից ֆինանսավորում չի իրականացվել, քանի որ կատարված աշխատանքների համար վճարումներն իրականացվել են վարկային միջոցներից: Ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքները համարվում են վարկային ծրագրի շարունակական մաս: Դրամաշնորհային միջոցների օգտագործումը կսկսվի վարկային միջոցների ավարտից հետո:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագրի շրջանակներում 2010 թվականին կատարվել են ավելի քան 15.8 մլն դրամի ծախսեր, որոնք ապահովել են ծրագրված հատկացումների 75%-ը: Ցածր

կատարողականը պայմանավորված է նրանով, որ ծրագրի ավարտը տեղափոխվել է 2011 թվական։ Ծրագրի շրջանակներում նախատեսված է եղել սկսել և ավարտել շինարարական աշխատանքները ջրային տնտեսության 1 օբյեկտում։

2010 թվականին խմելու ջրի մատակարարման ծառայությունների սուբսիդավորման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 26.1 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով ծրագրված ցուցանիշը։ Հատկացված միջոցներն ուղղվել են «Նոր Ակունք» ՓԲԸ-ի ընթացիկ գործունեության արդյունքում առաջացող ֆինանսական ճեղքվածքի մարմանը։ 2009 թվականի համեմատ տվյալ ծախսերը նվազել են 32.2%-ով՝ կամ 12.4 մլն դրամով՝ պայմանավորված ըստ տարիների նախատեսված սուբսիդիայի կրճատման սցենարով։

Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող՝ Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրին տրամադրվող տեխնիկական աջակցության վարկային և դրամաշնորհային ծրագրերի գծով 2010 թվականի պետական բյուջեի ճշտված ծրագրով նախատեսվել էին համապատասխանաբար 3 մլրդ դրամի և 207.7 մլն դրամի ծախսեր, որոնք, սակայն, չեն կատարվել։ Ծրագրը չի կատարվել ֆրանսիայի Հանրապետության կառավարության և ՀՀ կառավարության միջև պայմանագրային փոփոխությունները չկատարելու հետևանքով։

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Շիրակի, ՀՀ Լոռու և ՀՀ Արմավիրի մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի մասնավոր կառավարման հայեցակարգերի ներդրման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարվել են 765.4 մլն դրամի ծախսեր՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 111.2%-ը։ Ծրագրի գերազանցումը պայմանավորված է նրանով, որ 2009 թվականի տարեվերջին ներկայացված մասհանման հայտի դիմաց վճարումը կատարվել է 2010 թվականի հունվար ամսին։ Գերմանիայի զարգացման վարկերի բանկի և ՀՀ-ի միջև կնքված դրամաշնորհային պայմանագրի պայմաններից է ֆինանսական և տեխնիկական առողջապահության համար առաջարկությունը, որի շրջանակներում 17.07.2010թ. ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության կոմիտեի և «Գրանթ Թորնթոն ԱՄԻՕ» ՍՊԸ-ի միջև կնքվել է ֆինանսական առողջապահության պայմանագիր, իսկ 29.07.2010թ. կոմիտեի և «Ֆիխտներ Վորթեր ընդ թրանսպորտեյշն» ՍՊԸ-ի միջև՝ տեխնիկական առողջապահության պայմանագիր։ Համաձայն կնքված պայմանագրերի՝ 2010 թվականին 2 առողջապահության ընկերություններին Գերմանիայի զարգացման վարկերի բանկի կողմից կատարվել են համապատասխանաբար 10.6 մլն դրամ և 15.4 մլն դրամ գումարի կանխավճարներ։

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում կատարվել են ավելի քան 3.8 մլրդ դրամի ծախսեր՝ 20.8%-ով գերազանցելով նախատեսված ցուցանիշը։ Գերազանցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ աշխատանքները կատարվել են նախատեսվածից շուտ։

2010 թվականին իրականացվել են խորհրդատվական ծառայությունների, շինարարական աշխատանքների և ապրանքների գնումներ և կնքվել են համապատասխան պայմանագրեր (իմնականում մոտ 30%-ի չափով Հրազդան քաղաքի ջրամատակարարման համակարգի բարելավման աշխատանքներ):

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Լոռու և Շիրակի մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում կատարվել են 135.5 մլն դրամի ծախսեր՝ ամբողջովին ապահովելով նախատեսված ծավալը: Ծրագիրն ուժի մեջ է մտել 2010 թվականի սեպտեմբեր ամսից, որը համարվում է Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Լոռու և Շիրակի մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագրի շարունակությունը: 2010 թվականին հատկացված գումարի հաշվին վճարում է կատարվել խորհրդատվական ծառայությունների դիմաց:

2010 թվականին պետական բյուջեի ծախսերի՝ կիողոցների լուսավորման խմբում համայնքների բյուջեներին նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների տրամադրման համար նախատեսված շուրջ 1.7 մլրդ դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Միջոցներն ուղղվել են Երևան քաղաքի բյուջեին:

Այլ դասերին չպատկանող բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների դասում նախատեսված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծրագրի շրջանակներում կատարվել են շուրջ 418.5 մլն դրամի ծախսեր՝ 98.3%-ով ապահովելով տարեկան ծրագրային հատկացումների ծավալը: Միջոցները հատկացվել են ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 3.3%-ով:

### **Առողջապահություն**

ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի ծախսերի 5.9%-ն ուղղվել է առողջապահության ոլորտի ֆինանսավորմանը: Նշված ծախսերը կազմել են ավելի քան 56.1 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 97.4%-ը: Շեղումը իմնականում պայմանավորված է այլ դասերին չպատկանող առողջապահության խմբում նախատեսված՝ ՀՀ առողջապահության նախարարության արտաքրության միջոցներով իրականացվող ծրագրերի ցածր կատարողականով:

Բաժնի ծախսերի 38.2%-ն ուղղվել է հիվանդանոցային ծառայությունների, 35.9%-ը՝ արտահիվանդանոցային ծառայությունների, 6.9%-ը՝ բժշկական ապրանքների, սարքերի և

սարքավորումների ծեռքբերման, 14.1%-ը՝ այլ դասերին չպատկանող առողջապահական ծրագրերի և 4.9%-ը՝ հանրային առողջապահական ծառայությունների ֆինանսավորմանը: 2009 թվականի համեմատ՝ պետական առողջապահական ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Հաշվետու տարում բժշկական ապրանքների, սարքերի և սարքավորումների ծեռքբերման ծախսերը կազմել են շուրջ 3.9 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 89.1% կատարողական: Շեղումը հիմնականում առաջացել է ՀՀ առողջապահության նախարարության արտաբյուջետային միջոցներով իրականացվող՝ ՀՀ-ում տուրերկույզով դեմ պայքարի Ազգային ծրագրի ուժեղացման ծրագրի ցածր կատարողականի արդյունքում:

Ամբողջատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց դեղորայքի տրամադրման նպատակով տրամադրվել է ավելի քան 3.6 մլրդ դրամ՝ 98.6%-ով ապահովելով ծրագիրը: Միջոցներն ուղղվել են սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված ազգաբնակչության համար դեղորայքի ապահովմանը: 2009 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 19.5%-ով, որը պայմանավորված է սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված բնակչության թվաքանակի աճով:

Պետական պահպանության ծառայությանը դեղորայքի տրամադրման նպատակով նախատեսված 1.1 մլն դրամն գրեթե ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Իմունականիսարգելման ազգային ծրագրի ծառայություններին աջակցության շրջանակներում ՀՀ առողջապահության նախարարության արտաբյուջետային միջոցներից ծախսվել է շուրջ 9.3 մլն դրամ՝ նախատեսված 11.5 մլն դրամի դիմաց: 2010 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում կատարվել են ներքոհիշյալ աշխատանքները.

- բուժաշխատողների իրազեկվածությունը դիֆտերիա և պոլիոմելիտ հիվանդությունների դեպքի ստանդարտ բնորոշումների վերաբերյալ բարձրացնելու համար մշակվել և տպագրվել են պաստառներ՝ 2000-ական տպաքանակով.
- Ներքին գործուղման ծախսերն օգտագործվել են մարզերում իմունականիսարգելման գործընթացի ընտրանքային ուսումնասիրությունների իրականացման համար.
- Իմունականիսարգելման ազգային ծրագրի միջոցառումների նախապատրաստման և իրականացման, այդ թվում՝ նաև պատվաստումների շարունակական մոնիթորինգի նպատակով տարվա ընթացքում իրականացվել են մարզերում և Երևան քաղաքում վերահսկողական և առողջապահական կառույցներին աջակցող այցելություններ: Զեռքբերված վառելիքը բաշխվել է նաև ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության փորձագիտական կենտրոններին՝ տարվա ընթացքում մարզերում և Երևան քաղաքում

պլանային պատվաստումների ու կառավարելի վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական հսկողության գործընթացների մոնիթորինգ իրականացնելու համար:

«ՀՀ-ում տուբերկուլյոզի դեմ պայքարի Ազգային ծրագրի ուժեղացում» արտաքյուղետային ծրագրի շրջանակներում կատարվել են 204.2 մլն դրամի ծախսեր՝ կազմելով նախատեսվածի 32.8%-ը: Շեղումը պայմանավորված է կառավարչական ծառայությունների, ինչպես նաև առողջապահական և լաբորատոր նյութերի համար նախատեսված ծախսերի տնտեսմամբ: Ծրագրի շրջանակներում իրականացվել է հիվանդներին սոցիալական աջակցություն, որի արդյունքում հիվանդներին բաժանվել են սննդային և հիգիենիկ փաթեթներ: Ծրագրի շրջանակներում գնվել են լաբորատոր և վարակի վերահսկման պարագաներ: Տուբերկուլյոզի ազգային գրասենյակի կողմից իրականացվել են ստուգայցեր տարածքային ծառայություններ:

2010 թվականի պետական բյուջեից արտահիվանդանոցային ծառայությունների ծեռքբերմանը տրամադրվել է շուրջ 20.2 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 99.6%-ով կատարում: Արտահիվանդանոցային ծառայությունների ծախսերի 38.6%-ը կամ շուրջ 7.8 մլրդ դրամը կազմել են ընդհանուր բնույթի ծառայությունների, 25.4%-ը կամ 5.1 մլրդ դրամը՝ մասնագիտացված բժշկական ծառայությունների, 4%-ը կամ 811.4 մլն դրամը՝ ստոմատոլոգիական և 32%-ը կամ 6.5 մլրդ դրամը՝ պարաբժշկական ծառայությունների ծախսերը:

Արտահիվանդանոցային ծառայությունների խմբում ընդգրկված ընդհանուր բնույթի բժշկական ծառայությունների ծախսերը կատարվել են նախատեսված ամբողջ ծավալով: Միջոցներն ուղղվել են բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայությունների ֆինանսավորմանը: Ծրագրի շրջանակներում տեղամասային թերապևտի, տեղամասային մանկաբույժի, ընտանեկան բժշկի, բուժմանկաբարձական կետերի քույրերի, դպրոցների աշակերտներին սպասարկող քույրերի կողմից բժշկական օգնություն և սպասարկում է իրականացվել հանրապետության ամբողջ ազգաբնակչությանը, ՀՀ կառավարության 23.11.2006թ. N 1717-Ն որոշմամբ հաստատված բնակչության խմբերին անվճար և արտոնյալ պայմաններով տրամադրվել է 1.1 մլրդ դրամ ընդհանուր արժեքով դեղորայք: 2009 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 1.2%-ով կամ 90.9 մլն դրամով:

Բարձր ռիսկի խմբերում ընդգրկված բնակչության մոտ հիվանդությունների հայտնաբերման, առողջության գնահատման և բուժման ծառայությունների համար օգտագործվել է 128 մլն դրամ, որը կատարվել է նախատեսված ամբողջ ծավալով: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է մատուցվել շուրջ 1100 հաշմանդամ երեխաների: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Հեմոռիհալիզի անցկացման ծառայությունների ծեռքբերման ծախսերը 2010 թվականին կազմել են ավելի քան 1.2 մլրդ դրամ՝ ամբողջովին ապահովելով նախատեսված ծավալը: Այս ծրագրով

պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2010 թվականին իրականացվել է 67.7 հազար սեանս՝ 2009 թվականի 66.9 հազար սեանսի դիամց: Ծախսերի աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 1.1% կամ 13.2 մլն դրամ:

Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններին 2010 թվականի պետական բյուջեով հատկացվել է 1.1 մլրդ դրամ, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է: Ծրագրի շրջանակներում նախաձննոյան և հետծննոյան հսկողություն է իրականացվել հանրապետության շուրջ 47 հազար հղիների նկատմամբ՝ նախորդ տարվա 46 հազարի փոխարեն, ինչպես նաև բուժօգնություն են ստացել գինեկոլոգիական հիվանդություններով կանայք: 2009 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 6.3%-ով կամ 65.6 մլն դրամով:

Սպորտային բժշկության և հակադրախնդային հսկողության ծառայություններին տրամադրվել է շուրջ 66.3 մլն դրամ պետական աջակցություն՝ ամբողջովին ապահովելով նախատեսված ծավալը, որն ուղղվել է «Սպորտային բժշկության և հակադրախնդային հսկողության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին: 2009 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 2.3%-ով:

Ներ մասնագիտացված բժշկական օգնության ծառայությունների շրջանակներում հատկացվել է ավելի քան 2.4 մլրդ դրամ՝ 100%-ով կատարելով ծրագրային ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է մատուցվել հանրապետության ամբողջ բնակչությանը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

Շարունակական հսկողություն պահանջող և առանձին հիվանդությունների բուժման ծառայություններին տրամադրվել է շուրջ 141.1 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 99.4% կատարողական: Այս ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2009 թվականի 10.3 հազար հիվանդի դիմաց 2010 թվականին բուժօգնություն է ստացել 9.4 հազար հիվանդ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերը նվազել են 11.3%-ով կամ 17.9 մլն դրամ:

Օրթոդոնտոլոգիական բժշկական օգնության ծառայությունների գծով նախատեսված ծախսերը կատարվել են 95.2%-ով՝ կազմելով շուրջ 8.2 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում 2010 թվականին բուժօգնություն է տրամադրվել 1.4 հազար հիվանդների՝ 2009 թվականի 1.8 հազարի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 31.5%-ով:

Ստոմատոլոգիական ծառայությունների դասում ընդգրկված են 2 ծրագրեր՝ «Ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայություններ» և «Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայություններ», որոնց շրջանակներում օգտագործվել է շուրջ 811.4 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.9%-ը: Մասնավորապես՝ 730.1 մլն դրամ տրամադրվել է ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայությունների ֆինանսավորմանը՝ ապահովելով

ծրագրի 100%-ը: Ծրագրի շրջանակներում բուժօգնության դեպքերի քանակը կազմել է 253.3 հազար՝ նախորդ տարվա 269.8 հազարի դիմաց: Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայությունների ծախսերը կազմել են ավելի քան 81.2 մլն դրամ՝ ապահովելով 99.4% կատարողական: Ծրագրի շրջանակներում հետազոտվել են թվով 67.7 հազար երեխաներ՝ 2009 թվականի 74.2 հազարի դիմաց: Արդյունքում նախորդ տարվա համեմատ ստոմատոլոգիական ծառայությունների գծով բյուջեի ծախսերը նվազել են 1.8%-ով:

Պարաբժշկական ծառայություններում ընդգրկված են 3 ծրագրեր՝ «Շտապ բժշկական օգնության գծով ծառայություններ», «Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ», ինչպես նաև «Զորակոչային և նախազրակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայություններ» ծրագրերը, որոնց շրջանակներում օգտագործվել է շուրջ 6.5 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 98.6%-ը: Մասնավորապես՝ 1.5 մլրդ դրամ տրամադրվել է շտապ բժշկական օգնության ծառայությունների ֆինանսավորմանը, որը կատարվել է նախատեսված ծավալով: Ծրագրի շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության և սպասարկման շրջանակներում 2010 թվականին իրականացվել է 337.0 հազար կանչ՝ 2009 թվականի 359.3 հազարի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.3%-ով: Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների ծախսերը կազմել են 2.5 մլրդ դրամ, որոնք նույնպես կատարվել են 100%-ով: Ծրագրի շրջանակներում իրականացվել է 3.4 մլն հետազոտություն՝ 2009 թվականի 3.6 մլն-ի դիմաց: Արդյունքում նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 7.5%-ով: Զորակոչային և նախազրակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայությունների գծով 2010 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 2.5 մլրդ դրամ կամ նախատեսվածի 96.5%-ը: Ծրագրի շրջանակներում բժիշկ-մասնագետների կողմից մատուցվել են 15-17 տարեկան պատանիների առողջության առաջնային պահպանման և շարունակական հսկողության ծառայություններ, ապահովվել է զինկոմիսարիատներին կից բժշկական հանձնաժողովներում ընդգրկված բժիշկ-փորձագետների և բուժքույրերի աշխատավարձերի վճարումը, ինչպես նաև նշված տարիքի անձանց փորձաքննության նպատակով հիվանդանոցային բուժհաստատություններ ուղեգորման ճանապարհածախսի փոխհատուցումը: 2009 թվականի համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Հաշվետու տարում ՀՀ պետական բյուջեի հիվանդանոցային ծառայությունների ձեռքբերման ծախսերը կազմել են ավելի քան 21.4 մլրդ դրամ՝ ամբողջովին ապահովելով նախատեսված ծավալը: Տարվա ընթացքում հիվանդանոցային բուժօգնության շրջանակներում ծառայություններ են մատուցվել 244.7 հազար հիվանդի՝ նախորդ տարվա 252.6 հազար հիվանդի փոխարեն: Հիվանդանոցային ծառայությունների ծախսերի 45.5%-ը կամ շուրջ 9.8 մլրդ դրամը կազմել են

բժշկական, մոր և մանկան կենտրոնների, 28.3%-ը կամ շուրջ 6.1 մլրդ դրամը՝ մասնագիտացված հիվանդանոցային ծառայությունների, 26.2%-ը կամ 5.6 մլրդ դրամը՝ ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայությունների ծախսերը:

Ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայությունների ծախսերի ծրագիրը կատարվել է 100%-ով: Տվյալ դասում ընդգրկված՝ անհետաձգելի բժշկական օգնության ծախսերը կազմել են ավելի քան 2.2 մլրդ դրամ՝ 100%-ով կատարելով ծրագրային ցուցանիշը: Ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2009 թվականի 30.6 հազար հիվանդի դիմաց 2010 թվականին ֆինանսավորվել է 24.5 հազար հիվանդի բուժօգնություն: 2009 թվականի համեմատ դրանք նվազել են 3.8%-ով: Հաշվետու տարում պետական բյուջեից շուրջ 3.4 մլրդ դրամ է տրամադրվել բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին տրամադրվող բժշկական օգնության ֆինանսավորմանը՝ ամբողջովին ապահովելով ծրագրի կատարումը: Այս ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության շրջանակներում 2010 թվականին բուժօգնություն է ստացել 36.5 հազար հիվանդ՝ 2009 թվականի 36 հազարի դիմաց: 2009 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 2.7%-ով կամ շուրջ 88.5 մլն դրամով:

Հաշվետու տարում շուրջ 6.1 մլրդ դրամ է օգտագործվել մասնագիտացված հիվանդանոցային ծառայությունների մատուցման նպատակով՝ ամբողջովին ապահովելով նախատեսված ծավալը: Տվյալ դասի շրջանակներում ֆինանսավորվել է 7 ծրագիր:

Տուբերկուլյոզի բժշկական օգնության ծառայությունների ծախսերը կազմել են շուրջ 1.2 մլրդ դրամ՝ 99.9%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերը նվազել են 3.2%-ով: Եթե 2009 թվականին ծրագրի շրջանակներում բուժօգնություն էր ստացել 5.8 հազար հիվանդ, ապա 2010 թվականին հիվանդների թիվը կազմել է 5.6 հազար:

Աղիքային և այլ ինֆեկցիոն հիվանդությունների բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերման նպատակով 2010 թվականի բյուջեից տրամադրվել է ավելի քան 684.2 մլն դրամ՝ ամբողջովին ապահովելով նախատեսված ծավալը: Ծրագրի շրջանակներում 2010 թվականին բուժօգնություն է ստացել 9.2 հազար հիվանդ՝ 2009 թվականի 9.7 հազարի դիմաց: 2009 թվականի համեմատ ծախսերը նվազել են 4.6%-ով:

Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բժշկական օգնության ծառայությունների գծով պետական բյուջեից տրամադրվել է 153.8 մլն դրամ կամ նախատեսվածի 99.4%-ը: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է ստացել 1.1 հազար հիվանդ՝ 2009 թվականի 1.3 հազարի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ այս ծրագրի գծով ծախսերը նվազել են 5.4%-ով:

Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության և խնամքի ծառայությունների ծախսերը կազմել են 1.6 մլրդ դրամ՝ 100%-ով ապահովելով նախատեսվածը: Ծրագրի շրջանակներում բուժգնություն է ստացել 6.9 հազար հիվանդ՝ 2009 թվականի 7 հազարի փոխարեն: 2009 թվականի համեմատ ծախսերը նվազել են 3.3%-ով:

Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերման նպատակով ծախսվել է 922.7 մլն դրամ, որը կատարվել է նախատեսված ծավալով: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է ստացել 47.4 հազար հիվանդ՝ 2009 թվականի 48.3 հազարի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ այս ծրագրի ծախսերը նվազել են 8.3%-ով:

Ուղուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայությունների ծախսերը կատարվել են 100%-ով՝ կազմելով 950.3 մլն դրամ: Նշված ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում նախորդ տարվա 10.1 հազար հիվանդի փոխարեն 2010 թվականին բուժօգնություն են ստացել 10.5 հազար հիվանդ: 2009 թվականի համեմատ ծրագրի գծով ծախսերը նվազել են 1%-ով՝ կապված մեկ հիվանդի բուժման արժեքի նվազաման հետ:

Վերականգնողական բժշկական օգնության ծառայություններին ուղղվել է ավելի քան 560.6 մլն դրամ կամ նախատեսվածի 99.9%-ը: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է ստացել 3.9 հազար հիվանդ՝ 2009 թվականի 4 հազարի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ այս ծրագրի ծախսերը նվազել են 1.5%-ով:

Բժշկական, մոր և մանկան կենտրոնների ծառայությունների դասի շրջանակներում իրականացվել են 3 ծրագրեր, որոնց ծախսերը կատարվել են 100%-ով՝ կազմելով շուրջ 9.8 մլրդ դրամ: 2009 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 0.8%-ով:

Հաշվետու տարում շուրջ 6 մլրդ դրամ է տրամադրվել մանկաբարձական բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերման՝ 100%-ով ապահովելով նախատեսվածը և 1.7%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Այս ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2009 թվականի 56.5 հազար դեպքի փոխարեն 2010 թվականին արձանագրվել է 56.6 հազար դեպք:

Գինեկոլոգիական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններին ուղղվել է շուրջ 345.9 մլն դրամ կամ նախատեսվածի 99.6%-ը: Այս ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2009 թվականի 5.4 հազար դեպքի փոխարեն 2010 թվականին արձանագրվել է 4.9 հազար դեպք: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 4.5%-ով:

Երեխաներին բժշկական օգնության ծրագրի ծախսերը կազմել են ավելի քան 3.4 մլրդ դրամ՝ ամբողջովին ապահովելով նախատեսված ծավալը: Պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության և սպասարկման շրջանակներում 2010 թվականին բուժօգնություն են ստացել 37.6 հազար հիվանդ՝ 2009 թվականի 37.9 հազարի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

2010 թվականին պետական բյուջեից շուրջ 2.8 մլրդ դրամ է օգտագործվել հանրային առողջապահական ծառայությունների ձեռքբերման նպատակով՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Տվյալ խմբի շրջանակներում նախատեսվել և կատարվել են 7 ծրագրեր:

Նշված խմբի ծախսերում մեծ տեսակարար կշիռ ունեն հիգիենիկ և հակահամաճարակային փորձագիտական ծառայությունների գծով տրամադրված միջոցները, որոնք կազմել են շուրջ 1.8 մլրդ դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Ծրագրի նպատակն էր 2010 թվականին ապահովել.

- Հայաստանի Հանրապետության տարածքում հիգիենիկ և հակահամաճարակային պետական հսկողության միջոցառումների իրականացումը.
- Ինֆեկցիոն հիվանդությունների ու թունավորումների կանխարգելման նպատակով հիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը.
- Բնակչության առողջության վրա շրջակա միջավայրի գործոնների ազդեցության սոցիալ-հիգիենիկ ուսումնասիրությունների կազմակերպումը.
- Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովման կազմակերպական-մեթոդական կանոնակարգումը.
- Հիգիենիկ-համաճարակաբանական նորմերի և կանոնների պատշաճ համակարգի ստեղծումը:

Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 4.4%-ով:

Հիգիենիկ հակահամաճարակային ծառայությանը տրամադրվել են շուրջ 210.7 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.4%-ով:

2010 թվականին ավելի քան 215.4 մլն դրամ է տրամադրվել հատուկ վտանգավոր վարակների կանխարգելման ծառայությունների ֆինանսավորմանը, որը կատարվել է 100%-ով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են հանրապետության տարածքում ժանտախտի, խոլերայի, տուլարեմիայի և այլ հատուկ վտանգավոր վարակների հայտնաբերման և կանխարգելման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 14%-ով կամ 35 մլն դրամով՝ պայմանավորված կատարված աշխատանքների ծավալների նվազմամբ:

ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի կանխարգելման և բուժօգնության ծառայությունների շրջանակներում օգտագործվել է ավելի քան 112.9 մլն դրամ՝ ամբողջավին ապահովելով նախատեսված ծավալը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի հիվանդացության կանխարգելման,

ախտորոշման, բուժման, հիվանդների դիսպանսերային հսկողության և քարոզության աշխատանքներ: Նախորդ տարվա նոյն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերը փոփոխության չեն ենթարկվել:

Ամբողջությամբ ֆինանսավորվել են վարակիչ հիվանդությունների օջախների ախտահանման ծառայությունները, որոնց տրամադրվել է 60.7 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են վարակիչ հիվանդությունների օջախների ախտահանման աշխատանքներ՝ մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցության բացառման և նվազեցման նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 9%-ով:

Այրան հավաքագրման ծառայությունների ծախսերը կազմել են 200 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում ապահովվել է արյան փոխներարկման կայանների պահպանումը, որոնց ֆունկցիոնալ խնդիրն է արյան հավաքագրումը, բաց թողումը և բուժկանխարգելիչ հիմնարկներին արյունով և դրա բաղադրիչներով ապահովումը Հայաստանի տասը մարզերում: Երևան քաղաքը սպասարկում է «Ռ. Զոյսի անվ. արյունաբանության կենտրոն» ՓԲԸ-ն: Կենտրոնի առաջնային խնդիրներից են դիսպանսեր հսկողության տակ գտնվող արյան չարորակ հիվանդություններով տառապող հիվանդների ամբողատոր հետազոտումը և բուժումը, արյան փոխներարկման կայանների կողմից կատարվող աշխատանքների արտագնա ստուգումը և մեթոդական օգնությունը: Նախորդ տարվա համեմատ արյան հավաքագրման ծառայությունների ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

Իմունականխարգելման ազգային ծրագրին տրամադրվել է 190 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով նախատեսված ծավալը: Ծրագրի շրջանակներում ազգաբնակչության համար ձեռք են բերվել պատվաստանյութեր և ներարկիչներ կարմրուկի, խոզուկի և այլ վարակիչ հիվանդությունների կանխարգելման համար: 2010 թվականին նախորդ տարվա համեմատ նվազել է դոնոր կազմակերպությունների աջակցությունը, և ավելացել ՀՀ պետական բյուջեի միջոցներով պատվաստանյութերի ձեռքբերման ծավալը: Դրանով է բացատրվում նախորդ տարվա համեմատ ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի 26.7%-ով աճը:

Այլ դասերին չպարկանող առողջապահական ծախսերի շրջանակներում հաշվետու տարվա ընթացքում իրականացվել են շուրջ 7.9 մլրդ դրամի ծախսեր, որոնց կատարողականը կազմել է 89.5%: Ծրագրից շեղումը հիմնականում առաջացել է արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող «ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հակագրման ազգային ծրագրին աջակցություն» և «Դեղակայուն տուրերկույզովի կառավարման ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրերի գծով:

2010 թվականին պետական բյուջեից 26.6 մլն դրամ է տրամադրվել հանրապետությունից դուրս բուժման ուղեգրված հիվանդների ճանապարհածախսի փոխհատուցման նպատակով՝

ամբողջությամբ ապահովելով նախատեսված ծավալը: Ծրագրի շրջանակներում տարեկան 90 -180 հիվանդներ, որոնց ախտորոշումը հնարավոր չէ կատարել հանրապետությունում, ուղեկցողով գործուղվում են Մոսկվա կամ ԱՊՀ երկրներ ախտորոշման և հետագա բուժում նշանակելու համար: Մեկ հիվանդի ճանապարհածախսը ուղեկցողով գնալու և վերադառնալու համար կազմում է մոտ 400 հազար դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 29.6%-ով՝ պայմանավորված հանրապետությունից դուրս մեկնող հիվանդների թվաքանակով: Այն կազմել է 73՝ նախորդ տարվա 170-ի դիմաց:

Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների շրջանակներում ծախսվել է շուրջ 427.7 մլն դրամ, որի կատարողականը կազմել է 99.9%: Այն ուղղվել է սոցիալապես անապահով խափի հիվանդների՝ յուրահատուկ, բացառիկ բուժսարքավորումներով և տեխնոլոգիաներով անվճար ախտորոշիչ հետազոտությունների իրականացմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 3.5%-ով:

Ամբողջությամբ ֆինանսավորվել են դեղաքաղաքականությունից բխող փորձագիտական և մեթոդաբանական ծառայությունները, որոնց տրամադրվել է 20 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են մարդասիրական կարգով ներմուծվող դեղերի և «որք դեղերի» ցանկում ընդգրկված դեղերի պետական գրանցման նպատակով փորձաքննություններ, հոգեմետ և հսկող դեղերի պահանջարկի հաշվարկ և այլ ծառայություններ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերը փոփոխության չեն ենթարկվել:

Հաշվետու տարվա ընթացքում ՀԲ աջակցությամբ իրականացվող առողջապահական համակարգի արդիականացման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 298.8 մլն դրամ՝ 75%-ով գերազանցելով նախատեսված ցուցանիշը: 2010 թվականի բյուջեով նախատեսված աշխատանքները կատարվել են ամբողջությամբ: Իջևանի և Հրազդանի բժշկական կենտրոնների շենքերի վերանորոգման աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են 2009 թվականի դեկտեմբեր ամսին, իսկ դրանց դիմաց վճարումները կատարվել են 2010 թվականի հունվար ամսին, ինչով էլ պայմանավորված է ծախսերի ծրագրի գերազանցումը: Առողջապահական համակարգի արդիականացման վարկային ծրագրի իրականացումն ավարտվել է 2010 թվականի հոկտեմբերի 30-ին:

ՀԲ աջակցությամբ իրականացվող առողջապահական համակարգի արդիականացման երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 4.1 մլրդ դրամ, որը կատարվել է 105.1%-ով: Ծրագրին կառավարությունը մասնակցություն է ցուցաբերել 965 մլն դրամի չափով, իսկ վարկային միջոցները կազմել են շուրջ 3.1 մլրդ դրամ: Ծրագրված ցուցանիշի գերազանցումը պայմանավորված է կնքված պայմանագրերով նախատեսված շինարարական աշխատանքների՝

«Գյումրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքի կառուցման համար տրված կանխավճարներով, որոնց դիմաց աշխատանքները նախատեսվել է իրականացնել 2011 թվականին:

2010 թվականին ՀԲ աջակցությամբ իրականացվող՝ առողջապահական համակարգի արդիականացման ծրագրում ճապոնական դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 7.1 մլն դրամ՝ ապահովելով 57.9% կատարողական: Ծրագրի շրջանակներում 2010 թվականի բյուջեով նախատեսված աշխատաքները կատարվել են ամբողջությամբ, արդյունքում առաջացել է գումարների տնտեսում, քանի որ պայմանագրերը կնքվել են նախատեսվածից ցածր գներով: Ծրագրին ավարտվել է 2010 թվականի հոկտեմբերի 30-ին:

2010 թվականի ընթացքում «Առողջապահական համակարգի արդիականացման» վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

### 1. Ընտանեկան բժշկության զարգացում:

2010 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ ծրագրի առաջին և երկրորդ փուլի շրջանակներում արդեն մասնագիտացել են 1270 ընտանեկան բժիշկներ և 1439 ընտանեկան բուժքույրեր: Մասնավորապես՝ 2010 թվականի ընթացքում 188 բժիշկ և 290 բուժքույր ավարտել են ընտանեկան բժշկության մասնագիտացման դասընթացները: Ներկայումս 126 ընտանեկան բժիշկ և 153 ընտանեկան բուժքույր գտնվում են մասնագիտացման գործընթացում և կավարտեն իրենց մասնագիտացումը 2011 թվականի ընթացքում:

### 2. Առողջության առաջնային պահպանման ենթակառուցվածքների բարելավում:

2010 թվականի ընթացքում ավարտվել է Գեղարքունիքի մարզի Աստղաձոր, Կոտայքի մարզի Բուժական, Շիրակի մարզի Մեծ Մանթաշ և Սյունիքի մարզի Տեղ համայնքների ամբողատորիաների կառուցումը, ինչպես նաև Արագածոտնի մարզի Արտենիի առողջության կենտրոնի մանկաբարձական բաժանմունքը հագեցվել է բժշկական սարքավորումներով ու կահույքով: Ընտանեկան բժիշկների անկախ խմբային և անհատական պրակտիկաներին աջակցելու նպատակով ստեղծվել է աշխատանքային խումբ: Խմբի կողմից մշակվել են Ընտանեկան բժիշկների խմբային և անհատական անկախ պրակտիկաների ստեղծման ընթացակարգերի վերաբերյալ ուղեցույցներ:

### 3. Մարզային հիվանդանոցային հաստատությունների օպտիմալացում և արդիականացում:

Վերանայվել է մարզային առողջապահության համակարգի օպտիմալացման ծրագրերը հաստատող ՀՀ կառավարության 02.11.2006թ. թիվ 1911-Ն որոշումը, որի արդյունքում ընդունվել են վերոնշյալ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշումները: Հրազդանի բժշկական կենտրոնին են միացվել Հրազդանի ներկայիս ծննդատան ծառայությունները: Ավարտվել են մարզերում բժշկական կենտրոնների հիմնանորոգման շինարարական

աշխատանքները, ինչպես նաև կենտրոնների բժշկական սարքավորումներով և կահույքով հագեցման աշխատանքները:

4. Կառավարության կարողությունների հզորացում՝ առողջապահության ոլորտի արդյունավետ քաղաքականության մշակման և մոնիթորինգի նպատակով:

ՀԲ աջակցությամբ իրականացվող՝ Թոչնագրիպին հակագրելու վարկային ծրագրով պետական բյուջեով նախատեսվել էին 147.7 մլն դրամի ծախսեր, որոնք 16.3%-ով գերազանցել են ծրագրված ցուցանիշը՝ կազմելով 171.8 մլն դրամ: Ծրագրին կառավարությունը մասնակցություն է ցուցաբերել 31.8 մլն դրամի չափով, իսկ վարկային միջոցները կազմել են շուրջ 140 մլն դրամ: Ծախսերի գերազանցումը ծրագրված մակարդակից պայմանավորված է վարկային ծրագրի շրջանակներում տեղի ունեցած փոփոխություններով, որոնց արդյունքում ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ-ի երկու լաբորատորիայի վերանորոգման փոխարեն անհրաժեշտություն է առաջացել նշված կենտրոնի սանիտարահիգիենիկ լաբորատորիայի համար ձեռք բերել սարքավորումներ, իսկ իրականացված գնումների մի մասը 2009 թվականից տեղափոխվել էր 2010 թվական: Ծրագրին ավարտվել է 2010 թվականի նոյեմբերի 30-ին:

ՀԲ աջակցությամբ իրականացվող՝ Թոչնագրիպին հակագրելու ճապոնական դրամաշնորհային ծրագրի գծով ՀՀ 2010 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 23 մլն դրամ կամ նախատեսված ցուցանիշի 66.9%-ը: Ծրագրին կառավարությունը մասնակցություն է ցուցաբերել 5.4 մլն դրամի չափով, որը կազմել է նախատեսված ծախսերի 46%-ը, իսկ դրամաշնորհային միջոցները կազմել են 17.6 մլն դրամ կամ նախատեսվածի 77.8%-ը: 2010 թվականի բյուջեով նախատեսված աշխատանքները կատարվել են ամբողջությամբ, արդյունքում առաջացել է գումարների տնտեսում, քանի որ պայմանագրերը կմքվել են բյուջեով նախատեսվածից ցածր գներով: Ծրագրին ավարտվել է 2010 թվականի նոյեմբերի 30-ին:

2010 թվականի ընթացքում թոչնագրիպին նախապատրաստվածության վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- ՀՀ առողջապահության ծախսերի «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ-ի սանիտարահիգիենիկ լաբորատորիայի համար ձեռք է բերվել 5 լաբորատոր սարք.

- Իունիս-հուլիս ամիսների ընթացքում իրականացվել է ուսուցում տեղական նախագծային կազմակերպությունների համար՝ ներառելով հիվանդանոցներում վարակիչ հիվանդությունների հսկողության հարցերը, որը հիմնված կլինի հիվանդանոցային միջազգային ստանդարտների և ուղեցույցների հիման վրա:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագրի շրջանակներում նախատեսված 70.3 մլն դրամի փոխարեն ծախսերը կազմել են 93.4 մլն դրամ կամ 32.8%-ով ավելի: Ծրագրին կառավարության մասնակցությունն ամբողջությամբ իրականացվել է՝ 10 մլն դրամի չափով, իսկ վարկային միջոցները կազմել են 83.4 մլն դրամ: Ծրագրի գերականցումը պայմանավորված է նրանով, որ կատարվել են նախատեսվածից ավել աշխատանքներ:

Դատարժշկական և գենետիկ ծառայությունների ձեռքբերման գծով 2010 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 315 մլն դրամ՝ ամբողջությամբ կատարելով ծրագիրը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 7.4%-ով:

«Պաթանատոմիական ծառայություններ» ծրագրի գծով ՀՀ պետական բյուջեի ծախսերը ևս նախատեսված ծավալով կատարվել են՝ կազմելով 38.3 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 3.1%-ով:

Հաշմանդամ երեխաների օրթեզների և կորսետների պատրաստման ծառայությունների ծախսերը հաշվետու տարում կազմել են շուրջ 81.8 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 13%-ով: Ծրագրի շրջանակներում 2010 թվականին պատրաստվել է 1250 օրթեզ և կորսետ՝ 2009 թվականի 2200-ի փոխարեն:

Ավելի քան 79.6 մլն դրամ է տրամադրվել առողջապահության համակարգի գործունեության զանգվածային տեղեկատվության ծառայություններին՝ ապահովելով 99.6% կատարողական: Ծրագրի շրջանակներում ՀՀ առողջապահության նախարարությունում և ամբողջ համակարգում շարունակվում է համակարգչային տեխնոլոգիաների և ցանցերի ներդրումը: Ներդրվել են նաև առողջապահական տեղեկատվական համակարգեր և ինտերնետային կապ: Առողջապահության համակարգի գործունեության զանգվածային տեղեկատվության, բնակչության լայն շրջանակներում հավաստի բժշկական գիտելիքների տարածման համար տպագրվում է հանրամատչելի գրույցների հավելված: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն ավելացել են 16.6%-ով՝ պայմանավորված աշխատանքների ծավալների աճով:

Մասնագիտական, խորհրդատվական և կազմակերպամեթոդական աջակցության ծառայություններին տրամադրվել է 39.8 մլն դրամ՝ ապահովելով 99.5% կատարողական: Միջոցներն ուղղվել են սիրտ-անոթային, սպինալ և պրոֆեսիոնալ հիվանդություններով, շաքարային դիաբետով, ասթմայով տառապող հիվանդներին, ինչպես նաև ուռուղգներին, նեֆրոլոգներին, հանրապետության ուռուցքաբանական, նարկոլոգիական, մաշկավեներական, հոգեբուժական և հակատութերկույզային ծառայությունների գծով կազմակերպչամեթոդական օգնությանը: 2009 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 13.4%-ով՝ պայմանավորված կազմմեթոդական օգնության ծավալի կրճատմամբ:

Խսմբում ընդգրկված այլ բուժօգնության և սպասարկման ծառայությունները (15 մլն դրամ) և մարդասիրական օնության կարգով ստացվող դեղերի և դեղագործական արտադրանքի ստացման, մաքսազերծման և բաշխման աշխատանքները (40 մլն դրամ) ֆինանսավորվել են ամբողջությամբ և նախորդ տարվա փոփոխության չեն ենթարկվել:

Ամբողջությամբ ֆինանսավորվել է նաև տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագիրը, որին տրամադրվել է շուրջ 57.2 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում մատուցվել են տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի պահպանման աջակցության ծառայություններ: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն ավելացել են 42.9%-ով, որն ուղղվել է աշխատավարձի և այլ ծախսերի վճարմանը:

ՀՀ մարզային առողջապահական կազմակերպությունների բժիշկ-մասնագետների ժամանակավորապես ուղեգորման ծախսերի փոխհատուցման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 11.3 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով նախատեսված ծավալը: Ծրագրի շրջանակներում 2010 թվականին ՀՀ մարզեր են ուղեգորվել 11 բժիշկ-մասնագետներ: Նշենք, որ նախորդ տարի նշված նպատակով պետական բյուջեից միջոցներ չեն հատկացվել:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծրագրի շրջանակներում իրականացվել է ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի պահպանումը, որի ծախսերը կազմել են 1 մլրդ դրամ՝ ապահովելով 97.5% կատարողական՝ պայմանավորված միջոցների տնտեսմամբ: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն ավելացել են 4.4%-ով, որը պայմանավորված է աշխատավարձի, ինչպես նաև հատուկ նպատակային ֆոնդից տրվող պարգևատրման, էներգետիկ ծառայությունների և գործուղման ծախսերի աճով:

ՀՀ առողջապահության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող՝ «Առողջապահության համակարգի հզորացում» ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 11.8 մլն դրամ՝ նախատեսված 22.2 մլն դրամի դիմաց: Ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- փոխհատուցվել են համայնքային և մարզային մակարդակի պատվաստանյութերի կարիքների որոշման և բաշխման պատասխանատուների, ինչպես նաև պատվաստումների գործընթացի պատասխանատուների մեկօրյա դասընթացների ժամանակ մասնակիցների գործուղման ծախսերը.

- իրականացվել են պատվաստումների կարևորության և անհրաժեշտության վերաբերյալ հանրային իրազեկման նպատակով տեսահոլովակի պատրաստման աշխատանքներ.

- ձեռք են բերվել առողջապահության համակարգի հզորացման ծրագրի շրջանակներում 2010 թվականի համար նախատեսված դասընթացներին մասնակցող մասնագետների համար

գրասենյակային պարագաներ, ինչպես նաև դասընթացների կազմակերպման նպատակով ուսումնական նյութերի բազմացման պարագաներ.

- ձեռք են բերվել կառավարչական ծառայություններ՝ ծրագրի շրջանակներում նախատեսված դասընթացների համար դասավանդողներին վճարումներ իրականացնելու, մոնիթորինգի համար ստանդարտացված և չափելի հարցաթերիթիկների, պատվաստումների գործընթացին նպաստող հանրային առողջապահական ծրագրերի ուղղությամբ անհրաժեշտ ձեռնարկների մշակման, ծրագրի ֆինանսական, կազմակերպչական, գործավարական դեկավարումը լիարժեք իրականացնելու համար:

Արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող՝ Հայաստանի Հանրապետությունում դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնման ծրագրին տրամադրվել է շուրջ 317.8 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 37.4%-ը, , որը պայմանավորված է շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման, կառավարչական ծառայությունների ու առողջապահական և լաբորատոր նյութերի ծախսերի տնտեսմամբ: Ծրագրի շրջանակներում 2010 թվականին սկսվել են տուբերկուլյոզի դիսպանսերի բազմադեղակայուն բաժանմունքի առաջին հարկի վերանորոգման աշխատանքները: Ծրագրի շրջանակներում հիվանդներին ցուցաբերվել է սոցիալական աջակցություն, որի արդյունքում նրանց բաժանվել են սննդային և հիգիենիկ փաթեթներ, ինչպես նաև ձեռք են բերվել լաբորատոր ծախսանյութեր և սարքավորումներ:

ՀՀ առողջապահության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող ՀՀ-ում ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի հակազդման ազգային ծրագրին աջակցության շրջանակներում ծախսվել է 448.7 մլն դրամ՝ նախատեսված շուրջ 1.1 մլրդ դրամի դիմաց: Ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է առողջապահական և լաբորատոր նյութերի, այլ մեքենաների և սարքավորումների ու շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման ծախսերի տնտեսմամբ: Ծրագրի շրջանակներում 2010 թվականի ընթացքում գնվել են հակառետրովիրուսային օպորտունիստական վարակների դեղամիջոցներ, ՄԻԱՎ-ի ախտորոշման թեսթ համակարգեր և լաբորատոր ծախսանյութեր, ինչպես նաև 2 ավտոմեքենա: Հաշվետու տարում ավելի քան 40000 հոլիների շրջանում իրականացվել է ՄԻԱՎ վարակի սքրինինգ, 250 հիվանդ ստացել է հակառետրովիրուսային բուժում, 111 ներարկային թմրամիջոցներ գործածողներ ստացել են մեթադոնային փոխարինող բուժում, 1213 դատապարտյալ ստացել են ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ին վերաբերող խորհրդատվություն: Իրականացվել է 1230 հանրակրթական դպրոցների ուսուցիչների, 193 բուժաշխատողների, 29 լաբորատոր մասնագետների և 38 պետական ոլորտի աշխատողների վերապատրաստում:

ՀՀ առողջապահության նախարարության արտաբյուջետային միջոցներով իրականացվող ՀՀ առողջապահական համակարգի հզորացման ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 298.5 մլն

դրամ՝ նախատեսված 404.7 մլն դրամի դիմաց: Ծրագրի ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է այլ մեքենաների և սարքավորումների, ինչպես նաև կառավարչական ծառայությունների համար նախատեսված ծախսերի տնտեսմամբ: Ծրագրի շրջանակներում 2010 թվականի ընթացքում կատարվել են հետևյալ միջոցառումները.

- արյան անվտանգության ծառայությունների վերազինման նպատակով ձեռք են բերվել սարքավորումներ, որոնք տեղադրվելու են «Պրոֆ. Ռ. Յոյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ում և Շիրակի, Լոռու, Սյունիքի, Կոտայքի և Արմավիրի մարզերի արյան փոխներարկման կայաններում.

- «Արյան անվտանգության ազգային ռազմավարության», արյան անվճար դոնորությունը խրախուսող կրթական նյութերի, արյան դոնորների միասնական ռեեստրի մշակում.

- հիվանդությունների դեղաբուժության օպտիմալ սխեմաների և դեղերի ռացիոնալ օգտագործման սկզբունքները մշակելու նպատակով՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և տուրքերկույզողի բուժման ուղեցույցներին համապատասխան դեղորայքի նոր ցանկի և դեղորայքի օգտագործման մոնիթորինգի համակարգի մշակում.

- առողջապահական տեղեկատվական համակարգի հզորացման նպատակով՝ տեղեկատվական համակարգի հնգամյա ռազմավարական ծրագրի և առողջապահության ազգային ցուցանիշների ցանկի մշակում, տեղեկատվության առկա տվյալների աղբյուրների և հոսքերի, ինչպես նաև տվյալների հավաքագրման, կառավարման ուղեցույցների ու գործիքների վերանայում:

### **Հանգիստ, մշակույթ և կրոն**

2010 թվականին ՀՀ պետական բյուջեից հանգստի, մշակույթի և կրոնի ծրագրերի իրականացմանը տրամադրվել է 16.1 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսված ծախսերի 100.1%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.2%-ով:

Հաշվետու տարվա ընթացքում հանգստի և սպորտի բնագավառին տրամադրվել է շուրջ 1.4 մլրդ դրամ՝ 99.6%-ով ապահովելով տարեկան ծրագիրը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 9.3%-ով՝ հիմնականում պայմանավորված ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստման և առաջնությունների անցկացման ծախսերի կրճատմամբ:

2010 թվականին ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստման և առաջնությունների անցկացման ծրագրով նախատեսված միջոցները նպատակառուղով են միջոցառումների քանակի ավելացմանը և որակի բարձրացմանը, մարզիկների բժշկական հետազոտման աշխատանքների բարելավմանը,

մարզաձևերի ՀՀ ազգային հավաքական թիմերը երիտասարդ հեռանկարային մարզիկներով համալրմանը և օլիմպիական վարկանիշային միջազգային մրցումներին նախապատրաստմանը: Այս ծրագրի գծով 2010 թվականին տրամադրվել է 884.4 մլն դրամ՝ ապահովելով 99.9% կատարողական: Ծրագրի շրջանակներում հաշվետու տարում անցկացվել են Հայաստանի Հանրապետության 90 առաջնություններ, որոնց մասնակցել է 7600 մարզիկ: Աշխարհի, Եվրոպայի առաջնություններին, գավաթի խաղարկություններին և միջազգային մրցաշարերին նախապատրաստվելու նպատակով ՀՀ հավաքական թիմերում ընդգրկված մարզիկների համար կազմակերպվել են 127 ուսումնամարզական հավաքներ, որոնց մասնակցել է 3950 մարդ: Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերում ընդգրկված 1991 մարզիկ մասնակցել են աշխարհի, Եվրոպայի առաջնությունների 159 մրցաշարերի: Հաշվետու տարվա ընթացքում Հայաստանի մարզիկները աշխարհի առաջնություններում նվաճել են 36 մեդալ, որից 15-ը՝ ոսկե, 7-ը՝ արծաթե, 14-ը՝ բրոնզե: Եվրոպայի առաջնություններում նվաճած մեդալների թիվը կազմում է 121, որից 28-ը՝ ոսկե, 44-ը՝ արծաթե, 49-ը՝ բրոնզե: Համաշխարհային ուսանողական խաղերում ծանրամարտիկները նվաճել են 7 ոսկե, 3 բրոնզե մեդալներ: Նախորդ տարվա համեմատ ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստման և առաջնությունների անցկացման ծախսերը նվազել են 11.1%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ 2009 թվականին կայացել էին աշխարհի և Եվրոպայի ավագ տարիքի պատանիների և երիտասարդների առաջնությունները:

Հաշվետու տարում շախմատիստների պատրաստման նպատակով 52 մլն դրամ է տրամադրվել «Հայաստանի շախմատային ակադեմիա» հիմնադրամին, որն իրականացվել է նախատեսված ողջ ծավալով և նախորդ տարվա համեմատ փոփոխություն չի կրել:

Նախատեսված չափով տրամադրվել է նաև միջազգային մարզական միջոցառումների հաղթողներին և մրցանակակիրներին դրամական մրցանակների հանձնման նպատակով պետական աջակցությունը, որը կազմել է 50 մլն դրամ և նախորդ տարվա համեմատ փոփոխություն չի կրել:

Նախատեսված ծավալով իրականացվել են նաև հետևյալ 8 ծրագրերը՝

- ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում հանրապետական մարզական փառատոնի անցկացման նպատակով օգտագործվել է 7 մլն դրամ, որը նախորդ տարվա համեմատ փոփոխություն չի կրել: Փառատոնը անց է կացվել 7 մարզաձևերից ՀՀ մարզերի 48 քաղաքային համայքներում և ԼՂՀ-ում, որին մասնակցել է 23383 մարդ.

- ՀՀ նախագահի մրցանակի համար «Հավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացման նպատակով տրամադրվել է 23 մլն դրամ: Մրցույթին մասնակցել է 347 ընտանիք՝ 1041

մասնակցով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 31.4%-ով՝ պայմանավորված նախնական փուլերում մասնակից ընտանիքների թվի ավելացմամբ.

• մանկապատանեկան սպորտի մասսայականացման միջոցառումների իրականացման նպատակով տրամադրվել է 8 մլն դրամ՝ պահպանվելով նախորդ տարվա մակարդակին: Շրագրին ներգրավվել են 1900 մասնակից ՀՀ տարբեր մարզերից.

• նավամոդելային սպորտի զարգացման նպատակով տրամադրվել է 5.5 մլն դրամ: 2010 թվականին Բուլղարիայի Ստարա-Զագորա քաղաքում կայացած նավամոդելային սպորտի Եվրոպայի առաջնությանը մասնակցած ՀՀ ազգային հավաքականի ներկայացուցիչները նվաճել են մեծահասակների և երիտասարդների Եվրոպայի չեմպիոնների կոչումները, ինչպես նաև երկրորդ մրցանակային տեղը: Տվյալ ծախսերը նույնպես նախորդ տարվա համեմատ փոփոխություն չեն կրել.

• ՀՀ հավաքական թիմերի ավագ մարզիչների վարձատրության և աշխարհի 8 չեմպիոններին թոշակի հատկացման նպատակով «ՀՀ հավաքական թիմերի կենտրոն» ՓԲԸ-ին տրամադրվել է 17.3 մլն դրամ պետական աջակցություն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել.

• Հակադոպինգային համաշխարհային գործակալությանն անդամակցելու նպատակով ՀՀ 2010 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 5.4 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 150%-ով, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2010 թվականին վճարվել է անդամավճար 2007, 2009 և 2010 թվականների համար:

• Սինգապուրում կայանալիք առաջին պատանեկան օլիմպիական խաղերին մասնակցության ապահովման նպատակով տրամադրվել է 37.6 մլն դրամ: Միջոցառմանը մասնակցել է 29 մարզիկ:

• ՀՀ տարածքում նետաձգության մեծահասակների Եվրոպայի «Գրան պրի»-ի 2-րդ փուլի կազմակերպման և անցկացման նպատակով տրամադրվել է 25.8 մլն դրամ:

Ուսանողական մարզական միջոցառումներին տրամադրվել է 3.5 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 81.3%-ը, որը տնտեսման արդյունք է: Շրագրի շրջանակներում ՀՀ բուհերի 11-րդ հանրապետական ուսանողական մարզական խաղերի եզրափակիչ մրցումներին՝ թվով 8 մարզաձևերից, մասնակցել են հանրապետության 17 պետական բուհերի 1304 մարզիկներ: Նշված ծրագիրն անցկացվում է 2 տարին մեկ անգամ:

Պետական աջակցությունը հաշմանդամային սպորտով զբաղվող մարզական և այլ հասարակական կազմակերպություններին կազմել է 9 մլն դրամ կամ նախատեսվածի 99.8%-ը: Շրագրի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել 4 հասարակական կազմակերպությունների, իրականացված միջոցառումներին մասնակցել են 412 հաշմանդամ մարզիկներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

2010 թվականին 55.9 մլն դրամ պետական աջակցություն է տրամադրվել սպորտային միջոցառումների կազմակերպմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 21.5%-ով, որը պայմանավորված է հավաքական թիմերի մարզիկների համար արտերկրից մարզահագուստներ ներկրելու մաքսային ծախսերով:

Եվրախորհրդի սպորտի մասին համաձայնագրին անդամակցելու համար տրամադրվել է 3.9 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 99.4%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 49.8%-ով, որը պայմանավորված է արտարժույթի փոխարժեքի աճով:

2010 թվականին 147 մլն դրամ տրամադրվել է օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքների հասած ՀՀ հավաքական թիմերի մարզիկներին և նրանց մարզիչներին ՀՀ նախագահի անվանական թոշակ հատկացնելու նպատակով, որը կազմել է նախատեսվածի 98%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

2010 թվականի պետական բյուջեից Վանկուվերի ձմեռային օլիմպիական խաղերին մասնակցության ապահովման համար ծախսվել է 23.6 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 98%-ը:

Հաշվետու տարում պետական բյուջեից 9.4 մլրդ դրամ տրամադրվել է մշակութային ծառայությունների խմբի ծրագրերի ֆինանսավորմանը՝ կազմելով ծրագրվածի 100.4%-ը: 2009 թվականի համեմատ մշակութային ծառայությունների ծախսերը նվազել են 2.7%-ով:

Հաշվետու տարում 1.4 մլրդ դրամ ուղղվել է գրադարանների ֆինանսավորմանը, որը կազմել է ծրագրով նախատեսված հատկացումների 99.9%-ը: Նախորդ տարվա համեմատ գրադարաններին պետական բյուջեից տրամադրված միջոցներն ավելացել են 6.9%-ով՝ պայմանավորված էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

2010 թվականին տվյալ դասում ընդգրկված մշակութային օբյեկտների հիմնանորոգմանը հատկացվել է 377.3 մլն դրամ, որն իրականացվել է 99.9%-ով: Ծրագրի շրջանակներում հիմնանորոգվել է մշակութային 4 օբյեկտ, որից 2-ը՝ Երևանում, 2-ը՝ մարզերում: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն ավելացել են 15.1%-ով՝ պայմանավորված կատարված աշխատանքների ծավալով:

2010 թվականին 979.1 մլն դրամ ուղղվել է 16 գրադարանների պետական աջակցության տրամադրմանը, որի կատարողականը կազմել է 100%: Հաշվետու տարում գրադարանների գործունեության առաջնային ուղղություններն են համարվել նրանց գործունեության պայմանների բարելավումն ու մշակութային ժառանգության պահպանության ապահովումը, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման գործընթացների իրականացումը, գրադարանային հավաքածուների պետական հաշվառման, ավտոմատացված միասնական համակարգի ներդրման աշխատանքները:

Տեղեկատվության և ծառայությունների մատչելիության ապահովման ուղղությամբ նորացվել են գրադարաններից օգտվողներին տրամադրվող էլեկտրոնային-տեղեկատվական աղբյուրները: Հաշվետու տարում մշակութային ծառայությունների մատչելիությունն ապահովելու նպատակով «Բիբլիորուս» շրջիկ գրադարան-ավտոմեքենան շրջել է ՀՀ Լոռու, Գեղարքունիքի, Արագածոտնի, Արմավիրի, Տավուշի մարզերում՝ բնակչության գրադարանային տեղեկատվական սպասարկման ծառայություն իրականացնելու և գրադարանային հավաքածուները համալրելու նպատակով: «Արև» տեղեկատվական հաղորդակցման ծրագրի շրջանակներում կույր և թույլ տեսնող անձանց հնարավորություն տրվեց համակարգչի միջոցով տառերն ու թվերը «կարդալ» լսողական խորհրդանշանների միջոցով: Տեղեկատվական հաղորդակցման այս ծրագիրը 2010 թվականին ներդրվել է Վ. Պետրոսյանի անվան Արագածոտնի, Օ. Չուբարյանի անվան Արարատի և Արմավիրի մարզային գրադարաններում: «Հայաստանյան գրադարանների միացյալ ավտոմատացված ցանց» ծրագրի շրջանակներում մասնակից 12 գրադարանների կողմից համահավաք քարտարանների տվյալների շտեմարանում շարունակվել են մուտքագրվել մատենագիտական գրառումներ: Գրադարանների շենքերի հիմնանորոգման պետական ծրագրի ուղղությամբ շարունակվել են Հայաստանի ազգային և ավարտվել Խնկո-Ապոր անվան ազգային մանկական գրադարաններում իրականացվող հիմնանորոգման աշխատանքները: Նախորդ տարվա համեմատ գրադարաններին պետական աջակցությունն ավելացել է 6.7%-ով, որն ուղղվել է էլեկտրաէներգիայի ծախսերին՝ կապված սակագնի բարձրացման հետ:

2010 թվականին իրատարակությունների գրանցման, հաշվառման և մատենագիտական ծառայությունների մատուցման համար պետական բյուջեից Հայաստանի ազգային գրապալատին տրամադրվել է 52.7 մլն դրամ, որը կատարվել է 100%-ով: Ծրագրով նախատեսված հատկացումներն ուղղվել են ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության մաս հանդիսացող՝ ՀՀ-ում ու արտերկրում լույս տեսած և ընթացքում լույս տեսնող իրատարակությունների անձեռնմխելի ֆոնդերի պահպանման, մատենագիտական տեղեկույթի պետական պաշարների համալրման, օգտվողներին մատենագիտական տեղեկատվությամբ ապահովման, գիտության զարգացման և հանրության կրթական մակարդակի բարձրացման խնդիրների իրագործմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Գրադարանների համար սարքերի և սարքավորումների ծեռքբերման գծով պետական պատվերի ծրագրի իրականացման համար օգտագործվել է 4.3 մլն դրամ, որը կազմում է նախատեսվածի 96.1%-ը: Շեղումը պայմանավորված է մրցույթների արդյունքում առաջացած տնտեսումներով: Հատկացումներն ուղղվել են Վ. Պետրոսյանի անվան Արագածոտնի, Օ. Չուբարյանի անվան Արարատի, Տավուշի և Լոռու մարզային գրադարաններում ազդանշանային և հակահրեհային համակարգերի տեղադրմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը

նվազել են 81.8%-ով, որը պայմանավորված է ընթերցասրահների կահույքի ձեռքբերման ծրագրի ավարտով:

2010 թվականին թանգարանների և ցուցասրահների դասի ծրագրերին պետական բյուջեից տրամադրվել է 1.6 մլրդ դրամ, որը կազմում է նախատեսվածի 103.4%-ը: Գերազանցումը պայմանավորված է ՄԱԿ-ի զարգացման աջակցության ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի բարձր կատարողականով:

Թանգարանային ծառայությունների և ցուցահանդեսների ծրագրի իրականացմանը պետական բյուջեից տրամադրվել է 1.3 մլրդ դրամ, որը կազմում է նախատեսվածի 100%-ը: Թանգարանների գործունեության առաջնային ուղղություններն են համարվել թանգարանային առարկաների և թանգարանային հավաքածուների պահպանությունը, հանրահոչակումը, բացառիկ ցուցանմուշների կրկնատիպերի պատրաստումը, թանգարանային առարկաների կոնսերվացումը և վերականգնումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 8.8%-ով, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ նախորդ տարի այս ծրագրի շրջանակներում ֆինանսավորվել էին նաև Երևանի քաղաքապետարանի համակարգում գործող թանգարանները, որոնց կատարված հատկացումները հաշվետու տարում իրականացվել են սուբվենցիայի տեսքով: Այն տրամադրվել է նախատեսված ողջ ծավալով՝ կազմելով 138.5 մլն դրամ:

Պետական բյուջեից 26.9 մլն դրամի (99.6%) ներդրումներ են կատարվել թանգարաններում, որոնք ուղղվել են թանգարանների համար սարքերի և սարքավորումների ձեռքբերմանը: Հատկացումներն ուղղվել են հակահրեհային-ազդանշանային համակարգի տեղադրմանը Հայաստանի ազգային պատկերասրահի մասնաճյուղերում, սենսորային կրպակների ձեռքբերմանը, ինչպես նաև ջեռուցման համակարգերի տեղադրման աշխատանքների իրականացմանը Հայաստանի ազգային պատկերասրահի մասնաճյուղերում, Հ. Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստի թանգարանում, Մ. Սարյանի տուն-թանգարանում: Նախորդ տարվա համեմատ տրամադրված միջոցներն աճել են 86.1%-ով, ինչը պայմանավորված է թանգարաններում հակահրեհային և ջեռուցման համակարգերի ներդրման ծախսերով:

ՄԱԿ-ի զարգացման աջակցության ծրագրի շրջանակներում 2010 թվականին իրականացվել են 79.8 մլն դրամի ծախսեր՝ կազմելով նախատեսվածի 289.4%-ը, ինչով էլ պայմանավորված տվյալ դասի ծախսերը 3.4%-ով գերազանցել են ծրագիրը, իսկ նախորդ տարվա համեմատ աճել են 5.5%-ով:

ՀՀ 2010 թվականի պետական բյուջեից 338.2 մլն դրամ է տրամադրվել մշակույթի գնների, ակումբների և կենդրոնների ֆինանսավորմանը, որը կատարվել է 99.5%-ով: Նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերը նվազել են 42.4%-ով՝ պայմանավորված մշակութային օբյեկտների հիմնանորոգման և շինարարության ծախսերի կրճատմամբ:

Մասնավորապես՝ 233.7 մլն դրամ են կազմել հիմնանորոգման, 75.1 մլն դրամ՝ շինարարության ծախսերը, որոնք կատարվել են համապատասխանաբար 99.8 և 98.3%-ով: Նշված ծրագրերի շրջանակներում հանրապետության մարզերում հիմնանորոգվել է 10 և կառուցվել՝ 4 մշակութային օբյեկտ:

Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպման ծրագիրը կատարվել է նախատեսված ողջ ծավալով՝ կազմելով 29.3 մլն դրամ: Ծրագիրն իրականացվել է Ստեփանավանի մշակույթի և ժամանցի կենտրոնի, Կոտայքի մարզային մշակութային կենտրոնի, Կապանի մշակույթի կենտրոնի և Եղեգնաձորի մշակույթի տան գործունեության խթանման, մշակութային միջոցառումների և ժամանցի կազմակերպման, մշակույթի զարգացման, հասարակության հոգևոր պահանջների բավարարման, համայնքի բնակչությանը մշակութային կյանքին հաղորդակից դարձնելու նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Այլ մշակութային կազմակերպությունների դասին ՀՀ 2010 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 695.3 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 100%-ը: 2009 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 30.2%-ով, ինչը պայմանավորված է նախորդ տարի այս բնագավառում երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի ֆինանսավորմամբ: Հետևյալ 5 ծրագրերն իրականացվել են նախատեսված ողջ ծավալով:

333.1 մլն դրամ տրամադրվել է Հայաստանի ազգային արխիվի սուբսիդավորմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 8.1%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

Տեղեկատվական-վերլուծական և հասարակության հետ կապերի կենտրոնին պետական աջակցությունը կազմել է 42.5 մլն դրամ: Կենտրոնն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում մշակույթի ոլորտի տեղեկատվական, վերլուծական, հետազոտական և խորհրդատվական գործունեություն: Այն տեղեկատվություն է տրամադրում Հայաստանի տարածքում մշակութային գործունեության մասին, ներկայացնում է հայ մշակույթն ու արվեստը զանգվածային և էլեկտրոնային տեղեկատվության միջոցներով, պատրաստում է մշակույթի ոլորտին վերաբերող տեղեկատվական-վերլուծական նյութեր: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

«Ժողովրդական ստեղծագործության և արհեստագործության կենտրոն» ՊՈԱԿ-ին 2010 թվականի պետական բյուջեից հատկացվել է 31.7 մլն դրամ: Ծրագիրն իրականացվել է բնակչության հոգևոր և գեղագիտական զարգացման, հասարակության մեջ ժողովրդական ստեղծագործության տարածման, ավանդական ժողովրդական արհեստների պահպանման և ուսումնասիրման, ինքնագործ կոլեկտիվների, ինքնուս անհատ ստեղծագործողների, ժողովրդական վարպետների ստեղծագործությունների կատարելագործման և հանրահոչակման նպատակով:

ժողստեղծագործության և ժողովրդական արվեստի պրոպագանդման ուղղությամբ իրականացվել են 15 միջոցառումներ, ինչպես և 2009 թվականին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

«Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ին 2010 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 29.3 մլն դրամ աջակցություն: Ծրագրի նպատակը մշակութային արժեքների փորձագիտական ուսումնասիրության, մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների մշակութաբանական ու արվեստաբանական փորձաքննության իրականացումն է: 2010 թվականին կանխատեսված փորձաքննության ենթակա 4000 և նախորդ տարվա 1771 մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների դիմաց 2010 թվականին դրանց փաստացի քանակը կազմել է 1337 առարկա: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

188.4 մլն դրամ տրամադրվել է Երևանի կենդանաբանական այգու սուբսիդավորմանը, որը պահպանվել է 2009 թվականի մակարդակին:

Այլ մշակութային կազմակերպությունների դասում մշակութային օբյեկտների հիմնանորոգման ծրագրի շրջանակներում հաշվետու տարում հիմնանորոգվել է Հայաստանի գրողների միության շենքը, որի համար հատկացվել է 70.4 մլն դրամ, ապահովելով ծրագրի 99.8%-ը: Նախորդ տարվա համեմատ աշխատանքների ծավալների աճի հետ կապված՝ տվյալ ծախսերն ավելացել են 4.2 անգամ:

Արվեստի բնագավառի ծրագրերի ֆինանսավորմանը ՀՀ 2010 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 4.4 մլրդ դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 100% կատարողական: Հարկ է նշել, որ արվեստի բնագավառի բոլոր ծրագրերը, բացի «Ժողովրդական» պատվավոր կոչման արժանացած անձանց ամենամյա պատվովճարի վճարման ծառայություններից, իրականացվել են նախատեսված ողջ ծավալով: 2009 թվականի համեմատ արվեստի բնագավառում պետական բյուջեի ծախսերն աճել են 4.1%-ով կամ 175.5 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է մշակութային միջոցառումների իրականացման ծախսերի աճով:

Արվեստի բնագավառի ծախսերի մեծ մասն ուղղվել է մշակութային կազմակերպությունների պետական աջակցությանը: Մասնավորապես՝ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնին տրամադրվել է 575.3 մլն դրամ՝ 3.3%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված Էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնին տրամադրվել է 240.7 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 5.4%-ով, ինչը նույնպես պայմանավորված է Էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսերի ավելացմամբ:

Թատերական ներկայացումների ծախսերը կազմել են 902.9 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 17.9%-ով՝ պայմանավորված 2009 թվականին Երևանի քաղաքապետարանին կատարված հատկացումներով:

Թբիլիսիի Պ. Աղամյանի անվան թատրոնին հատկացվել է 20 մլն դրամ, որը պահպանվել է նախորդ տարվա մակարդակին:

Հայ մշակույթի միջազգային կենտրոններին տրամադրվել է 28.5 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 46.4%-ով՝ պայմանավորված արտարժույթի փոխարժեքի աճով:

Տարածքային համագործակցության և համահայկական մշակութային ծրագրերի իրականացմանը տրամադրվել է 18.6 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Մշակութային միջոցառումների իրականացմանը տրամադրվել է շուրջ 1.2 մլրդ դրամ: Ժամանակակից արվեստի զարգացման գործում 2010 թվականին առաջնահերթություն է համարվել երիտասարդ ստեղծագործական ներուժի ներգրավումը, նոր մրցունակ մշակութային արտադրանքի ստեղծումը, իայ ժամանակակից ստեղծագործություններով խաղացանկերի և երկացանկերի համալրումը, սփյուռքահայ արվեստագետների ներգրավումը Հայաստանի մշակութային դաշտ: Առանձնակի կարևորվել է դեբյուտային գործընթացներին պետական աջակցության ապահովումը՝ արվեստի տարբեր ոլորտներում երիտասարդ ստեղծագործական ներուժի հայտնաբերման, խթանման, մշակութային կյանքում նրանց ներգրավման և ժամանակակից մտածողության խրախուսման, ինչպես նաև սերնդափոխության շարունակականության ապահովման նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 22.6%-ով՝ պայմանավորված ծրագրված միջոցառումների թվի ավելացմամբ:

2010 թվականին երաժշտարվեստի և պարարվեստի համերգների ծրագրի շրջանակներում օգտագործվել է 864.7 մլն դրամ: Ծրագիրն ուղղվել է երաժշտարվեստի և պարարվեստի պահպանմանը, զարգացմանն ու տարածմանը, երաժշտադրամատիկական, երաժշտական կատարողական, երգի-պարի արվեստին հաղորդակցմանը, երաժշտարվեստի ու պարարվեստի վերաբերյալ տեղեկույթի ապահովմանը, ինչպես նաև նոր գաղափարների ու արժեքների տարածմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.9%-ով՝ պայմանավորված 2009 թվականին Երևանի քաղաքապետարանին կատարված հատկացումներով, ինչպես նաև Երգի պետական թատրոնին հատկացված գումարի նվազմամբ:

«Ժողովրդական» պատվավոր կոչման արժանացած անձանց ամենամյա պատվովճարների համար օգտագործվել է 34.7 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.9%-ով՝ պայմանավորված պատվովճար ստացող առանձին արվեստագետների կողմից պատվովճարները միանվագ (մի քանի ամիսը մեկ անգամ) ստանալու ցանկությամբ, ինչպես նաև

պատվովճար ստացողների թվաքանակի կրճատման (մահացության) հանգամանքով: Իսկ պատվովճարի վճարման ծառայություններին 793 հազար դրամի փոխարեն օգտագործվել է 284.4 հազար դրամ, որը պայմանավորված է տնտեսմամբ:

Արվեստի բնագավառի մշակութային օբյեկտների հիմնանորոգման ծրագրի շրջանակներում օգտագործվել է 339.3 մլն դրամ, որը 2 անգամ գերազանցել է 2009 թվականի ծախսերը՝ պայմանավորված աշխատանքների ծավալների աճով: Միջոցները հատկացվել են Երևանի Հ. Պարոնյանի անվան թատրոնի շենքի հիմնանորոգմանը:

Հայաստանի Հանրապետության համայնքային բյուջեներին սուբվենցիաների ծրագրի շրջանակներում 205.7 մլն դրամ է տրամադրվել Երևանի քաղաքապետարանին:

ՀՀ 2010 թվականի պետական բյուջեից կինեմատոգրաֆիայի բնագավառին տրամադրվել է 612.8 մլն դրամ, որը կազմում է նախատեսված ծախսերի 100%-ը: Տվյալ խմբում ընդգրկված ծրագրերը կատարվել են նախատեսված ողջ ծավալով և նախորդ տարվա համեմատ չեն փոփոխվել:

Կինոնկարների արտադրությանը տրամադրվել է շուրջ 455 մլն դրամ: Կինոարվեստի բնագավառում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության ռազմավարությունը պայմանավորված է կինոարվեստի՝ որպես տեսալսողական հաղորդակցության տեսակի պահպանման, տարածման և զարգացման, կինոարտադրությունն ապահովող տեխնոլոգիայի մշտական կատարելագործման, միջազգային կինոփառատոններին և կինոշուկաներին Հայաստանի Հանրապետության մասնակցության ապահովմամբ:

Ազգային կինոծրագրերի իրականացման համար հատկացումներն ուղղվել են Հայաստանի ազգային կինոկենտրոնի գործունեության ապահովմանը: 2010 թվականին այդ ուղղությամբ բյուջետային ծախսերը կազմել են 117.4 մլն դրամ:

33.1 մլն դրամի չափով ֆինանսավորվել են փաստավավերագրական կինոծրագրերը: Հատկացված միջոցների հաշվին ապահովվել է «Փաստավավերագրական ֆիլմերի «Հայկ» կինոստուդիա» ՊՈԱԿ-ի գործունեությունը:

Հաշվետու տարում 7.2 մլն դրամ է տրամադրվել կինո-ֆոտո-ֆոնո հավաքածուի պահպանման ծառայություններին: Ծրագրի շրջանակներում 2010 թվականին վերականգնվել է 1 ֆիլմ, իրականացվել է 13 ֆիլմի թվայնացում: Պատրաստվել է 3 անվանի կինոգործիչների (Մ. Մկրտչյան, Խ. Աբրահամյան, Ռ. Սահակյանց) ֆիլմերի 1500 խտասալիկ:

Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնման ու պահպանման նպատակով ՀՀ 2010 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 339.2 մլն դրամ կամ ծրագրային ցուցանիշի 98%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերը նվազել են 16%-ով:

Թրիլիսիում գտնվող հայ գրողների պանթեոնի պահպանման նպատակով պետական աջակցությունը կազմել է 4 մլն դրամ (100%): Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն

փոփոխվել: Հուշարձանների տեխնիկական վիճակի մոնիթորինգի նպատակով տրամադրվել է 8.3 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Հաշվետու տարում իրականացվել է 26 հուշարձանի տեխնիկական վիճակի մոնիթորինգ՝ կանխատեսված 25-ի փոխարեն:

«Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ին տրամադրվել է 60.6 մլն դրամ, որը կազմում է նախատեսված ծախսերի 100%-ը: Ծրագրի նպատակներն են պատմամշակութային հուշարձանների ուսումնասիրումը, վավերագրումը, պահպանական փաստաթղթերի փաթեթի ստեղծումը և դրանց շնորհիվ հուշարձանների պահպանության ապահովումն ու հետագա սերունդներին փոխանցումը: 2010 թվականին կանխատեսվել և իրականացվել է 837 հուշարձանների պահպանական գոտիների նախագծում և թողարկում՝ նախորդ տարվա 900-ի դիմաց: Կանխատեսվել և իրականացվել է 4000 հուշարձանների հաշվառում և ցուցակագրում՝ նախորդ տարվա նոյն ցուցանիշի դիմաց: Կանխատեսվել և իրականացվել է 515 հուշարձանի վկայագրում՝ նախորդ տարվա 467-ի դիմաց: Կանխատեսվել և իրականացվել է հայկական պատմամշակութային ժառանգության գիտատեղեկատու շտեմարանի 780 վավերագրերի կազմում և թվայնացում՝ նախորդ տարվա 800-ի դիմաց: «Պատմամշակութային գիտահետազոտական աշխատանքների և պատմամշակութային ժառանգության վերաբերյալ հանրությանը իրազեկելու նպատակով իրատարակության է պատրաստվել «Հուշարձան» տարեգրի 7-րդ հատորը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Հուշարձանների վերանորոգման և վերականգնման աշխատանքների իրականացմանը տրամադրվել է 206.2 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 96.7%-ը: Հուշարձանների պահպանության բնագավառում իրականացվող գործընթացները նպատակառության են եղել պատմամշակութային հուշարձանների հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, վերականգնման և օգտագործման գործում առկա հիմնախնդիրների բացահայտմանն ու դրանց լուծմանը: Նախորդ տարվա համեմատ ծրագրի ծախսերը նվազել են 37.3%-ով՝ պայմանավորված վերականգնվող հուշարձանների քանակի նվազմամբ:

Հայկական պատմամշակութային հուշարձանների վավերագրմանը տրամադրվել է 60 մլն դրամ աջակցություն՝ կազմելով նախատեսվածի 100%-ը: ՀՀ մշակույթի նախարարության պատվերով ծրագիրն իրականացվել է «Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող» ՀԿ-ի կողմից: Հաշվետու տարվա ընթացքում Արևմտյան Հայաստանում իրականացվել է 450 պատմամշակութային հուշարձանի վավերագրում:

2010 թվականին ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և իրադարձական ծառայությունների ծախսերը կազմել են 4.5 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.9%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ խմբի ծախսերն ավելացել են 6%-ով՝ կամ 256 մլն դրամով՝

պայմանավորված հեռուստատեսային ծառայությունների և հանրային իրազեկման հատկացումների աճով:

Հաշվետու տարում հեռուստառադիրհորդումների գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են 3.6 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.9%-ը: Հատկացումների գերակշիռ մասը՝ շուրջ 2.5 մլրդ դրամ (100%), հեռուստատեսային ծառայությունների ծրագրի շրջանակներում հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով տրամադրվել է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ին՝ որպես դրամաշնորհ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5.2%-ով, որը պայմանավորված է արտարժույթի փոխարժեքի աճով, որի արդյունքում աճել են արբանյակային հեռարձակման ծառայությունների գծով ծախսերը:

Հաշվետու տարում ռադիո ծառայությունների շրջանակներում 639.7 մլն դրամ (100%) դրամաշնորհներ են տրամադրվել «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ին՝ ռադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 1.8%-ով:

Ռադիոհեռուստատեսային հաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով 23 մլն դրամ է տրամադրվել «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ին, որը կազմել է նախատեսվածի 100%-ը և նախորդ տարվա համեմատ փոփոխություն չի կրել:

ԱՊՀ երկրներում հեռուստառադիրագրերի հեռարձակման ծրագիրը նախատեսված է հեռուստառադիրհորդումների միջոցով ԱՊՀ երկրներում տեղեկույթ տարածելու և նրանցից ստանալու համար: Այս ծրագիրը հնարավորություն է տալիս ԱՊՀ երկրներում ծանոթանալ Հայաստանի մշակութային, քաղաքական և տնտեսական կյանքին: Նշված ծրագրի գծով հաշվետու տարվա պետական բյուջեի ծախսերը կազմել են 81.9 մլն դրամ, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է և նախորդ տարվա համեմատ չի փոփոխվել:

Հասարակական կարծիքի ուսումնասիրման նպատակով «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ-ին հատկացվել է 8 մլն դրամի պետական աջակցություն (100%), որը պահպանվել է նախորդ տարվա մակարդակին:

2010 թվականի պետական բյուջեից 61.5 մլն դրամ պետական աջակցություն է հատկացվել «Տնտեսական բարեփոխումների վերլուծական տեղեկատվական կենտրոն» ՊՈԱԿ-ին, որը կատարվել է 100%-ով, իսկ նախորդ տարվա համեմատ՝ աճել 48.2%-ով: Ծախսերի աճը պայմանավորված է ծրագրված աշխատանքների ծավալների ավելացմամբ:

Այս ոլորտի պետական կառավարման մարմինների՝ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի և Հայաստանի հանրային հեռուստառադիրընկերության խորհրդի պահպանմանը տրամադրվել է 213.7 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.1%-ը և 21.7%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված աշխատողների թվաքանակի աճով:

Հաշվետու տարվա պետական բյուջեից 83.1 մլն դրամ տրամադրվել է գնումների հրապարակայնության ապահովմանը, որը կազմել է նախատեսվածի 99%-ը և 5.5%-ով զիջել է նախորդ տարվա ցուցանիշը:

«Հայաստան-Սփյուռք հեռավոր կոնֆերանսների կազմակերպում, ֆիլմաշարերի, տեսահոլովակների և հեռուստահաղորդումների պատրաստում» ծրագրին տրամադրվել է 16.6 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 100%-ը: Ծրագրի շրջանակներում պատրաստվել են ֆիլմաշարեր և տեսահոլովակներ սփյուռքի համայնքներին տրամադրելու և հեռարձակելու նպատակով: 2010 թվականին ծրագրին իրականացվել է առաջին անգամ:

2010 թվականին 796.4 մլն դրամ են կազմել հրապարակչությունների և խմբագրությունների ծախսերը՝ 99.9%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Նախորդ տարվա համեմատ հրատարակչությունների և խմբագրությունների ծախսերը գրեթե չեն փոփոխվել: Այս դասի բոլոր ծրագրերը, բացի հրատարակչական, տեղեկատվական և տպագրական ծառայությունների ծրագրից, կատարվել են 100%-ով:

Գրականության հրատարակմանը տրամադրվել է 105.5 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում 2010 թվականին հրատարակվել է 85 անուն գիրք: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5.9%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է «Սփյուռք տարեգրքի հրատարակում» ծրագրի ընդլայնմամբ և ուսումնական և հանրամատչելի գրականության հավաքագրման և առաքման համար միջոցների հատկացմամբ:

Պետական մամուլի հրատարակմանը տրամադրվել է 68.9 մլն դրամ, որը հատկացվել է «Հանրապետություն» ՓԲԸ-ին՝ «Հայաստանի Հանրապետություն» թերթի հրատարակման համար և «Հայաստանի Հանրապետություն-Ռեսպուլիկա Արմենիա» ՓԲԸ-ին՝ «Ռեսպուլիկա Արմենիա» թերթի հրատարակման համար: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակմանը տրամադրվել է 58.4 մլն դրամ, որը նույնպես պահպանվել է նախորդ տարվա մակարդակին:

«Էկոնոմիկա» հանդես ՓԲԸ-ին տրամադրվել է 38.6 մլն դրամ: 2009 թվականի համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Ոչ պետական մամուլի հրատարակմանը տրամադրվել է 47.3 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում պետական հոգածություն է ցուցաբերվում ոչ պետական մամուլին, ինչի միջոցով բնակչությանը հնարավորություն է ընձեռվում տեղեկույթ ստանալու տեղերից: Պետական աջակցություն է ցուցաբերվում նաև ազգային փոքրամասնությունների լեզվով լույս տեսնող գրական և մշակութային մամուլին: 2010 թվականին հրատարակվել են 70 անուն թերթեր և ամսագրեր: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Մանկական, մանկապատանեկան թերթերի և ամսագրերի հրատարակմանը տրամադրվել է 40.6 մլն դրամ, «Վրաստան» թերթի հրատարակմանը՝ 10 մլն դրամ, թարգմանչական ծառայություններին՝ 102 մլն դրամ: 2009 թվականի համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Մասնավորեցվող պետական գույքի վերաբերյալ տեղեկությունների հրապարակման գծով տրամադրվել է 7.3 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում «Ազգ» օրաթերթի կողմից մատուցվել են տեղեկատվական սպասարկման ծառայություններ: Հրապարակվող հայտարարությունների պակասով և հատկացված գումարի խնայողությամբ պայմանավորված՝ նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 26%-ով:

Գրականության հրատարակմանը տրամադրվել է 39 մլն դրամ աջակցություն: Հատկացումների հաշվին հրատարակվել են 49 անուն գիրք և 7 էլեկտրոնային հրատարակում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.5%-ով:

Տեղեկատվական և ուսուցողական կայքերի մշակման և սպասարկման ծառայությունների ծախսերը կազմել են 20.6 մլն դրամ՝ 17.6%-ով զիջելով 2009 թվականի ցուցանիշը, ինչը պայմանավորված է ավելի ցածր գնային առաջարկներով: Միջոցները հատկացվել են «Հայերն այսօր» էլեկտրոնային բազմալեզու օրաթերթի հրատարակման և արևելահայերենից արևմտահայերեն և հակառակը փոխարկիչը 5000 բառով համալրելու աշխատանքներին:

Հրատարակչական, տեղեկատվական և տպագրական ծառայություններին տրամադրվել է 258.2 մլն դրամ, որը կազմել է ծրագրվածի 99.7%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Հաշվետու տարում դեղեկադրության ձեռքբերման գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են 144.4 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով նախատեսված հատկացումները:

Տեղեկատվության ձեռքբերման, պահպանման և արխիվացման ծառայություններ են մատուցվել «Արմենպրես» ՓԲԸ-ի կողմից, որը տեղեկույթ է տրամադրել հանրապետության ԶԼՄ-ներին և արտերկրում գտնվող << դեսպանատներին: Այս նպատակով հատկացվել է 68.7 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Հանրային իրազեկման ապահովմանը տրամադրվել է 75.7 մլն դրամ, որը կազմել է ծրագրվածի 100%-ը: 2010 թվականին ծրագիրն իրականացվել է առաջին անգամ:

<< 2010 թվականի պետական բյուջեից 411.8 մլն դրամ է տրամադրվել կրոնական և հասարակական այլ ծառայությունների խմբի ծրագրերի ֆինանսավորմանը, որոնք կատարվել են 98%-ով:

232.2 մլն դրամ է տրամադրվել երիտասարդական ծրագրերի դասին, որոնք ընդհանուր առմամբ կատարվել են 96.5%-ով:

Տվյալ դասի ծախսերի հիմնական մասը՝ 181.4 մլն դրամ, կազմել են «Երիտասարդական ծրագրեր»-ի ծախսերը, որոնք կատարվել են 97.7%-ով: Տվյալ ծախսերը 21.7%-ով զիջել են նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված որոշ ծրագրեր չկատարելու հանգամանքով: 2010 թվականին երիտասարդական ծրագրերի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները: Հայաստանի Հանրային հեռուստաալիքով հեռարձակվել է «Ստորակետ» անվանումով երիտասարդական հեռուստահաղորդաշարը: Ի կատարումն Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի (այսուհետ՝ Խորհրդուրդ) 2010 թվականի հունիսի 19-ի նիստի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման տողով նախատեսված հասարակական կազմակերպությունների դրամաշնորհային ծրագրերի առցանց համակարգի մասին» N 6 որոշման 3-րդ կետի՝ հասարակական կազմակերպությունների կողմից դրամաշնորհային ծրագրերի հայտերի նոր՝ համացանցային ուղիղ «օնլայն» ռեժիմով ներկայացման և մրցութային ընտրության համակարգի աշխատանքներն ավելի մատչելի դարձնելու նպատակով մշակվել և Խորհրդի 2010 թվականի հոկտեմբերի 27-ի N 1 որոշմամբ հաստատվել է առցանց համակարգով ներկայացված դրամաշնորհային ծրագրերի փորձագիտական քննության ուղեցույցը: 2010 թվականին ֆինանսավորվել են երիտասարդական հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված թվով 17 ծրագրեր: Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության երիտասարդական դաշտի զարգացման հեռանկարները, ինչպես նաև 2006-2009 թվականների «Երիտասարդ առաջնորդների դպրոցի» փորձը՝ 2010 թվականի առաջին եռամյակի ընթացքում կազմակերպվեց ծրագրի վերակազմակերպում: Նոր ծրագրով առաջարկվում են նոր նպատակ ու խնդիրներ, որոնց իրականացումը կնպաստի Հայաստանի Հանրապետությունում հանրային դաշտում երիտասարդների դերի բարձրացմանը և իրականացվող երիտասարդական պետական քաղաքականության մշակման ու իրականացման գործընթացներում երիտասարդների մասնակցության ապահովմանը: Տարվա ընթացքում ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության հետ համատեղ իրականացվել է 2 միջոցառում: Ապահովվել է միջազգային, այդ թվում՝ ԱՊՀ մասնակից երկրների երիտասարդության հարցերով խորհրդի 2010 թվականի աշխատանքային ծրագրով հաստատված՝ մասնակից երկրներում իրականացված միջոցառումներում ընդհանուր առմամբ ավելի քան 60 երիտասարդների (երիտասարդական պատվիրակություններ և անհատ երիտասարդների) մասնակցություն:

Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքին դեմ պայքարի միջոցառումներին տրամադրվել է 3.8 մլն դրամ կամ նախատեսվածի 47.9%-ը, որը պայմանավորված է փաստացի

աշխատանքների ծավալով: Արդյունքում նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 50.2%-ով:

Սփյուռքի երիտասարդության՝ Հայաստան այցելությունների կազմակերպման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 35 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագիրն իրենից ներկայացնում է 13-20 տարեկան սփյուռքահայ երիտասարդների երկշաբաթյա հյուրընկալությունը հայաստանյան ընտանիքներում: 2010 թվականին ծրագրին մասնակցել է 25 երկրներից ժամանած 553 երիտասարդ՝ 2009 թվականի 13 երկրներից ժամանած 307 մասնակցի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 41%-ով:

Հայաստանում ինտելեկտուալ խաղերի զարգացմանը տրամադրվել է 12 մլն դրամ աջակցություն՝ ապահովելով 100% կատարողական: 2010 թվականին ծրագրին իրականացվել է առաջին անգամ:

«Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ» դասի ծախսերը 2010 թվականին կազմել են 179.6 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով ծրագրը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմների մասով) նպատակով տրամադրվել է 412.1 մլն դրամ, որը կազմել է ծրագրվածի 99.2%-ը: Միջոցները հատկացվել են ՀՀ մշակույթի ու ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություններին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.7%-ով:

### Կրթություն

2010 թվականի կրթության բնագավառում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 97.8 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 98.2% կատարողական: Ծրագրից շեղումը իհմնականում պայմանավորված է կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների ծախսերի ցածր կատարողականով: Հիմնականում նշված ոլորտի, ինչպես նաև միջնակարգ ընդհանուր կրթության ծախսերի նվազման արդյունքում նախորդ տարվա համեմատ կրթության ծախսերը նվազել են 9.1%-ով կամ 9.7 մլրդ դրամով:

Հաշվետու տարում կրթության ծախսերից 21.8 մլրդ դրամն ուղղվել է տարրական ընդհանուր կրթության, 47.3 մլրդ դրամը՝ միջնակարգ ընդհանուր կրթության ծրագրերին՝ ամբողջովին ապահովելով նախատեսված ծավալը: Նշված ծախսերի տեսակարար կշիռը կրթության ծախսերում կազմել է համապատասխանաբար 22.3%-ը և 48.3%-ը:

Հաշվետու տարում տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում հանրակրթական ուսուցման ծախսերը կատարվել են 100%-ով՝ կազմելով 63.9 մլրդ դրամ, որից 20.5 մլրդ դրամը կազմել են տարրական, 30.6 մլրդ դրամը՝ հիմնական ընդհանուր կրթության, 12.9 մլրդ դրամը՝ միջնակարգ ընդհանուր կրթության ծախսերը: Նախորդ տարվա համեմատ հանրակրթական ուսուցման ծախսերը նվազել են 3.2%-ով, որը հիմնականում պայմանավորված է աշակերտների թվի նվազմամբ: Հանրակրթության համակարգում 2010 թվականին գործել է 1367 դպրոց 369.6 հազ. աշակերտով՝ նախորդ տարվա 401.1 հազ.-ի դիմաց: 2010 թվականին դպրոցների մանկավարժների հաշվարկային միջին ամսական աշխատավարձը կազմել է 118093 դրամ, վարչական անձնակազմինը՝ 176143 դրամ:

Երաժշտական դպրոցներում ուսուցման գծով տրամադրվել է 254.3 մլն դրամ: Նշված գումարից շուրջ 7.9 մլն դրամը կազմել է երաժշտական դպրոցներում սովորողների կրթաթոշակը: Հատկացումների միջոցների հաշվին ապահովվել է երևանի Չայկովսկու անվան միջնակարգ մասնագիտական դպրոցի գործունեությունը, որտեղ 2010 թվականին սովորել է 547 աշակերտ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1%-ով կամ 2.6 մլն դրամով:

Հատուկ կրթության ծախսերը կատարվել են 99.9%՝ կազմելով շուրջ 2.5 մլրդ դրամ, որից շուրջ 853 մլն դրամը՝ տարրական, 1.3 մլրդ դրամը՝ հիմնական, 410.7 մլն դրամը՝ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության գծով: 2009 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 15.3%-ով կամ 458.1 մլն դրամով, որը հիմնականում կապված է աշակերտների թվի նվազման հետ: Հաշվետու տարում հատկացված միջոցներով գործել է 24 դպրոց 2675 աշակերտով՝ նախորդ տարվա 3450-ի դիմաց:

Անցած տարում տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում արտակարգ ունակություններ դրսևորած երեխաների հանրակրթության կազմակերպման համար ծախսվել է ավելի քան 1.5 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 100%-ը: Նշված գումարից 13.4 մլն դրամը տրամադրվել է արտակարգ ունակություններ դրսևորած երեխաների կրթաթոշակների վճարմանը: 2009 թվականի համեմատ արտակարգ ունակություններ դրսևորած երեխաների հանրակրթության ծախսերն աճել են 8.3%-ով, ինչը պայմանավորված է աշակերտների թվի ավելացմամբ:

2010 թվականին տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում ներառական կրթության ծախսերը կատարվել են 99.6%-ով՝ կազմելով 628.2 մլն դրամ, որից 272.4 մլն դրամը՝ տարրական, 325.7 մլն դրամը՝ հիմնական ընդհանուր կրթության և 30.1 մլն դրամը՝ միջնակարգ ընդհանուր կրթության ծախսերն են: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 80.8%-ով՝ հիմնականում պայմանավորված աշակերտների թվաքանակի աճով և գաղի սակագնի բարձրացմամբ:

Երեկոյան ուսուցման ծրագրով ֆինանսավորվել են Շիրակի մարզի և Երևան քաղաքի երեկոյան դպրոցները, որոնց տրամադրվել է շուրջ 43.9 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100%-ը, իսկ նախորդ տարվա համեմատ նվազելով 3.1%-ով, ինչը կապված է աշակերտների թվի նվազման հետ:

«Ավագ դպրոցների համակարգի ներդրում» ծրագրի իրականացման համար տրամադրվել է 142.8 մլն դրամ՝ 99.9%-ով ապահովելով նախատեսված հատկացումները: Հաշվետու տարում ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել 43 դպրոցների թվով 129 լաբորատորիաների վերագինման համար անհրաժեշտ գույքի և սարքավորումների լրակազմ: 2009 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 47%-ով, որը պայմանավորված է 2010 թվականի պետական բյուջեով պակաս դրամական միջոցներ նախատեսելու հանգամանքով:

2010 թվականին նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ծախսերը կազմել են շուրջ 4.7 մլրդ դրամ կամ նախատեսված հատկացումների 99.7%-ը, որից 1.8 մլրդ դրամը՝ նախնական մասնագիտական (արհեստագործական), 2.9 մլրդ դրամը՝ միջին մասնագիտական կրթության ծախսերն են: Նշված դասերի գծով ծրագրված ցուցանիշները կատարվել են համապատասխանաբար 99.6%-ով և 99.8%-ով:

Հաշվետու տարում նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության ծախսերը կազմել են 1.5 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային ցուցանիշի 99.8% կատարում և պահպանելով նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագիրն իրականացվել է 30 ուսումնական հաստատությունների կողմից, որոնցում կրթություն է ստացել միջին հաշվով 5178 աշակերտ: Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական հաստատություններում սովորող ուսանողներին տրամադրվել է 302.1 մլն դրամ կրթաթոշակ՝ 98.7%-ով ապահովելով նախատեսված հատկացումները: Տնտեսումը կապված է կրթաթոշակ ստացող սովորողների թվի նվազման հետ:

2010 թվականին միջին մասնագիտական կրթության ոլորտում 2.6 մլրդ դրամ է տրամադրվել միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների, 278.8 մլն դրամ՝ միջին մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակների վճարմանը: Նշված ծրագրերը կատարվել են համապատասխանաբար 100%-ով և 98.5%-ով: Տնտեսումը կապված է նախատեսված կրթաթոշակ ստացող սովորողների թվի նվազման հետ: Նախորդ տավա համեմատ նշված խմբի ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

2010 թվականին ՀՀ պետական բյուջեից շուրջ 7.5 մլրդ դրամ տրամադրվել է բարձրագույն կրթության բնագավառին, որից շուրջ 6.9 մլրդ դրամը բարձրագույն մասնագիտական կրթության ծախսերն են, 584.9 մլն դրամը՝ հետքուհական մասնագիտական կրթության ծախսերը: Բարձրագույն կրթության ծախսերի տարեկան ծրագիրն ապահովվել է 99.9%-ով, իսկ նախորդ

տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 0.9%-ով կամ 67.7 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ուսանողների միջին տարեկան թվի նվազմամբ:

Բարձրագույն մասնագիտական կրթության բնագավառին կատարված հատկացումների հաշվին իրականացվել են երեք ծրագրեր, որոնցում մեծ տեսակարար կշիռ ունեն բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրման համար կատարված հատկացումները: Նշված ծրագրի գծով օգտագործվել է շուրջ 4.4 մլրդ դրամ, որը ֆինանսավորվել է 100%-ով: Բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակներին տրամադրվել է շուրջ 1.3 մլրդ դրամ՝ ամբողջովին ապահովելով նախատեսված ցուցանիշը:

Հաշվետու տարում հետբուհական մասնագիտական կրթության բնագավառի ծախսերը կատարվել են 99.1%-ով՝ կազմելով շուրջ 584.9 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ հետբուհական մասնագիտական կրթության ծախսերն աճել են 5%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է հետբուհական մասնագիտական կրթության գծով տրամադրված նպաստների և կրթաթոշակների ծախսերի աճով: Հետբուհական մասնագիտական կրթության ոլորտին կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 5 ծրագրեր: Մասնավորապես՝ 26 մլն դրամ տրամադրվել է գիտական կադրերի պատրաստման գծով նպաստներին, որը կատարվել է 100%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 2.8%-ով՝ պայմանավորված ասպիրանտների թվի ավելացմամբ:

Ասպիրանտական և դոկտորանտական կրթաթոշակների համար 2010 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 49.5 մլն դրամ, որը կատարվել է 100%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 1.7%-ով՝ պայմանավորված կազմակերպություններում եղած ասպիրանտների և դոկտորանտների թվի աճով:

Խմբում ընդգրկված՝ սփյուռքագիտության ոլորտում գիտական կադրերի պատրաստման գծով տրամադրվել են 3 մլն դրամ նպաստներ, որոնք ֆինանսավորվել են նախատեսված ծավալով և պահպանվել նախորդ տարվա մակարդակին: Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրման և հետբուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակի ծախսերը համապատասխանաբար կազմել են 324.6 մլն և 181.8 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի կատարումը 98.8%-ով և 99.4%-ով: Նախորդ տարվա համեմատ հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների ծախսերն ավելացել են 5.3%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի ավելացմամբ և կապիտալ ներդրումներով: Կրթաթոշակների ծախսերի աճը կազմել է 5.7%՝ պայմանավորված օրոքինատորների թվաքանակի աճով և նրանց կրթաթոշակի ավելացմամբ, որը հավասարեցվել է նվազագույն աշխատավարձին: Միևնույն ժամանակ նվազել է բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանող ասպիրանտների և դոկտորանտների թիվը:

Հաշվետու տարում ըստ մակարդակների չդասակարգվող կրթության խմբի ծախսերը կազմել են ավելի քան 3.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.5%-ը, որից 2.3 մլրդ դրամը արտադրոցական դաստիարակության, 828.5 մլն դրամը՝ լրացուցիչ կրթության ծախսերն են: 2009 թվականի համեմատ ըստ մակարդակների չդասակարգվող կրթության ծախսերն ավելացել են 19.1 մլն դրամով (0.6%-ով):

Շուրջ 1.4 մլրդ դրամ է հատկացվել արտադրոցական դաստիարակության ծրագրի ֆինանսավորմանը՝ ապահովելով 99.7% կատարողական: 2009 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են շուրջ 20 մլն դրամով (1.4%-ով): Իմանականում պայմանավորված Երևան քաղաքի կարգավիճակի փոփոխությամբ, ինչի արդյունքում նշված միջոցները տրամադրվել են սուբվենցիաների տեսքով: Հարկ է նշել, որ մյուս մարմինների գծով արձանագրվել է ծախսերի աճ:

Հախմատի մրցույթների պատրաստման ծառայություններին 2010 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 10.7 մլն դրամ, որն օգտագործվել է նախատեսված ամբողջ ծավալով: 2009 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 2.5%-ով:

«Արտադրոցական դաստիարակություն հասարակական կազմակերպությունների կողմից» ծրագրի համար նախատեսված 423.3 մլն դրամը նույնականացնելով օգտագործվել է:

Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցման նպատակով 2010 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 219 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 98.3%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 24.6%-ով, որը պայմանավորված է Երևան քաղաքի կարգավիճակի փոփոխությամբ, ինչի արդյունքում լարային նվագարանների գծով ուսուցման համար նախատեսված միջոցները Երևանի համայնքային բյուջեին տրամադրվել են սուբվենցիաների տեսքով:

Երևանի բյուջեին հաշվետու տարվա ընթացքում արտադրոցական դաստիարակության ծրագրերի ֆինանսավորման համար նախատեսվել է 113.1 մլն դրամ սուբվենցիա, որն ամբողջությամբ օգտագործվել է:

Երաժշտական և արվեստի դպրոցներում ուսումնամեթոդական աշխատանքներին տրամադրվել է շուրջ 48.1 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում Մշակութային կրթության աջակցության հիմնադրամը Երևանի 1 և մարզային 10 ներկայացուցչություններով հանրապետության երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների սաներին ու ուսուցիչներին ցուցաբերել է ուսումնամեթոդական և գործնական աջակցություն: Վերապատրաստման դասալսումներին մասնակցել է 758 ուսուցիչ, վարպետության դասընթացներին՝ 500 մանկավարժ և 450 աշակերտ: Մշակվել են երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների միասնական ուսումնական պլաններ և շուրջ 17 առարկայական ծրագրեր:

2010 թվականի պետական բյուջեով երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների համար ուսումնական նոր ծրագրերի, դասագրքերի, մեթոդական ձեռնարկների մշակման և հրատարակման համար նախատեսված 17.1 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում 2010 թվականին տպագրվել են գեղարվեստական կրթության 35 անուն ուսումնական նոր ծրագրեր, դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ: Հրատարակված գրականությունն անվճար տրամադրվել է հանրապետության բոլոր համայնքների երաժշտական և արվեստի դպրոցներին: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերը փոփոխության չեն ենթարկվել:

Արտադրողական դաստիարակության բնագավառում նախատեսված՝ «Վինդսերֆինգ մարզաձևին առնչվող ծառայություններ» և «Մարզակառուցներին, մարզադպրոցներին և մարզական հասարակական կազմակերպություններին գույքով ապահովում» ծրագրերի գծով նախատեսվել է համապատասխանաբար 43.6 մլն դրամ և 50 մլն դրամ, որոնք նախատեսված ամբողջ ծավալով ֆինանսավորվել են: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

Մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների վերապատրաստման կազմակերպման նպատակով հատկացվել է 5.4 մլն դրամ կամ նախատեսվածի 78.2%-ը, որը տնտեսման արդյունք է:

2010 թվականին պետական բյուջեից 828.5 մլն դրամ է տրամադրվել լրացուցիչ կրթությանը՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 99.3%-ը: Նախորդ տարվա համեմատ լրացուցիչ կրթության ծախսերը նվազել են 2.2%-ով:

«Հաղաքացիական ծառայողների վերապատրաստման գծով պետական պատվերի գծով կատարվել են շուրջ 23.7 մլն դրամի ծախսեր, որն օգտագործվել է նախատեսված ամբողջ ծավալով: 2010 թվականի ընթացքում վերապատրաստվել է 1827 քաղաքացիական ծառայող՝ նախորդ տարվա 2481-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 15.1%-ով, որը պայմանավորված է օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին իրականացված վերապատրաստումներով (միջազգային կազմակերպությունների կողմից, վարկային և դրամաշնորհային ծրագրերով), օրենքով նախատեսված համապատասխան մարմիններում տեղի ունեցող վերակազմավորումներով, կադրերի հոսունությամբ:

Լրացուցիչ կրթության հետևյալ ծրագրերը՝ «Հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների վերապատրաստման ծառայություններ», «Լրացուցիչ կրթության ուսուցման գծով պետական պատվեր», «Հարդարադատության նախարարության հատուկ ծառայողների վերապատրաստում և հատուկ ուսուցում» և «Հազարամյակի աշխատակազմի պետական ծառայողների վերապատրաստում», ֆինանսավորվել են ամբողջությամբ, որոնց տրամադրվել է

համապատասխանաբար 85.0 մլն, 17.7 մլն, 154.8 մլն և 905.8 հազ.դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե փոփոխության չեն ենթարկվել:

Հաշվետու տարում ընտրական հանձնաժողովների անդամների մասնագիտական դասընթացների կազմակերպման ծախսերը կազմել են շուրջ 15 մլն դրամ կամ նախատեսվածի 98.9%-ը, որը տնտեսման արդյունք է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 42.4%-ով՝ պայմանավորված մասնակիցների թվի նվազմամբ:

«Կադրերի պատրաստման և վերապատրաստման ծառայություններ» ծրագրին հատկացվել է 62.2 մլն դրամ, որը ֆինանսավորվել է ամբողջությամբ: Ծրագիրը նպատակ ունի ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում պետական հիմնարկների աշխատակիցներին ուսուցանելու արտակարգ իրավիճակներում կողմնորոշվելու գիտելիքներ և հմտություններ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

Օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատություններ գործուղված փրկարարական ծառայողների ուսուցման ծախսերը կազմել են շուրջ 11.3 մլն դրամ, որն օգտագործվել է նախատեսված ամբողջ ծավալով: ԱՊՀ անդամ երկրների փրկարարական ծառայողների ընդհանուր վերապատրաստման ծրագրով և ՌԴ կառավարության որոշման համաձայն յուրաքանչյուր տարի Մոսկվայի քաղաքաշտպանության ակադեմիա **ՀՀ-ից** անվճար վերապատրաստման են գործուղվում 3 ունկնդիր, որոնց գործուղման, ակադեմիայի հանրակացարանում բնակեցման և կրթաթոշակների վճարման համար **ՀՀ պետական բյուջեից** հատկացվում են միջոցներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.1%-ով:

Բուժանձնակազմի մասնագիտացման, շարունակական ուսուցման և վերապատրաստման ծախսերը կազմել են ավելի քան 141.9 մլն դրամ կամ նախատեսվածի 97.7%-ը: Շեղումը տնտեսման արդյունք է: Ծրագրով ֆինանսավորումը ուղղված է եղել լրացուցիչ կրթության գծով պետական պատվերով սովորողների ուսուցման գործընթացի ապահովմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.9%-ով կամ 2.8 մլն դրամով:

Հաշվետու տարում «Դատավորների, դատական ծառայողների, դատական կարգադրիչների վերապատրաստման ծառայություններ» ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների իրականացման ծախսերը կազմել են շուրջ 159.4 մլն դրամ կամ 98.6% կատարողական, որը տնտեսման արդյունք է: Նախորդ տարվա համեմատ այս ծրագրի ծախսերը նվազել են 12.8%-ով կամ շուրջ 23.4 մլն դրամով, ինչը պայմանավորված է վերապատրաստվողների թվի կրճատմամբ:

«Վերապատրաստման ծառայություններ» և «Մասնագիտական վերապատրաստում ստացող ունկնդիրների կրթաթոշակ» ծրագրերը ֆինանսավորվել են ամբողջությամբ, որոնց տրամադրվել է համապատասխանաբար շուրջ 131 մլն և 25.6 մլն դրամ: Վերապատրաստման ծառայություններին հատկացված միջոցները նախորդ տարվա համեմատ ավելացել են 41.1%-ով, քանի որ 2010

թվականին բացի դատախազության աշխատակիցներից, ֆինանսավորվել են նաև ՀՀ հատուկ քննչական ծառայության և ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակիցների վերապատրաստման ծախսերը։ Մասնագիտական վերապատրաստում ստացող ունկնդիրների կրթաթոշակների ծախսերը նախորդ տարվա համեմատ փոփոխություն չեն կրել։

2010 թվականի պետական բյուջեի կրթության ոլորտի ծախսերի 13.2%-ն ուղղվել է կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների ֆինանսավորմանը։ Նշված ծախսերը կազմել են շուրջ 12.9 մլրդ՝ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 88.1%-ը։ Շեղումը հիմնականում պայմանավորված է նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման բարեփոխումներ ծրագրի շրջանակներում նախնական մասնագիտական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հիմնանորոգման ու ՀԲ աջակցությամբ իրականացվող կրթության որակի և համապատասխանության երկրորդ ծրագրերի ցածր կատարողականով։

Սկիզբան հայկական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման ծախսերը կազմել են շուրջ 27.1 մլն դրամ, որոնք կատարվել են նախատեսված ամբողջ ծավալով։ Ծրագրի շրջանակներում 2010 թվականին վերապատրաստվել են 75 սկիզբահայ ուսուցիչներ՝ նախատեսված 100-ի դիմաց։ Նախատեսված միջոցները ծախսվել են ամբողջությամբ, քանի որ աճել են այցելության հետ կապված ծախսերը՝ ավելացել են կեցության ծախսերը, և, ի տարբերություն 2009 թվականի, կազմակերպվել են մշակութային միջոցառումներ ու էքսկուրսիաներ Հայաստանի տարածքում։ Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը 1.5 անգամ աճել են, քանի որ 2009 թվականին Զավախքի ուսուցիչները չեն կարողացել մասնակցել դասընթացներին։

Տվյալ խմբում ընդգրկված՝ կրթական օբյեկտների հիմնանորոգման ծախսերը կազմել են 3.2 մլրդ՝ դրամ՝ 99.1%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը։ Ծրագրի շրջանակներում հիմնանորոգվել են 117 կրթական օբյեկտներ (Երևանում՝ 27, մարզերում՝ 90)՝ նախորդ տարվա 199-ի դիմաց։ Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 66.3%-ով։

Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հիմնանորոգման ծախսերին տրամադրվել է շուրջ 87.6 մլն դրամ՝ ապահովելով 99.7% կատարողական։ Ծրագրի շրջանակներում հիմնանորոգվել են 3 միջին մասնագիտական կրթական օբյեկտներ (Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջ, Հրազդանի պետական քոլեջ և Երևանի Փ.Մերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջ)։ 2009 թվականին ևս ծրագրի շրջանակներում հիմնանորոգվել է 3 օբյեկտ, սակայն ծախսերը նվազել են 73.4%-ով, որը պայմանավորված է կատարված աշխատանքների ծավալների կրճատմամբ։

Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման բարեփոխումներ ծրագրի շրջանակներում նախնական մասնագիտական և միջին մասնագիտական

ուսումնական հաստատությունների հիմնանորոգման ծրագրին հատկացվել է 1.2 մլրդ դրամ՝ 74.1%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը: Ծախսերի տնտեսումն առաջացել է կայացած մրցույթների արդյունքում: Նշված ծրագրի գծով 2009 թվականին պետական բյուջեից միջոցներ չեն հատկացվել:

Ուսանողներին գեղչային գներով հանրակացարանային պայմանների տրամադրման համար նախատեսված 21.2 մլն դրամի ֆինանսավորումը կատարվել է ամբողջությամբ: Հաշվետու տարում հանրակացարանների բնակիչների թիվը կազմել է 400: Նախորդ տարվա համեմատ այս ծրագրի ծախսերն ավելացել են 3.3%-ով, ինչը պայմանավորված է գաղի սակագնի բարձրացմամբ:

Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների խմբում ընդգրկված՝ կրթական օբյեկտների շինարարությանը << 2010 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 760.4 մլն դրամ՝ կազմելով նախատեսված գումարի 99.7%-ը: Ծրագրի շրջանակներում հաշվետու տարում կատարվել են շինարարական աշխատանքներ 17 դպրոցներում՝ նախորդ տարվա 23 դպրոցի դիմաց: Արդյունքում նախորդ տարվա համեմատ ծրագրի գծով բյուջետային ծախսերը նվազել են 55.2%-ով:

2010 թվականին շուրջ 69.3 մլն դրամ է տրամադրվել մարզական օբյեկտների շինարարությանը՝ ապահովելով 99% կատարողական: Ծրագրի շրջանակներում հիմնանորոգվել են 3 մարզադպրոց: 2009 թվականին նույնպես ծրագրի շրջանակներում հիմնանորոգվել է 3 մարզադպրոց, սակայն արձանագրվել է ծախսերի նվազում 69%-ով, որը պայմանավորված է կատարված աշխատանքների ծավալների կրճատմամբ:

Ավագ դպրոցների շենքերի հիմնանորոգման ծախսերը կատարվել են 99.5%-ով և կազմել 166.6 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում կատարվել են 8 ավագ դպրոցների հիմնանորոգման աշխատանքներ (2-ը՝ Երևան քաղաքում, 6-ը՝ մարզերում՝ նախորդ տարվա 25-ի դիմաց: Արդյունքում 2009 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 90.3%-ով:

Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպմանն ուղղվել է 213.7 մլն դրամ, որը ֆինանսավորվել է ամբողջությամբ: 2010 թվականին ծրագրի շրջանակներում, ինչպես և 2009 թվականին, կազմակերպվել է 3000 երեխայի ամառային հանգիստը: 2009 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 1.8%-ով:

Ավարտական փաստաթղթերի գովասանագրերի, դասամատյանների, մեղալների, ծրարների, ուսումնական ծրագրերի, մանկավարժական պարբերականների և ուսումնադիտողական պարագաների ծեղքբերման ծրագրի գծով ծախսվել է շուրջ 401 մլն դրամ՝ ապահովելով 99.7% կատարողական: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն ավելացել են 1.6%-ով:

Տարրական դասարանների աշակերտներին անվճար դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովում և ավագ դպրոցների դասագրքերի հրատարակման ծրագրի

շրջանակներում ՀՀ 2010 թվականի պետական բյուջեից կատարվել են ավելի քան 764.6 մլն դրամի ծախսեր՝ 100%-ով կատարելով ծրագրային ցուցանիշը։ Նախորդ տարվա համեմատ՝ այս ծախսերը մնացել են անփոփոխ։

ՀՀ հեռավոր, սահմանամերծ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական դպրոցների մանկավարժներին փոխհատուցման նպատակով օգտագործվել է 55.8 մլն դրամ՝ 99.9%-ով կատարելով ծրագիրը։ Ծրագրի շրջանակներում գործուղված մանկավարժների թիվը կազմել է 266՝ նախորդ տարվա 270-ի դիմաց։ Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.7%-ով։

Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների մատուցման նպատակով տրամադրվել է շուրջ 50.8 մլն դրամ՝ ապահովելով 98.9% կատարողական։ Ծրագրի շրջանակներում իրականացվել է 7 մարզերի գյուղական բնակավայրերից մանկավարժների և դպրոցահասակ երեխաների տեղափոխումը։ Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 2.3%-ով։

Նախատեսված ամբողջ ծավալով իրականացվել են նաև հետևյալ ծրագրերը՝

- ռազմագիտության կարինետների վերականգնման համար 2010 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 5.3 մլն դրամ։ Ձեռք է բերվել մի քանի զինատեսակների հատկանիշների մասին պատմող 3900 օրինակ DVD տեսասկավառակ։

- դպրոցականների հանրապետական սպարտակիադայի անցկացման համար տրամադրվել է 35 մլն դրամ։ Անց են կացվել ՀՀ անկախության 19-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների հանրապետական 19-րդ խաղերը 7 մարզաձևներից, յուրաքանչյուր մարզաձև անցկացվել է չորս փուլով։ Խաղերին մասնակցել են շուրջ 2652 մասնակիցներ։

- դպրոցականների օլիմպիադաների անցկացման ծրագրի գծով ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 33.2 մլն դրամ։ Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 19.4%-ով։ Վերջինս կապված է 2009 թվականի համահայկական հայոց լեզվի և հայ գրականության օլիմպիադայի անցկացման հետ, որը կազմակերպվում է 2 տարին 1 անգամ։ Անց է կացվել հանրապետության դպրոցականների առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլ հանրակրթական 15 առարկաներից, որին մասնակցել են շուրջ 1034 աշակերտներ։

- Համակարգչային և ինտերնետային կապի ծառայությունների ծախսերը հաշվետու տարում կազմել են շուրջ 698.0 մլն դրամ։ Ծրագիրն իրականացվել է 944 դպրոցում։ Նախորդ տարվա նկատմամբ ծախսերն ավելացել են 150.9 մլն դրամով կամ 27.6%-ով, որը պայմանավորված է 300 նոր դպրոցների սպասարկման հանգամանքով։

- ավելի քան 441.4 մլն դրամ տրամադրվել է գնահատման և թեստավորման ծառայություններին։

- հանրակրթությունում փորձարարական մանկավարժական ծրագրերի իրականացմանը տրամադրվել է 94.3 մլն դրամ: Ծրագրում ընդգրկված աշակերտների թիվը 2010 թվականին կազմել է 4000, վերապատրաստվել են նաև թվով 244 ուսուցիչ և դաստիարակ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխության չեն ենթարկվել:

Սփյուռքի հայկական կրթական հաստատությունների համար ուսումնական գրականության և օժանդակ նյութերի տրամադրման համար 2010 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 68.7 մլն դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշների 98.1%-ը: Հատկացված միջոցների հաշվին ձեռք են բերվել 15000 հատ 34 անվանում դասագիրք և 24900 հատ 103 անվանում օժանդակ նյութեր: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.8%-ով:

Ավելի քան 12.6 մլն դրամ է տրամադրվել Զավախքի դպրոցների համար գույքի ձեռքբերման նպատակով, որը կատարվել է 77.7%-ով: Տնտեսումն արձանագրվել է մրցույթների արդյունքում: Ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել 360 համակազմ ուսուցչական գույք: 2009 թվականի համեմատ տվյալ ծախսերը նվազել են 50.1%-ով կամ 12.7 մլն դրամով:

Հաշվետու տարվա ընթացքում Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Կրթության որակի և համապատասխանության ծրագրի շրջանակներում ծախսվել է 504 հազար դրամ՝ նախատեսված 35.3 մլն դրամի դիմաց: Ծրագիրն ավարտվել է 2010 թվականի առաջին եռամյակում, ՀՔ կողմից վարկային միջոցներ չեն ստացվել: 2010 թվականին իրականացվել է ծրագրի առողջիւն, որը ֆինանսավորվել է ՀՀ կառավարության համաֆինանսավորման և նախորդ տարվա վարկային միջոցների մնացորդի հաշվին:

2010 թվականի պետական բյուջեից հատուկ դպրոցների համար նախատեսված ծրագրերի, դասագրքերի, ձեռնարկների, ուսումնական այլ նյութերի մշակման և հրատարակման համար կատարվել են 16 մլն դրամի ծախսեր, որն օգտագործվել է նախատեսված ամբողջ ծավալով: Ծրագրի շրջանակներում մշակվել և տպագրվել են 10 անուն ձեռնարկներ և ուսումնական այլ նյութեր՝ թվով 10165 օրինակ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.2%-ով:

2010 թվականին, ինչպես և 2009 թվականին, ակադեմիական փոխնանաշման և շարժունության ծառայությունների ծրագրին պետական բյուջեից նախատեսվել և տրամադրվել է 41.7 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում մշակվել է 635 անուն փաստաթուղթ:

Բարձրագույն մասնագիտական կրթության գնահատման համակարգի բարեփոխումների շրջանակներում հաշվետու տարում նախատեսված 80 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Նշված ծրագրի շրջանակներում անցկացվել են մեկ հանրապետական և մեկ միջազգային կոնֆերանս, իրականացվել են Միջքուհական կոնսորցիոնի գործառույթները, ապահովվել է ԲՈՒՀ-երի ներքին կառավարման համակարգի կատարելագործման և Բոլոնիայի գործընթացի հիմնական դրույթների իրագործման նպատակով անցկացված դրամաշնորհային մրցույթների

արդյունքում հաղթող ճանաչված թվով 6 կազմակերպությունների ֆինանսավորումը և այլն: 2009 թվականի տրամադրվել են նույնքան դրամական միջոցներ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի (<ՍՆՀ>) երրորդ ծրագրի շրջանակներում կատարվել են 177.2 մլն դրամի ծախսեր՝ կազմելով նախատեսված ցուցանիշի 84%-ը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ համաձայն <ՍՆՀ կանոնակարգի ծրագրերի մեկնարկը չի տրվում մինչև համայնքների ներդրման ստանալը: Համայնքների ներդրման ուշացման պատճառով 2 ծրագիր նախատեսվածից ուշ են մեկնարկել: 2010 թվականին ծրագրի շրջանակներում ավարտվել են շինարարական աշխատանքները 3 կրթական հիմնարկներում:

Մարզական օբյեկտների հիմնանորոգմանն ուղղվել է շուրջ 195.3 մլն դրամ՝ նախատեսված 196.1 մլն դրամի դիմաց: Ծրագրի շրջանակներում հիմնանորոգման աշխատանքներ են կատարվել 2 մարզադպրոցում՝ նախորդ տարվա 1 մարզադպրոցի դիմաց: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 16.5 անգամ, որը պայմանավորված է կատարված աշխատանքների ծավալներով:

Հաշվետու տարում պետական բյուջեից 491.5 մլն դրամ տրամադրվել է կրթության բովանդակային և մեթոդական սպասարկման ու հանրապետության հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման ծրագրին՝ 100%-ով կատարելով ծրագրային ցուցանիշը: Վերապատրաստման դասընթացներին մասնակցած ունկնդիրների թիվը կազմել է 10998 մարդ, մշակված և փորձագիտական եզրակացություն ստացած էջերի թիվը կազմել է 41587: 2009 թվականի համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

«Երեխաների ֆիզիկական, մտավոր և (կամ) հոգեկան զարգացման առանձնահատկությունների բացահայտում և գնահատում» ծրագրի գծով << 2010 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են 343.8 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա նկատմամբ նշված ծախսերն ավելացել են 52.6%-ով, որը պայմանավորված է 2009 թվականին ստեղծված Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի Կապանի մասնաճյուղի գործունեության համար նախատեսված միջոցների ավելացմամբ: 2010 թվականին հատուկ կրթության ուսուցման աշխատանքների կազմակերպման մասով երեխաների միջին տարեկան թիվը կազմել է 141, կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների կրթության կարիքների գնահատման մասով՝ 129:

2010 թվականի պետական բյուջեից նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման բարեփոխումների ուղղությամբ կատարվել են ավելի քան 161.8 մլն դրամի ծախսեր, որոնք ապահովել են 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում մշակվել են մի շարք մասնագիտությունների չափորոշչներ, ուսումնական պլաններ և մոդուլային ծրագրեր, ուսումնական ձեռնարկներ, վերապատրաստվել են հաստատությունների

տնօրեններ, փոխտնօրեններ, մանկավարժներ, փորձագետներ, կատարվել են հետազոտական, բարեփոխումների արդյունքների գնահատման աշխատանքներ և այլն: 2009 թվականի համեմատ այս ծրագրի ծախսերը նվազել են 21.8%-ով, որը պայմանավորված է 2010 թվականին իրականացված միջոցառումների քանակի նվազմամբ:

2010 թվականին, ինչպես և 2009 թվականին, 65.7 մլն դրամ է տրամադրվել մասնագիտական կրթության որակի ապահովման ծառայություններին՝ ամբողջությամբ ապահովելով ծրագրի կատարումը:

Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցման ծախսերը կատարվել են նախատեսվածի չափով՝ կազմելով 120 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում հանրապետության թվով 1385 դպրոցների հավասարաչափ հատկացվել են միջոցներ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցման նպատակով:

Դասական երաժշտական բարձրագույն կրթության զարգացմանը տրամադրվել է 43.4 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը նվազել են 21.7%-ով: 2010 թվականին երիտասարդական նվազախմբի կազմում աշխատել են 94 երաժիշտներ՝ 2009 թվականի 120-ի դիմաց:

ՀՀ արտաքին գործերի նախարարության արտաքրութեային միջոցներով, որոնք հատկացվում են ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից, «Ամառային ճամբար, միջազգային դպրոց երիտասարդ աստղագետների համար, ուսուցողական դասընթացներ ներառական կրթության ոլորտի մասնագետների համար» ծրագրի շրջանակներում նախատեսված 25.2 մլն դրամի ծախսերն ամբողջությամբ կատարվել են: Հատկացված գումարից շուրջ 9 մլն դրամ ուղղվել է «Ամառային ճամբար հաշմանդամ և հատուկ կարիքավոր երեխաների համար» ծրագրի, 9 մլն դրամ՝ «Ուսուցողական դասընթացներ ներառական կրթության ոլորտի մասնագետների համար» թեմայով աշխատանքի, 7.2 մլն դրամ՝ «Միջազգային դպրոց երիտասարդ աստղագետների համար» ծրագրի ֆինանսավորմանը:

Լինսի հիմնադրամի միջոցներով իրականացվող կրթական հաստատությունների վերականգնման ծրագրի գծով ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 1.7 մլրդ դրամ՝ որն օգտագործվել է նախատեսված ամբողջ ծավալով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Հինսի հիմնադրամի «Դպրոցաշինություն» ծրագրով Լոռու և Շիրակի մարզերում դպրոցների ուժեղացման-վերակառուցման աշխատանքներ: Կատարվել են նաև վերը նշված կառույցների տեխնիկական և հեղինակային հսկողության աշխատանքներ:

2010 թվականին ՀԲ աջակցությամբ իրականացվող «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի իրականացման համար տրամադրվել է 1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 46%-ը: Ծրագրի ցածր կատարողականը պայմանավորված է այն

հանգամանքով, որ 2010 թվականը ծրագրի իրականացման առաջին տարին է, և ծրագրի իրականացման մի շարք ուղղություններով գործառնական ձեռնարկների և մրցութային փաստաթղթերի քննարկումն ու հաստատումը ՀԲ կողմից նախատեսվածից շատ ավելի երկար է տևել: Նախատեված ժամկետներում փորձագիտական խորհրդատվության տեխնիկական առաջադրանքների նախագծերը ներկայացվել են ՀԲ-ի հաստատմանը: Սակայն դրանց քննարկման և հաստատման ժամկետները գերազանցել են նախատեսված ժամկետները և համապատասխան աշխատանքների մեկնարկը հետաձգվել է: Ծրագիրը բաղկացած է երեք բաղադրիչներից՝ «Հանրակրթության որակի բարելավում», «Բոլոնիայի գործընթացի համատեքստում աջակցություն բարձրագույն կրթության բարեփոխումներին» և «Ծրագրի կառավարում, մոնիթորինգ և գնահատում»:

Հանրակրթության որակի բարելավման ենթաճրագրի շրջանակներում 2010 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում,
- կրթության որակի հետագա բարելավում՝ ուսուցիչների վերապատրաստման և մասնագիտական զարգացման միջոցով,
- տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրում ուսումնական գործընթացում,
- աջակցություն ավագ դպրոցի բարեփոխումներին:

«Բոլոնիայի գործընթացի համատեքստում աջակցություն բարձրագույն կրթության բարեփոխումներին» ենթաճրագրի շրջանակներում 2010 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- որակի ապահովման մեխանիզմների ստեղծում և ամրապնդում,
- մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի ստեղծում,
- աջակցություն բարձրագույն կրթության կայուն ֆինանսական համակարգի ներդրմանը:

«Ծրագրի կառավարում, մոնիթորինգ և գնահատում» ենթաճրագրի շրջանակներում 2010 թվականին իրականացվել են ծրագրի իրագործման գրասենյակի ինտերնետային կայքի մշակման աշխատանքները:

Հաշվետու տարում 12.7 մլն դրամ է տրամադրվել Համահայկական կրթական խորհրդաժողովի անցկացմանն ուղղվել է շուրջ 12.7 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 97.3% կատարողական: Ծրագրի շրջանակներում կազմակերպված խորհրդաժողովին մասնակցել են 22 երկրների 138 ներկայացուցիչներ: Երկամյա պարբերականությամբ գումարվող խորհրդաժողովները խնդիր ունեն

քննել արտերկրում հայկական կրթօջախների առկա հիմնահարցերը, հստակեցնել կրթության ոլորտում համագործակցության զարգացման հաջորդական քայլերը:

2010 թվականին պետական բյուջեից 508 մլն դրամ տրամադրվել է այլ դասերին չպատկանող կրթության բնագավառում գործադիր իշխանության պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների՝ «ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի և «ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի պահպանմանը»: Տվյալ ծախսերի տարեկան ծրագիրը կատարվել է 99.3%-ով: Այլ դասերին չպատկանող կրթության ծախսերը նախորդ տարվա համեմատ էական փոփոխություն չեն կրել:

### **Սոցիալական պաշտպանություն**

2010 թվականի պետական բյուջեի ծախսերի 25.6%-ն ուղղվել է սոցիալական պաշտպանության ոլորտին: Կատարված հատկացումները կազմել են շուրջ 244.2 մլրդ դրամ՝ ամբողջությամբ ապահովելով ծրագրով նախատեսված ծախսերի կատարումը: Նշված ծախսերը 2009 թվականի նկատմամբ ավելացել են 0.2%-ով կամ 534.4 մլն դրամով:

Հաշվետու տարում շուրջ 1.4 մլրդ դրամ տրամադրվել է վարառողջության և անաշխարունակության խմբին՝ ապահովելով 99.6% կատարողական:

Վարառողջության դասին տրամադրվել է 194.3 մլն դրամ, որը 0.9%-ով ավելի է 2009 թվականի ցուցանիշից: «Վարառողջություն» դասում ընդգրկված են երկու ծրագրեր՝ «Աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցում» և «Բժշկա-սոցիալական վերականգնման ծառայություններ», որոնց շրջանակներում կատարված ծախսերը կազմել են համապատասխանաբար 76.9 մլն դրամ (93.3%) և 117.4 մլն դրամ (99.9%): Առաջին ծրագրի ծախսերը 2009 թվականի համեմատ նվազել են 7.2%-ով՝ պայմանավորված շահառուների թվաքանակի կրճատմամբ: «Բժշկա-սոցիալական վերականգնման ծառայություններ» ծրագրի շրջանակներում հիմնականում իրականացվում է նախապրոթեզավորման և հետապրոթեզավորման, աշխատունակության վերականգնման կարիք ունեցող հաշմանդամ քաղաքացիների բուժումը: 2010 թվականին իրականացվել է 9 հիվանդատեսակների գծով 687 մարդու բուժում: Ծրագրի ծախսերը 2009 թվականի համեմատ ավելացել են 7.1%-ով՝ պայմանավորված հիվանդանոցային բժշկական օգնության ծառայությունների գների աճով:

Անաշխատունակության դասին հատկացվել է շուրջ 1.2 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ անաշխատունակության դասի ծախսերն ավելացել են 7.3%-ով, որը հիմնականում պայմանավորված է հաշմանդամներին անվճար պրոթեզապեղիկ

պարագաներով, վերականգնման տեխնիկական միջոցներով ապահովման և դրանց վերանորոգման ծախսերի աճով:

Դպրոցն ավարտած, ինչպես նաև ուշ տարիքում տեսողությունը կորցրած հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով գրքերի տպագրության, տետրերի պատրաստման և «խոսող գրքերի» ձայնագրության ծառայություններ իրականացնելու համար տրամադրվել է 10.5 մլն դրամ (100%): 2009 թվականի համեմատ այս ծախսերը փոփոխության չեն ենթարկվել:

Հաշմանդամներին անվճար պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման տեխնիկական միջոցներով ապահովման և դրանց վերանորոգման համար ծախսվել է 957.6 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում ֆինանսավորվել են անվճար բժշկական օգնության և սպասարկման իրավունք ունեցող հաշմանդամ քաղաքացիների համար գերմանական և հայրենական տեխնոլոգիաներով արտադրվող պրոթեզաօրթոպեդիկ պարագաների և վերականգնման տեխնիկական միջոցների պատրաստումը, դրանց վերանորոգումը, ինչպես նաև ձայնաստեղծ սարքերի և աչքի պրոթեզների տրամադրման ծառայությունների ձեռքբերումը: Նշված ծախսերը 2009 թվականի նկատմամբ ավելացել են 8.3%-ով կամ 73.8 մլն դրամով, որը պայմանավորված է պրոթեզաօրթոպեդիկ պարագաներ ստացող հաշմանդամների թվաքանակի աճով:

Հոգեկան առողջության վերականգնման ծառայություններին հատկացվել է 70 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 4.4%-ով՝ պայմանավորված նրանով, որ փաստացի բուժման ծառայություններ են մատուցվել 384 հիվանդների՝ 2009 թվականի 459-ի դիմաց:

Նախատեսված ծավալով իրականացվել է նաև տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց «Արև» համակարգով ուսուցումը, որը կազմել է 7.5 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ ծրագրի ծախսերը նվազել են 3.5%-ով, որը համակարգչային ուսուցման գնի իշեցման արդյունք է:

Մտավոր խնդիրներ ունեցող հաշմանդամ դեռահասների և երիտասարդների սոցիալ-վերականգնողական ծառայություններ մատուցելու համար տրամադրվել է 16.5 մլն դրամ (100%): Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխության չեն ենթարկվել:

Հաշմանդամներին սայլակներով և լոտղական սարքերով ապահովման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 113.5 մլն դրամ (100%): Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 9.4%-ով: Աճը պայմանավորված է այն հանգամքնով, որ 2009 թվականին հաշմանդամներին սայլակներ և լոտղական սարքեր են տրամադրվել նաև բարեգործական ծրագրերի շրջանակներում, իսկ 2010 թվականին նշված ծախսերն ամբողջությամբ իրականացվել են ՀՀ պետական բյուջեի միջոցներով: Պետք է նշել, որ 2010 թվականին հաշմանդամներին են տրամադրվել նաև 2009 թվականին ձեռք բերված և պահեստավորված սայլակներ ու լոտղական սարքեր:

Տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց համակարգչային տեխնիկայով և պահեստամասերով ապահովելու համար տրամադրվել է 8.7 մլն դրամ կամ նախատեսվածի 99.6%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5%-ով, որը պայմանավորված է համակարգչային տեխնիկայի գների բարձրացմամբ:

Ծերության դասի ծրագրերին հատկացվել է շուրջ 178.5 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական: 2009 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 0.5%-ով կամ 903.7 մլն դրամով:

Տվյալ դասում ամենամեծ կշիռն ունեցել են ապահովագրական կենսաթոշակների ծախսերը՝ 147.8 մլրդ դրամ, որն իրականացվել է 100%-ով: 2009 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 0.3%-ով կամ 449.1 մլն դրամով, ինչը պայմանավորված է հիմնական կենսաթոշակի չափի փոփոխությամբ. 2010 թվականի նոյեմբերի 1-ից այն սահմանվել է 10500 դրամ՝ նախկին 8000 դրամի փոխարեն:

Սպայական անձնակազմի ու նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակների ծախսերը կազմել են 20.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 100%-ը: 2009 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 2.1%-ով կամ 406.1 մլն դրամով:

Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովման ծախսերը կազմել են 2.2 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական: 2009 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 12.9%-ով կամ 327.3 մլն դրամով, որը բացատրվում է Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամ և մասնակից կենսաթոշակառուների թվաքանակի կրճատման (մահացության) հանգամանքով:

Սոցիալական կենսաթոշակների ծախսերը նույնպես կատարվել են 100%-ով և կազմել շուրջ 6.5 մլրդ դրամ: 2009 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 5.9%-ով կամ 362.5 մլն դրամով, որը բացատրվում է ոչ միայն հիմնական կենսաթոշակի բարձրացման, այլ նաև տարվա ընթացքում նոր նշանակված կենսաթոշակառուների թվաքանակում սոցիալական կենսաթոշակառուների տեսակարար կշռի աճով:

ՀՀ օրենքներով և կառավարության որոշումներով նշանակված կենսաթոշակների ծախսերը կազմել են 223.7 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.2%-ով կամ 4.7 մլն դրամով՝ պայմանավորված նոր նշանակված կենսաթոշակներով:

«Տարեցներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շոշանակներում տարեցների շուրջօրյա խնամքի իրականացման նպատակով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Ենթակայությանը հանձնված տարեցների տուն-ինտերնատ հանդիսացող ՊՈԱԿ-ներին պետական աջակցությունը կազմել է 1.3 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծախսերը նախորդ

տարվա նկատմամբ ավելացել են 1.7%-ով կամ 22 մլն դրամով, որը պայմանավորված է սպասարկող անձնակազմի թվաքանակի ավելացման հանգամանքով:

Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկման նպատակով հատկացումները կազմել են 90.7 մլն դրամ, որն իրականացվել է 99.7%-ով: 2009 թվականի համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

2010 թվականին հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ցերեկային խնամքի նպատակով տրամադրվել է 13.5 մլն դրամ պետական աջակցություն, որը կատարվել է 88.1%-ով՝ պայմանավորված ընտանիքներում սպասարկվող անձանց փաստացի թվաքանակով: Արդյունքում 2009 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 10.9%-ով:

ՀՀ մարզերում միայնակ տարեցներին և հաշմանդամներին տնային պայմաններում և տարեցների ցերեկային խնամքի կենտրոններում սոցիալական սպասարկման նպատակով «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը տրամադրվել է 182.2 մլն դրամ կազմելով ծրագրի 97.9%-ը: Ծրագիրը նախատեսված է տնային պայմաններում և տարեցների ցերեկային խնամքի կենտրոններում միայնակ տարեցների և հաշմանդամների սպասարկման, ինչպես նաև անապահով անձանց շաբաթվա աշխատանքային օրերին ճաշարաններում մեկ անգամ սննդի տրամադրման համար: Ծախսերը 2009 թվականի նկատմամբ ավելացել են 8.2%-ով կամ 13.8 մլն դրամով՝ պայմանավորված միայնակ տարեցների և հաշմանդամների թվաքանակի ավելացմամբ:

Նախատեսված ողջ ծավալով իրականացվել է Վանաձորի տարեցների տանը խնամվողներին շուրջօրյա խնամքի և սոցիալական սպասարկման ծրագիրը, որին հատկացվել է 14.4 մլն դրամ: 2009 թվականի համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

2010 թվականին ՀՀ պետական բյուջեից 138.7 մլն դրամ է տրամադրվել «Հարազարդին կորցրած անձինք» խմբի ծրագրերին՝ ապահովելով 94.4% կատարողական: Խմբի երեք ծրագրերում էլ արձանագրվել են ծրագրի նկատմամբ շեղումներ: Մասնավորապես՝ 126.6 մլն դրամ են կազմել Հայաստանի զոհված ազգային հերոսի կամ Մարտական խաչ շքանշանով հետմահու պարգևատրված անձանց ընտանիքներին նպաստի վճարման ծախսերը, որոնք իրականացվել են 97.5%-ով՝ պայմանավորված փաստացի թվաքանակը նախատեսվածից պակաս լինելու հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

«Բնակչության գրաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով նախատեսված նպաստի վճարումը կազմել է 6.7 մլն դրամ կամ նախատեսվածի 88.6%-ը: Շեղումը պայմանավորված է մահացած գործազրկությունների փաստացի թվաքանակով: Նախորդ տարվա նկատմամբ նշված ծախսերն աճել են 7.8%-ով:

ՀՀ կառավարության 1992 թվականի նոյեմբերի 18-ի N 584 որոշման 49-րդ կետով նախատեսված նպաստի վճարման նպատակով օգտագործվել է 5.4 մլն դրամ կամ նախատեսվածի 56.6%-ը: Շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ նշված ծախսերը ֆինանսվորվում են գործատուների ներկայացրած հայտերի հիման վրա և հետագայում փոխհատուցվում ՀՀ պետական բյուջեից: Վերոհիշյալ հանգամանքով է պայմանավորված նաև նախորդ տարվա համեմատ ծրագրի գծով ծախսերի 10.8%-ով նվազումը:

Ընդանիքի անդամներ և զավակներ խմբի ծախսերը կազմել են շուրջ 44 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նշված գումարի զգալի մասը՝ 30.9 մլրդ դրամ, տրամադրվել է ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության ֆինանսվորմանը, որը կազմել է նախատեսվածի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն ավելացել են 5.9%-ով, ինչը պայմանավորված է նպաստի նվազագույն չափի բարձրացմամբ 3500 դրամով: 2010 թվականին մեկ ընտանիքի միջին ամսական նպաստի չափը կազմել է 26850 դրամ՝ 2009 թվականի 23350, իսկ նպաստառու ընտանիքների թիվը կազմել է 105000՝ 2009 թվականի 107490-ի փոխարեն:

ՀՀ պաշտպանության և փրկարարական ծառայության ժամանակ հաշմանդամ դարձած գինծառայողներին և զոհված (մահացած) գինծառայողների ու փրկարար ծառայողների ընտանիքներին հաշվետու տարում տրամադրվել են 107.7 մլն դրամ միանվագ սոցիալական ապահովագրության վճարներ՝ կազմելով նախատեսվածի 99.4%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 1%-ով:

2010 թվականին մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստների գծով ծախսերը կազմել են շուրջ 2.6 մլրդ դրամ կամ նախատեսվածի 100%-ը: 2009 թվականի համեմատ այս ծախսերն աճել են 38%-ով, որը պայմանավորված է նախորդ տարվա նկատմամբ երեխաների ծննդյան կապակցությամբ ծնողներին տրվող նպաստի աճով՝ 3000 դրամից 18000 դրամ, ինչպես նաև ծնելիության աճով:

ՀՀ մանկատների շրջանավարտներին 2010 թվականին պետական բյուջեից տրամադրվել է 29 մլն դրամի աջակցություն և խորհրդատվություն, որն ամբողջությամբ կատարվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 6.9%-ով, որը պայմանավորված է մատուցված ծառայությունների ծավալների նվազմամբ:

Հղիության և ծննդաբերության նպաստի գծով ծախսերը կազմել են 2.6 մլրդ դրամ, որոնք կատարվել են նախատեսված ծավալով: Նախորդ տարվա համեմատ ծախսերի 1% աճը (25.3 մլն դրամ) հիմնականում պայմանավորված է հանրապետությունում նվազագույն ու միջին աշխատավարձերի աճի հանգամանքով:

Երեխայի ծննդյան միանվագ նպաստի վճարումը կազմել է 4.7 մլրդ դրամ, որը նույնպես կատարվել է նախատեսված չափով: 2009 թվականի նկատմամբ նշված ծախսերը նվազել են 6.8%-ով, որը բացատրվում է դիմողների թվի նվազմամբ:

2010 թվականին 98.9%-ով կատարվել է վարժական հավաքների և գինծառայության ու փրկարարական ծառայության ընթացքում մահացած (զոհված) գինծառայողների ու փրկարար ծառայողների հուղարկավորության, գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերի փոխհատուցումը, որը կազմել է 425.5 մլն դրամ և 7.4%-ով գերազանցել նախորդ տարվա ծախսերը:

Երեխաների շուրջօրյա խնամքի իրականացման նպատակով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի՝ Երեխաների տուն-ինտերնատ հանդիսացող ՊՈԱԿ-ներին պետական աջակցության ծախսերը հաշվետու տարում կազմել են 1.6 մլրդ դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Տարվա ընթացքում փաստացի խնամվողների միջին տարեկան թվաքանակը կազմել է 816՝ նախորդ տարվա 878-ի փոխարեն: Ծախսերը նախորդ տարվա նկատմամբ նվազել են 1.1%-ով, որը հիմնականում պայմանավորված է շահառուների թվի նվազման հանգամանքով:

Երեխաներին շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող Երեխաներին ընտանիքներ վերադարձնելու (բեռնաթափման) ծառայությունների ձեռքբերման ծախսերն ամբողջությամբ կատարվել են՝ կազմելով 9.7 մլն դրամ: 2009 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 15%-ով, որը պայմանավորված է շահառուների թվի նվազմամբ:

Ոիսկի գոտում հայտնված Երեխաներին սոցիալական հոգածության ծառայությունների ծախսերը կազմել են 128.1 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 3.6%-ով՝ պայմանավորված շահառուների թվի նվազմամբ:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 05-1680 գործով 15.07.2005թ. վճոխ համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կողմից կերակրողին կորցնելու կապակցությամբ կրած վնասի փոխհատուցման ծախսերն ամբողջությամբ կատարվել են՝ կազմելով 1.1 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Երեխաների գիշերօթիկ խնամքի և պաշտպանության ծառայություններին տրամադրվել է 828.4 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100%-ով կատարում: Ծախսերը նախորդ տարվա համեմատ ավելացել են 6.2%-ով, որը հիմնականում պայմանավորված է Գյումրու «Ֆրիտյոֆ Նանսենի անվան մանկատունը» գիշերօթիկ հաստատության վերակազմակերպելու հանգամանքով, որի հետ կապված՝ ավելացել է շահառուների թիվը:

Երեխաների խնամքի ցերեկային կենտրոնների կողմից դժվար իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալական հոգածության ծառայությունների ծրագրի շրջանակներում տրամադրվել է 49.6 մլն դրամ, որն ուղղվել է 600 երեխայի սոցիալ-հոգեբանական և կրթական կարիքների բավարարման ծառայությունների մատուցմանը: Նախատեսված միջոցներն օգտագործվել են 96.7%-ով, որոնք նախորդ տարվա համեմատ ավելացել են 2.7%-ով՝ պայմանավորված շահառուների թվի ավելացմամբ:

Հայաստանի Հանրապետությունում խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդրման ծառայությունների ծախսերը կազմել են 21.8 մլն դրամ՝ ապահովելով 98.2% կատարողական: Նշված ծախսերը 2009 թվականի նկատմամբ ավելացել են 4%-ով, որը պայմանավորված է շահառուների թվի ավելացման հանգամանքով:

ՀՀ մանկատներում խնամվող դպրոցական տարիքի երեխաներին հաշվետու տարում տրամադրվել է 7.8 մլն դրամ աջակցություն կամ նախատեսվածի 82.7%-ը՝ կապված շահառուների փաստացի թվաքանակի հետ: Նշվածով պայմանավորված՝ այս ծախսերը նվազել են նաև նախորդ տարվա համեմատ՝ 12.1%-ով:

ՀՀ մանկատների շրջանավարտներին կրթաթոշակի և միանվագ դրամական օգնությունը կազմել է 3 մլն դրամ կամ նախատեսվածի 70.1%-ը՝ պայմանավորված Գյումրու «Ֆրիտյոֆ Նանսենի անվան մանկատունը» գիշերօթիկ հաստատության վերակազմակերպելու հանգամանքով: Նշված ծախսերը 2009 թվականի նկատմամբ ավելացել են 62.2%-ով, որը պայմանավորված է շահառուների թվի ավելացման հանգամանքով:

Կենսաբանական ընտանիք տեղափոխված երեխաների ընտանիքներին դրամական օժանդակության փաթեթի տրամադրման ծախսերը կազմել են 5.4 մլն դրամ, որն իրականացվել է նախատեսված ողջ ծավալով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 37.3%-ով, որը պայմանավորված է շահառուների թվի նվազմամբ:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 07-3832 գործով 2007 թվականի նոյեմբերի 3-ի վճոի համաձայն Հայաստանի Հանրապետության կողմից կերակրողին կորցնելու կապակցությամբ կրած վնասի փոխհատուցումը կազմել է 1.7 մլն դրամ (100%):

Վորլդ Վիժն հնթերնեյշնլ միջազգային բարեգործական կազմակերպության կողմից երեխաների իրավունքների պաշտպանության ծրագրին տրամադրվել է 11 մլն դրամ, որն իրականացվել է 99.4%-ով: Ծրագրի շրջանակներում Լոռու մարզի Ստեփանավանի տարածաշրջանի թվով 20 և Շումանյանի տարածաշրջանի թվով 9 համայնքների երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված ծրագրին իրականացնելու համար Ստեփանավանի և Շումանյանի տարածաշրջանների գյուղական համայնքներում բացվել է 22 սոցիալական աշխատողի հաստիք: Սոցիալական աշխատողների աշխատանքի նպատակն է խթանել երեխաների իրավունքների

պաշտպանությանը, ակտիվորեն համագործակցելով համայնքային կառույցների, տեղական և միջազգային կազմակերպությունների հետ, աջակցել համայնքներում այնպիսի միջավայրի ձևավորմանը, որը կնպաստի երեխաների ակտիվ զարգացմանը: Հանդիսանալով համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անդամ, սոցիալական աշխատողները աջակցում են խոցելի խմբերի երեխաների բացահայտմանը և նրանց խնդիրներին արձագանքելու քայլերի մշակմանը, հանդիսանում են կապող օղակ ՏԻՄ-երի, դոնոր կազմակերպությունների և մարզպետարանի միջև՝ ապահովելով երեխաների պաշտպանության խնդիրների ու զարգացման կարիքների արագ բացահայտմանն ու արդյունավետ արձագանքմանը: Սոցիալական աշխատողը մասնակցում է ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանությանն ու զարգացմանն ուղղված տեղական և մարզային ծրագրերի մշակմանը՝ ապահովելով երեխաների մասնակցությունը ծրագրերի բոլոր փուլերում: Նրանք աջակցում են հասուկ կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպմանը համայնքում, հանդիսանում են համայնքում երեխաների համար խորհրդատու երեխաների պաշտպանության ոլորտում ծագած այնպիսի խնդիրների դեպքում, որոնցում ընտանիքը լուծում չի գտնում: Նպաստում են համայնքային ներուժի զարգացմանը, աջակցում համայնքի համար հավելյալ ռեսուրսների հայթայթմանը՝ համագործակցելով այլ կառույցների հետ կամ ծրագրեր ներկայացնելով դոնոր կազմակերպություններին, ինչպես նաև աջակցելով Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ կազմակերպությանը արդյունավետ իրականացնելու հովանավորչական ծրագիրը: Վարում են երեխաների հաշվառում, կատարում տունայցեր և առնվազն եռամսյակը մեկ անգամ հաշվետվություն ներկայացնում նրանց ընտանեկան և առողջական կարգավիճակի փոփոխությունների վերաբերյալ: Իրականացնում են զանազան միջոցառումներ՝ երեխաների իրավունքների և պաշտպանության հարցերի, ինչպես նաև համայնքում իրականացվող երեխայակենտրոն ծրագրերի վերաբերյալ համայնքի իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով:

2010 թվականին պետական բյուջեից 5.6 մլրդ դրամ տրամադրվել է գործազրկության ծրագրերի ֆինանսավորմանը՝ կազմելով նախատեսվածի 99.9%-ը: Ծախսերի հիմնական մասը՝ 4.7 մլրդ դրամ ուղղվել է գործազրկության նպաստի վճարմանը, որը կատարվել է նախատեսված ծավալով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.7%-ով կամ 167.7 մլն դրամով՝ պայմանավորված նպաստառուների թվի աճով:

Վարձատրվող հասարակական աշխատանքների շրջանակներում օգտագործվել է 625.2 մլն դրամ կամ ծրագիրը կատարվել է 99.9%-ով: 2009 թվականի նկատմամբ նշված ծախսերն ավելացել են 26.8%-ով, որը պայմանավորված է վարձատրվող հասարակական աշխատանքների ծավալների ավելացմամբ:

Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար գործազուրկներին և աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամներին տրամադրվել է 812 հազար դրամ ֆինանսական աջակցություն՝ կազմելով նախատեսվածի 85.5%-ը: Միջոցների պակաս օգտագործումը պայմանավորված է նրանով, որ ծրագրի շրջանակներում աջակցություն է տրամադրվում անհատ ձեռնարկատերերին և կազմակերպություններին, իսկ 2010 թվականին աջակցություն են ստացել առավել մեծ թվով անհատ ձեռնակատերեր: 2009 թվականի նկատմամբ նշված ծախսերն ավելացել են 22.8%-ով, որը պայմանավորված է շահառուների թվի ավելացման հանգամանքով:

Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի ընդունելիս գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման ծախսերը կազմել են 70.2 մլն դրամ կամ նախատեսվածի 99.7%-ը: Ծախսերը նախորդ տարվա նկատմամբ ավելացել են 20.2%-ով, որը պայմանավորված է աշխատաշուկայում անմրցունակ անձանց թվի ավելացման հանգամանքով:

Ապահովագրական ստաժ չունեցող կամ մինչև մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների մասնագիտական ուսուցման և աշխատանքային ունակությունների վերականգնման կազմակերպման նպատակով տրամադրվել է 9.8 մլն դրամ կամ նախատեսվածի 89.7%-ը: Ծրագրի շրջանակներում ծառայություն է մատուցվել 240 շահառուի, որքան նախատեսվել էր, իսկ ծախսերի շեղումը ծրագրված ցուցանիշից պայմանավորված է մեկ շահառուի ուսուցման ծախսի նվազմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման և խորհրդատվական ծառայությունների գծով ծախսերը կազմել են 17.8 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական և պահպանվելով 2009 թվականի մակարդակին:

Գործազուրկների, աշխատաշուկայում անմրցունակ խմբերի և երկարամյա ծառայության ու արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող աշխատանք փնտրող չզբաղված անձանց մասնագիտական ուսուցմանը տրամադրվել է 184.6 մլն դրամ: Ծախսերը կատարվել են 100%-ով և 7.7%-ով գերազանցելով 2009 թվականի ցուցանիշը, որը պայմանավորված է ծրագրում ընդգրկված անձանց թվաքանակի աճով, ինչպես նաև մեկ անձի հաշվով ուսուցման համար փաստացի ծախսի ավելացման հանգամանքով:

Այլ վայր աշխատանքի գործուղվող գործազուրկների նյութական ծախսերի հատուցումը կազմել է 6.5 մլն դրամ կամ նախատեսվածի 85.8%-ը, որը պայմանավորված է փաստացի գործուղված անձանց թվով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 66.1%-ով, որը պայմանավորված է ծրագրում ընդգրկված անձանց թվաքանակի աճով:

Երկարամյա ծառայության և արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող աշխատանք փնտրող չզբաղված անձանց վերամասնագիտացման ծրագրին տրամադրվել է 821 հազար դրամ կամ նախատեսվածի 84%-ը, որը պայմանավորված է մեկ անձի վերամասնագիտացման արժեքը մրցույթի արդյունքում բյուջեով ծրագրված չափից պակաս լինելու հանգամանքով։ Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են երկու անգամ, որը պայմանավորված է ծրագրում ընդգրկված անձանց թվաքանակի աճով։

Աշխատաշուկայի հետազոտման և կանխատեսման աշխատանքների կազմակերպմանը պետական բյուջեից տրամադրվել է 4.4 մլն դրամ, որը կազմել է ծրագրվածի 99.5%-ը և 10.4%-ով գիշել նախորդ տարվա ցուցանիշը։ Վերջինս պայմանավորված է մատուցվող ծառայությունների արժեքի նվազման հանգամանքով։

Թափուր աշխատատեղերի տոնավաճառի կազմակերպման ծառայությունների գծով տրամադրվել է 4.2 մլն դրամ, որն իրականացվել է նախատեսված ողջ ծավալով։ Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել։

2010 թվականի պետական բյուջեից առաջին անգամ միջոցներ են հատկացվել «Աշխատանք փնտրող հաշմանդամների աշխատանքային վերականգնման, մասնագիտական վերապատրաստման և խորհրդատվության ծառայություններ» ծրագրին, որոնք կազմել են 3.7 մլն դրամ և իրականացվել են նախատեսված ծավալով։

«Քնակարանային ապահովում» խմբի ծրագրերին ՀՀ 2010 թվականի պետական բյուջեից հատկացվել է 967.6 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական։ Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 76.4%-ով, ինչը պայմանավորված է զոհված (մահացած) և առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ գինծառայողների անօթևան ընտանիքներին բնակարանով ապահովման և բնակարանային պայմանների բարելավման ծախսերի նվազմամբ։

Զոհված (մահացած) և առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ գինծառայողների անօթևան ընտանիքների բնակարանով ապահովման և բնակարանային պայմանների բարելավման համար տրամադրվել է շուրջ 499.7 մլն դրամ, որը կազմում է ծրագրի 99.9%-ը։ Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 83.3%-ով կամ 2.5 մլրդ դրամով՝ պայմանավորված պետական բյուջեով նշված հատկացումների կրճատմամբ։

Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարություն իրականացնելու համար տրամադրվել է շուրջ 467.9 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 100%-ը։ Ծրագրի շրջանակներում կատարվել են Ստեփանավան քաղաքի 4 անավարտ շենքերի կառուցման, Արագածոտնի մարզի 1 շենքի վերականգնման և 9 անավարտ շենքերի կառուցման աշխատանքները՝ պայմանավորված կատարված աշխատանքների ծավալների նվազմամբ։

Սոցիալական հարուկ արդունությունների (այլ դասերին չպարկանող) խմբում 2010 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 5.1 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Նախորդ տարվա նկատմամբ խմբի ծախսերը նվազել 1.8%-ով, որը հիմնականում պայմանավորված է վետերանների պատվովճարների գծով կատարված ծախսերի նվազմամբ:

2010 թվականի պետական բյուջեից վետերանների պատվովճարներին է տրամադրվել 832.7 մլն դրամ, որը կազմել է ծրագրի 100%-ը, իսկ նախորդ տարվա համեմատ ծախսերը նվազել են 18.1%-ով, որը պայմանավորված է պատվովճար ստացողների թվաքանակի նվազման (մահացության) հանգամանքով:

ՀՄ պատերազմի վետերաններին, 25.11.1998թ.ՀՕ-258 օրենքի 13 հոդվածում նշված պատճառներով հաշմանդամ դարձած զինծառայողներին, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ գրիված (մահացած) զինծառայողների ընտանիքներին տրամադրվել է 2.5 մլրդ դրամ դրամական օգնություն, որն իրականացվել է նախատեսված ողջ ծավալով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

ՎՏԲ-Հայաստան ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների՝ նախկին ԽՍՀՄ խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման ծախսերը կազմել են ավելի քան 1.6 մլրդ դրամ կամ նախատեսվածի 100%-ը: 2009 թվականի համեմատ ծախսերն ավելացել են 5.8%-ով, որը 2010 թվականի պետական բյուջեով նախատեսված միջոցների ավելացման արդյունք է:

Հաշվետու տարում 54.1 մլն դրամ պետական աջակցություն է ցուցաբերվել անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման նպատակով «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ին, որը կատարվել է 99.9%-ով, իսկ 2009 թվականի համեմատ ծախսերն աճել են 2%-ով:

Փախստականների սոցիալական խնդիրների լուծման միջոցառումներ իրականացնելու նպատակով տրամադրվել է շուրջ 16 մլն դրամ, որը կատարվել է 94.3%-ով՝ պայմանավորված սպասարկումն իրականացնող մեկ կացարանի հետ պայմանագիր չկնքելու հանգամանքով: 2009 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 13.7%-ով, որը պայմանավորված է դիմաց փախստականների թվաքանակի ավելացմամբ:

Փախստականների կեցության խնդիրների լուծման նպատակով 2010 թվականին տրամադրվել է 11.2 մլն դրամ (100%), որի միջոցով իրականացվում է 30 ժամանակավոր ապաստան հայցող փախստականների սպասարկումը՝ կացարանի, սննդի և այլ ծառայությունների տրամադրում: 2009 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 31%-ով՝ պայմանավորված դիմաց փախստականների թվաքանակի ավելացմամբ:

Բոնադատված քաղաքացիներին պատճառված վնասի դիմաց 2010 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 384 հազար դրամի միանվագ դրամական փոխհատուցումներ, որոնց ծրագիրը կատարվել է 91.4%-ով և 51.5%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված դիմողների փաստացի թվաքանակով:

2010 թվականի պետական բյուջեով 500 հազար դրամ է նախատեսվել տրամադրել փախստականի կարգավիճակ հայցողներին՝ որպես միանվագ նպաստ, որը, սակայն, վճարման համապատասխան կարգ չինելու պատճառով չի ծախսվել:

Այլ դասերին չպարկանող սոցիալական պաշտպանության խմբի ծրագրերի գծով 2010 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են ավելի քան 8.5 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական: 2009 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 3.9%-ով՝ պայմանավորված կենսաթոշակային ապահովության և ապահովագրության ծրագրերի վճարման հետ կապված ծառայությունների, գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման և ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստի վճարման ծախսերի աճով:

Հաշվետու տարում 1.5 մլրդ դրամ են կազմել ՀՀ սոցիալական ապահովության նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության պահպանման ծախսերը, որոնք կատարվել են 99.6%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 13.2%-ով՝ պայմանավորված պարզևատրումների (այն 2009թ. բյուջեով նախատեսված չի եղել), ինչպես նաև սոցիալական վճարների, գույքի և սարքավորումների վարձակալության, մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման գծով կատարված ծախսերի աճի հանգամանքով:

ՀՀ սոցիալական ապահովության նախարարության աշխատակազմի պահպանման ծախսերը նույնպես կատարվել են 99.6%-ով և կազմել շուրջ 1.6 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Հաշվետու տարում 271.4 մլն դրամ տրամադրվել է սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների ֆինանսավորման նպատակով, որն իրականացվել է 98.5%-ով: 2009 թվականի նկատմամբ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման վարկային ծրագրին տրամադրվել է 112.9 մլն դրամ, որը մոտ երեք անգամ գերազանցել է նախատեսվածը: Ծրագրի 2010 թվականին նախատեսվածից ավել ծախսն իրականացվել է ի հաշիվ նախորդ տարիներին ստացված կանխավճարների: Ծրագրի նպատակներն ուղղակիորեն կապված են մարդկային զարգացման խթանման և սոցիալական

ապահովության համակարգերի ու հանրային հատվածի հիմնական գործառույթների բարելավման հետ:

2010 թվականին իրականացվել են ծրագրով նախատեսված հետևյալ աշխատանքները՝ ընդհանուր աջակցություն սոցիալական պաշտպանության ոլորտին՝ աշխատանքի և զբաղվածության, կենսաթոշակների և այլ համակարգերի մասով, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և աշխատանքի պետական տեսչության համար համակարգչային և հարակից թվային տեխնիկայի ձեռքբերում, ծրագրի կառավարում, մոնիթորինգ և գնահատում։ Ծրագրով նախատեսված հիմնական աշխատանքներն իրականացվել են մինչև 2010 թվականի դեկտեմբերի 30-ը։ 2011 թվականին նախատեսվում է իրականացնել խնայված գումարներով աշխատանքները, ինչպես նաև 2010 թվականի առողջիւրը։

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման վարկային ծրագրի շրջանակներում կատարվել են 29.7 մլն դրամի ծախսեր՝ կազմելով ծրագրվածի 41.9%-ը, ընդ որում, կառավարության համաֆինանսավորման հաշվին ծախսերը կատարվել են 100%-ով (13.4 մլն դրամ), իսկ վարկային միջոցների հաշվին՝ 28.4%-ի չափով (16.3 մլն դրամ)։ Վարկային համաձայնագիրը (5000000.0 ԱՄՆ դոլար, թիվ IBRD 78480) Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի և Հայաստանի Հանրապետության միջև ստորագրվել է 2010 թվականի մարտի 5-ին, ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացվել է 2010 թվականի հունիսի 10-ին և ուժի մեջ մտել 2010 թվականի հուլիսի 27-ին։ Ծրագրի իրականացման ժամկետն է մինչև 2013 թվականի մայիսի 31-ը։

Ծրագրով բաղկացած է հետևյալ բաղադրիչներից։

- Ընդհանուր աջակցություն սոցիալական պաշտպանության ոլորտին։ Բաղադրիչի շրջանակներում նախատեսվել է իրականացնել տեղեկատվական հոսքերի կորպորատիվ ցանցի ստեղծման աշխատանքները, ներառյալ մասնագետների ուսուցումը, ծրագրային ապահովման բարելավումը և համակարգչային տեխնիկայի ձեռքբերումը։

- Աշխատանք և զբաղվածություն։ Այս բաղադրիչը կբարելավի Զբաղվածության պետական ծառայության (ԶՊԾ)՝ որպես աշխատանքի շուկայում միջնորդի գործունեության արդյունավետությունն ու ընդգրկման տիրույթը, ինչպես նաև կնպաստի զբաղվածության ոլորտի բարեփոխումներին։ Նախատեսվում է ձեռք բերել կահույք և հաշմանդամների համար հարմարեցված սարքավորումներ, ինչպես նաև արդիականացնել ծրագրային ապահովումը։

- Կենսաթոշակների վարչարարություն։ Այս բաղադրիչի նպատակը կենսաթոշակային ոլորտի կառավարման արդիական համակարգի ստեղծումը, պետական կենսաթոշակի նշանակման համար ներկայացվող փաստաթղթերի տվյալների ստուգումը և առողջիւրի գործընթացի բարելավումը,

ինչպես նաև շահառուների սպասարկման բարելավումը: Նախատեսվում է արդիականացնել ծրագրային ապահովումը և արխիվացման գործընթացը:

- Սոցիալական աջակցության վարչարության բարելավում: «Ընտանեկան նպաստ» ծրագրի արդյունավետության մոնիթորինգի և գնահատման համակարգի կատարելագործում և այլն:

2010 թվականին ծրագրի շրջանակներում իրականացվել են գնումների բնականոն ընթացքի համար անհրաժեշտ մեկնարկային աշխատանքներ:

Սոցիալական պաշտպանությանը տրամադրող օժանդակ ծառայությունների (այլ դասերին չպատկանող) դասի ծախսերը կազմել են շուրջ 5.1 մլրդ դրամ՝ ապահովելով 99.7% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 5.1%-ով:

Սոցիալական աջակցության ծառայությունների ծրագրի շրջանակներում 537.5 մլն դրամ տրամադրվել է սոցիալական ապահովության առանձին ծրագրերի վճարման հետ կապված ծառայությունների ձեռքբերմանը՝ ապահովելով 99.8% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 5.3%-ով, ինչը պայմանավորված է տարվա ընթացքում երեխայի խնամքի և ծննդյան, ինչպես նաև գործազրկության նպաստների գումարների ավելացման հանգամանքով:

Փախստականների և նրանց ընտանիքների վերաբերյալ տեղեկատվության կուտակման նպատակով տրամադրված 43.6 մլն դրամն օգտագործվել է «Համակարգչային կենտրոն» ՊՈԱԿ-ից փախստականների վերաբերյալ արխիվային տեղեկատվության ձեռքբերման նպատակով՝ ապահովելով 99.2% կատարողական: 2009 թվականի համեմատ նշված ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

«Հաշմանդամներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում բժշկասոցիալական փորձաքննության (ԲՍՓ) ձևաթղթի տպագրության ծառայությունների ձեռքբերման և «Սոցիալական աջակցության ծառայություններ» ծրագրի շրջանակներում սոցիալական ծառայության տարածքային գործակալությունների (ՍԾՏԳ) ձևաթղթերի տպագրության ծառայությունների ձեռքբերման նպատակով տրամադրվել է համապատասխանաբար 4.4 մլն դրամ և 6.4 մլն դրամ: Ծրագրերն իրականացվել են նախատեսված ողջ ծավալով, իսկ 2009 թվականի համեմատ նվազել են համապատասխանաբար 38%-ով և 62.9%-ով՝ պայմանավորված գների նվազմամբ:

«2010 թվականի պետական բյուջեից հաշմանդամների տվյալների տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայությունների ծրագրի շրջանակներում նախատեսված 18.1 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

Գործազրուկների տվյալների տեղեկատվական համակարգի («Գործ» համակարգ) վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայությունների ծախսերը կազմել է 24.9 մլն դրամ, որը ևս կատարվել է նախատեսված ողջ ծավալով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն ավելացել են 16.2%-ով՝ պայմանավորված «Գործ» համակարգում ընդգրկված համակարգչային տեխնիկայի սպասարկման և վերանորոգման ծախսերն առաջին անգամ նախատեսելու հանգամանքով:

Սոցիալական ապահովության քարտերի համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայությունների ձեռքբերման ծախսերը կազմել են 147.4 մլն դրամ՝ ապահովելով 99.6% կատարողական: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների տվյալների «Մանուկ» տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայությունների ծախսերը կազմել են 15.3 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Ընտանեկան նպաստի տվյալների տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններին հատկացումները կազմել են շուրջ 29.8 մլն դրամ՝ ապահովելով 95.1% կատարողական: Նախորդ տարվա համեմատ ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Մեթոդաբանական ձեռնարկների մշակման, հետազոտությունների անցկացման և սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 83.7 մլն դրամ՝ ապահովելով 99% կատարողական: Նախորդ տարվա համեմատ ծախսերն ավելացել են 4.1%-ով, որը սոցիալական ոլորտի աշխատանքների ծավալի ավելցման արդյունք է:

Երեխայի ծննդյան և խնամքի համար տրամադրվող նպաստների համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններին հատկացումները կազմել են 9.5 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Կենսաթոշակային ապահովության և ապահովագրության ծրագրերի վճարման հետ կապված ծառայությունների իրականացմանը տրամադրվել է ավելի քան 1.9 մլրդ դրամ, որը կատարվել է 100%-ով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 25.7%-ով՝ պայմանավորված կենսաթոշակային ծախսերի աճի հանգամանքով:

Հանրային իրազեկման միջոցառումների իրականացմանը տրամադրվել է 25.2 մլն դրամ, որը կատարվել է 98.1%-ով: Տարբերությունը պայմանավորված է ձեռք բերվելիք ծառայությունների

համար հայտարարված մրցույթների արդյունքում կնքված պայմանագրերով նախատեսվածի նկատմամբ ցածր գներ սահմանվելու հանգամանքով՝ նախատեսված ծավալային ցուցանիշները ամբողջությամբ պահպանելու պայմաններում: 2009 թվականի նկատմամբ նշված ծախսերն ավելացել են 7.8%-ով:

Հաշվետու տարում պետական բյուջեից ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստի վճարը կազմել է շուրջ 2.1 մլրդ դրամ, որն իրականացվել է 99.9%-ով: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն ավելացել են 7.3%-ով, որը պայմանավորված է միջին աշխատավարձի աճով, որի արդյունքում աճել է նպաստի միջին չափը:

Ընտանեկան նպաստի և դրամական օգնության տրամադրման հետ կապված վարչարարական ծառայություններին տրամադրվել է 18.8 մլն դրամ, որը կատարվել է 99%-ով և 3.6%-ով գերազանցել նախորդ տարվա մակարդակը:

Կենսաթոշակների նշանակման ու վճարման «Արաք» համակարգչային համակարգի ծրագրային սպասարկման ապահովման ծառայությունների ծեղբերման ծախսերը կազմել են 17.9 մլն դրամ, որը կատարվել է 99.4%-ով և 2.4%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը:

Անհատական (անձնավորված) հաշվառման «Պառնաս» համակարգչային համակարգի ծրագրային սպասարկման ապահովման ծառայություններին տրամադրվել է շուրջ 36 մլն դրամ՝ ապահովելով 99.4% կատարողական և 3.1%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

Ժամանակավոր անաշխատունակության թերթիկների տպագրության համար հաշվետու տարվա ընթացքում ծախսվել է 21.4 մլն դրամ որը կատարվել է 99.2%-ով: Նախորդ տարվա համեմատ ծախսերն ավելացել են 54.5%-ով, որը պայմանավորված է փաստացի պահանջի աճով:

Կենսաթոշակի նշանակման և վճարման համար անհրաժեշտ ձևաթղթերի տպագրության ծախսերը կազմել են 2 մլն դրամ, բարեգործական ծրագրերի հաշվառման տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայությունների ծախսերը՝ 5.3 մլն դրամ, ՀՀ աշխատանքի պետական տեսչության տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայությունների ծախսերը՝ 5.7 մլն դրամ: Վերոհիշյալերեք ծրագրերն ել կատարվել են ամբողջությամբ և նախորդ տարվա համեմատ գրեթե փոփոխություն չեն կրել:

Վետերանների պատվովճարի և ՀՄ պատերազմի վետերաններին ու «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի (25.11.1998թ. ՀՕ-258) 13 հոդվածում նշված անձանց ընտանիքներին դրամական օգնության տրամադրման հետ կապված վճարման ծառայություններին տրամադրվել է 13.9 մլն դրամ, որը կատարվել է 84.1%-ով: Տնտեսումը հիմնականում պայմանավորված է ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրերով նախատեսված վարձավճարների տոկոսադրույթների նվազման հանգամանքով,

ինչպես նաև ծրագրի թերի իրացման (օգնություն ստացողների թվաքանակի կրճատման, մահացության) հանգամանքով։ Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն ավելացել են 16.6%-ով, որը պայմանավորված է Երևան քաղաքում հիշյալ ծախսերը նախորդ տարվա ընթացքում պատվովճարի և դրամական օգնության համար նախատեսված միջոցներից իրականացնելու հանգամանքով։

Նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններին տրամադրվել է 14.8 մլն դրամ, որը կատարվել է 100%-ով և նախորդ տարվա համեմատ ավելացել 1.4%-ով։

Թրաֆիքինգի զոհերին սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայությունների մատուցման նպատակով նախատեսված միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 6.1 մլն դրամ։ Ծրագիրը 2010 թվականի պետական բյուջեից ֆինանսավորվել է առաջին անգամ։

Աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման հետ կապված վճարման ծառայությունների գծով ծախսվել է 753.2 հազար դրամ կամ նախատեսվածի 61.5%-ը։ Տնտեսումը պայմանավորված է ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրերով նախատեսված վարձավճարների տոկոսադրույթների նվազման, ինչպես նաև նպաստառուների թվաքանակի կրճատման (ծրագրի թերի իրացման) հանգամանքներով։ Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն ավելացել են 4.2%-ով։

Վարձատրվող հասարակական աշխատանքների կատարման հետ կապված վարչարարական ծառայություններին տրամադրվել է 7.6 մլն դրամ, որը կատարվել է 72.1%-ով։ Միջոցներն օգտագործվել են կատարված փաստացի աշխատանքներին համապատասխան։ Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն ավելացել են 3.4%-ով։

Սոցիալական ապահովության քարտերի համակարգի հետ կապված վարչարարական ծառայություններին տրամադրվել է 6.5 մլն դրամ, որը կատարվել է 98.8%-ով և 21.4%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը, որը պայմանավորված է տնտեսական ճգնաժամի հետևանքով 2009 թվականին սառեցված առանձին ծախսերը 2010 թվականին կրկին նախատեսելու հանգամանքով։

### **Հիմնական բաժիններին չդասվող պահուատային Փոնդեր**

2010 թվականի պետական բյուջեով նախատեսված << կառավարության պահուատային Փոնդից օգտագործվել է 21.6 մլրդ դրամ կամ նախատեսվածի 96.1%-ը։ Տրամադրված միջոցներից

շուրջ 10.9 մլրդ դրամն ուղղվել է ընթացիկ ծախսերին՝ կազմելով նախատեսվածի 96.7%-ը, 10.7 մլրդ դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերին՝ ապահովելով 95.4% կատարողական: Նշենք, որ 2009 թվականին պահուստային ֆոնդից օգտագործվել էր 33.9 մլրդ դրամ:

Հույժ գաղտնի:

## ՀՀ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ

ՀՀ 2010 թվականի պետական բյուջեն կատարվել է շուրջ 173.9 մլրդ դրամ պակասուրդով՝ կազմելով ճշտված ծրագրով նախատեսված 203.3 մլրդ դրամի 85.5%-ը: Նշենք, որ 2009 թվականին ՀՀ պետական բյուջեն կատարվել էր 239.1 մլրդ դրամ պակասուրդով, այսինքն՝ 2009 թվականի համեմատ պակասուրդի մեծությունը նվազել է 27.3%-ով: Պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշը 2010 թվականին կազմել է 5%, բյուջեում կանխատեսված 6%-ի և 2009 թվականի 7.7%-ի դիմաց:

Հաշվետու տարվա ընթացքում պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրները կազմել են 107.4 մլրդ դրամ՝ նախատեսված 133.4 մլրդ դրամի դիմաց: Նշենք, որ նախորդ տարի նշված ցուցանիշը կազմել էր -115.1 մլրդ դրամ: Պակասուրդի ներքին ֆինանսավորման փաստացի ցուցանիշի շեղումը ծրագրից հիմնականում պայմանավորված է ելքերի ֆինանսավորմանն ուղղվող 2010 թվականի տարեսկզբի ազատ միջոցների պակաս օգտագործման հանգամանքով, որը նախատեսված 77.4 մլրդ դրամի փոխարեն կազմել է 49.9 մլրդ դրամ:

Պետական բյուջեի պակասուրդի 16.2%-ը ֆինանսավորվել է պետական արժեթղթերի հաշվին՝ կազմելով շուրջ 28.2 մլրդ դրամ և կազմելով ծրագրի 100.7%-ը: Մասնավորապես՝ 30.2 մլրդ դրամ է կազմել գանձապետական պարտատոմսերի հաշվին ֆինանսավորումը՝ նախատեսված 30.0 մլրդ դրամի փոխարեն:

2010 թվականին շարունակվել է միջնաժամկետ ուղենշային պարտատոմսերի թողարկումը: 2010 թվականի մարտի 9-ին և հոկտեմբերի 21-ին իրականացվել են նոր 3 տարի մարման ժամկետով ուղենշային պարտատոմսերի թողարկումներ՝ համապատասխանաբար 12.5% և 13% տարեկան արժեկտրոնային եկամտաբերությամբ, իսկ մարտի 16-ին և հոկտեմբերի 14-ին՝ 5 տարի մարման ժամկետով ուղենշային պարտատոմսերի թողարկումներ՝ համապատասխանաբար 13% և 13.5% տարեկան արժեկտրոնային եկամտաբերությամբ: Ուղենշային պարտատոմսերի տեղաբաշխման ծավալը տարվա ընթացքում կազմել է 52.8 մլրդ դրամ, տեղաբաշխման միջին եկամտաբերությունը՝ 14.17%: Պակասուրդի ֆինանսավորման ծրագրի իրագործման շրջանակներում, ուղենշային պարտատոմսերի թողարկումներին զուգահեռ, իրացվելիության ավելացման և մարման բերի թեթևացման նպատակով պարբերաբար իրականացվել են նախկինում թողարկած միջնաժամկետ և երկարժամկետ պարտատոմսերի փոքրածավալ թողարկումների, ինչպես նաև 2008 թվականի և 2009 թվականի թողարկման 3 և 5 տարի մարման ժամկետով արդեն նախկին ուղենշային համարվող պարտատոմսերի հետգնումներ: Տարվա ընթացքում իրականացվել է 24.1 մլրդ դրամի հետգնում, որի դիմաց սպասարկման ծախսը կազմել է 396.8 մլն դրամ:

2010 թվականին շարունակվել են պետական խնայողական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկումները՝ ընդհանուր 1,500.0 մլն դրամ ծավալով: Այս պարտատոմսերի տեղաբաշխման

ծավալը կազմել է 517.4 մլն դրամ: 2008 թվականից սկսած՝ Գանձապետական պահուու համակարգն իր ներդրողների համար ապահովում է 6, 12, և 24 ամիս մարման ժամկետով խնայողական արժեկտրոնային պարտատոմսերի մշտական առաջարկ:

2010 թվականին ներքին պետական պարտքը բնութագրող ցուցանիշներն ունեն հետևյալ պատկերը. շրջանառության մեջ եղած ներքին պարտքի եկամտաբերությունը կազմել է 11.67% (2009 թվականին՝ 10.39%), պարտքի ժամկետայնությունը՝ 1353 օր (2009 թվականի՝ 1391 օր), մարման բեռի բաշխվածությունը մինչև 2028 թվականն է: Տարեվերջին շրջանառության մեջ եղած ՀՀ պետական պարտատոմսերի ծավալն անվանական արժեքով կազմել է 172,997,517.0 հազ. դրամ: Ընդ որում, շրջանառության մեջ գտնվող կարճաժամկետ պարտատոմսերի ծավալը կազմել է 51,443.9 մլն դրամ (29.7%), միջին ժամկետայնության պարտատոմսերինը՝ 86,410.5 մլն դրամ (49.9%), երկարաժամկետ պարտատոմսերինը՝ 34,538.2 մլն դրամ (20.0%), խնայողական պարտատոմսերինը՝ 604.9 մլն դրամ (0.4%): ՀՀ ներքին պարտքը 2010 թվականի վերջի դրությամբ կազմել է 180,266.3 մլն դրամ:

2010 թվականին շարունակվել է նաև ՀՀ ներքին շահող փոխառության պարտատոմսերի հետգնման գործընթացը. հետգնումը կազմել է 1.2 մլն դրամ:

Մուրհակների մարման նպատակով կատարվել են 2.0 մլրդ դրամի վճարումներ՝ ամբողջովին ապահովելով նախատեսված ծավալը: Ամբողջությամբ մարվել է նաև «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ից ստացված վարկի ծրագրված գումարը՝ կազմելով 1.5 մլրդ դրամ:

Հաշվետու տարվա պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղյուրներում ներքին ֆինանսական ակտիվները կազմել են 80.8 մլրդ դրամ կամ տարեկան ճշտված ծրագրի 75.5%-ը: Մասնավորապես՝ ՀՀ ռեզիդենտներին պետական բյուջեից տրամադրվել են շուրջ 8.1 մլրդ դրամի վարկեր՝ կազմելով նախատեսվածի 86.2%-ը: Նշված գումարից 5.8 մլրդ դրամը տրամադրվել է ՌԴ կողմից 2009 թվականին Հայաստանի Հանրապետությանը տրամադրված պետական վարկի միջոցներից, որից 5 մլրդ դրամը հատկացվել է տնտեսության կայունացման վարկավորման ծրագրի առաջին բաղադրիչի ֆինանսավորման նպատակով, 417 մլն դրամը՝ «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից հիմնադրված վարկային կազմակերպությանը, 414.2 մլն դրամը՝ «Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓՄՁ-ին: Ավելի քան 168.2 մլն դրամ արտոնյալ պայմաններով տրամադրվել է բռնադատված քաղաքացիներին՝ անհատական բնակարանային շինարարության վարկավորման նպատակով: ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված 1.2 մլրդ դրամի դիմաց վարկավորվել է 903.8 մլն դրամ: Այս բաղադրիչի շրջանակներում վարկային գործունեության համար նախատեսված գումարը 2010 թվականի բյուջեի հայտը ներկայացնելուց հետո Հազարամյակի մարտահրավեր

կորպորացիային ներկայացվող եռամսյակային ֆինանսավորման հայտում վերանայվել և նվազեցվել է, քանի որ համապատասխան չափով ավելի ծախս է նախատեսվել և կատարվել 2009 թվականի ընթացքում:

Արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային միջոցների հաշվին իրականացվող ծրագրերի շրջանակներում բյուջետային վարկերի տրամադրումը այդ ծրագրերում ներգրավված տնտեսավարող սուբյեկտներին կատարվել է 67.6%-ով՝ կազմելով 1.0 մլրդ դրամ: Շեղում է արձանագրվել ԳՀՄՀ աջակցությամբ իրականացվող «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» ծրագրի գծով: Ցածր ցուցանիշը պայմանավորված է այն հանգամանքով, որ ԳՀՄՀ խորհրդի կողմից ներդրումների որոշ մասը հաստատվել է տարեվերջին, որի հետևանքով 2010 թվականին նախատեսված վճարումները տեղափոխվել են 2011 թվականի առաջին եռամյակ:

2010 թվականին ավելի քան 112.5 մլն դրամ տրամադրվել է ՀՀ կառավարությանն աղընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեին:

Տրամադրված վարկերի վերադարձից մուտքերը կազմել են 19.9 մլրդ դրամ՝ ծրագրված 20.1 մլրդ դրամի դիմաց:

Առևտրային կազմակերպություններում պետական բաժնեմասի մասնավորեցման արդյունքում կուտակված միջոցներից բյուջեն է մուտքագրվել 42.9 հազար դրամ: Բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերմանն ուղղվել է 43.5 մլն դրամ:

Հաշվետու տարում կայունացման դեպոզիտային հաշվից զուտ օգտագործումը կատարվել է ծրագրված ծավալով և կազմել 19 մլրդ դրամ: Մասնավորապես՝ տարվա ընթացքում նշված հաշիվը համարվել է 13.8 մլրդ դրամով, իսկ հաշվից օգտագործումը կազմել է 32.9 մլրդ դրամ:

2010 թվականին պետական բյուջեի պակասուրդն արտաքին աղբյուրներից ֆինանսավորվել է շուրջ 66.5 մլրդ դրամով՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 95.1%-ը:

Արտաքին փոխառու միջոցներից բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը կազմել է 98.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 94.7%-ը: Տարվա ընթացքում արտաքին աղբյուրներից ստացվել են ավելի քան 107.7 մլրդ դրամի վարկային միջոցներ (ծրագրված 113.4 մլրդ դրամի դիմաց), որից 35.6 մլրդ դրամը հատկացվել է Արժույթի միջազգային հիմնադրամի, 31.4 մլրդ դրամը՝ Համաշխարհային բանկի, 25.1 մլրդ դրամը՝ Ճապոնիայի կառավարության, 8.4 մլրդ դրամը՝ Ասիական զարգացման բանկի, 3.3 մլրդ դրամը՝ ՎՀԵԲ, 1.3 մլրդ դրամը՝ ԳՀՄՀ, 1.5 մլրդ դրամը՝ ՕՊԵԿ-ի, 970.4 մլն դրամը՝ Գերմանիայի զարգացման վարկերի բանկի, 298.1 մլն դրամը՝ Աբու-Դաբիի զարգացման հիմնադրամի կողմից:

Արտաքին պարտավորությունների մարմանն ուղղվել է շուրջ 9.7 մլրդ դրամ, որից 6.8 մլրդ դրամը հատկացվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի գծով պարտքի մարմանը: Բացի այդ, 1.1 մլրդ դրամ է տրամադրվել Էլեկտրաէներգիայի հաղորդման և

բաշխման համակարգի ծրագրի գծով ճապոնիայի նկատմամբ պարտքի մարմանը, 293.2 մլն դրամը՝ ԳԶՄՀ, 88.7 մլն դրամը՝ ՎՀԵԲ, 128.8 մլն դրամը՝ ՕՊԵԿ-ի միջազգային զարգացման հիմնադրամի նկատմամբ ունեցած պարտքի մարմանը, 667.6 մլն դրամ՝ ԱՄՇ ապրանքային վարկերի մարմանը, 50.4 մլն դրամ՝ ԱԷԿ-ի վառելիքի չոր պահպանման համակարգի ծրագրի գծով ֆրանսիայի նկատմամբ պարտքի մարմանը և 571.4 մլն դրամ՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության նկատմամբ պարտավորությունների մարմանը:

Արտաքին ֆինանսական ակտիվների գծով պակասուրդի ֆինանսավորման ծրագիրը կատարվել է 93.8%-ով՝ կազմելով շուրջ 31.6 մլրդ դրամ: Մասնավորապես, 33.2 մլրդ դրամ է կազմել ԼՂՀ-ին տրամադրված միջաետական վարկը: Վրաստանի կողմից միջաետական վարկի գծով կատարվել է 93.6 մլն դրամի վճարում, որից 44.8 մլն դրամը նախորդ տարվա պարտավորությունն է, և Վրաստանի կողմից փոխանցվել է 2009 թվականի դեկտեմբերին, սակայն գանձապետական միասնական հաշվին մուտքագրվել է 2010 թվականի հունվար ամսին: Նոյն կերպ 2010 թվականի պարտավորության մի մասը՝ 49.1 մլն դրամի չափով, պետական բյուջե է մուտքագրվել 2011 թվականի հունվարին:

Միջազգային ֆինանսական կազմակերպություններին ՀՀ անդամակցության գծով պարտավորությունների կատարմանն ուղղվել է 753.8 մլն դրամ: Հաշվետու տարում շուրջ 2.3 մլրդ դրամ է օգտագործվել արտաքին աղբյուրներից ստացված վարկային և դրամաշնորհային միջոցների մնացորդից:

2010 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքը կազմել է 1,199.0 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 34.6%-ը (3,299.0 մլն ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ-ի 35.6%-ը)՝ 2009 թվականի 1,121.1 մլրդ դրամի և 36.1%-ի (2,966.7 մլն ԱՄՆ դոլարի և 34.7%-ի) դիմաց: Պարտքի հիմնական մասը՝ 2,736.4 մլն ԱՄՆ դոլարը, ՀՀ կառավարության անմիջական վարկային պարտավորություններն են, 562.6 մլն ԱՄՆ դոլարը՝ Կենտրոնական բանկի վարկային պարտավորությունները:

Հաշվետու տարում ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկումը կազմել է 91 մլն ԱՄՆ դոլար, որից 63.2 մլն ԱՄՆ դոլարը կառավարության և 27.8 մլն դոլարը ԿԲ պարտավորությունների գծով: Արտահանման նկատմամբ արտաքին պարտքի սպասարկման հարաբերակցությունը կազմել է 4.9%՝ նախորդ տարվա 5.4%-ի դիմաց: 2010 թվականի վերջի դրությամբ արտաքին պարտքի գուտ ներկա արժեքի ցուցանիշն (ՀՆԱ) աճել է՝ 2009 թվականի 2259.6 մլն ԱՄՆ դոլարի դիմաց կազմելով 2596.5 մլն ԱՄՆ դոլար, աճել է նաև ՀՆԱ/ՀՆԱ հարաբերակցությունը՝ 2009 թվականի 26.5%-ի դիմաց կազմելով 28%: Հաշվետու տարում աճել է ՀՆԱ/արտահանում ցուցանիշը՝ 2009 թվականի 168.8%-ից հասնելով 139.4%-ի: